Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

4007 -4008

491.99 -8
U - 25

2010

2002

89ї. 99-192

Ստեփանոս

ԻՒՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐ

ՀԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՆԺԵՆԵՐ

ԳԱՍՊԱՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵԱՂՈՒԲԵԱՆԻՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄՈՌԱՑ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

ՍԻՐՈՅ ՋԴԱՑՄՈՒՆՔՈՎ

ՆՈՒՐՈՒՄ Է

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ։

ԻՄ ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ

ԳԱՍՊԱՐ ԵԱՂՈՒԲԵԱՆ

Ա՛յս գրքի ձակատը գրոշմեցի Ձեր անունով սոսկ կենդանի պահելու այն ուսանողական վառ ապաւորութիւնները, որոնք տեղի են ունեցել մեր ուսանողական կեանքում Բազուի բէալական դիմնազիում ուսանելու ժամանակ: Ա՛յս սիրոյ արտայայտութիւնը, որ ընկերական չէրմ զգացմունքով եմ մատուցանում Ձեզ՝ Ձերն է, ընդունեցէ՛ք, խնդրեմ:

Ձեր նախկին ուսանող-ընկեր՝

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իրողութիւնը ապացուցանելու համար՝ թուանշանները աւելի պերճախօսն են, քան բառերը: «Սոխակի» 6000 օրինակները, որոնք սպառուած են ժողովրդի մէջ, համեմատաբար կարճ ժամանակում, կարող է պարզ գաղափար տալու այն ընդունելութեան և պահանջի վերայ, որ ստացած է «Սոխակը» հայ հասարակութեան կողմից: Այս աղնիւ պահանջին բաւականութիւն տալու մտօք էր, որ սեպուհ պարտականութիւն համարեցինք ձեռնարկել գրքիս հինգերորդ տպագրութեան՝ թերութեանց համար ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով, իսկ արժանեաց համար անհուն ուրախութիւնս յայտնելով, քա՛ տրում

33554-Կ.Ֆ.

այդ արժանիքը հրատարակողինը չէ, այլ հայ գրողների, հայ երգիչների, որոնց թիւը օրէ օր աճելուն կ՚բարեմաղթենք սրտի ամենայն խորքից։

ԳՐԻԳՈՐ ՔԱՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Բաքու. 1886 թ.

ՀՍՌՀ Նահ. Գրադ. Ֆոնդ
Ազգ. Պատկերասրահ
ՀՍՌՀ-ԿԿՊ Ա.
Ա. Մանուկյան
անվան արվեստների ինստիտուտ

2761
Ա1

1.

Երգ Ծոուսաց Կայսրին [1])

«Боже, Царя Храни!»

ՀԻՄՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Աստուած, պահիր Կայսրին
Հայկեան Պաշտպանին,
Երջանիկ օրով,
Ընտանիքով.
Թող ղօրքով Նա քաջաց՝
Վանէ թշնամեաց։
Աստուած, պահիր Կայսրին։

* * *

Աստուած, պահիր Կայսրին,
Որ Հայ զործերին
Նա լինի պաշտպան
Միշտ անխափան.
Եւ տայ ազատութիւն—
Պահել ազգութիւն։
Աստուած, պահիր Կայսրին։

Ե. Գրիգորեանց

[1]) Այս երգը թէպէտև տպագրված է «Սոխակի» Ե. հատորում, բայց որովհետև այդ հատորը վաղուց սպառված է և կարևորութիւն է զգացվում սորան միշտ երգելու, հէնց այս առիթով էլ արտատպեցինք այստեղ։

2.

Թագադրութիւն Օգոստափառ Կայսեր ամենայն Ռուսաց

«Տէր, կեցո զթագաւորն և լուր մեզ, յաւուր յորում կարդասցուք առ քեզ»:

Սաղմոս ԺԹ. 11.

Հրճուանքի և ցնծութեան մէջ՝ Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուան շաւափում է դեպի պատմական Կրեմլը, ուր այսօր [1]) կատարվում է սրբազան օծումին երիտասարդ Ընքայի, Որին Նախախնամութիւնը յանձնել է մօտ 100 միլիոն մի բազմացեղ ժողովրդի վարչութեան ղեկը: Ծունկ խոնարհեցրած, ամենուրեք դիմում է այսօր մարդկանց այդ քանակութիւնը իւր Երարչին և սրտանց մաղթում է՝ շնորհել իւր Ընտրեալին սէր և դութ դեպի իւր ահագին հօտը, ոյժ և կարողութիւն-մեզ դեպի բարին և օգտաւէտը առաջնորդելու:

Պատկառում է այսօր Օգոստափառ Կայսեր Աղեքսանդր III-ի գլուխը իւր հարց սրբազան պսակով ու քաղցր ակնկալութեամբ բաբախում է ամբողջ Ռուսիոյ սիրտը. Լայնածաւալ տէրութիւնը, այդ սրբազան օծման մէջ, ցանկանում է տեսնել իւր գեղեցիկ յոյսերի ապաւէնը, իւր ներկայ և ապագայ բարօրութիւնը: Ռուսիան յիշում է, որ նախահարց գահոյքի վերայ բազմող Ընքայն՝ որդի է Ընտիր մեծ Կայսեր և, հետևաբար, կրթուած ու սքանուած մարդասիրական վսեմ զգացմանց մէջ:

Մէկ միլիոնաչափ ռուսահպատակ հայքս, մեր մաղթանաց և խնդրուածների հետ միասին, նմանապէս ամենահպատակօրէն ջերմեռանդութեամբ վեր ենք առաքում Ամատուածասիրական ինքնակալին շքեղ գահին մեր ուրախութեանց անկեղծ զգացմունքը և բուն ռուս ազգից ոչ պակաս նախանձախնդիր ենք Կայսերութեան բարօրութեանը և անդորրութեանը: Հայ ազգը՝ երէկ և այսօր չէ միայն, որ վկայած է իւր հաւատարմութիւնը Ռուսիոյ գահակալներին: Դեռ XVII-րդ դարում Ալէքսէյ Միխայլովիչ թագաւորի ժամանակ հայոց ցեղ տուած ծառայութիւնները գրաւեցին Մոսկուայի գահոյքի ուշադրութիւնը: Մեծն Պետրոս իւր լայնածաւալ դիտաւորութիւնները Արևելքում իրագործելու համար մեծամեծ օգնականներ քաղեց իւր խոստմանց վերայ վստահացած հայերից և այն օրից ի վեր բազմաթիւ հայք էնթայեցին իրանց արիւնը յօգուտ և ի պատիւ Ռուսիոյ: Մեծն Եկատերինէի օրով հայք նորանոր և մեծամեծ ծառայութիւններով նպաստեցին Կայսերութեան տիրապետութեանցը թէ Խրիմում և թէ Կովկասում: Պաւել Կայսրը քաջալերում էր հայոց հաւատարմական ցեղերը և շատ անգամ առիթ ունենալով վստահանալ մեր ազգային անձնուիրութեան վերայ: Աղեքսանդր Ա. Կայսրն անձամբ ականատես եղաւ, թէ ինչպէս Ռօրօզինովից մինչև Վատերլօօ մղում էին պլեղ հետ հայ քաջազունքը, որոնցից շատերը արիաբար անկան «Հայրենասիրական» պատերազմի զաշտում: Նոյն մեծ ինքնակալը, ի դիտութիւն իւր Օգոստափառ յաջորդների, 1813 թ-ի սեպտեմբերի 15-ին շտապեց խորին երախտագիտական զգացմամբ լի հրովարտակով արձանագնել հայ ազգի ցեղ տուած հաւատարմութիւնը, երբ 1811—1812 թ. Ընդրկովկասեան գաւառներում ծագած ընդհանուր ապստամբութիւնը վտանգ էր սպառնում ռուսական իշխանութեանը: Նիկողայոս Կայսեր օրով խաչ ի ձեռին առաջնորդում էր ռուսական բանակին հայրենասէր Ներսէս

[1]) 15 մայիսի 1883 թ.

արհին և զարմանալի անձնուրացութեամբ և ծանր զոհաբերութեամբ Հայերն էին, որ նպաստեցին երկդեսեան արծուի յաղթութեանցը մինչ Թաւրիզ և Կարին: Հայքն էին, որ իրանց տաժանելի գաղթականութեամբ Կողկասի աւերած և ամայի գաւառները մարդաբնակ և քրիստոնէաբնակ մի հարուստ երկիր դարձրին: Հետև Լեռնականաց հետ ծագած երկարատև պատերազմում հանդէս եկաւ մի շարք հայ դիւցազուններով, որոնց անունով ամենայն իրաւամբ պարծենում է Կովկասեան ռուս բանակը: 1853—1856 թ. ահռելի պատերազմը հայ աղգի համար նոր միջոց եղաւ ներկել իւր արիւնով Կարձր Հայոց դաշտերը 'ի պաշտպանութիւն ռուսական շահերի և Ռուիբուդեան ու Երզրումեան հերոսների ռուսաց զօրաց համար օրինակելի ու պանծալի դարձան: Հաւատարիմ իրանց կոչման և նախնական աւանդութեանց՝ Հայերը դարձեալ շտապեցին պատերազմի դաշտը, երբ Եղիքսանդր II Եղբաիչ Կայսրը ձեռք կարկառեց մահմեդական լուծից Սլավոն ցեղերը ազատելու: Մահն աչքին առած, յանուն քրիստոնէական ազատութեան, խաչ ու խաչբառով դիմաւորում էր ռուսական զօրքին հայ հինականը և, իբր անմեղ արիւնը թափելով, հեռուից ողջունում էր Կալկանեան թնդակզդում անկած ազատութեան դրօշակին: Մեծահոգի Կայսեր սրատեսութիւնից չ'վերծաւ այս անգամ և այն ժողովուրդը, որ իւր պատմական անցեալով և ներկայ առաքինի մարտիրոսութեամբ ոչ պակաս արժանի է քրիստոնէական ազատութեան, մանաւանդ թէ և իրաւունք ունի ստանալ մարդավայել կեանք ի տրիտուր իւր ցոյց տուած մեծամեծ ծառայութեանց և օրինակելի հաւատարմութեան: Եւ ահա Եղբաիչ Կայսրը Սան-Ստեֆանոյի դաշնագրութեամբ ուխտեց Տաճկահայոց հայրական ծագեցնել նոր կեանք այն արշալոյսը, որ Մեծն Պետրոսից սկսած՝ երկու դար շարունակ խոստացվում էր Ռուսիոյ գահակալներից մահմեդական լծի տակ տոչորվող հայերին:

Եւ մինչ այսօր մեծահանդէս ծանակմբութեամբ կատարվում է Մեծի Ինքնակալի Թագադրութիւնը, մինչ ամբողջ Ռուսիան կը մաղթէ, որ Օծեալն Յաստուծոյ շարունակող և կատարող լինի իւր Նախահարց աւանդած մեծահոչակ գործերի, մինչ մենք աղօթում ենք, որ Տէրը հզօրացնէ իւր Ընտրեալին իւր բարի դիտաւորութեանց մէջ յօդուտ մարդկութեան և իւր գահոյքի հովանաւորութեան տակ եղած ազգերի — հեռու, Հայաստանի խորքերից էս մի ձայն կը լսուի՝ աղօթք է նա և մրմունջ, — դա Տաճկահայոց ձայնն է: Հարատահարեալ Տաճկահայն կը մատուցէ այսօր իւր վառվռուն գրութիւնը և հառաչելով՝ լռիկ ծնկիկ կը հեռանայ, կը քաշուի իւր կիսախարխուլ եկեղեցին աղօթելու...

Այդպէս ահա միլլիոնաւոր հայկազունք սաղմոսերգու Դաւիթ արքայի բերանով այսօր վեր են առաքում Երանչին իրանց անկեղծ բարեմաղթութիւնը՝ «Տէր, կեցո զթագաւորն և լուր մեզ»:

«Ընդհանուր»

3.

Մարմնամարզական խաղ

(Մանկական).

Ահա եկաւ խոտ հարողը,
Ուսին դրած գերանդին,
Ոլոր խոտը սա հարել է,
Ման չի թողել մեր հանդին:
— Այ խոտահար, սաւ տեսնենք,
Դու ինչպէս ես խոտ հարում:

— Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում.

Հէ՛յ, հօ՛ւպ,
Հէ՛յ, հօ՛ւպ...

— Ահա, ի՛նչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս խոտ հարենք.

Հէ՛յ, հօ՛ւպ...
Հէ՛յ, հօ՛ւպ...

* * *

Ահա եկաւ մեր հնձողը,
Զեռքին փայտէ մատնոցները,
Պատրաստել է սուր մանգաղը,
Պէտք է հնձէ մեր արտերը:
— Հնձող եղբայր, ասա տեսնենք,
Դու ի՞նչպէս ես հունձ անում:
— Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ հունձ անում.

Հէ՛պ, հօ՛պ, հէ՛պ,
Հէ՛պ, հօ՛պ, հէ՛պ...[1])

Ահա, ի՛նչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս հունձ անենք.

Հէ՛պ, հօ՛պ, հէ՛պ,
Հէ՛պ, հօ՛պ, հէ՛պ...

Վ. Աղայեանց

[1]) Վերանդիով հնձելն երկու տակտ ունի, իսկ մանգաղով հնձելը՝ երեք:

4.

Քաջն Վարդան

Եւարայրի դաշտը ներկեց արիւնդ,
Վարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քաջ Վարդան.
Յաղդէ յաղդ կ'իշուի անմահ անունդ,
Վարմի՛ր Վարդան, հզո՛ր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

* * *

Մեռար, թողիր անմահ անուն յիշատակ,
Որ գործերով գարձար բարի օրինակ.
Որ սուրը գործի համար եղար նահատակ,
Անմահ Վարդան, հզո՛ր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

* * *

Վեհ գլուխդ ջերմ Հայրենեաց եռանդը,
Պաշտպանեցիր Քրիստոս տուած աւանդը,
Որ ուրս վանեցիր Օրտաշատեան ազանդը,
Որ, վի՛հ Վարդան, հզո՛ր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Ա. Ղ-ի-ան [1])

[1]) Ա. Ղ-ի-անն մեր ժողովրդական յայտնի երգիչ-բանաստեղծներից միևն է: Նորա երգերից շատերը շարունակ տպագրված են և տպագրվում են «Մուրճի» մէջ: Այս,

5.

Ո՞վ էր Վ. Աբգան Մամիկոնեան քաջ սպարապետը

— Վ. Աբգան Մամիկոնեանը մի ամբողջ ժողովուրդ էր. նա այդ ժողովրդի մարմնացած բողոքն էր: Բողոք՝ բռնութեան դէմ, բողոք՝ անարդարութեան դէմ, բողոք՝ անազատութեան դէմ:

... Վ. Աբգանայ հետ միացած էր կղերը. մի ձեռքում խաչ, միւս ձեռքում սուր բռնած: Նորա հետ միացած էր շինականը, մի ձեռքում բահ, միւս ձեռքում նիզակ բռնած: Նորա հետ միացած էր ազնուականը, քաղաքացին, և որ ամենագլխաւորն է՝—հայ կինը: Ակսեալ նա-

---

Պ. Ջ. Լեանին, իւր խմբով, ուր որ շրջում է՝ թէ՛ քաղաք, թէ՛ գիւղ, թէ՛ շէն, թէ աւան՝ մեծ ազդեցութիւն է անում երիտասարդների և մանաւանդ ուսանող մանուկների վերայ՝ իւր ներգաշնակ երգերով: Մեր քաղաքը, Նոգուն էլ պատիւ ունեցաւ անցեալ 1884 թ. Պ. Ջ. Լեանուն, իւր խմբով, տեսնելու և նորա եռանդոտ, և նորա ոգևորող, և նորա ջերմ զգացմունքով լիքը երգերը լսելու և այնպէս սրտով և հոգով ուրախանալու: Պ. Ջ. Լեանին, Նոգվում եղած ժամանակ, գրեց քանի մի երգեր և յանձնեց մեզ, որոնցից, մանաւանդ, «Ողբ Ներսէս Պատրիարքի մահուան առիթով» և իւր մասին «Պանդխտի դրութիւնը» վերնագրով գրուածները տպված են ներկայ հրատարակութեանս մէջ: Նա իւր պատրաստի երգերը միասին ժողովելով՝ 1882 թ. և նոյնը՝ Ռ. Տպ. աւելացրած, 1886 թ. հրատարակեց «Հայրենի երգերը» անունով, որ մի գեղեցիկ և ամեն մի հայի ընթերցանութեան արժանի աշխատութիւն է:

Գ. Վ. Պէշիկթաշլեան

խաբարների շքեղ դահլիճներից մինչև գիւղական աղքատ խրճիթը՝ զարթեց ազատասիրութեան վսեմ հոգին, զարթեց և հայ կինը, որ իւր հրեշտակային կենսատու շնչով աւելի վառեց՝ աւելի բորբոքեց ժողովրդի եռանդը: Նա թողից իւր պաճուճանքը, մոռացաւ իւր փափկութիւնը և սովորեց տանել զինուորի կեանքի խստութիւններին: Թանգագին բեհեզների, նուրբ կերպասների փոխարէն՝ զգեցաւ պատերազմող մարդու կոշտ հագուստը: Ոսկեհուռ մարգարիտների փոխարէն՝ նա իւր կուրծքը զարդարեց երկաթէ զրահով: Ոսկեղէն պսակի փոխարէն՝ նա գլխին դրեց պողպատեայ սաղավարտը: Ոսկի մատանիների փոխարէն՝ կրեց սուր, վահան, նիզակ: Եւ ինչ տուեց նա, ամեն ինչ զոհեց հայրենիքը փրկելու համար: Մէկ խօսքով հայ կինը շարժեց, ոգևորեց, ոտքի կանգնեցրեց ժողովրդի բոլոր դասակարգերը: Իսկ Վ. Աբգանը՝ այդ դասակարգերի միաւորիչ յօտը, նրանց միաեռանդ հետ կապող օղակը դարձաւ: Վ. Աբգանը ժողովրդի հոգու արտայայտութեան ճնուռնդն էր: Նայց ինչ էր ժողովրդի պահանջը, ինչ նպատակ ունէին նրա հոգեկան ձգտումները: — Հայաստանը իւր օրհասականի մէջ էր գտնվում: Ընշակունեաց հզօր պետութիւնը զոհ էր գնացել Տիբերնի նենգութեանը: Օծեալ թագաւորների գահը խորտակուած էր. նրանց փոխարէն տիրում էին պարսիկ մարզպանները: Նուրբ Աւսաւորչի հայրապետական օրհնեալ տան ներկայացուցիչները վերջացած էին. պարսիկը իւր պիղծ ձեռքը տարածել էր մինչև եկեղեցու սրբարանը: Քրիստոսի հօտը ճնացել էր առանց անձնանուէր հովուապետի: Ներսէս Մեծի, Սահակ Պարթևի, Երիստակէսի և Վրթանէսի աթոռի վրայ՝ պարսիկները նստեցնում էին Նուրմակին, Շմուէլին, Երըքիշոյին ու դրանց նման չարագործներին: Անդուն ճնացեալ էին միայն Հայոց նախարարները: Դրանք որպէս

հայրենիքի՝ բոլոր ճանրութիւնը իրանց վրա կրող՝ սիւներ, դեռ պահպանում էին կործանված Հայաստանի ճնացած փշրանքները: Պարսկական նենգութիւնը սկսեց այդ նեղուկները ևս տապալել, նրանց ևս խորտակել, որպէս զի ազգային շէնքը միանգամայն քարուքանդ անէ: Հայաստանը թողնում էին հայ զինուորներից թափուր, հայ նախարարներից զուրկ. իսկ նրանց երկար տարիներով ուզարկում էին հեռաւոր արևելքում Խուժաստանի կամ Սագաստանի կողմերը՝ Թուշանայ հետ պատերազմելու: Ընտվոր կլիման, տաժանակիր կեանքը, հայրենիքի կարօտը հալում, մաշում էր պանդուխտ հայ զինուորին օտար, անճանօթ աշխարհում: Նրանցից շատերը չէին վերադառնում: Այդ անում էր պարսիկը, որ հայ ժողովուրդը անտէր, անդլուխ ճնայ, որպէս զի նրան կարողանայ աւելի հեշտութեամբ կլանել:

...Ժողովուրդը աւելի սարսափելի զրութեան մէջ էր: Ազքատութիւնը, չքաւորութիւնը պարսիկները ընդունել էին որպէս գլխաւոր պայման ամբոխը հնազանդութեան մէջ պահելու համար: Այդ պատճառով ծանրաբեռնում էին նրան անտանելի հարկերով: Բայց խոբամանկ պարսիկը չէ բաւականում միայն նիւթապէս աղքատացնելով. նա աշխատում էր աղքատացնել և հոգեպէս, և բարոյապէս, և մտաւորապէս: Հայոց սրբարանները, որոց մէջ հայ մարդը համ ազօթում էր իւր Աստծուն, համ սովորում էր իւր մայրենի լեզուի գպրութիւնը, փակուած էին: Եկեղեցիների փոխարէն հիմնել էին կրակապաշտութեան աւրուշաններ: Հայոց մանուկների դաստիարակութիւնը քահանաների ձեռքից անցել էր մոգերի ձեռքը: Հայոց խօսքը, այն լեզուն, որով խօսում էր Աղամը և Նոյը, — արգելված էր: Հայ մարդը պէտք է պարսկերէն խօսէր, պարսկերէն գրէր և պարսկերէն աղօթէր.

Ամեն ինչ, որ թանգ և նուիրական էր հայի համար, ոչնչանալու վրայ էր: Նրա հայրենիքը պարսկական նահանգ էր դարձել: Նրա եկեղեցին սրբապղծված էր: Նրա լեզուն, այդ մայրենի սուրբ աւանդութիւնը խլում էին նրանից: Ազատութեան փոխարէն տիրում էր բռնութիւն: Արդարութեան փոխարէն—անիրաւութիւն: Խաղաղութեան փոխարէն—հալածանք, խռովութիւն, երկպառակութիւն. պարսիկը ինքն էր սերմանում խռովութիւնը: Ընարժաններին առաջ էր քաշում, իսկ արժանաւորներին յետ մղում: Վաճառերը, մանրիչները, ուրացողները սանում էին փառք, պատիւ և բարձր պաշտօններ, իսկ ազնիւ մարդիկ անարգվում էին: Ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, կրօնասիրութիւնը մի քրէական յանցանք էր, որ պատժվում էր ամենասաստիկ կերպով: Պարսկաստանի բանտերը, Սագաստանի աքսորավայրը լցուած էին այս տեսակ զոհերով: Ժողովրդի ընտիր, օգտակար, բարեմիտ անդամներին ոչնչացնում էին և թողնում էին վաճառին, անպիտաններին միայն, որպէս զի ազգը, կորնչելով իւր լաւ ու կենդանի ոյժերը, բոլորովին դիակնանայ, որ կարողանան հեշտութեամբ կլանել, հեշտութեամբ մարսել նրան:

Տեսնելով այդ բոլոր չարիքները, ժողովուրդը այլ ևս չկարողացաւ համբերել: Նա անցաւ Վարդանի դրօշի տակ, մտածեց ազատվել անտանելի դրութիւնից: Մի քանի օրվայ մէջ Երասաստում կազմուեցաւ 60 հազարից բաղկացած մի բանակ: Այդ բանակի մէջ, որպէս մի ամբողջ մարմին, միացած էին ժողովրդի բոլոր դասակարգերը. նրանց առաջնորդում էին՝ հոգևորականութիւնը և աշխարհականութիւնը, երկուսնել ձեռք ձեռքի տուած, երկուսնել մի սիրտ՝ մի հոգի դարձած:—Այդ միութիւնն էր պատճառ, որ Հայոց քաջերը Ալարպայի դաշտում կատարեցին այն փառաւոր յաղթութիւնը, որը մեր

պատմութեան մէջ[1]) մինչև գարերի վերջը կ'փայլի որպէս մի պայծառ աստղ. թէև այդ յաղթութեանը զոհ գնաց մի մեծ մարդ, որ ինքը՝ Վ. արդան Մամիկոնեանն էր:

Ո. ՓՓՒ

6.

Ըրմավանցիների դովասանական երգը[1])

— Աղջկերք, պար բռնեցէք,
Երմիկի երես գովեցէ՛ք,
Ե՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չ'թողնես սևերես:

«Թարձր ասրէն պաղ ջուր կու գայ,
Երմիկի երես կը լուայ.
Ե՜յ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կերես:

— Աղջկերք, պար բռնեցէք,
Երմիկի աչեր գովեցէ՛ք.
Ե՜յ աչեր, սիրուն աչեր,
Երևի պէս փայլուն աչեր:

«Երմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ.
Ե՜յ աչեր, վառ վառ աչեր,
Մանուշակի թաո թաո աչեր:

— Աղջկերք, պար բռնեցէք,
Երմիկի կռներ գովեցէ՛ք.
Ե՜յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ:

«Երմիկի կռներն է գերան,
Կըպատառի վագրի բերան.
Ե՜յ կռներ, գեթոտ կռներ,
Դուք կը բանաք մեր փակ դռներ:

— Աղջկերք, պար բռնեցէք,
Երմիկի հասակ գովեցէ՛ք.
Ե՜յ հասակ, բարձր հասակ,
Վրեղ կը վայլէ թագ ու պսակ:

«Երմիկի հասակն է սօսի,
Շուքը մեզանից չը պակասի.
Ե՜յ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չի տար քեզ թագ ու պսակ:

(Մնասին ու թռչկոտելով).

---

[1]) Խորհուրդ կ'տայի ամեն մի ճշմարիտ և անկեղծ հայի, որ ձեռք բերէր «Աղիշէի պատմութիւնը» կոչված գրքոյկը և կարդար ու միշտ կարդար:

Գ. Վ. Գրիգորեանց

[2]) Ըրմավանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութիւն էր անում, նորա վերայ գովասանական երգ էին շինում ու երգում ամեն ամեն օր: Երգում էին աղերքն ու աղջիկները ձեռք ձեռքից բռնած, խմբով ու պարելով: Այսպէս էլ Երեմանուկի (Երմիկի) վերայ շինեցին այս գովասանական երգը, որ երգում էին աղերքն ու աղջկերքը փոխ առ փոխ:

Գ. Ղեւոնդեանց

Ո՞վ պատուց վագրի բերան,
Ընիկ պատուց վագրի բերան.
Վագրի բերան — ահա այսքան —
Ծանիքնելը մկ մկ գերան.
Ապրի Ընիկ, ապրի շատ օր...
Իր թշնամին ընկնի գլոր...

7.

Գարուն Հայասատանի

Անցաւ սաստիկ ձմեռը,
Եկաւ գարձեալ նոր գարուն.
Սար, ձոր, անտառ, պաշտելը
Հազան հանդերձ զարդարուն:

Ծիծաղում է երկինքը,
Պայծառ փայլում է արև.
Ուրախ երգում է թռչնիկը,
Գարնան տալով իւր բարև:

Բայց իմ հոգին ընդհանուր
Խնդութեան չէ՛ համակրում.
Սիրտս հիւանդ է, ախտուր,
Նա այլ գարուն է խնդրում:

Գ. Բաշխո-դպետեանց

8.

Հայրենիք

Հայրենի՞ք . . . այս այն վայրն է նուիրական, զոր աիեզերաց Արարիչն նշանակած է իւրաքանչիւր ազգի իբրև իւր ընտանեկան օթեւանն և իւր բաժինն հողագնտոյս վերայ, յորում ամէն էակ իւր տեղն ունի: Այս այն սրբազան որոշանն է, յորում քակուած են իւրաքանչիւր ազգի խանձարուրք. այն տունն, յորում իւրաքանչիւր ժողովուրդ սնած, աճած և ապրած է իւր նախահարց շիրմաց քով և իւր մատաղ սերնդին շրջապատեալ՝ որ յետոյ քան զինքն կը սնանի, կ՛աճի և կ՛ապրի այն երանաւէտ վայրաց մէջ, ուր իւր հալք կենաց օդն ծծեցին և զոյս Թողին «իւրեան ի ժառանգութիւն:

Ամէն ազգ, ամէն ժողովուրդ արեգական տակ ունի իւր սեփական հայրենիքն: Նա, որ արծւոյն օթեւան տուած է երկնաբերձ քարաժայռից մըրկահոծ կատարն, ձնձղկան՝ սաղարթախիտ ծառոց թիւերն, առիւծուն՝ իւր մենաւոր անտառներն, յոյս իւր մեռուններուն ամպագոռ որոտմանց հետ կը մրցին, մրջնոյն՝ իւր գետնափոր սրահներն, և ձկանց մէջ բաժնած է ծովուց անծայր և անչափառակ անդունդներն, — նա մարդկային ազանց իւրաքանչիւրին ալ իւր բաժինն տուած է երկրագնդիս հողէն, ջրէն և օդէն, և այն հողոյ, ջրոյ և օդոյ բաժինն, որ անձնիւր ժողովրդեան յատկացած է երկնքէն՝ նորա հայրենիքն է այն:

Ինչ կայ առաւել քաղցր, առաւել պաշտելի ազգի մը համար, քան իւր հայրենիքն. ո՞չ ապաքէն այնու միայն նա ազգ մի է. ի՞նչ է ծառ մի՝ երբ իւր արմատն, իւր հողն չունի. իւր հողն, որ կուտայ իւրեան իւր

հիւթին, իւր մնունդն, իւր կեանքն. իւրէ ծառն երկրէն, որ զնա բուսոյց, կը ցամքի այն, կը թափթփին իւր աղաղուն տերևներն, զոր հողմն կը սփռէ յերեսս երկրի. տխուր բեկորք նորա, որ երբեմն ախորժ հովանի մը կը սփռէր անդ, ուր իւր բնիկ հողոյն հիւթն և բնիկ երկնից արևն կը վայելէր: Այսպէս է նաև ազգերու համար. անդ միայն կապրին, ուր սկիզբն են առած: Անդ ամեն ինչ իւրեանց մտաց և սրտին հետ կ'խօսի. անդ ամենէն աննշան առարկայք մարդոյն համար խորհրդաւոր լեզու մի ունին. հայրենի երկրին քարն, խոտին շիւղն, առուակին մի ալեակն հազար ու բիւր անոյշ բաներ կ'ըսեն և իւր գոյութեան անհրաժեշտ տարրերն կը կազմեն: Անդ է, զի մարդ, մի առ մի թուելով ամպածրար լեռներն, մթին նահատուներ անտառներն, լայնածաւալ հովիտներն, խորաձոր ծովծովներն, խայտահոս առուակներն, քաղցր հպարտութեամբ մի իւր լանջքն ուռած, կ'ըսէ. «Ի՛մ են այս հովիտք, ի՛մ այս ծովծովք, ի՛մ այս առուակք». և յետոյ անուշակ խոհանոց մէջ ընկղմած ականջ կը դնէ այն անվերջ ու սիրելի խօսքից զորս յի՛շատակօք լի այդ առարկայներն կ'ըսեն իւրեան:

Հայրենի՞քն, չէ՛, լոկ երկիր մի չէ այն. խորան մի է նա սրբազան՝ մարդկային սրտին համար. խորան մի ուր ամեն կողմ իւր նախնեաց ոսկոց հեռքերն ու մատանց նշաններն կը տեսնէ և որոց կամարք տակաւին նոցա ձայներովն կը թնդան իւր ականջին: Ըտաքս քան զայն ամէն ինչ օտար է մարդոյն համար, ամէն ինչ իւր հրապոյրներէն կը մերկանայ: Նա, որոյ համար բևեռին սառնամանիքն տուաճ է բնութիւնն ի հայրենիս՝ նոցա մէջ միայն հրապոյր կը գտնէ. Իտալիոյ անամպ ու ջինջ երկինքն և Հելվետիոյ ծաղկաւէտ մարգագետինք գառն աքսոր մի են իւրեան, և Սահարայի բոցակէզ անապատաց թափառական բնակչին նուազ քաղցր է դարնանատաց թափառական բնակչին նուազ քաղցր է դարնանա-

շունչ զեփիւռն քան սիմունն հրատոչոր: Այո՛, իրաւամբ ըսաւ հայրենասէր ոգի մի. «Ուր զօտար երկրի վարդ՝ անոյշ է հայրենի երկրին փուշ»:

Այլ լոկ հողն, ջուրն և օդն չէ՛ն, որ հայրենիք կը կազմեն: Ոտոր ինչ որ ազգի մի յատուկ է, բոլոր ինչ որ իւր սեփականութիւնն է և զայն միւս ազգերէն կ'ուրոշէ, բոլոր ինչ որ իւր նախնեաց սրբազան աւանդն և ժառանգութիւնն է նուիրական, այն ամենայն հայրենիքն կը կազմէ: Ամէն ինչ որ հայրենի է՝ հայրենեաց մի տարրն է, հայրենիք է այն: Հայրենի լեզուն, հայրենի կրօնքն, հայրենի գրականութիւնն, հայրենի պատմութիւնն, հայրենեաց մասերն են . . :

Եթէ նիւթական հայրենիքն այն տաճարն է, ուր իւր գրկին մէջ կը համախմբէ մի նախահօր սերունդներ, միևնոյն ազգի զաւակներ, ազգային լեզուն, կրօնքն, գրականութիւնն, պատմութիւնն, այն սուրբ և անբրեակաբարելի կապերն են, որք յիրեար կը կցորդեն համբիւն եղբայրներ և ազգերու անցելոյն, ներկային և ապագային մէջտեղ միութեան անջինջ գծերն են: Նիւթական հայրենիք և բարոյական հայրենիք միաձամբք ամբողջ են, մին միւսին կը վկայէ, ինչ որ մին կ'ըսէ, միւսն զայն կը հաստատէ, և մին այնքան պաշտելի է, որքան միւսն. կամ այսպէս ըսեմ, կարելի չէ գմին սիրել առանց գմիւսն սիրելոյ: Հայրենեաց այս սէրն բնութիւնն տնկած է մարդկային սրտին մէջ, բնազդումն մի է այն և բնազդմանց ամենէն զեղեցիկն, ամենէն վեհն:

Ո. Յ. Պէրպէրեան

Հայ. Հնութեան Թանգարան
Հոգ. Ընկ. Ընծայուած
ՀՈՒՇԱՐԱՆ
Ա. Մուշեղեան
Ա. Ստամպուլեան

9.

Մեր ազգի անցեալ և ներկայ դրութիւնը[1])

(Համառօտ)

Անցան օրեր, տարիք, դարեր,
Անցան պարսից բռնութիւն.
Մեր խեղճ ազգից արդ վերացան՝
Նոցա մոլի յարձակմունք:

Ամեն տարի, ամեն ամիս
Հայն պատերազմ կ՚տանէր,
Եւ նորա մէջ նորա արիւն,
Ո՜հ, անխնայ կ՚թափուէր:

Ամեն լոպէ նա պատրաստ էր՝
Իւր թշնամեաց յարձակման.
Ե՞ւ, պայպխի տանջանքներով
Մանուկ էր սեւ գերեզման:

Կամ մանուկ էր նա գերեզման,
Կամ թափուկ էր իւր արիւն,
Կամ բանտարկուած չարչարվում էր՝
Փառք տալով իւր Աստծուն:

---

[1]) Այս երգը երգուեցաւ առաջին անգամ Երևանայ Հայոց օրիորդական դպրոցում:
Հեղինակ

Ահ պայպխի դառն օրերով
Տարիք, դարեր անցուցին
Եւ բիւրաւոր մարդ նորանից
Հէնքը ձեռին զոհուեցին:

Իսկ այժմ հայն՝ անհոգ, հանգիստ,
Գոցանից է ազատուած,
Եւ միմիայն իւր անային
Գործերով է զբաղուած:

Էլ չէ սպասում նա թշնամուց՝
Հալածանքներ կրելու,
Էլ չէ սոխվում պարսիկներից՝
Կրթակապաշտ լինելու:

Նա պաշտում է իւր հաւատը,
Նա խօսում է իւր լեզուն,
Եւ աներկիւղ նա սերում է
Իւր հայրենիք, հայութիւն:

Որովհետև աջն հովանի
Պայծառութեան վեհ Ռուսաց,
Մեզ պաշտպան է և կ՚լինի՝
Մինչ աշխարհի կատարած:

Եկէք, ուրեմն, ով Հայ եղբայք,
Եկէք փառք տանք Բարձրին,
Եւ խնդրենք մենք երկայն կեանք՝
Ընկերասիրտ Պայծրին:

Էմին Տէր-Գրիգորեանց

10.

Ելի՛ համով ղուլու՛ղ ալա, խալխի նօքար Այհաթ-
Նօվա,
Եմեն մարդ չի կանա ձանգի շահով շըքար, Այհաթ-
Նօվա,
Օվ քեզի լեզի պալքիվէ, դուն տու՛ շաքար, Այհաթ-
Նօվա,
Պ՛ատա ալա շուշէդ չը կօտրին, չը խփին քար, Այ-
հաթ-Նօվա։

Թէդուզ ղըպլտատանըն պա՛հ տաս՝ ճիճով չի խրատ-
վի խիվըն,
Ինչրու անձնէն չը դուս էհայ անախտակի էն չար դիվըն,
Թէդասըն՝ ասըլ չի դառնա, թօլով չի սիպատակի սիվըն,
Նօուօրըն փեսըն չի ղըրըստի ռանդան, դուրդար Այ-
հաթ-Նօվա։

Թէդուզ իմանաս, գիտենաս աստղեր ու համբարքըն
սիրուն,
Ընբարի դուրձըն կորած է՝ կարթա՛ր արանց վարքըն
սիրուն,
Եւետարանի խօսկիրըն՝ մարքարիտ է, կարքըն սիրուն,
Մի՛ ածի խուզե առչիվըն լալ ու զօհար, Այհաթ-
Նօվա։

Թէ էս կինաց փառքըն չուզես՝ էն կինաց ալմասըն
կուտան,
Թէ հօքուդ խաթիր շալ հաքնիս՝ զար քաշած ատլա-
սըն կուտան,
. . . . . .
Խօստովանիս արած միկուդ, չանիս ինքար, Այհաթ-
Նօվա։

Վ՛ուր տիղ հասնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ
օղբաթ, խաղ է ըլըւմ,
Վ՛ուր տիղ ժամ, վուր տիղ պատարագ, վուր տիղ սի-
լօվ տաղ է ըլըւմ,
Թէվուր հօքուդ կամքնիս անուս, մարմինդ բէդամաղ է
ըլըւմ,
Վ՛ուր մէ դարդին կու դիմանաս, դո՛ւն ջըրատար Այ-
հաթ-Նօվա։

11.

1. Ընդքատ մանուկ եմ
Ընհայր ու անմայր,
Ձունիմ ինձ մի քոյր,
Ձունիմ ինձ եղբայր։

2. Տեսէ՛ք իմ շորեր,
Պատառ պատառ են,
Ձունիմ մի կօշիկ,
Որ ոտքըս հագնեմ։

3. Տեսէ՛ք իմ երես
Պեղնած և լղար,
Ո՛չ ոք թշուառիս
Չէ՛ տալիս մի ճար։

4. Տեսէ՛ք իմ աչեր
Ըրցունքից ուռած,
Իմ միակ ընկեր
Եղել է միշտ լաց։

5. Ուրիշ մանուկներ
Կուշտ ճաշ են ուտում,
Կալիս է գիշեր,—
Ա՛հիճ են մտնում։

6. Ախ ես, թշուառս,
Երբեմն չոր հաց
Ընգամ չե՛մ գտնում,
Պառնում եմ քաղցած։

7. Ձոր գետնի վերայ՝
Խոնաւ սենեակում
Ընանց մի բարձի
Պառկում եմ տրտում։

8. Ինչո՞ւ ես ծնայ,
Եկայ այս աշխարհ...
Ա՛ր՞թէ տեսնելու
Միայն լաց, աշխար։—

9. Ա՛ր՞թէ ողբալու
Իմ վաղ որբութիւն,
Ա՛ր՞թէ պատմելու
Իմ խեղճ դըրութիւն։

10. Ա՛ահը շատ անգամ
Ւ՛ոգայ է տանում;
Որոնք նորանից
Վ՛ախում են, սարսում։

11. Թո՛ղ ինձ նոցա տեղ
Տանի միւս աշխարհ.
Ե՞ս, այդ սև մահը
Կեանք է ինձ համար։

Կ. Սաֆաղեան

12.

Ընիի աւերակների առթիւ [1])

Մի ժողովրդի, մի հասարակութեան մէջ քանի շատ են ծնվում ընկերութիւններ, այնչափ ապացոյց է,

[1]) Կերում ենք այստեղ «Մշակ»ի գեղեցիկ և համակրական խօսքերը, որոնք գրուած են Պ. Պիւրքչեանի Ընիի աւերակների լուսանկարչական պատկերների մասին. «Շնորհակալութեամբ ստացանք Պ. Յովհաննէս Պիւրքչեանից նրա փոտոգրաֆիական աննման ժողովածուն Ընիի աւերակների։ Ժողովածուն արժէ 20 րուբլ և բաղկացած է 40 ստէրէօսկօպիական պատկերներից։ Ընիի հռչակաւոր աւերակները պէտք չունեն մեր պաշտպանութեան, բայց Պ. Պիւրքչեանի փոտոգրաֆիական աշխատութիւնների մասին կ'ասենք, որ շատ քիչ է պատահում տեսնել այդ տեսակ մաքուր և անսխալ փոտոգրաֆիաներ։ Եւ այդ մեր կարծիքը չէ միայն։ Մենք առիթ ունեցանք ներկայ գտնվել, երբ Պ. Պիւրքչեան ներկայացրեց իր ժողովածուն պրօֆէսօր Վ. Իրխովին [2])։ Վիտնականը հիացած էր հայոց հոյակապ,

1) Թուգօլի Վիրխովը, գերմանացի հռչակաւոր բժիշկ պրօֆէսօրը, էր առեղամ հնագիտական ժողովի, որ կայացաւ 1881 թ. սեպտեմբեր ամսին, փոխարքայի պալատում, Թիֆլիսի մէջ, ուր աշխարհի զանազան կողմերից գիտնական մարդիկ հաւաքվելով՝ կռվակասը ուսումնասիրելու և նորա հնութեան հետազօտութեամբ էին զբաղուած։ Այդ ժողովին մասնակցում էին և մեր յայտնի հայագէտ գիտնականներից երկուսը, այն է՝ Պ. Պ. Էմին և Պատկանեան։

Գ. Ք. Գրիգորեանց

որ այդ ժողովուրդը, այդ հասարակութիւնը շարժման մէջ է, առաջ է գնում, ընկերական, հասարակական շահերի համար միաք ունի, սիրտ ունի։ Ընկերութեան զարգացման հիմնական միաքը բովանդակում է իւր մէջ միացած ոյժերի գործադրումը։

Ո՞վ չը գիտէ, որ միութիւնը ոյժ է։ Երդէն ազգ, պետութիւն, ժողովուրդ, հասարակութիւն, որքան էլ որ իրենց մասնաւոր ձգտումներով, յատկութիւններով բաժանվում, որոշվում լինէին միմեանցից՝ մէկ յատկութիւն ունին դրանք, որ ամենին ընդհանուր է, որի վերայ դրանք ամենքը հիմնած են, մարդկների խմբովին, ընկերական կենցաղավարութիւնը յատուկ օրէնքներով միացած։

Վանի մի երկրում երևան են գալիս զանազան ընկերութիւններ, պէսպէս նպատակներով, այնքան ապացոյց է, որ այդ երկրի ժողովրդի, հասարակութեան մէջ կեանքը եռ է գալիս, որ նրա պահանջները աւելացել են, մասնաւորվել են. այդ ընկերութիւններից իւրաքանչիւրը իւր կէսից ծառայելով ժողովրդի, հասարակութեան օգտին, աւելի բարձր զարգացման, աւելի բարօրութեան է հասցնում ժողովուրդը, հասարակութիւնը։

Միւս կողմից, որովհետև այդ ընկերութիւնները իրենց սկիզբը առնում են ժողովրդից, հասարակութիւնից, հասկանալի է, որ քանի մի որոշ ժողովուրդ, քա-

փառաւոր և շնորհալի ճարտարապետութիւնից և աւելացրեց նոյն իսկ վերոյիշեալ խօսքերը. «Ինձ շատ հաճելի է պատահել տեսնել այդ տեսակ մաքուր և անսխալ փոտոգրաֆիայ»։ Երդեօք հայոց հասարակութիւնը ցոյց կը տայ իր համակրութիւնը Ընիի աւերակների նկարչին, առնելով նրա ժողովածուն, որի ստեղծելու վրա Պ. Պիւրքչեան ահագին անձնական ջանք, աշխատութիւն և դրամական միջոցներ է գործ դրել»։

«Մշակ»

նէ մի որոշ հասարակութիւն զարգացած է, ընկերական կեանքի համար պատրաստ, այնքան տեղական, այնքան արգասաւոր են լինում նրանք:

Այսպէս մի ազգի, մի ժողովրդի, մի հասարակութեան զարգացման աստիճանը, մտաւոր, բարոյական, նիւթական ոյժը, կարողութիւնը շատ հեշտ կարելի է չափել, ուսումնասիրելով և նրա մէջ եղած ընկերութիւնների ձգտումները, կեանքը, գործունէութիւնը, ոյժը:

Բարբարոս ազգերը, մարդկութեան հրեշները՝ աւերեցին, հիմնայատակ արեցին Հայաստանը, և Հայերը ցրուած են աշխարհիս շատ կողմերը, և մէկ մասն էլ Ռուսիայում: Երբեմն Հայերը գիտե՞ն իրենց նախորդների, իրենց պապերի պատմութիւնը. արդեօք ուսումնասիրե՞լ են նրան, հասկացե՞լ են նրա նշանակութիւնը:

Հայերը սովորութիւն են շինել և միշտ պատիհ թէ անպատիհ կրկնում են, որ իրենք ամենահին ազգերից մէկին են պատկանում, որ իրենք ունեցել են իրենց անցեալը, ունին իրենց ճոխ գրականութիւնը, ունին իրենց պատմական յիշատակները . . . բայց մինչև օրս կա՞յ հայերի մէջ մի ընկերութիւն, թեկուզ լինէր դա շատ համեստ շրջանակում կազմած. մի ընկերութիւն, որ ուսումնասիրէր հայութեան անցեալը, նրա պատմական յիշատակները, հայերի անցած, գնացած մտքերի, զգացմունքների, գործերի աւերակները . . . :

Երբեմն կա՞յ հայերի մէջ մի «Հնասէրների» ընկերութիւն, որը հայերի անցեալը լուսաբանէր, հնութիւնները քննէր, հնութեան յիշատակները, պատմութեան, անցեալի անդին յիշատակները պահպանէր, և այդ նուիրական գործին նուիրված անձին օգնէր, խրախուսէր, նպաստէր: Ո՛չ հայերը չ՛ունին այդպիսի ընկերութիւն: Ո՛չ անցեալի գիտութիւնը, հետազօտութիւնը մի ազգի համար անհրաժեշտ է, թէ մի ազգի անցեալ մեծ գործերի, գեղեցիկ մտքերի, ազնիւ զգացմունքների յիշատակները, աւերակները բարոյապէս բարձրացընող, ազնուացնող, ոգեւորող ներգործութիւն, ազգութիւն ունին նոյն ազգի ներկայ սերունդի հոգու, սրտի, մտքի վերայ —այդ այնքան հաստատ է, որ նրա վերայ խօսելը աւելորդ է:

Յոյները իրենց անկախութիւնը կորցնելով, բարբարոս, վայրենի ցեղերի ժողովուրդների տակ ճնշուած, սարկութեան լուծը կրելով՝ չէին մոռացել որ ունէին այնպիսի մի փառաւոր, գեղեցիկ անցեալ որի նմանը դժուար թէ մի ուրիշ ազգ ունենար: Յոյները հասան ինքնաճանաչութեան, երբ սկսան իրենց անցեալը գիտակցաբար ուսումնասիրել երբ յետագայ սերունդը սկսեց ոգեւորուել իւր նախորդների մտքի, հոգու, ճաշակի աքանչելագործութիւններով: Յունական փառաւոր կլասիկական անցեալը ոգեւորում էր արեւմուտքին, և Եւրոպան անցեալի սիրոյն համակրում էր այժմեան հելլէններին: Յոյն հայրենասէրները Եւրոպայում ցրուած ո՛չ փող, ո՛չ աշխատանք չէին խնայում իրենց հայրենիքի համար: Անցեալի փառաւոր յիշատակներով ոգեւորում էին նրանք այնպիսի մարդիկներին, ինչպիսին էր լորդ Բայրընը:

Հայերը, ի հարկէ, չունին յոյների աքանչելի անցեալը, բայց ունին այնպիսի մի անցեալ, որով կարող են պարծենալ. արդեօք մինչև օրս մի բան արե՞լ են իրենց անցեալի համար հայերը: Երբեմն այդ տարբերութիւնը դէպի անցեալը իւր դատավճիռը չէ՞ դնում հայ ազգի ապագայի վերայ: Մի երիտասարդ հայ, ուզում ենք ասել Պիւլբչեանը, ահա քանի տարի է, մենակ, իւր սեպհական միջոցներով աշխատել է Անիի հնութիւնների վերայ: Բազատունի տան մայրաքաղաքի

աւելականները, որոնք վկայում են անցեալում հայութեան փառքի, մեծութեան, գեղեցիկ արհեստի, ճաշակի նըրբութիւնը . . . ո՛չ թէ նկարել է Վիւրքչեանը, չէ, այդ չէ ասել նա: Նկարը, պատկերը կարող էր աւելացրած, չափազանցրած կամ սխալ լինել. նա լուսանկարել է Ենիի աւելականները: Եւ այդ այնպիսի ճշդութեամբ, այնպիսի նրբութեամբ, այնպիսի ճարտար արհեստով, որ պատկերի, նկարի գեղեցկութիւնը ոչնչանալով, ունի և լուսանկարին յատուկ ճշդութիւնը: Նոյն իսկ Եւրոպայի հռչակաւոր մասնագէտները հիացած են այդ լուսանկարների մաքրութեան, գեղեցկութեան և ճշդութեան վերայ մինչև մանրամասը:

Բայց կա՛յ արդեօք մի ընկերութիւն, որ նպատակը Վիւրքչեանի ճշմարիտ ծանր, անձնուէր և գեղեցիկ աշխատանքին կամ հասարակութիւնը քաջալերո՞ւմ է աւելականների այդ հրիտասարդ լուսանկարողին: Այդպիսի բան չկայ. հայերի մէջ ինչպէս ամէն բան, նոյնպէս և դա մասնաւոր մարդիկների համակրութեան շրջանակից չէ դուրս եկել:

Ի՞նչ է սպասում մեզանից հասարակութիւնը. բացատրե՞նք Ենիի աւելականների նշանակութիւնը, թէ՞ հասկացնենք, որ աւելն օգուտ է հայի համար, երէ Վիւրքչեանի լուսանկարների օրինակները տարածուած լինեն Եւրոպայում, թէկուզ ուսումնարաններում, քան թէ այժմեան հայ ջարչիների կեղտոտ հագուստներով, կասկածաւոր դէմքով կենդանի, շարժուն պատկերները, որոնք միայն հայ անունը անպատուում են, և հայութիւնը ատելի դարձնում: Ի՞նչ են կարծում. հարկաւո՞ր է արդեօք խօսել Վիւրքչեանի լուսանկարների հրիտասարդ սերունդի, մաքի, սրտի, կրթութեան վերայ ունեցած նպաստի մասին: Մ՚երէ պէտք է ասենք, որ ամէն հայ տան, ամէն մի օրինաւոր հայ ընտանիքի

բնակարանի անհրաժեշտ զարդերից մէկը պէտք է լինեն Ենիի աւելականների լուսանկարները:

Առանց մեծ ծախքեր անելու, առանց ճանապարհի նեղութիւնը քաշելու, առանց ցրտի կամ շոգի ենթարկվելու, սենեակումը փափուկ նստած՝ մենք տեսնում ենք Ենին իւր փառաւոր, իւր սքանչելի աւելականերով մեր առջևը կանգնած: Ի՞նչ մեծութիւն, ի՞նչ վսեմութիւն, ի՞նչ արհեստ, ի՞նչ գեղեցիկ ճաշակ, ի՞նչ նուրբ մտածմունք և ի՞նչ ճարտարապետութիւններ . . . անցեալի մեծութիւնը, անցեալի փառքը, անցած գործերը, միտքը, զգացմունքը առած, քարացած հանդէս են դուրս գալիս մեր առաջ: Ոչ յատակ շքեղ միւսիոնով զարդարած արքունի պալատներ, այնտեղ նուրբ, սքանչելի նկուղեցիներ, մէկ կողմը գրանոցներ, միւս կողմը արքունի տան հանգստարանը, մատուռը, ահա միջնաբերդը, աշտարակները, մի փոքր այն կողմը՝ Բագրատունեաց պալատի շքեղ գահլիճը, նայի՛ր, այդտեղից վայր-Օտակոցավայրի վերայ, հեռու այն կողմը Ախուրեան ձորի մէջ Հաբաւեայ սպասալարի մենաստանը, նայի՛ր դէպի հարաւ-արևմուտք և ահա մայր եկեղեցին, հայ ճարտարապետութեան պարծանքը . . . շուռ եկ դէպի Ախուրեան ձորի եղերքը և կը տեսնես արքունի խորհրդարանի բազմասիւն դահլիճը, միւս կողմը արքունի բաղանիքը . . . քանի՛ քանի՛ աւելականներ, նուրբ, գեղեցիկ քանդակագործութեամբ . . . և այս ամենս լուռ ու մունջ աղաղակ են բարձրացնում և մեր աչքին, հոգու առաջ անձայն խօսում, պատմում են մեր նախորդների գործերը, նրանց կեցութիւնը . . . բայց ո՛չ, նրանք չեն պատմում, այլ ներկայացնում են, մենք մեր աչքովը տեսնում ենք, մեր ականջները խուլ են ճնում, մեր հոգին է լսում, մեր սիրտն է միայն զգում, որովհետև նրանք լեզու չունեին, անխօս են և ա-

հա՛ մեր առաջ մի սքանչելի, պատմական պանոռամիմի ներկայացումն. իշխաններըը նստած խորհրդարանում՝ օրէնքներ են հաստատում, թագաւորը մայր եկեղեցումը Կաթուղիկոսի ձեռքով թագաւոր է օծվում. զօրքերը, պատերազմի դաշակց յաղթանակով յետ դառնալիս, հանդիսով գնում են հանգստանալու զօրանոցում, արքունի բաղանիքից դուրս են գալիս իշխանազն աղջիկները, ահա՛ արքունի պալատում շքեղ հանդէս է. թագաժառանգը խլոխտ նժոյգի վերայ բազմած՝ մտնում է արքունի պալատի փառաւոր դռներովը, միւս կողմը, պալատի մեկ գեղեցիկ պատուհանի մօտ նստած է թագաւորի գեղեցիկ աղջիկը, ոսկեայ դէմքով, աչքը ճանապարհին ձգած. իւր սիրոյ առարկան հեռու աշխարհներումն է: Կաթիլ կաթիլ արցունքները գլորվում են և ցոյց են տալիս, որ ամենաջերմ սէրը գաղտնի սէրն է. մի փոքր այն կողմը յուզարկաւորութեան շքեղ հանդէս է. արքայազն փոքրիկ իշխանին տանում են թագեղբ թագաւորազն մանուկների հանգստարանում: Այստեղ թագուհին նստած իւր ննջարանում՝ սգում է իւր զաւակի մահը . . . այս ամէն անցեալը ներկայութիւնը, այս անձայն գործողութիւնը, այս հեռուի մօտիկութիւնը, այս անխօս կենդանութիւնը, այս փառաւոր գործերի, մաքերի, զգացմունքների յիշատակները լրնոց հանդիսաւոր լռութեամբ ճնշում են միանգամայն մեր երևակայութիւնը, մեր սիրտը. մի սուրբ երկիւղով, մի ահռելի պատկառանքով խոնարհում ենք մենք-Ընկի աւերակների առաջ: Ջաղցր և սիրուն երազներ գրկում են մեզ . . . :

Այս ամենս տեսնում ենք, այս ամենս վայելում ենք մենք Պիւրքչեանի նկարների շնորհիւ:

Երբեմն մի չնչին բան ո՞ր կ՚ուզեն մի գումա՛ր է այդ բանի համար:

Սպանդար Սպանդարեան

18.

Պ ա ր է զ

Երի՛ք, քոյրեր, պա՛ր բոլորինք,
Թև թևի տանք, մեկտեղ պարինք.
Ուրախ սրտով, ծիծաղ դէմքով
Եռ Խարձրելոյն այսպէս ասենք.
Տո՛ւր երկար կեանք և զօրութիւն
Համեստուհի մեր վարժուհւոյն:

Ձորս ոտք՝ ի ձախ երթանք անդին,
Ձորս ոտք՝ ի ձախ երթանք անդին,
Մի ոտք ի յաջ, մի ոտք ի ձախ,
Երկուս՝ ի ձախ դարձեալ անդին,
Երկուս էլ յաջ դառնանք կրկին:

Թև ու թիկունք ուղիղ բռնած,
Ոտք ու սրունք կարգաւ շարժինք,
Կաքաւի պէս մանր ու բարակ
Թռչտտելով այսպէս ասենք.
Տո՛ւր երկար կեանք և զօրութիւն
Համեստուհի մեր վարժուհւոյն:

Մեր վարժուհւոյն երկա՛ր արև,
Որ մեզ ուսուցել է պարել,
Ուսուցել է մեզի նաև
Կարդալ-գրել, խաղալ, երգել:
Տո՛ւր երկար կեանք հայկն:

Ելի՛ք, քայլե՛ր, դալձեալ պարենք,
Զեռք ձեռք բռնած պար կըրենք,
Խարակ ներդաշնակ երգելով՝
Առ Տէրն մեր այսպէս ասենք.
Տո՛ւր երկար կեանք Հայլն։

Մէկտեղ մտնենք ուսումնարան,
Մէկտեղ դասեր առնենք, սերտենք,
Մէկտեղ դրենք, մէկտեղ կարդանք,
Մէկտեղ խաղանք, խնդանք, ասենք.
Տո՛ւր երկար կեանք Հայլն։

Վանի որ դեռ մենք մանուկ ենք,
Օ՜ւր ժամանակ չը կորցնենք,
Թէ ո՛չ մեր այս անգին օրեր
Կ՚անցնեին, կ՚երթան։ Ուրեմն ասենք.
Տո՛ւր երկար կեանք Հայլն։

Գո՛հ ենք քեզնից, Տէ՛ր Աստուած մեր,
Որ մեզ տուել ես ուսման սէր,
Տուել ես դու մեզի նաև
Ժիր վարժուհի աշխատասէր։
Տո՛ւր երկար կեանք և զօրութիւն
Հաւեստուհի մեր վարժուհուդին։

Մանուկ Թամքաճեանց

14.

Թռչնիս

Էյդպէս չեղաւ, միսը ուրիշ կերպ աղէ,
Վհգի կըսեմ, հալածը չէ շիպ, աղ է,
Մի՛ ըշտապիր, ո՛չ քրտընէ, ո՛չ պաղէ,
Խելքդ հասուր կամ թէ ապշէ ու պաղէ։

Թռուղի որ խաղանք, հա՛մ թռչաւոր կայ, հա՛մ աս,
Էյո՛, բաժին մէկ մէկ վանկով են հա՛, մաս,
Կա՛նգնայք, դիտեմ, ձեր միջը կայ մէկ հա՛մաս,
Ի՞նչպէս չըսեմ, համած ջուրը շատ պաղ է։

Գընա՛, աշէ՛, դուռը բաց է, թէ ա՛խ է,
Մի՛ վախենար, կըրակը տա՛ր ու ախէ՛,
Ի՞նչ կայ սիրտդ, որ քաշածդ միշտ «ա՛խ» է,
Ձըլե՞ ցաւիս, թէ երեսը շատ պաղ է։

Թօլիկ բառ կայ, չը մոռանաք, կայ թօլիկ,
Փոքրիկ կաթօլ կամ մէկ բառով Կաթօլիկ,
Ելլէք եմ, դուք տեսած էք, Հայ-Կաթօլիկ,
Գիտցիք, այսօր սիրտըս պաղչա ու պաղ է։

Մկրտիչ Ալիքանեանց

15.

Բաժակ փրկութեան

Ահա մթնեց արեւմուտքը Հրեաստանի աշխարհին,
Պայծառ օրը տեղի տըւեց երեկոյեան խաւարին,
Երեզաման վերջին լուսով դեռ կը փայլէր վառ ի վառ
Գրկած պատած այգիներով Ելէոնին սուրբ կատար։

Երուսաղէմ—փառք հրնուէիան՝ լերանց վերայ հանդչում էր,
Կարկաչելով Յորդանանը ափերի մէջ թաքչում էր.
Մեհեան-ծովը քընաթաթախ, աչերն 'ի վեր ամբարձած,
Համարում էր անթիւ աստղեր՝ երկնից տեսքին ըսմայլած։

Մութը լջաւ... տալտածուեցաւ գերեզմանի լռութիւնն,
Ծագեց լուսինն ու լոյս տուեց Գեթսեմանի այգիուն.
Ձիթենիի ծառի տակ, հողի վերայ տալտածուած,
Երիք հոգի քուն մըտել են՝ գալդն ու հոգսը մոռացած։

Բայց ուրիշ քուն կաշկանդել էր համայն ազգը մարդկութեան,
Խրոխտ, թաղուած մինչեւ կոկորդ ձահիճի մէջ մոլութեան.
Մինչ Մինի սուրբ աչերից քունը հեռի էր փախչուս,
Ո՛չ խայթ խըղճի, ոչ աշխարանք նորա հոգին էր տանջում։

Նա անմեղ էր. մոլութիւնին նա միշտ մընաց անհաղորդ,
Ոչ մարդկութեան համար թափեց այն օր արցունք աչքից յորդ.
Մահագուշակ սարսուռ ընկաւ նորա տրկար մարմինին,
Երբ փրկութեան մարդկան ազգի բաժակ տեսաւ առաջին։

«Հայր, կոչեց Նա, վիշտը հոգին իմ ճընշումէ չարաչար,
Քանի որ գամ, պըտակ ու փուշ աչքէս անցնում են շար շար.
Ուրգայ ժամը, Ես այդ գիտեմ, գառը կ՝լինի ողջակէզ,
Ձի՛ տրանջալ իւր վիճակէն, կը խոնարհէ գլուխը հեզ։

«Միակ Որդիդ պիտի մեռնի, որ ազգ մարդկան ազատէ,
Ընդոհ մարդը նորա գլխուն հայհոյանքներ կը թափէ.
Հայր, Հայր, ինձնից թո՛ղ հեռանայ այս բաժակը գառնութեան,

Որոնց համար Ես պիտ՝մեռնիմ՝ բընաւ չ՝ածին փրկութեան.
Բայց թէ Որդուդ գառը մահը ազդիդ կուտայ նոր մի կեանք,
Նոցա անթիւ մեղաց համար լեցի արիւնն իմ փըրկանք»։

Գամա-Քամպա

16.

Ընտ աբևն

Երևե, արև, գու մեզանից
Երբ հեռացար դէպ հարաւ,
Ձմեռն եկաւ և ամեն ինչ
Յափշտակեց ու տարաւ։

Ըստուած սիրես, էլ չ՝գնաս
Այլ միշտ մնա գու մեզ մօտ.
Քեզ կը պատուենք, քեզ կը գովենք
Ամեն ըրկուն, առաւօտ։

Ոչքա՞ն գո՛հ ենք, որ գու բերիր
Գարնան անուշ եղանակ.
Ե՞ս երանի գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ։

Տե՛ս թէ ինչպե՞ս փթըթել են
Թէ ծառ, ծաղիկ և թէ խոտ.
Տե՛ս թէ ինչպե՞ս տարածուել է,
Ամենայն տեղ անուշ հոտ։

Քե՛զ են գովում թռչնիկները
Իրանց քաղցր դայլայլով,
Հովիւն իրան մեղմիկ սրինգով,
Հոտատն անուշ հոլովով։

Արև, արև, էլ չ'գնաս,
Այլ միշտ ինձ դու մեղ մօտ,
Մեզ կը պատուենք, քեզ կը գովենք
Ամեն լիկուն, առաւօտ:

Գ. Ղազիեանց

17.

Վ Ի Ւ Ն Ի Ա Թ Դ Ի Ւ Ա Ն Ի.

Աշխատի՛ր, կեանքիս հատոր, աշխարհի մէջ պայծառ լինիս,
Պայծառ արփի, արփի արև, արևի պէս վառ լինի,
Սրբութեան, պարկեշտութեան կեանքին հետևի՛ր, պատուելի,
Պատուելի մարդ, մարդ կատարեալ, կատարեալ ու գառնիս:

Ատուծոյ տուած բանը, պատուէրները պի՛նդ պահպանէ,
Պահպանէ՛ միշտ, միշտ դու կանանչ կանանչ ու թարմ ծառ լինիս.
Ո՛վ սիրելի, կարգա՛ բարի խղճով գլուած գրքերը,
Գրքերը սուրբ՝ սուրբ դու սրտով, սրտով անաչառ լինիս:

Աքսոմդ ձեռ՛ք, չափէ՛, եղե՛ր բանիմաց գպրոցն,
Օգտայուն սիրտ, սիրտ բարութեան, բարութեան պատճառ լինիս,
Ուղղութեան ճանապարհը բռնէ՛, հետևի՛ր, ո՛վ Յովհան,
Ո՛վ Յովհա՛ն դու, դու պատկերով, պատկերով կայտառ լինիս:

18.

Գ ե ղ ջ ո ւ կ

Առաւօտը վաղ, ադամայ մութին
«Ճըռռռ» լսվում է մի սուր բարձր ձայն,
Որաշտարն է նա՝ մրմունջը բերնին
Բացում է դուռը իր խարխուլ գոմին:

Հոգում է եղանց իր կոշտ ձեռներով,
Տրորում է նոցա պլըզիկ աչքեր
Եւ մեղմ ու հանդարտ ձայնով գոդգոջուն
Նոցա ականջին երգելով ասում:

— Հա՜ իմ սարդարներ, անխոնջ մշակներ,
Գուք երկրագործի աջ ու ձախ ձեռներ,
Ելձակեմ ես ձեր վրի կապանքներ,
Եղթա՛նք այցելենք ծաղկալից գաշտեր:

Ահա հասել է գարուն կենսաբեր,
Մեր առաջ բացել խոտաւէտ մարգեր —
Գութան պիտ ձգենք, հողը տապալենք,
Էջ ու ձախ փռենք մենք անթիւ սերմեր:

Հապա շուտ է գալիս ամառը հասնում,
Մեր ամեն բարիք նա է մեզ բերում:
Ես պէտք է հրնձեմ, խուրձեր կապառեմ,
Իսկ ձեզ, իմ քաջեր, պիտ լծեմ սայլում:

Գէհ, իմ եղներ, շո՛ւտ ելէք
Եղթա՛նք արօտ արածէք:

*

Նորա հանգից մեծ — մեծ քայլերով
Եշունն է գալիս — սիրուն եղանակ.
Վարած հողերի կոշտ թումբերը
Մանրել փշրելու յարմար ժամանակ։

Ամէ հողի կակուղ, փխրուն շերտերում
Հապռում, ցանում յուսոյ հատիկներ.
Յաքան ենք անում, խնդրելով երկնուց
Լաւ օր, յաջող կեանք, տարի պտղաբեր։

Էքդ ձգում ես, ձմեռ է առաջիդ,
Քամին ու բուքը փչումեն սաստիկ,
«Ներթանք անտառը», կանչում են մարդիկ,
«Գնանք է փայտը, չունինք վառելիք»։

Հրե՛կ, հա Թրե՛կ, ես փայտ եմ կտրում,
Վիթխարի ծառեր գետնին տապալում.
Կարի՛ր, իմ կացին, ջարդի՛ր համարձակ,
Որ մեր օջախում միշտ լինի կրակ։

Ձիւնը թափվում է, քամին զօղանջում,
Չնի մանչիկներ երեսիդ խփում.
Փայտով լի սայլը առաջ է գնում,
Յեխի մէջ ակը ձրստա ու վըստա անում։

Ես դուք, իմ քաջեր, ոլորվում, ձգվում
Ծառեր լծի տակ, ահ, ծլչափ քրտնում...
Տարին պատռում է, սահում, գլորվում,
Գարձեալ նոյն հոգսեր նորից մեզ բերում։

Գէհ, իմ եղներ, իմ ջուխտակ աչեր,
Ներէք, դաշտ երթանք, նորոգէք ոյժեր։

Վ. Ալազան

19.

Հայ աստան

Առողջարար օդ ունեցող
Կան շատ տեղեր այս երկրում,
Բայց ղովաշունչ օդոյդ նման
Չունի ոչ ոք, Հայաստան։

Հատ քաղցրահամ սառ աղբիւրներ
Ունի աշխարհիս վերայ կան,
Բայց բիւրականան աղբերց նման
Չունի ոչ ոք, Հայաստան։

Հաղարաւոր գետեր տեսայ
Աշխարհի անկիւններում,
Բայց Եփրատ և Տիգրիս չկայ
Ոչ մի տեղում, Հայաստան։

Հատ տեսել եմ բարձր լեռներ
Աշխարհիս չորս կողմերում,
Բայց մեծ Մասիս լերան նման
Չունի ոչ ոք, Հայաստան։

Բազմատեսակ պտուղներով
Հատ տեղերում դաշտեր կան,
Բայց քո Արարատիդ նման
Չունի ոչ ոք, Հայաստան։

Թէև երկրանգնդի վերան
Հատ մեծ ճոխ քաղաքներ կան,
Բայց աւերակ Անիդ նման
Չունի ոչ ոք, Հայաստան։

Այսուն աւելր վանքեր լի ևն
Աշխարհիս կողմեր ամեն,
Բայց Սուրբ Էջմիածնիդ նման
Ձունի ոչ ոք, Հայաստան։

Գ—ատ

20.

Ա յ ծ ե ա մ

Անհոգ ես, չես գիտեր, ինչ կայ քո մասին,
Պարավուժեն քո խեղճ անձի վերասին,
Գամբռնելով, բարակնելով միասին.
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, ոլականն է գալիս,
Ձագիկնելդ ախուր լալի՛ս են, լալի՛ս։

Ոլականը ճրագով քեզի ման կուգայ,
Ուզէ ձեռքերը քու արիւնով լուայ,
Խղճալի, քու սեղակ սար ու ձոր կուլայ.
Փախի՛ր, այծեամ, և այլն։

Ոլականը գութ չունի, կանէ կլակը,
Ամէն քեզի կ՚սպանէ, համ քու զաւակը,
Ջուր չի՛ անցնիլ հրացանի փնդակը.
Փախի՛ր, այծեամ, և այլն։

Պաշտումդ չի՛ս ման գալ, թէ մտածես լաւ,
Պիղ կ՚վերաւորին, կ՚ատանաս մեծ ցաւ,
Պուրս մի՛ եղեր խիտ անտառից դու բնաւ.
Փախի՛ր, այծեամ, փախիր, ոլականն է գալիս,
Ձագիկնելդ ախուր լալի՛ս են, լալի՛ս։

Ղազ—ՙէ—անէ

21.

Ա յ ս պ է ս է ր

Աչք գեղանիշ՝ որպէս աստղունք,
Այտեր զինէ վարդ դրախտի,
Ծիծաղ ծիծաղ.

Յօնք սևորակ, դէմք բոլորակ
Երփուշ նման փայլփայլէ
Ուրախ ուրախ.

Հասակ նոճեաց, շատ գեղեցիկ,
Շատ վայելուչ, շատ չքնաղ,
Մատաղ, մատաղ.

Խօսքն անոյշ, սիրտ կաթողին,
Վարքն հաճեստ և խաղաղ,
Ձքնաղ, չքնաղ.

Միտքն առողջ և խոհական,
Հանճար ունի զօրաւոր,
Ղօրաւոր ազուոր.

Ը՜հ, երանի՜ այն փեսային,
Որ քեզ լինի արժանի
Վանի՜ քանի՜.

Երկնապարգև քո պսակին
Տիրէք Ճան անթառամ,
Շուշան, շուշան։

Ղազ Վարժապետ Մեծոպոնեանց

22 [1]).

Ըրի՛, անձն իմ, մեկուսացի՛ր,
Ի բազմութեանց այս հեռացիր.
Օ՛ր ժամանակն է այլայլեալ,
Օ՛ուտ բարեկամ ոք չճնաց:

Ընձն իւր անձին օգնել չանայ,
Ոեուն ընկերին ո՛չ ոք բառնայ,
Ո՛ւան Ըստուծոյ յումեքէ յոք
Կպաստարար ոք չճնաց:

Եղբայր եղբօր վիճաբանի,
Իբր օտարի՝ ընդդէմ գինի.
Ընկեր գընկեր գաւաճանէ,
Եղբայրասէր ոք չճնաց:

Ըմենայն ոք չանայ զրկել,
Իբրու օձն այն խաբ արկանել,
Ո՛ւան այն ի սիրտ և ի լեզու
Սուգաբան ոք չճնաց:

Ընքատ՝ հպարտ, ծերք՝ ճակաճանք,
Ւսկ մեծատունքն՝ են ստաբանք,
Յումէ՞ յուսաս գու բարուրթիւն,
Օ՛ր երկիւղած ոք չճնաց:

23.

Ո՛վ մեծ իմաստ, է՞ր երկնչիս,
Ի մարդկանէ ընդէ՞ր փախչիս,
Ժամանակն է կշիռ կենաց,
Ընչայլութիւն՝ ի մեղ ճնաց:

Ցերծոպ այդ սէր ո՛չ գտանի,
Ըաղիւ զորդիս հայր ընդունի,
Ըօթն եղբարց իւրովք՝ ի ճաշ
Նազիլ՝ ի գիւղս Ըայոց ճնաց:

Իբր՝ ի բազում յատուկ է այն,
Ընդ էե՛ն զրկողք ամենեքեան.
Ըպա յայնս՝ յորս է հոգին՝
Ն՛շմարտութիւն բանից ճնաց:

Ընն մոլութիւնք էե՛ն սեպհական,
Խղճի ծերոց և մեծատան.
Ն՛եծ մեղապարտն թէպէտ և եմ,
Ընդ տեառն երկիւղ՝ ի յոլովս ճնաց:

---

[1]) Սորան, իւր պատասխանով, հրատարակել կամեցայ թէ՛ իբրև հնութիւնք, գրուած 1805 թուին, և թէ՛ անցեալի վերայ մի գաղափար կազմելու նպատակաւ:

Գ. Վ. Գէնճոլեանց

Ա՛ճառականք են խարդախողք,
Ըրհեստաւորք՝ խարդաւանողք.
Ւենգիւ խաբել ջանան միմեանց,
Ուղղահաշիւ ոք չճնաց:

Ւսպառ բարձեալ են իրաւունք,
Օ՛րկանք տիրեալ ամէն կողմունք,
Ի մեծամեծս և առ ստրուկս
Ըրդարադատ ոք չճնաց:

Ջ՛անք ամենից ի ներկայիս՝
Ա՛յելչութիւնք, հոգս աշխարհիս,
Ւսկ վասն աւուրց հանդերձելոց՝
Ընդ այնու չե՛մք կորուսեալ,
Ընդ հոգածու ոք չճնաց:

Ըմն՝ ի գնել, ոմն՝ ի վորձել,
Եւ պղերգ ոմն՝ ի կին ածել.
Ի կոչն ընթրեաց արքայութեան
Ուղևորեալ ոք չճնաց:

Վարթամք խնջոյս են զբաղեալ,
Եւ՝ ի գլխանս են պարապեալ,
Կարօտելոց փշուր հացի
Ա՛տակարար ոք չճնաց:

Հ՛րթունք կիզին պապակելոց
Ջ՛երմիւ տապոյ ծարաւելոց,
Ն՛ագիւ մատին՝ ջուր զովութեան
Ա՛տուռակող ոք չ՛ճնաց:

Գահութեան են նշմարանք,
Ըմենեքեան չե՛ն խարդաւանք.
Ի բարեպաշտս և յերկիւղածս
Ընդ աշխուն միշտ ուղիղ ճնաց:

Ընդարացոյն է իսկ բարձեալ,
Նաև պարսկին բնաւ վերացեալ.
Ընդ և՛ ի գոռոզս և՛ ի ռուս
Ըրդարութեան մանն ճնաց:

Ջ՛անան զրկել և զտուն պահել
Ընկարօտիլ և հառաչել.
Ըպա այնու չե՛մք կորուսեալ,
Ընդ փրկութեան մեզ յոյս ճնաց:

Ի կոչմանէ հրաժեշտ տան,
Որք հանգոյն ինձ զբաղեալ կան,
Ընդ ո՛չ համայնք. զի աւանիկ
Ի Պետերբուրգ ոմն ճնաց:

Ուր, արդարև, են շաղախեալ,
Ի պարերգուս զոգիս մաշեալ,
Ընդ սկայն յազգս, ուր են հաւատք,
Տուրք աղքատաց հաստատ մընաց:

Ընհնար է մերձ անդ լինել,
Պապակելոց ջրով օգնել.
Որովհետև վիհն է ընդ մէջ,
Ն՛որ ուխտն միայն նպաստ ճնաց:

Օտար և մերկ վայր անկելոց
Եւ անտէրունչ բանտարկելոց
Օգեցուցիչ և այցելու
Հիւրաժողով ոք չմնաց։

Օտքյանապատացրիւ ածեալք,
Եւ ի լերինս են մոլորեալք.
Կրկին փարախ ժողովելոյ՝
Հոգաբարձու ոք չմնաց։

Հովիւք փութան զասրն խուզել,
Զպանիրն և զկաթն հոգան ուտել,
Ի գալ գայլոց բաց վտարող՝
Հսկումն դիտողք ոք չմնաց։

Ռահնակալք են կաթուղիկոսք,
Կարգավաճառք եպիսկոպոսք,
Ընչամատոյց կղերիկոսք,
Ի՛սկ կարգաւոր ոք չմնաց։

Մեք, ժողովուրդս, թերահաւատք,
Եւ ուսուցիչք իբր անհաւատք,
Արձու կալեալ են քահանայք,
Հոգեխնդիր ոք չմնաց։

Եկեղեցիք լեալ են խանութք,
Ուր վասն արդեանց գան ժամերգութք.
Ռահնիլ դրամոց՝ փակին մատուռք,
Զրի պաշտօնք ոք ո՛չ մնաց։

Որք ժլատք են՝ անփոյթ առնեն,
Այլ ողորմածք միշտ որոնեն.
Պատշ այց առնել ի քաղաքս,
Եւ յոմանս՝ վանս մնաց։

Այդ չէ՛ հնար ի մարդկանէ,
Ասսիլն իսկ ընդունայն է.
Ունել զմեզ որպէս էաքն՝
Աքանչելեաց Տէրն մնաց։

Օասրն առնուն ըստ օրինի,
Եւ զայլն ի տիպ տասանորդի.
Են, որ հսկեն անքուն ականջք,
Այլ այժմ այնպէս գայլ չմնաց։

Ու մեօք միայն Պաւլիոն էր այն
Կարգավաճառ, ո՛չ ամենայն.
Արուղ, չարին Տէրն է քննիչ,
Կարգաւորն մեզ՝ մեծ յոյս մնաց։

Ա՜յ մեզ, թէ եմք թերահաւատք,
Ամայն մարզիչք է՛ն անհաւատք,
Ըրդեամբ պարտին կեալ քահանայք,
Թխիւր դատաստան ի մեզ մնաց։

Պանձանակն վաղ քաջ իսկ կայր,
Յորում այրին հանդիսանայր.
Ողորմութեան բարձր ի գլուխ
Յաւէնին անդ պարծանք մնաց։

Հիւղն ընկերի ականն ասեմ,
Ես զիմ գերանս ո՛չ տեսանեմ.
Ընտել գոլով՝ նախ քարընկեց
Լինել այլոց՝ ոք ո՛չ մնաց։

Մեծայն ոք պանծայ անձին,
Ընթի իմաստուն գոլ առանձին.
Ան այն զիմաստ սրբոց գըլեանց
Երվերծանող ոք ո՛չ մնաց։

Ին գիտութեամբ տգէտք փայլին,
Անուսմունք նոցա զմայլին.
Սուրբ գիտութիւնն ենթ գըլուանաւ
Ի լոյս ածող ոք ո՛չ մնաց։

Արուստք յիմարք յառաջանան,
Փառք, աստիճան բարձր ստանան,
Սակ արք գիտունք գոլով աղքատք՝
Յարգող նոցա ոք չմնաց։

Մեծք զիւրեանս արհամարհեն,
Փոքունք զմեծս միշտ եպերեն,
Ին ստամբակ, միսն անխիղճ,
Վաստիարակ ոք չմնաց։

Երիտասարդքն են վատաշուէրք,
Ամենայն ոք պանծայ անձին,
Ընթի իմաստուն գոլ առանձին.
Վան այն զիմաստ սրբոց գըլեանց
Երվերծանող ոք ո՛չ մնաց։

Ին գիտութեամբ տգէտք փայլին,
Անուսմունք նոցա զմայլին.
Սուրբ գիտութիւնն ենթ գըլուանաւ
Ի լոյս ածող ոք ո՛չ մնաց։

Արուստք յիմարք յառաջանան,
Փառք, աստիճան բարձր ստանան,
Սակ արք գիտունք գոլով աղքատք՝
Յարգող նոցա ոք չմնաց։

Մեծք զիւրեանս արհամարհեն,
Փոքունք զմեծս միշտ եպերեն,
Ին ստամբակ, միսն անխիղճ,
Վաստիարակ ոք չմնաց։

Երիտասարդքն են վատաշուէրք,
Հաց փախիցուք յարանց չարաց,
Հիւղն ընկերի ականն ասեմ,
Ես զիմ գերանս ո՛չ տեսանեմ.
Ընտել գոլով՝ նախ քարընկեց
Լինել այլոց՝ ոք ո՛չ մնաց։

Մերանակիր ակն ես եմ,
Ընդ գիւղ ընկերի ականն ասեմ,
Ընդ զիմ գերանս ո՛չ տեսանեմ.
Լինել քարձիգ ո՛չ ամաչեմ,
Են, որք զշիւղն իսկ ո՛չ կրեն,
Նայց համբաւն այդպէս մնաց։

Երանի՜ էր, թէ չէիցէր պարծանք,
Կամ եղբօրէն թիւր բամբասանք.
Իսկ իմաստից սուրբք գրոցն՝
Մեկնութիւնն յայտնի մնաց։

Ի մեզ փոքր են ներհուն գիտողք,
Իմաստակքն երևին բուռնք.
Իսկ բացատրիչ սուրբք գիտութեան՝
Միւռնացի ոճն մնաց։

Ընդքատն շէն առնէ ընտուած,
Ընդրագարձն նոյն իմացուած.
Ըստ իմաստնոյ թէ և անինչ՝
Յարգամատոյց մի տեղ մնաց։

Մեծք զփոքունս նախ շահեցեն,
Պատ զպատիւ պահանջեսցեն.
Ըստ գոլով վէս կամ անխիղճ՝
Այո անունն հանուրց մնաց։

Հաց փախիցուք յարանց չարաց,

Մանկունք դարուս յոյժ անհնուէրք,
Ասկ ալևոր ժամանակիս՝
Նոր ողջախոհ ոք չմնաց։

Տէրն է ուիշտ, ծառայն պղերգ,
Հայրն է ճիշդ, որդին յոյժ նենգ,
Հայրն անառակ, կինն անպարկեշտ,
Խարեկրօն ոք չմնաց։

Մարդն իւր պատիւ չիմանալով,
Եւ անասնոց նմանելով,
Լոկ պատկերօք մարդ երևի,
Իսկական մարդ ոք չմնաց։

Համայն գլուխք ի ցաւս անկեալք,
Եւ սիրտք ամէն հոգս ընկղմեալք,
Ի ներբանէ ցգագաթան
Ողջ անձամբ ոք չմնաց։

Նեռինք բազումք են յաշխարհի,
Մարդիկ եղեալ են ամէնի,
Օ՛ի վարք և բարք մեր են յայտնի,
Երկբայութիւն ինչ ո՛չ մնաց։

Ուստի Աստուածն է մեզ ցասուցեալ,
Պատիժ մեղաց մերոց հասեալ,
Ընօրինաց հոյլք բազմացան,
Յամաքեցաք, սէր չմնաց։

Օ՜հետ երթիցուք անձանց բարեաց,
Յայնժամ տեսցուք թէ յաշխարհի
Ուրքան մնաց։

Ընդէակից յանկարգս վարին,
Այլ ո՛չ համայնք նոյն բարս ունին,
Պապ յանձն իւր աստիճանի
Պարկեշտութիւն բազում մնաց։

Մարգարէի խորհուրդն այլ էր,
Ընդ Պիոգինեայ լոյց ղլապտեր,
Ի հազարաց միոն է՞ր մնաց։

Պիտուն քյանձինս ապաւինին,
Յամիկք Աստուած ապաստանին,
Երդ իջանել և բարձրանալ՝
Ուրաւանց Տեառն տալ մեզ մնաց։

Այսն միոյն տարակուսիմք,
Եւ առ Աստուած ապաւինիմք,
Յորոյ միայն ողորմութիւն
Պատանել՝ մեզ աստ մնաց։

Աստուած չև ևս է ցասուցեալ,
Կամ ըստ իրին՝ զմեզ պատժեալ.
Զ՛ասաց բնաւից՝ այլ թէ բազմաց,
Պա սուրբ սէր դեռ ևս մնաց։

Ազգ ի վերայ ազգի դիմեալք,
Պատերազմունք ղօրաց յաճախ կուտեալք,
Յամէն կողմանց մարտ արհաւրաց,
Խաղաղասէր ոք չմնաց։

Ուր սով և մահ են պաշարեալ
Եւ թանգութիւնն բռնակալեալ,
Նաև տարերք յեղաշրջեալք
Խաղաղ կենաց ճար չ՛մնաց։

Ոչ ան անցաւոր սուտ կենցաղոյս,
Խղճմտիկ Մարգար, մի՛ տար քեզ յոյս.
Յիշեա՛ զբան Պողոսի թէ՝
Այելչութիւն այլ չմնաց։

Այդ ամենայն կատարեցաւ,
Աշխարհս համայն սասանեցաւ,
Այց արդ սփոփիչ խաղաղութեան՝
Ոուսաց մեծ կայսր միայն մնաց։

Եղիցին արդ կամք Տեառն օրհնեալ
Օ՜արդիս չի՛ք մեր զսով տեսեալ,
Տարերք երբեմն յեղաշրջեալ՝
Եղանակն միևնոյն մնաց։

Օ՜յոյս մեր այսու արդ մի՛ հատցուք,
Աշխոյց տարազ վատ մի՛ լիցուք,
Պողոսի բան չէ՛ ընդունայն՝
Այելչութիւն հոգւոյն մնաց։

Պատասխանեաց

Աբրահամ Վրթանեցի,

Պօլսեցի

Յօրինեաց

Մարգոս Խոճայեանց,

Օ՜ֆիոնացի

24.

Առ Խաչն Յիսուսի

Անճայրաճիր, լերկ անապատ
Անբոյր, անթոյր, վըշալեց.
Երկինք նըսեմ, ցուրտ, միգապատ,
Օ՜ուրկ յ՛արեգին նըշուլեց.

Ապառաժուտ խոպան լերինք,
Ծով ալեկոծ, փրփրադէզ՝
Կազմեն աշխարհն, ուր մենք կ՚ապրինք...
Օգնեա՛ մեզ, Խա՛չ, օգնեա՛ մեզ։

Իբրև ցանցառ ոչխարաց հօտ,
—Հօտ անփարախ և անտէր—
Կը թափառինք քայլերնիս կրծոտ
Եւ ո՛ւր կ՚երթանք՝ չ՚եմք գիտեր...
Փայտ փրկարար, Խա՛չ կենսատու,
Որ կըրծիցիր Յիսուսն հեզ,
Մեր պահապանն և յոյսն ես դու,
Օգնեա՛ մեզ, Խա՛չ, օգնեա՛ մեզ։

Վ՚ահ գերթուխեան հընոցդ անշէջ,
Ի սուրբ բարձանց Գողգոթայ
Վ՚առ ձառանչնելդ ուղղէ՛ մեր մէջ,
Եւ մեր վերայ դո՛ւ գթա՛յ...
Մի՛ թոյլ տար մեզ մատնիլ ի մահ,
Լո՛ւր մեր ձայնին աղեկոծ,
Ցոյց մեզ ուղիղ և անխուչ ճահ...
Օգնեա՛ մեզ, Խա՛չ, օգնեա՛ մեզ։

Կը սահի մեր նաւն անվրտանգ՝
Ալեաց վերայ բարբառոս,
Ծո՛վ քեզ գիմեն մեր պաղատանք,
Ծո՛վ դո՛ւ ես, Խա՛չ մեր փարոս.
Մինչ որոտան ամպք շանթուռոյց
Ապաւինիմք մենք առ քեզ,
Գո՛ւ, մեր խարիսխն և ուղեցոյց,
Օգնեա՛ մեզ, Խա՛չ, օգնեա՛ մեզ։

Լուսապայծառ, սիրագորով
Թևոցդ հովանւոյն տակ, Խա՛չ,

Պահեա՛ ըզմեզ Յուսով, Սիրով
Եւ Հաւատով յաւէտ քաջ.
Ընկա՛լ մեր ողբն իբրև նըւէր,
Մեր սիրան իբրև ողջակէզ
Շընորհեա՛ մեզ կեանք անաւեր.
Օգնեա՛ մեզ, Խա՛չ, օգնեա՛ մեզ։

Ալէքսանդր Գ. Փանոսեան

25.

Կարնեցի հացագործներ

Ախպար, արի՛ ասօր էրթանք մեր պախչան,
Վիչըմ նռաւինք պըչինք, քիչմա վարդ քաղինք,
Բանանք գաթով-հալուռով լիքը մեր պօղչան,
Խմե՛նք ձիւռմակ ջուրը, քանի-օր սաղ ենք։

Գունա խաղըմ ըսէ իմ թասիս վրայ,
Գէլքի աս թէրմաշը անուշ կուլ էրթայ,
Աս աշխարը հէչ մէ մարդում՝ չի մնայ,
Ասօր հոս ենք, յէզվան կերթանք,-գօնաղ ենք։

Ցուռն յէրդէսաանը մեզի կը մաշինք,
Մեր չօլուղ-չօճուղին դէլսը կը քաշինք,
Ասօր քէֆի օր է, քէֆերուս աշինք,
Յէզվան ալի էրթանք ալուրը մաղինք։

Գասպարն եմ, Ասաքմէն չեմ կարեր յուսըս,
Էրկուսիսս պահէ իմ Տէր Յիսուսըս,
Սաղ էնըֆին մէջը մենակ էրկուսըս,
Գուլլի կանն, թէ շատ սիրով օրթաղ ենք։

Ալքե-Գ-ե-ան

26.

Վ. ՄԱՐԻԱՄ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՀԸ

(1882 Թ.)

Հոկտեմբերի 10-ին երկինքը ծածկուած էր ամպերով . . . կիւրակի էր այդ օրը և Թիֆլիս քաղաքը ներկայ էր մի սգաւոր տեսարանի, մի պատմական անցքի, որի նմանը նա երբէք չէ՛ տեսել և համարձակ կարող ենք ասել, որ նա երբէ՛ք, երբէ՛ք տեսնելու էլ չէ: Այդպիսի մի երևոյթ արևմտեան Ասիայի պատմութեան մէջ երբէք կրկնուելու չէ՛, որքան էլ պատրաստ դայ պատմութեան անիւը, նեթէ հազար տարիներ էլ անցնեն:

Այդ օրը Թաղեցին Վանքի Մայր Եկեղեցում, Հայաստանեաց եկեղեցու գլխում Վրաստանի վերջին Թագուհի Մարիամին, Երեքսանդր Թագաւորի ամուսնուն:

Մարիամ Թագուհին հայկական տոհմից է. նա Մելիք-Սահակ Ղամալեանի դուստրն է և ծնուել է Երևանում 1806-ին և 14 տարեկան երիտասարդ հասակում պսակվել է Վրաստանի ալբայաղն Երեքսանդրի հետ 1820-ին, Եփրեմ Կաթողիկոսի օրով, Էջմիածնում:

Մարիամ Թագուհին հայ կին էր, բառի ամենաազնիւ նշանակութեամբ, հայ էր ծնուել և հայ էլ մեռաւ: Իսկ հայերը, մեր հայերը, հայ կանայք ի՞նչ կարող են մոռանալ, երբ նրանք յիշեն այդ օրը, Մարիամ Թագուհու մահը: Թո՛ղ մոռաբերներն գրանք, որ Մարիամ Թագուհին կարող էր իւր մայրենի լեզուն մոռանալ, կարող էր իւր ազգային կրօնը ուրանալ և ուրիշ հաւատի դնալ. դիտէ՞ք, նա օտարների մէջն է մեռնում,

նա բարձրանում է, մինչև թագաւորական պալատը նրան շրջապատում են փայփայանք, ճոխութիւն, աշխարհային փառք, պատիւ: Եւ դիտէ՞ք՝ ինչ է նշանակում թագաւորական գահը. թէկուզ անշուք, աննշան, անղօր, բայց և այնպէս մեծ, փառաւոր անուն է դա, և դիտէ՞ք՝ այդ ամեն աշխարհային փառքերի առարկան ո՞վ է. մի թոյլ արարած, այնպէս չէ՞, մի կին. բայց Մարիամ Թագուհին հայ ծնաց, հայ մայր էր և իւր որդուն հային սիրել սովորեցրեց:

Հայերէն էր խօսում նա, հաւատարիմ մնաց նա իւր նախորդների հաւատին, Հայաստանեայց սուրբ եկեղեցուն, և իւր վերջին խօսքն էր—թաղուիլ Հայաստանեայց սուրբ եկեղեցու գրկում:

Ո՞նչ կ'ասեն նրանք, այն ողորմելի հայերը, հայ աղամարդիկ, որոնք մոռանում են իրենց մայրենի լեզուն, ուրանում են իրենց ազգային եկեղեցին, և արհամարհուած են մնում ամեն քաղաքակիրթ ազգերից, ամեն պատուաւոր անձինքներից: Ո՞նչ կ'ասեն նրանք, մենք չը դիտենք, բայց մենք կ'ասենք, որ «ասըլի և բէդասլի» մէջ զանազանութիւնը հէնց նրանումն է, որ «ասըլ» միշտ իւր ազգային եկեղեցուն և մայրենի լեզուին և իւր նախորդների յիշատակին հաւատարիմ է մնում, ինչ փառքի էլ որ բարձրանայ նա, իսկ «բէդասըլը» պատրաստ է առաջին դէպքումը ծախել իւր ազգային եկեղեցին, իւր մայրենի լեզուն, իւր նախորդների փառաւոր յիշատակը: Եւ ո՛րքան «բէդասըլներ» ունինք:

Սպանդար Սպանդարեան

27.

Ընկեր

Բալի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Յերկնի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Աչխատէն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, ասատուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ ասուձանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը՝
Կարճ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջ-Է-ան-աղբէ,
Չի՛ սպիտակիր ամենևին մէկ հերը մարդուն:

28.

Ա՛ահին

Նախանից ծարաւ, ճարը կտրած,
Վ՚երջին յուսով անկայուն,
Երբ սպասում լինի խեղճը
Ծրիծաղերես քո գալուն՝
Մ՚ի հաւատար, մի՛ մօտեցիր,
Սատա՛կ հրեշտակ գու երկնից,
Մ՚ի շտապիր յափշտակել
Կենաց ճրագը նըրանից:

Ճարչարանքը անց կու կենայ,
Կը հանդարտին ցաւերը,
Եւ նա իր կեանք չի՛ անիծիր,
Կը մոռանայ չար օրը.
Ուզայ ատեն, ուրիշ ատեն,
Երբ որ սրտով կու հանդչի,
Եւ որ առաջ քեզ կ՚ատչէր,
Ընուներդ էլ կ՚փախչի:

Իսկ որ չունէ, չէ՛ սպասում,
Եւ ում տանջանք չէ՛ տուած,
Կամ որ սուսիկ, խելօք, հանդարտ
Տանում է բեռն իւր կենաց՝
Գնա՛ նրա մօտ, սի՛րուն հրեշտակ,
Ծրիծաղերես կամ ծածուկ,
Կամ երեխ՚ը երգի մէջ,
Ընչքը փակէ՛ կամացուկ:

Յով. Պաղտասարեան

29.

Հողագործ

Գարունն անցաւ, եկաւ ամառ,
Գուռ կ՚ննջե՞ս դուն, հողագործ,
Ելիր մէկ ժամանակ կայտառ,
Է՞ր քնիս, արթո՛ւն հողագործ:

Անձիդ մէկ լաւ հագուստ չունիս,
Կարծում ես թէ՝ կորուստ չունե՞ս,
Օրերդ անցան, ապրուստ չունիս,
Մերձեցաւ աշուն, հողագործ:

Ըլխուքիւնդ վանեցիր,
Քեզ պարապ ձմեռ հանեցիր,
Ո՛չ շինեցիր, ո՛չ ցանեցիր,
Անհաց ու անտուն հողագործ։

Թշնամիք լոյսդ մարեցին,
Քեզ միամիտ համարեցին,
Դաշտերդ օտարք վարեցին
Քեզ թողին նկուն, հողագործ։

Աղքատութեան յօժարեցար,
Օրըստօրէ՛ տկարացար,
Ինչո՞ւ այդպէս յիմարացար,
Ա՞խ, իմ բանիբուն հողագործ։

Խելքով ուսեալին յարմարէ՛,
Դուն ալտերդ կառավարէ՛,
Ամէն գործդ լա՛ւ կատարէ
Ինչպէս իմաստուն, հողագործ։

Քեզ նման մարդ էլ չկ՚ըլ ծնած,
Մ՚իսկ քո բաղդդ կոյր ճնաց,
Ա՛յս օրս էլ անցաւ, գնաց,
Աղէ՛ խրիկուն, հողագործ։

Աղբ-Ղզլ-աե

30.

Խնդալու տեսակը

(Թարգմանօրէն)

Գէորգն հեռու է միշտ վատ գործերէ,
Ըրծաթասիրութեան չար սատանայէ.

Օրերը հանգիստ, խաղաղ կանցընէ,
Թէ լաւ նա կուտէ, թէ լաւ կը խմէ,
Շատ տեղ ծանր ու մեծ մարդ կը համարուի,
Բան մը չի ըներ հակառակ խղճի,
Սուրին մէջ մեղք մը կարծես թէ չը կայ,
Միշտ բերանը բաց այսպէս կը խնդայ.
Խա՛, խա՛, խա՛,
Խա՛, խա՛, խա՛։

Կիրակոսը, օ՜, շատ բարակ մարդ է,
Միշտ սատանութիւն նա կը բանեցնէ,
Շատ կը ծռմըռկի, երբ որ կը խօսի,
Լաւ բան մը չեզայ հէչ նորա մտքի,
Մէկ խօսքով ասեմ՝ հոգի է, հոգի,
Տեղ մը որ տեսնես, դու թո՛ղ ու փախի՛,
Ծաղրէն կ՚երևայ, որ իսկ ձիզվիթ է,
Որովհետև միշտ շիտակ այսպէս է.
Խի՛, խի՛, խի,
Խի՛, խի՛, խի՛։

Աարթայի, ինչպէս մօրը երեսին,
Քիչ քիչ երևալ փորձեր կը սկըսին,
Նա երեսուն ալ տարեկան եղաւ,
Բայց հասակաւոր մօրը չերևցաւ,
Յանկարծ տարածել լուր մը ըսկըսան՝
Թէ նըշնուիլ է մեր փոքրիկ Աարթան.
Եւ երբ նա լսեց, վեր վեր կը թռչի,
Գողտուկէն այսպէս միշտ կը ծիծաղի.
Խի՛, խի՛, խի՛,
Խի՛, խի՛, խի՛։

Ամլն ալ չափէ դուրս ուրախանալով,
Կըսէր, ձեռքերը վեր վերցընելով.

Փառք քեզ, Տէր Աստուած, գոհանամ, փա՛ռք քեզ,
Որ մենք այս օրը տեսանք վերջապէս.
Եւ ինքը կարծես մեծ բըլի մը մէջ
Ուրախութենէն գլուխը կախեց
Եւ այնպէս խնդաց շատ մընալով գոհ,
Ինչպէս ցոյց կուտամ ձեզ կարճ ՝ի կարճոյ.

Խո՛, խո՛, խո՛,
Խո՛, խո՛, խո՛:

Եկաւ այն օրը, որ պըսակեցին,
Հարսանիքը շատ ուրախ անցուցին,
Այնպէս որ այս մեր նոր հարս Մարթայի
Նըշանածն եկաւ շատ և շատ քէֆի.
Նա յանկարծ ձեռքը սըրինգը առաւ,
Եւ երբ բարակէն ածել ըսկըսաւ՝
Մարթայի սիրտը եղաւ շատ քուխ քուխ,
Ծաղրէն սկըսաւ տքտըքալ կակուղ.

Ո՛ւխ, ո՛ւխ, ո՛ւխ,
Ո՛ւխ, ո՛ւխ, ո՛ւխ:

Մկրտիչ Ալիքսանէանց

31.

Ղ ա շ մ ա

Գիտե՞ս, ալգիօք, ի՞նչ է ջանքս, պատանի,
Ո՛չնչին գիր, որ ասեմ համարձակ քեզի.
Հարուր չի՛ լինիլ աշխատանքս, պատանի,
Երբ անես ուղղութեան հպատակ քեզի:

Դաջ եղիր, հաւատով տակաւ մի՛ լինիլ,
Յոյսիցը, սէրիցը օտար մի՛ լինիլ,
Մտքով ու հոգիով խաւար մի՛ լինիլ,
Սուրբ գրքերը ապա հեղինակ քեզի:

Ոտքերդ հաստատէ սուրբ ճանապարհին,
Տէրը շնորհք կ՚տայ սրտով խոնարհին,
Ոչքան երևելի լինես աշխարհին՝
Դո մէջդ միշտ կարծէ հասարակ քեզի:

Մալէք[1]) կ՚աղաչեմ քնքուշութիւնով,
Պատգամեմ՛ր պահէ գթութիւնով,
Նրան պատասխան տուր անուշութիւնով,
Ով որ կանգնիլ ուզէ հակառակ քեզի:

32.

Գ ե ղ ջ ու կ ի յ ո յ ս ը

Գեղջուկի սայլն պինդ ճռռում է
Ծանր բարձած բեռան տակին,
Եւ եզները կմախք դարձած՝
Դաշտում, տանում են սայլակին:

Սայլում նստած քաջ գեղջուկը,
Ձիպտա բռնած կապտած ձեռին,
Շվփում է իւր ջուխտակ եզանց,
Ընկլով երդ ծանր ու խորին.

[1]) Տես «Լաւ գիս կ՚հարցանես» Ղ ա շ մ ա յի ծանօթութիւնը:

«Դէ՜հ... անքացէ՛ք, կարուկ եղնիկ,
Կրնաք աւազ քար ու գերան.
Տանէնք, շինէնք մեծ մեծ անոթ,
Որ բնակի հարուստ աղան...:

«Բայց տեսնո՞ւմ էք այն անոթը
Շքեղ կերպով զուգած, կոկած,
Ի՞նչպէս փայլում, պսպղում են,
Կարծես ոսկուց լինին ձուլած...:

«Մե՛նք շինեցինք նրանց նոյնպէս
Մեր կոլովի, արի ջանքով,
Մե՛նք կանգնեցինք այն մեծ շէնքեր
Մեր անմոռաց զօրեղ կամքով...:

«Երիւն-քրտինք հոսեցնելով
Ձարչարվեցինք նրանց վերայ,
Բայց մեր վարձի կէսը կարեց
Նրա անխիղճ տէրն անզգայ...:

«Բայց, սիրելիք, չվհատուի՛նք,
Գործեի՛նք, աքնի՛նք միշտ անդադրում
Եմեն արդիւք կոլծանելով՝
Ընչաղէմ լինինք մեր գործերում...:

«Մեր առաջնորդն է այն յոյսը,
Որի առաջ ամեն չարիք՝
Ոչնչանում, փշրվում են
Որպէս հնչեն թոյլ մժեղներ...:

«Էլ ի՞նչ ասեմ, աչքիս լոյսեր,
Մեր ոյժերը քաջակորով
Ո՛չ մի լոպէ չ'յապաղին,
Էլ միշտ ճնան հալալ յուսով...:

«Յոյս ունենանք, տակաւն եղնիկ,
Կը բացուի մեզ օր բաղդաւոր,
Երբ մեր ջանքին գին կը դնուի
Եւ չի'նք լինի միշտ սգաւոր...»:

Աբնիգ

33.

Բալոյան վէպ

«Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք
«ձեր եղիցին»: Աւետարան

Գծուծ հարուստ, արծաթասէր մեծատուն,
Վաղցած, ծարաւ նստաւ մինչև օր մահուն,
Լիանդ ընկաւ, վա՜յ սիրտ, վա՜յ սիրտ կանչելով
Հոգին տուաց, էլի վա՜յ սիրտ կրկնելով:

Կին ու որդիք անմխիթար են սգում,
Թէ ինչի՞ նա վա՜յ սիրտ, վա՜յ սիրտ էր կանչում,
Բժիշկ բերին, որ ճանաչէ, թէ ի՞նչ էր,
Որ նորա սիրտ այնպէս սաստիկ տանջում էր:

Բժիշկ ձեղքից նորա փորը, ու տեսան,
Որ մեռելի սիրտը էր կայ... վախեցան...
«Մի՞թէ սա սիրտ բընաւ չունէր փորումը,
Երբեք սիրտը ցաւած չի՞ր իւր օրումը»:

Գիտնոց մէկը ասաց. «Ծուռ տեղ մի՛ հոդաք,
Նորա սիրտը թէ ճիւ է՝ շուտ կ'իմանաք.
Բացէ՛ք արկղը, ուր որ նորա արծաթն է»...

Բայլին, տեսան, որ արծաթի մէջ սիրտն է...
Մի՛ զարմանաք, տէրունական սո՛ւտ չէ բան.
Աիրտը անդ է, ուր որ գանձուդ մնելիք կան։

Ո. Պապկանեան

34.

Նեբսէս պատրիարքի մահուան առիթով

(1884 թ. հոկտ. 26)

Վերահանձար սրբազան, դու մեզի անձար թողիր,
Սրտերս ցաւով լցիր, հոգիով տկար թողիր,
Ազգդայի յոյսերս Դու կիսակատար թողիր,
Վո խղճալի հայ ազգին բախտով ապիկար թողիր,
Ընմոռանալի ցաւեր, իսկ մեզ համար անհամար թողիր,
Ընտէր և անտիրական, մոլոր և շուար թողիր։

Ելսուհետև ցաւերս անհամար են, անհաշիւ,
Վանի որ մենք կորուցինք Վեր պէս ջանադիր հովիւ,
Առանց գլուխ[1]) ճեալով, ուր երթանք՝ չունինք պատիւ,
Տէր չունեցող ազգաց պէս՝ անշուշտ կը լինինք ցրիւ,
Մոլորեալ ոչխարի պէս ազգդ ինաց անհովիւ,
Յափշտակող գայլերուն Դու մեզի պաշար թողիր։

Ելսօրուանից տաճիկին դերի ենք ու հպատակ,
Խոնարհութեամբ վզերս պիտի ծռենք լծի տակ,

[1]) Ելժմ. գոհութիւն Ելսուածոյ, առանց գլխի չենք. այսօր Ս. Էջմիածնում, Ս. Գրիգորի գահի վերայ, բազմած է Հայկական ազգի Հովուապետը՝ Տ. Տ. Մակար սրբազնագոյն կաթողիկոսը։ Գ. Վ. Գրիգորեանց

Թող նա ձնիչէ անխնայ, որքան ուզի նպատակ,
Ո՞վ պէտք է նորա դէմը այժմ կանգնի հակառակ,
Թող մեր քրտանց արդիւնքը խլէ ամէն ժամանակ,
Երիւն աշխատանքներս՝ իսկ նորան աւար թողիր։

Խղճմտելներս ունի երթանք, ո՛վ կը լինի օգնական,
Ընտէր ճնացած ազգին միայն Ելսուած է պաշտպան,
Կանգիր զԵհս օտարին, դարձեալ չէ նա բաւական,
Առանց գլուխ ազգերու վիճակն այս է մշտական,
Ընդունի տաճկի ձնշումը պիտի տանենք յաւիտեան,
Ելսկանուշ եմ, բայց մեղի իսկ անբարերար թողիր։

Յոյսերս դրած էինք Վեր վերայ բոլորովին,
Դարձեալ թողիր յուսահատ թշուառներուս լեռվին,
(Ընկնալած կ'ապասինք մեր Ազգային Ժողովին,
Որ նորա էլ մեզ նման սուգ կրեցին խմբովին).
Վո սիրելի որդիքդ էլ ե՞րբ պիտ' ապահովին,
Ի՜ղպո՜ս էլ նորանց հետ նորից ցաւագար թողիր։

35.

Նեբսէս

Ողբացէ՛ք սարդք՝ գի մայրք գլբեցան... Ողբացէ՛ք կաղնիք Բասենու՝ գի քանդեցաւ անտառն անկախիս։ Զայն ողբալոյ հովուաց՝ գի թշուառացաւ ամենութիւն նոցա։
(Զաքարիա գլ. ԺԱ. 2—3)։

Ննջումի էր Պատրիարքը կէսօրին։ Նորա շուրջը պատողները, թանգագին կեանքի վերայ հսկողները լայտուում էին յուսով քաղցր հանգստէն յետ աւելի ևս կազդուրուած տեսնել քաջի տարաշխալ ուժերը։ Ննջը

տևում էր ամենախոր խաղաղութեան մէջ. քնարանը խորհրդաւորութիւն էր ղեկեկէլ. այդ ծայրագոյն անդորրութիւնը սկսում էր ձնշուճն գործել դիտողի սրտի վրայ: Յանկարծ ուշ՞ սի այդպիսի մի տխուր ազդեցութիւն: Պէտք էր մանել՝ քննել: Ըստուածծ իմ. ննջում էր Պատրիարքը. ննջում էր բնկեալ մարմինն անշարժ. հոգի՞ն... Թողել էր իւր տաճարը: Րոպէներից յետ մի մթագին ամպ սաւառնում էր Վ֊ոսփորոնի մթնոլորտի վրայ. զանգերը տխուր ղօղանջում էին ծուլածաւալ մայրաքաղաքի միգամած պարիսպին մէջ ծայրէ՝ ի ծայր ծփմամբ. իւրաքանչիւր մի գանչ սրբազան տաճարների գմբէթների վրայէն սողոսկեցնում էր մարդոց սրտին մէջ Վ֊ևհագոյն Պատրիարքի մահուան սարսռալից բօթը:

Ողբացէ՛ք սարդք՝ զի մայրք գըրեցան: Դէռ կեղև չէ կապել այն վէրքը, որ բացուեց հայ սրտի մէջ. երկու տարի միայն է, երբ ցուրտ պղինձը սրբազան կաթողիկէի բարձրութիւնից վազեցուց Սուրբ Էջմիածնի վրայ մահուան ազդը: Ընկել էր Ըստուածոյ քահանան, ժողովրդեան Երկի Դէտը, Գրիգորի վիհավայրերին պահապան կարգուած Օծեալը. իւր հոգին սլացել էր Յաւիտենականի գահի առջև, պաղատելով նորանից՝ ամբողջ պահել իւր հօտը գարերից՝ ի վեր նուիրագործեալ փարախի մէջ. նա պաղատում էր Յաւիտենականէն՝ անփակ պահել Ըյրատեան գլուխի առջև լուսոյ դրունքը, երկնային և երկրային իմաստութեան շտեմարանները՝ որոնց համար հնքը տքնել էր իւր անցաւորի մէջ՝ անդադար գուրգուրմամբ: Նա կոչուում էր Գէորգ: Սա կոչուում է Նէրսէս: Իւր սրտի մէջ կրում էր Սա իւր հեծող՝ գնալով գնացող ու լացող՝ և արտասուքով սերմանող ժողովրդի սիրտը՝ բոլոր մրմունջներովն ու ըղձերով հանդերձ. և Սա բաց էր անում այդ իւր սէրանոյն հաւատարիմ, այդ առաքինի՝ քաջաշխատ՝ բայց և հանապազ յանիրաւի կոշտձեալ

սիրտը երկրի թագակալների տաճանի առջև, նոցա գութը և արդարութիւնը պաղատելով նորա վրայ: Ընչաստութիւն, աղօթք, բարեխօսութիւն՝ Սորա ամբողջութեան բաղկացական տարերքն էին. այդ ամէնը անձնաւորուած և միաշնչութեամբ կենդանի էին սրտանուէր զօրութեամբ մի աստուածական ընորհքի՝ որ կոչուում է Հայոց Եկեղեցւոյ մէջ, ՚ի սկզբանէ ժամանակաց և այսր, Նէրսէս: Եւ մի աղէտաբեր օր, և ահա Տաճկահայ ի կեանքի այդ էջի վրայ էլ քաշուում է մռայլ քօղը: Ողբացէ՛ք սարդք. տապալուած էր մայր ծառը: Զայն ողբալոյ հովուաց՝ զի թշուառացաւ մեծութիւն նոցա:

Հոկտեմբերի 26-ն էր այդ օրը. ուրբաթ օր. օր սգոյ և ապաշխարութեան: Դաւաճանի պէս է մտնում մահն այդ օրը Մեծի սենեակը. գողի պէս կորզում է նորա կեանքը՝ յանկարծակի բռնելով նորան քնի մէջ: Եւ նա, որ այնքան սիրեց իւր ազգը՝ նա իւր ՚ի յաւիտեանս գնալու հրաժեշտի ողջոյնը տալ չկարողացաւ իւր սիրելի ազգին: Կեանքի ամենանուիրական վայրկեանը, ամենասուրբը, աստուածային հրով զտուած մաքրուած ղգացումներով ամենալի վայրկեանը՝ այդ ժխտից նորան Յաւիտենականը. Նէրսէս մեռնում է՝ առանց իւր վերջին խօսքը իւր ազգին ասելու: Նէրսէս մեռնում է՝ իւր բաժանման օրհնութիւնը իւր ժողովրդին չտուած...:

Բայց ի՞նչ փոյթ. մենք ունինք քու կեանքդ, մենք ունինք քեզնից այդ ժառանգութիւնը:

«Ըյոփանի»

36.

Մ ե ր ց ա ւ ե ր ը

Գունդագունդ և գաստագաս ցաւերը կազմելով բանակ,
Ընշաւում են դէպի խղճուկ հայերու վերայ շիտակ.
Դէղ չունինք, բժիշկ չունինք, դէմ դնելու չենք ընդունակ,
Անտարակոյս ցաւերը մեզնից կ'տանեն յաղթանակ.
Բայց մի բան կայ, տոկուն ենք, դիմանում ենք շատ ժամանակ,
Ցաւերը ձանձրանալով՝ մեզնից կ'փախչեն շարունակ։

Գաղանի մի ձեռք կայ հզօր պահող մեզ, Ստուած է նա,
Մինչ նրանից օգնութիւն ակալնելուն անշուշտ կզայ,
Թող ցաւերը սաստկանան, Տէրը տանելու այժ կուտայ,
Ցաւապետը տեսնելով սխալմունքը, յետ կը դնայ,
Կատանանք մի ժամանակ հանգստութիւն, հանգիստ վիճակ,
Կհանգիստ բարեբախտով կ'գառնայ դէպի յայրոդակ։

Մենք մի յայտնի հին դիւցազուն մեծ ազգի նշխարներ ենք,
Մեզ շահողը կ'օգտուի, յաղթներ ենք, գոհարներ ենք,
Թող չիմանան ցաւերը, խեղճ ու մոլոր անճարներ ենք,
Մենք Աբրահամից հեզութիւն սովորած ակալներ ենք,
Ձենք սիրել վարուել մեզի սիրողներու հետ հակառակ,
Ունենալով մեր Փրկիչը խրատ ու ընտիր օրինակ։

Մեզ վերայ տեսակ տեսակ, ցեղ ցեղ ցաւեր են փորձ արել
Ո՛չ մէկը բռնութիւնով մեզնից մի օգուտ չեն տարել,

Մեր կլիման, մեր օդը մեզ պահել են պատսպարել
Ցաւերը յետ գառնալով իրանց տեղերն են դարձրել,
Մեզ տալով մեր վայելած օրերը անցաւ փառունակ,
Գառնալով մեր երկիրը կրկին բարի մարդաբնակ։

Օր կուգայ, հոգս ու ցաւերը մեզնից կը վերանան,
Չ-կ'-ան,
Երկրնուց աղեղնակը ցոյց կուտայ հաշտութեան նշան,
Բերանը տերև առած կ'գառնայ աղաւնին Նոյեան,
Մեզ աւետաց լուր կուգայ, հետը օրեր խաղաղութեան,
Հորիզոնը պարզելով ծագում է պայծառ արեգակ,
Հողմերը դադարելով յաջորդում է լաւ եղանակ։

37.

Ա ե մ ա յ ի

Գու մինչև ե՞րբ այսպէս սաստիկ ցամաք ու չոր ճնաս, ով ծով,
Երանի այն աւուրն, որ յանկարծ բարձրանաս, ով ծով.
Թողել ես ձկնելդ խոնաւ քարերու տակները անձայն,
Նոքա սպասում են մէկ օր իրանց վերայ ծփաս, ով ծով։

Թէպէտ շատ կան ջրեր յորդ յորդ, միայն չեն օգտակար քեզ պէս,
Ժողովէ պարունակաբար նոր ի նոր մեծութաս, ով ծով,
Քարերն միշտ գոռում են թէ «Մի լար, քո ձկնելդ ողջ են»,
Պ՝ալալուան օրինակ աւռ քեզ, ջանա կենդանանաս, ով ծով։

Բոլոր քաղքանդյշ գեաւերն կելնեն հայաբնակ լեռներէն,
Ջանան անգարձ Խայֆա նոցա հետ հիւր ունենաս,
ով ծով։

38.

Պ ա տ ա հ մ ո ւ ն ք

(Մարգմանօրէն)

Ես չեմ սիրում անարդար գործ,
Ընշահասէր ծառայող եմ,
Ով ինձ կաշառք կ՚առաջարկէ՝
Նորա գլխուն վայ կ՚բերեմ.
Բայց անգամ մը, երբ նեղութիւն
Փողէ սաստիկ ես ունեցայ՝
Մէկ հատ փորով հրեայէ
Վանի մ՚մանէթ գողտուկ առայ.
Բայց ոչինչ, այդ պատահմունք է,
Այդ մի փոքր սխալմունք է։

Ես մարմնաւոր պահիժներու
Սաստիկ սաստիկ թշնամի եմ,
Եթէ մայր մը իւր տղայոց
Ծոյնէ՝ նոյնպէս հակառակ եմ.
Բայց անգամ մը, երբ իմ ծառաս
Աօշխինելու մաքրել մոռցաւ՝
(Ես այս ձեղնէ ինչո՞ւ պահեմ)
Ապտակ էր որ՝ ինձմէ կելաւ.
Բայց ոչինչ, այդ պատահմունք է,
Այդ մի փոքր սխալմունք է։

Императорскій Совѣтъ Ботаники. О-ва
Библіотечный
Отдѣлъ.

Ես կը վաթսում ամէնու հետ
Մեծ կրթութեամբ, մարդավարի,
Աուզէ լինի նա ստորագրեալ
Կամ մարդ բարձր աստիճանի.
Բայց անգամ մը գրագրիս
Երբ ոտ տեսայ հին շորերով
Խոժոռ դէմք մը ես ցոյց տալով
Դուրս արի մեծ հայհոյանքով.
Բայց ոչինչ, այդ պատահմունք է,
Այդ մի փոքր սխալմունք է։

Վանի վերջաս կը մտածեմ,
Գ՚տեմ ինձ պէս արդար չը կայ.
Խիղճս տանջել ինձ չի կարող,
Մեղք մը մաքիս բնաւ չի դայ.
Բայց անգամ մը (ինչ դէշ օր էր)
Ընկերիս հետ երբ վիճեցի՝
Բարկութենէս գնտակով մը
Նորան երկայն երկնցուցի.
Բայց ոչինչ, այդ պատահմունք է,
Այդ մի փոքր սխալմունք է։

Մկրտիչ Արփիարեանց

39.

Հայուն բաղդը

Եկաւ ձմեռը գրատգին,
Ընցաւ գարունը հայուն,
Մութ մութ ամպեր սև ծածկեցին.
Բարձր ձակատը հայուն։

Փչից քամին, ելան հովերը,
Սառեցաւ շունչը հայուն,
Լեռնակուտակ ծածկից ձիւները
Հպարտ գլուխը հայուն։

Ձորցան լեռները կանաչազգեց
Պարարտ դաշտերը հայուն,
Ձորցան այգիք, պարտէզք շքեղ,
Սիրուն ծաղկունքը հայուն։

Խոլշակահար ինկաւ գետին
Նարկիզ, շուշանը հայուն,
Գլխիկն 'ի կոր, թերթն 'ի թափին
Կենսատու վարգը հայուն։

Սոքա ամենքը եկան մեռած
Յանպատրաստ սիրտ հայուն,
Ուր գերեզման մ'եղաւ փառաց
Վաղցր հայրենիքը հայուն։

Մթնից պայծառ ու պարզ երկին,
Գոցից լուսնակը հայուն,
Շիջաւ արեւն Հայաստանին,
Եմից աչքերը հայուն։

Հեղեղ կապից, ծովերը լցաւ
Եղե արցունքը հայուն,
Ահ օր եկաւ, սև գլուխցաւ
Ճակատագիրը հայուն։

Պառնահամբոյր գարներ անցան
Տարին ու կեանքը հայուն,
Օրեր գարձան, մոռացուեցան
Փառքն ու պարծանքը հայուն։

Եւ գլուխցաւ ցօղով աչաց
Սուրբ յիշատակը հայուն,
Յաւերակունս խաւարամած
Ծածկուեցաւ բազդը հայուն։

Ալ յուսաբեկ քնարին ցաւած
Թանգան օրերը հայուն,
Պանդխտութիւն, արցունք ու լաց
Բաժին ճակաց հեգ հայուն։

Ս. Հ. Մ. Գելեզեան

40.

Ս է ր

Ես չեմ հասկանում
Թէ ի՞նչ է կեանքը,
Ախ, առանց սիրոյ
Ո՞րն է բերկրանքը։
Առանց միութեան
Երկու սրտերի՝
Ի՞նչն է խորհուրդը
Երկրաւոր կեանքի։
Թէ հազար տարի
Ապրի էլ մարդը՝
Ախ, առանց սիրոյ
Վաղցր աւիւնի՝
Ձարժէ մի տարի։
Ակն է կեանքի
Համեմիչ աղը,
Նորա ցաւերի
Միակ դարմանը։
Ակն է երկնքի
Ցովալար ցօղը՝
Մարդկանց սրտերի
Բարձրացնողը։
Ակն կրակի
Հանգիպ տանողը,
Նկուն սրտերի
Վաթացնողը։
Ակն է հանճարի
Գրգռիչ ոյժը՝
Մեծ մեծ գործերի
Ներուցանողը։
Ակն է քնարի

*

Լարելի չարժիչ
Եւ բանաստեղծի
Եռանդի մոգիչ...։
Սիրով աշխարհում
Ամեն բան շինվում՝
Խակ առանց սիրոյ
Եւիրակ դառնում։
Եւ մինչև անգամ
Իրոլոր բնութիւն՝
Սիրոյ է միակ
Նպատակնակութիւն։
Սէր է և Աստուած
Սիրոյ Ստարիչ.
Սիրով է ծնուած
Ամեն Ստրարած։

Գ...աճ

41.

Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ

(Էքրանժէից)

Երբ վիշտն օձի պէս դէպի ինձ սողայ՝
Ընկերնե՛ր, տարէ՛ք, թաղեցէ՛ք, մեռայ.
Երբ զուարճութիւնն ամպերէն վար գայ
Եւ ինձ չնորհաց պսակ խոստանայ՝
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ,
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ։

Երբ ոգահ մարդու ոսկին ինձ ձնկայ,
Ընկերնե՛ր, տարէ՛ք թաղեցէ՛ք, մեռայ.
Երբ դաւաճնելու ձնկոցը ինձ գայ,
Որտեղ կը խմեն կանչելով ուռա՜՝
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ,
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ։

Երբ խրթին ոճով գրուածք ձեռքս գայ՝
Ընկերնե՛ր, տարէ՛ք թաղեցէ՛ք, մեռայ.
Երբ ոտանաւոր ընկերս կարդայ
Պարզ ոճով գրուած վառ սիրոյ վրայ՝
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ,
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ։

Երբ կոմս կամ իշխան լինին ճաշի վրայ՝
Ընկերնե՛ր, տարէ՛ք թաղեցէ՛ք, մեռայ.
Երբ ընկերացս հետ ես քէֆի նստայ,
Որտեղ ո՛չ մի ջօջ, ո՛չ հպարտ չը կայ՝
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ,
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ։

Երբ երգել, սիրել, կռնծելը մոռցայ՝
Ընկերնե՛ր, տարէ՛ք թաղեցէ՛ք, մեռայ.
Երբ ձեզ հետ, հին, նոր ընկերնե՛ր, նստայ
Եւ երգի համար բառ մտքիս կու գայ՝
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ,
Ես, փառք Աստուծոյ, ողջ և առողջ եմ։

Ա. Ալիքեան

42.

Խ ի ղ ճ

Երկնային ճանապարհը հարթողը դու ես, խղճմտանք
Ում մէջ որ դու չկաս՝ այն մարդը չունի բարի կեանք.
Դու Ստրարչէն բաշխուած՝ հոգւոյ առաջնորդն ես յաւուրկ,
Ինձ հետևող սրտերը հաստատ կ՝ճնան անվտանգ։

Վեհանով չալն ու բալին մարդիկ կ'ողոշին լալու,
Վո պէմմ մեղանչողին Աստուածմէ կ'իջնի հալածանք,
Կռապաշտ, մահմեդական, եբրայեցի, քրիստոնեայ,
Բոլորի համար դու ես օրէնք բնական, հրահանգ։

Վայ հաղալ անգամ նրան՝ ով որ քո ձայնդ չի՛ լսէր,
Կենդանի աչքով պիտի տեսնի հաղալ մէկ չարչարանք,
Նրանի այն մարդոցը, որոնք կ'հետևին քեզի,
Նա Տ֊է֊ան տալիս եմ սլաով, սիրով միշտ գովասանք։

43.

Հայաստանի բնութիւնը

Ես ման եմ գալիս իմ ցաւից խեղդուած,
Բայց գարնանազարդ տեսքը բնութեան
Փայլում է այստեղ հրաշքով պսակուած.
Գովասանե՞մ քեզ, կանաչ Հայաստան։

Օ֊մայլե՛ր, ըղմայլե՛ր, իմ միակ ընկեր,
Մ՛ըքան շքեղ է բնակարանը հայի,
Չարմանալի չէ, որ նախնիքը մեր
Կարծեցին լինել դրախտն Եդեմի։

Թէ կամիս տեսնել Ելարչապետի
Հրաշագեղ գործը ու ձարտարութիւն,
Եկ Հայոց աշխարհ. առաջին օրի
Նա կ'առաջարկէ քեզ գեղեցկութիւն։

Ո՜նչ ակնահաճոյ տեսարաններով
Եռատարաշխած են դաշտավայրեր.
Ո՜նչ ոսկենկար բուսականներով
Խնկահոտում են այստեղ հովիտներ։

Կախուած է գոհարն—ողկոյզ խաղողի.
Ծորում է հիւթը սաթի շիլիկով,
Եւ սիրուն թռչնակ մի գաղտագողի,
Հիւսում է բունը այստեղ մեծ հոգսով։

Փայլում է դեղձն-կարմրագեղ ծիրան,
Բօղարկուած կանաչ թըփիկի հովով.
Լ֊ցուած է այստեղ ներդաշնակութեան
Նոր այդ աւետող կաքաւի երգով։

Վառվում է չքնաղ, ոսկեփայլ նուռը,
Որի նեկտարով արձակուում է լայն
Թաթախ խանձրի դըրախտի դուռը,
Երբ անոյշ բուրմամբ ծխուում է դալիան։

Հոյակապ աշխարհ, այստեղ վառ սալըր,
Ընտեղ սերգևիլ՝ խոնարհած երկիր.
Տիրևի տակից ժպտում է լանձոր,
Մի թուշը ոսկի, իսկ միւսը կարմիր։

Ես երգ եմ երգում, գոհ է իմ հոգին.
Մեղմ խոխոջում են անհոգ առուներ.
Ինձ նկարում է նոցա ապակին,
Վառ այգեստանի քաջառողջ բերքեր։

Եւ ձեղքուած պո֊պոնդ, և ջամբ նապքինդ,
Եւ ոսկի խնձոր և պեղյը նո֊ղինդ,
Եւ երկթարըռն մեղրը փեղկեղ,
Եւ խոշոր յակինթի քաղցր հալաքուղ։

Հեռու է մահը. ես կեանք եմ շնչում.
Շարժուում են վարդեր կանաչ ոստերով.
Եւ հոտ են բուրում, և խունկ են ծխում,
Ձքնաղ տեսարան ինձ ընծայելով։

Թէ Եւրոպայի բոլոր մեծագնէք
Պատրաստած իւղերն և օծանելիք,
Եւ անոյշ ջրերն այն ախորժելի,
Թափէիք այստեղ, այս չնաշխարհիկ:

Վարդերի վերայ, —ով, ես չեմ սքոտում,
Որ սոցա ամբոխս, սոցա վառ ոգին
Հաք Թողելու չէր մի ակընթարթում.
Ինքը բուրուելով կը մանէր ձեր հոգին:

Ի զուր է՝ ի զուր, թէ խօսքով յարմար
Յանկայի նկարել բիւրեղ ջրվէժներ,
Որ, ադամանդեայ կապելով կապար,
Սլսկում են այստեղ գալարուն մարգեր:

Ինչ պտուղների յաջողակ խառնուած:
Ինչ ծաղիկների բիւր գունով հիւսուած:
Թէ արձակ հովիտ, թէ ամպի ձոր—
Եւ ամէն տեղ այդ զարդե՞ր մեղրաձոր:

Պատուական աշխարհ, ես չունեմ գրիչ,
Որով գովեց քեզ քո մեծ նրկարիչ:—
Ա՛յ, Փարպեցի, մեծ է քո լեզուն,
Երբ Ելարատի տեսար մեծութիւն:

Ինչու՞ ամէն թուի, թէև խիստ գալար,
Դողում է, կարծես, ոսոխի ձեռից.
Խղճի՛կ, ծածկուել է նորա ոսկեզար,
Խղճի՛կ, դողում է նա արտասուքից:

Ուսում և ուսում մեզ հարկաւոր է,
Ուսումը անէ Թող մեզ բախտաւոր.
Ուսումը հային Թող բուսուցանէ
Մի բարի վիճակ և կեանք փառաւոր:

Ս. Հ. Նահապետեանց

44.

Երգ Տաճատեան պատուիրանքը

Ա.

Ես եմ հզօր մեծ ոսկին,
Ձ'տաս պատիւ ո՛չ մեկին,
Ծո՛ւռի՛ր գու գլխ միակ աէր,
Ինձմով շինին մեծ գործեր:

Բ.

Մի՛ շինիր գու ինձմէ գաս
Վնէզ այլ կուռքեր հարազատ,
Ես եմ, հաւատա՛ քուկին տէր,
Ես եմ խաղցող միշտ մեծ գեր:

Գ.

Մի՛ երդուիր իմ անունով,
Վնէզ կ'սպանեն խիստ շուտով.
Չի ամեն մարդ կ'ջանայ,
Որ գլխ իւր մօտ ունենայ:

Դ.

Պատուի՛ր գու քո ծնող քեզ՝
Թէ որ նոքա հարուստ են.
Եպա թէ ոչ՝ քեզ գլխեն
Իրենց գանձէն—կալուածքէն:

Ե.

Տօն օրերուն կե՛ր, խմի՛ր,
Մխայն այսքան միտքդ դիր,
Որ շաբաթուայ այն վեց օր
Վնէզ մտածել պէտք է խոր:

Զ.

Մի՛ սպաներ ո՛չ մէկին,
Թէ հարկ սակայն այդ բանին՝
Մի՛ երկնչեր. մեղանչի՛ր,
Յետոյ ինձմով սրբացի՛ր։

Է.

Ու՛շ դիր խօսքիս սրբարար,
Մի՛ հեշտանար, մի՛ ընանար.
Իրիւ անկուշտ անյագ գէ՛
Պահանջդ կըլլայ կարճատե։

Ը.

Գողնալ թէև չէ յարմար,
Բայց աշխատի՛ր ինձ համար.
Եւ այս բանիս իրիւ փորձ՝
Չգուշութիւն է մեծ գործ։

Ը.

Պէ՛տք չէ մեզ սուտ վկայել
Երդում ևս ընդունել,
Մինչև կանխիկ վճարեն
Ընդհատանքիդ փոխարէն։

Ժ.

Մի՛ ցանկանար ո՛չ մէկուն,
Ոչ դրացուդ ամուսնուն.
Գու ինձ միայն ցանկացիր,
Որ քեզ բաշխեմ ամեն ձիր։

Ա. Չ՛էնանէանց

45.

Հայաստան և նորա որդիքը

Եւ զեղեցիկ է Հայաստան աշխարհ,
Բայց զեղեցիկ չէն նորա բուն մարդիկ.
Հայաստան կանաչ Հայաստան դալար,
Բայց չոր ու ցամաք նորա խեղճ որդիք։

Ընդ սթափուած ազգեր ամենայն
Գիմում են յառաջ հզօր քայլերով.
Ընդ բարձրացաւ դրօշը ազգութեան,
Բայց հայն քնած է կորստեան քնով։

Ա. Հ՛ահագիզեանց

46.

Ընդհայեն առևտուր

Երբ հայը իւր զաւակաց
Ուղարկում է վարժարան,
Ողորմութեան անունով՝
Տալիս է թոշակագրամ։

Երբ նա իւր եկեղեցուն
Ընչին բան է նուիրում՝
Համարում է ահագի՜ն
Արիւք արած իւր ազգին[1])։

[1]) Երանի՜ թէ այդպէս լինէր. ի՞նչ վնաս։
Գ. Վ. Գրիգորեանց

Հայը գլուխով անգամ
Որ և է ընկերութեան՝
Պահանջում է, որ իրան
Միշտ երախտապարտ ճանաչ։

Երբ մի բան է նուիրում
Իւր սովամահ ազգակցին՝
Ապատում է հանդիսում
Գործեա կարդալ իւր անձին։

Հայը՝ կարդալ կամելով՝
Երբ մի գիրք է ձեռք բերում՝
Նրան վճարած փողը
Լոկ տուգանք է համարում։

Երբ գրուի նա բաժանորդ
Հայկական լրագրին՝
Ողորմութիւն[1]) է կարծում
Նրան տուած չնչին գին։

---

[1]) Լաւ է որ «ողորմութիւն» համարելով՝ էլի վճարէին. բայց կան և մի տեսակ «ազգասէրներ», որոնք մեր մամուլին, մեր պարբերական թերթերին բաժանորդ գրուելով՝ այնուհետև իրանց ազատ կամ աւելի պարզ ասած՝ կազէօնն ի մարդիկ են համարում բաժանորդագինը չվճարելու։ Մեղ մեր մամուլի խմբագրութիւնը հազար ու մէկ անգամ խնդրէ, աղաչէ և, երբեմն, սպառնայ, որ իրանց վերայ ապառիկ ճնացած, մի կամ քանի մի տարուայ, բաժանորդագինը վճարել բարեհաճեն, բայց ո՞վ է դրանց լսողը։ Եւ դեռ յանդգնում ենք ասելու, որ մենք ազգասէր ենք, որ մենք մամուլին չերմ պաշտպան ենք, և ազգի կարիքներին, և ազգի առաջադիմութեանը նախանձախնդիր... ի՞նչ ճռճռան խօսքեր...։ Գ. Վ. Գրիգորեանց

Երբ հայը իւր գրամով
Օգնում է խեղճ ընկերին՝
Նորան, առանց ամօթի,
Համարում է իւր գերին։

Ողորմութեան ու պարտքի
Սահմանները մեզանում
Դեռ ճնում են անորոշ՝
Տանելիներելորդ դարում։

Այսքան գծուծ լինելով
Յանդգնում ենք մտածել,
Ազգի խղճալի վիճակ
Դէպի լաւը վերածել։

Գ—ան

47.

Պանդխտի դրութիւնը

Ծաւակի և գերդաստանի տէր մարդը
Օտար երկրում բարեկենցաղ չէ լինի,
Երբ որ կը հեռանայ որդեսէր մարդը,
Կը տխրի, երեսում ծիծաղ չի՛ լինի։

Պանդուխտ, աղքատ մարդուն կոտրած է թևը,
Կարծես թառամել է կենաց տերևը,
Համի տակից դուրս չէ գալիս արևը,
Խեղճի լոյսը անշամանդաղ չի՛ լինի։

Ուխտրդ է գերդաստանի տէր մարդուն
Հեռու տեղ գնալը, թողած տեղ ու տուն,
Յերեկը անհանգիստ, գիշերն առանց քուն,
Ամենևին մի օր խաղաղ չի՛ լինի։

Ջա՛ն, պանդուխտ մարդն է ալեկոծեալ ծով,
Բաղդ է, թէ որ մի օր ճայ անխռով,
Ընչեն առաւիպից կ՚առնուի շուտով,
Երբէ՛ք նորա սրտի հետ խաղ չի՛ լինի։

48.

Վանից մօր օր-օրը

Ծալթի՛լ, ոլդեակ, քանի՞ քնես,
Բաց լուսավառ աչերդ,
Բաւական է ոլքան օրեր
«Օր-օր» ասեց խեղճ մայրդ։

Օրօրոցիդ մօտը անքուն
Ծօր ու գիշեր ես նստած՝
Պատմեցի քեզ, հրեշտակ սիրուն,
Պատն վիճակ քո եղբարց։

Ձար տաճիկի կամքին զոհուած
Ընտել հայրը քո կորած,
Օտար երկիր նա մղուեցաւ
Հետո իւր կին, զաւակից։

Փող վաստակել՝ տալու հարկը,
Ոչնել պահանջ իսլամի,
Ամբուրից քո թարմ այտերը
Ըրտաւոքով նա լեզու։

«Մնաս բարեաւ,—ասաց ինձ—կի՛ն,
Կամք Ըրարչէն է այսպէս...
Երբ կ՚ուճնայ մեր հէգ ոլդին
Վինի կորիճ վեհ հոգով՝
Պատմի՛ր նորան հօր վշտերը,
Իմ ցաւերը արցունքով։

«Կի՛ն, կ՚աղաչեմ, հաւատարիմ
Եղի՛ր դու միշտ իմ շիլմին.
Մի՛ փոխեր իմ տուն ու տեղը
Եւ իմ սէրը կաթոգին»։

«Ես ամենը—ասաց հայրդ —
Պատուիրեմ քեզ, կողկի՛ց,
Թերևս իմ վերադարձը
Ձ՚յաջողուի այս ուղեց»։

Խեղճը գնաց անվերադարձ,
Մնացի ես ալցունքով,
Գուցէ թէ այս գրեց Ըստուած
Իմ ճակատին սև գրով։

Ընկճիր թուրքը մեղնից խլեց
Կթու ոչխար ու կովը,
Ծուրուկ պապից քուրդը խլեց
Ծոյգ եղներն ու ալօրը։

Բաւ է, ոլդեակ, լռյաս դու ես,
Երի՛ք խաբեն քեզ մուզայք...
Մի՞թէ չարը քեզ թմրեցուց,
Կամ թմրար իմ օր-օրով։

Ես կ՚քանդեմ բազուկներդ,
Կուտամ նժոյգ երիվար,
Գնա խլի՛ր մեր ինչքերը,
Լե՛ր հօրդ տան մխիթար։

Թայց դու քնի՛ր քնով անուշ,
Հատ երգերի ես կարօտ,
Որ փարատէ ցաւս անբուժ
Եւ վէրքերը իմ արնոտ...:

Կ. Պոլիս

49.

Օ՜ա ր թ ի ր

Օ՜արթի՛ր քնից, աղնի՛ւ տղաս,
Ելշալոյսը բացուեցաւ,
Անկողնուդ գմբէթներից
Օ՜անգակները խփուեցաւ:

Ահա բանուորք պատրաստուվել են
Իրանց գործին գնալու,
Իրանց անխոնջ աշխատութեամբ
Մի պատառ հաց ճարելու:

Էրի՛ք քնիս դու էլ տղաս,
Ել առ պարզ ջուր, լուացուի՛ր,
Աղօթարանի առջևը
Ծունր կրկնիր, աղօթի՛ր:

Հատի՛ր դու, աղնի՛ւ տղաս,
Դասագիրքդ առ ձեռդ,
Ուշադրութեամբ կարդա, սերտի՛ր
Նշանակած դասերդ:

Վարժապետդ սպասում է
Քո դասերը լսելու,
Աշխատի՛ր դու մի օր առաջ
Դասատունդ փոխելու:

Բաւ է քնիս, աղնի՛ւ տղաս,
Դրանից քեզ ի՞նչ պիտ' լինի,
Կարդա, լինիս ժամանակին
Ընդիս անդամ պիտանի:

Դէ՜հ, ել՛ ղարթի՛ր, սիրուն տղաս,
Էլ խոր քնում մի՛ թաղուիր,
Եւարտի՛ր քո վարժարանը,
Ընտա ասպարէզ ճարիր:

Տ. Փաշայեան Թամքալեանց

50.

Մ ա ռ ո ն - օ ր հ ն ե ն ք

«Գնա՛նք պագնենք սուրբ մեռոնը,
«Գնա՛նք պագնենք մեր Մայր-Եկեղեցի,
«Հայոց՝ այսօր է մեծ ծոնը»:
Գալիս գալիս են ուխտաւորք...:

Հնչեց յանկարծ զանգակն ուժգին.
Նրա բարձր ղօղանջն երկար
Իմաց տուաւ ժողովրդին՝
«Ժամանակն է, եկէ՛ք տաճար»:

Ահա շարժվում է խուռն ամբոխ,
Հարժվում անվերջ վրայ խռնուտ,
Վե՛ր-վար գալիս գնում փոփոխ,
Երկեղեցու դռները բռնում:

«Ե՞րբ պիտի գայ Աաթողիկոսն,
«Որ տաճարիս դռները բանան,
«Ե՞րբ պիտի գայ Աաթողիկոսն,
«Որ համբուրենք օրհնած կաթսան»:

Ահա եկաւ Հայրապետը,
Մեր Վեհափառն ու Ծերունին,
Լուսաւորչայ սուրբ Աջն հեաը՝
Օրհնում է իւր ժողովրդին:

Իսկ ժողովուրդը ջերմեռանդ
Խաչակնքում է երեսին,
Հայ-քրիստոնեայքը հնազանդ
Երկրպագում են միասին:

Էջմիածնայ եկեղեցուն
Ահա փակ դուռը բացուեցաւ,
Եկեղեցին է ողջ լեցուն...
Ժամ-պատարագը կանգնեցաւ:

Տասն և երկու եպիսկոպոս
Սեղանն եւան զգեստաւոր.
Եւ ալեզարդ Կաթողիկոս
Նրանց միջին է փառաւոր:

Նա ձեռքն առաւ սուրբ Գեղարդը,
Լուսաւորչայ սուրբ Աջն ու Խաչ,
Խաչակնքից Տիրոջ մարդը,
Մեռոն օրհնեց սուրբ ու կանաչ:

«Գնանք պագնենք մեր Մայր-Աթոռք,
«Գնանք պագնենք սուրբ Մեռոնը»:
Գալիս պագնում են ուխտաւորք.
Այս է հայոց՝ մեր մեծ ծոնը...:

Մ. Ընճեանց

51.

Ս. Մեսրոպի օրհնութիւնը [1])

(1882 թ. 16 մայիսի)

Զիւնագագաթ Մասեաց լերան ստորոտում այս առաւօտ ղօղանջում է քաղցրահնչիւն զանգակի ձայնը և հրաւէր է կարդում Արարատեան աշխարհին՝ շտապել, հասնել Ս. Էջմեան տաճարը...: Այսօր Ս. Էջմիածնում կատարւում է Ս. Մեսրոպի օրհնութեան մեծ հանդէսը, որ ոչ միայն հոգեւոր, այլ և ժողովրդական-ազգային բաղձալի մի ուրախութիւն է և ամէն հայի համար մի վեհ խորհրդաւոր նշանակութիւն ունէ...: Մեր այսօրուայ կեանքի մէջ, երբ Լոնդոնից սկսած մինչև Ճապա կղզին և հեռաւոր Ճինաստանը ամէն ուրեք ցրուած են հայք, երբ երկու երեք կաթողիկոսական տիրոջս կրօնքեր ունենալով, կասես թէ պիտի բաժանմանց դատապարտուէինք,—այսօր Ս. Մեսրոպի օրհնութիւնն է, որ միմիայն Ս. Էջմիածնի հայրապետական գահի իրաւունքն է. դա է, որ ամենայն բաժանմանց առաջն է առնում. դա է, որ ամէն տեղի հայերին կապում է 'ի մի և ամէնքի աչքը ուղղել է տալիս դէպի ազգային ընդհանուր կեդրոնը, դէպի նուիրական Ս. Էջման տեղը...:

Կրկնում ենք՝ Ս. Մեսրոպի օրհնութիւնը միմիայն Ս. Էջմիածնի համազգային ծայրագոյն Պատրիարքի բաց-

---

[1]) Այս սրբալոյս միւռոնի օրհնութիւնը կատարուեցաւ 'ի Տէր հանգուցեալ Վեհափառ Հայրապետի-Վեհորգ Ղորղորդի օրով: Գ. Տ. Գրիգորեանց

արձակ իրաւունքն է և այդ իրաւունքի մէջ ծածկուած է ազգիս ընդհանուր միութեան գաղափարը: Այդ է պատճառը, որ այսօր Ս. Էջմիածնի լայնալուսակ գաւիթում ժողովուած է մի ահագին բազմութիւն բարեպաշտ հայերի, որոնք շտապել են Նոր-Նախիջեւանից, Պարսկաստանից, Տաճկաստանից, Րուսիոյից, Ռուսաստանից և ուրիշ տէրութիւններից: Աշխարհքիս ամէն ծայրերից ժողովուած այդ հայք՝ այսօր խուռն կիսուած են Հայրապետական Վեհարանի առաջ և իրրև հարատ աղբիւր, որ դիպուկ կարօտ պտոյտ, ստանում են իրանց միայնակ հոգևոր Հօր սուրբ օրհնութիւնը: Որքան խորհրդաւոր է այդպիսի մեծաժողով ազգային տեսակէտից...:

Ս. Մեսրոպը մեր ժողովրդի բարոյական-հոգևոր կեանքում դեռ ևս հին ժամանակները մի առանձին և նշանաւոր դեր է խաղացել: Մի շարք առածներ ու ըղձացներ, մի շարք օրհնութիւններ և անէծքներ ունէ հայ ժողովուրդը Ս. Մեսրոպի վերաբերութեամբ: «Սորա ձակատին մեռոն կայ քսած», «նորա ձակատին կասես թէ մեռոն չլինի» և շատ ուրիշ այսպիսի խորհրդաւոր խօսքեր հայ մարդու համար առաքինութեան կամ անբարոյականութեան աստիճանները որոշող գաղափար էին: Մինչդարեայ յոյները, որ մեզ կամենում էին մեզ զրկել վերջին օծման խորհուրդը մեռոնի ժամանակ առանձնապէս չկատարելու համար, լաւապէս նկատած էին, թէ ո՛ր աստիճանի ժողովրդականութիւն է ստացած հայերի մէջ Ս. Մեսրոպը և նորա օրհնութեան հանդէսը: Այս է պատճառը, որ ԺԲ դարում յունաց Կիւ Մանուէլ կայսրը, կամենալով միացնել Հայաստանեայց եկեղեցին Օրթոդոքսի հետ, հին խնդիր էր առաջարկում հայոց, որոնցից հինգերորդը վերաբերում է Ս. Մեսրոպին: «Եւ զի առնիջիք զմիւռոնն ձիթով՝ ի

ծառոց»[1]): Յոյները պահանջում էին, որ մենք չկատարենք Ս. Մեսրոպի օրհնութիւնը մեր սովորութեամբ, այլ նոցա նման դորձ ածենք ձիթենեաց ծառի ձէթը: Ս. Ներսէս Շնորհալին հերքում է այդ առաջարկութիւնը, պատասխանելով, որ «քահանայական օրհնութիւնն ու աղօթքն են, որ միացնում են ձիթոյ նիւթի հետ աստուածային շնորհքը և թէ ոչինչ առաւելութիւն կամ պակասութիւն չկայ, եթէ հայոց դորձածած ձէթը ծառի պաղեցը լինի, թէ բոյսի»[2]): Այդ միջոցում հայք Ս. Մեսրոպի համար գորձ էին ածում շուշմայ (սուսամ) բոյսի հիւթը, մանաւանդ, որ Հայաստանում ձիթենին չէր բուսնում:

Այսպէս թէ այնպէս, բայց Ս. Մեսրոպի օրհնութիւնը այսօր Հայաստանեայց եկեղեցւոյ ամենահին ծիսակատարութիւններից մէկն է և նորա մանրամասնաբար ուսումնասիրութիւնը գիտական հետազօտութիւնների ձեռքով պիտի ապացուցանէ, թէ ո՛րքան անարատութեամբ է պահպանած մեր եկեղեցին քրիստոնէութեան առաջին դարերի սրբազան հարց կանոնադրութիւնները:

Եւ որովհետև այսօրուայ այդ մեծ հանդիսին ներկայ եղողների թիւը, համեմատելով մեր ազգի քանակութեան հետ, շատ աննշան է, իսկ այդ մեծաշուք արարողութիւնը անշուշտ ամենի համար հետաքրքրական է, վասն որոյ աւելորդ չի լինիլ այստեղ մի համառօտ նկարագիրը տալ, թէ ի՛նչպէս է կատարվում ազգիս այդ նուիրական արարողութիւնը: Իսկապէս Ս. Մեսրոպի օրհնութեան համար որոշ ժամանակ չկայ նշանակուած.

---

[1]) Տե՛ս Ընդհանրական Ս. Ն. Շնորհալւոյ. Երուսաղէմ 1871. եր. 157:

[2]) Նոյնը՝ եր. 97:

այդ հանդէսը պէտք է կատարուի այն ժամանակ, երբ վիճակներում և Մայր-Եթոռում սպառի Ս. Մխոնի պաշարը: Մեր դարում միւռոնօրհնէքը կրկնվում է հինգ-վեց տարին մի անգամ, բայց ժողովրդի մէջ ընդհանրացած է այն կարծիքը, որ իբր թէ այդ հանդէսը հօթը տարին մի անգամ պէտք է կրկնուի: Ներկայ [1]) Վեհափառ Կաթողիկոսի օրով միւռոնօրհնէքներ կատարուել են 1868, 1872, 1878 թուականներին և այսօր ահա չորրորդ անգամն է:

Երբ ուրեմն հարկը պահանջում է միւռոնօրհնէք կատարել, Ս. Էջմիածնի կողմից նախապէս՝ քանի մի ամիս առաջ, հրաւէրք է ուղարկվում ամենայն Թեմերին, ուր որ հայք կան և ծանուցանելով նոցա ապագայ հանդիսի օրը՝ առաջարկվում է գալ և մասնակցել այդ փառաւոր հանդիսի տեսնելովը [2]): Յայտնի է, որ ամէն տեղ հայերի համար բաղձալի է եղել միշտ երկար նուիրական ուխտագնացութիւն՝ լինել Ս. Յարութեան օրը Երուսաղէմում, ներկայ գտնուիլ միւռոնօրհնէքին Ս. Էջմիածնում և Վարդավառի տօնը կատարել Մշոյ «մուրազատու» Ս. Կարապետի վանքում: Եւ ահա Մայր-Եթոռի հրաւէրքը արձագանք է գտնում հեռաւոր հայերի սրտում ու ամէն տեղ խումբեր են ժողովուում, ընկերութիւններ են կազմվում դէպի Ս. Էջմիածին ճանապարհորդելու: Ազգիս Հայրապետը, վստահալով իւր հոգևոր որդւոց բարեպաշտութեան վերայ,

[1]) Գէորգ Չորրորդը. այժմ ի Տէր հանգուցեալ:

[2]) Ներկայ Վեհափառ Կաթողիկոս Մակար Ե. իւր առաջին միւռոնօրհնութեան փառաւոր հանդէսը կատարեց ներկայ 1886 թ. յունիսի 16-ին, ինչպէս ասում են, 20,000 անձանց ներկայութեամբ: Ա՛յդ հանդիսի նկարագրութիւնը կ՛աշխատենք շուտով լոյս հանելու:

Գ. Վ. Գրիգորեանց

կարգադրում է նոցա ընդունելութեան մասին և միևնոյն ժամանակը պատրաստութիւն է տեսնում միւռոնօրհնէքի ծիսակատարութեան համար: Հանդիսից քառասուն օր առաջ Ս. Էջմիածնի աւագ սեղանի վերայ դնում են մաքուր ձիթով լի միւռոնօրհնէքի ալաբաթէ մեծ կաթսայն և ամէն օր դորա վերայ կարդում են նշանակած աղօթքները: Միևնոյն ժամանակը Վեհափառի ընտրած քանի մի եպիսկոպոսներ և վարդապետներ պատրաստում են ծաղկանց և բալասանի այն հիւթը, որ օրհնութեան ժամանակ պիտի ածուի մեծ կաթսայի մէջ:

Միւռոնօրհնէքի հանդէսը իսկապէս սկսում է նախընթաց օրը երեկոյեան, երբ Կաթուղիկոսը և միաբանութիւնը հանդիսով գալիս են ժամ և կատարում են դիշերապաշտումը: Երեկոյեան ժամը աւարտելուց յետոյ, առանձին արարողութեամբ և աղօթքներ կարդալով հի են տալիս մեծ կաթսայի իւղը և միայն առաւօտեան ժամերգութիւնից առաջ՝ ծածկում են կաթսայի խուփը և վրան ձգում են քօղը: Այսօր առաւօտեան ժամերգութիւնից փոքր ինչ միջոց անցած՝ այն է մօտ ժամը 9-ին, հնչում են ս. պատարագի զանգակները: Վանքի պարիսպը և խուցերի կտուրները լեցն են ահագին բազմութեամբ. մօտ 15 կամ 20 հազար հոգի Հնդկաստանցի և Մոլդաւացի, Վանցի և Նոր-Նախիջևանցի, Իսպահանցի և Պօլսեցի—ամէն տեղի հայք խուռն դիզուել են հանդէսը մանրամասնաբար տեսնելու: Տարբեր տարբեր բարբառներով եղած միմեանց հարցուփորձը՝ խառնվում է Երևանի գիւղերից եկած մայրերի ուսերքին շալակած մանուկների լացի և ծվոցի հետ և դառնում բոլորը մի խուլ ձայն, մի տարօրինակ աղմուկ: Մի վաշտ ռուսաց զօրք նուագապարանով հանդերձ՝ շարուած է երկու կարգ՝ վիհարանից մինչև եկե-

ղեցւոյ գօտւոը և արդելում է ժողովրդի ալեաց յառաջ ընթանալու և հանդիսի ձանապարհը կապելու: Եւ որովհետև եկեղեցւոյ մէջ հազիւ երկու հազար հոգի կարող է տեղաւորուել, վանորոյ մուտքը տումսակներով է: Այդ տումսակները բաժանվում են ձրի նախընթաց օրերում պլնաւորապէս այն անձանց, որոնք եկած են աւելի հեռաւոր երկիրներից:

Մօտ ժամը տասին սկսվում է հանդէսը վեհարանից: Ահա երևում են մի ձեռքը համեստութեամբ կուրծքին դրած, միւս ձեռքին գաւազան՝ կարմիր զգեստ հագած կաթողիկոսական ընկերները: Սոցա ծանր քայլերին հետևում են Գէորգեան Ձեմարանի աշակերտները հոգևորական զգեստով: Յետոյ հանդիսաւոր ժամանակներ հագած՝ մի մեծ խումբ երգչաց և դպրաց: Ապա քանի մի կարգ մոմակալներով, որոց հետևից ընթանում են երկու շարք տեղացի և ուխտ եկած քահանայք. նոցա հետևից երկու դաս՝ աբեղաները և վարդապետները: Այդ շարքերի մէջ տեղը ընթանում են խաչվառները: Խաչվառների հետևից շարուած են մի կարգ վեց վարդապետներ, թագերը գլխին և աւագ սարկաւագների զգեստով, որոնք բուրվառում են իրանց հետևից տարուած սրբութեանց և Հայրապետին: Տան և երկու արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ զգեստաւորուած և վեց վեց բաժանուած երկու դասի՝ բերում են հեռաւեալ սրբութիւնները:—Մէկ կողմից՝ միւռոնակիր Ղազանչին, որի մէջ պահուած է հին միւռոնը, նորա հետևից՝ Մաաթիոս աւետարանչի մասունքները, յետոյ Յակոբ առաքեալի (Ալփեան) աջը, յետոյ Պետրոս առաքեալի մասունքը, Թոմայ առաքեալի աջը և վերջապէս Ս. Գեղարդը: Միւս կողմից՝ առաջ Ղեւոտարանը, յետոյ Երիստակէս Հայրապետի աջը, Յակոբ Մծբնայ Հայրապետի աջը, Պետրոս Գետադարձ Հայրապետի քառաթև խաչը, Ս. Լուսաւորչի աջը և վերջապէս այն մեծ ճաճանչաձև խաչը, որի մէջ է ամփոփուած Ս. Կենաց փայտը: Եպիսկոպոսաց այդ երկու դասի մէջ գնում են զարձեալ մոմակալներ: Սոցա հետևից երկու վարդապետներ՝ բարձր բռնած՝ Հայրապետական խաչը և գաւազանը: Սոցա հետևից բերում են մի փառաւոր ամպհովանի, որի ներքոյ գնվում է զգեստաւորուած Վ. Հհայոց Կաթողիկոսը, ձեռքին խաչ և գաւազան. երկու վարդապետներ բռնած են Նորին Օծութեան շուրջառի քղանցները. հետևից կանգնած է կաթողիկոսական գաւազանակիրը, իսկ Վ. Հհայոց առաջը երկու աւագ քահանայք բերում են սպիտակ կերպասի վերայ ոսկեթել բանուած և ոսկեթել ծոպերով զարդարուած Հայրապետական Գօղը՝ ջրոս անկիւնից բռնած: Ամպհովանուց ջրոս կողմը շարուած են քշոցակալները, իսկ հետևից խուռն բազմութիւն հայազգի և օտարազգի պատուաւոր անձանց[1]): Մտնելով եկեղեցին, Վ. Հհայոց, եթէ ինքը չէ պատարագիչ, (սովորաբար պատարագիչը լինում է եպիսկոպոսներից մէկը) կանգնում է իւր աթոռի մօտ և սկսվում է պատարագը: Երբոր պատարագը հասնում է այն տեղը, որ երգում են «Ողջոյն տուք միմեանց», գլխները գետ չ'պատասխանած «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», յանկարծ պատարագը ընդհատվում է և սկսվում է Մխիթարի օրհնութիւնը: Կաթողիկոսը և տասներկու եպիսկոպոսները, սրբութիւնները ձեռքին, բեմի վերայ, կիսաշրջապատում են կաթսայն և կարդում են պատշաճի աղօթքներ և աւետարաններ. երգվում են Տէրսէս Շնորհալ-

[1]) Տե՛ս «Ընթարձ» 1868 № 5 և 1872 № 7. Грузія и Арменія Муравьева т. 2. Сборн. мат. изд. Кавк. учеб. окр. вып. 2. ст. Зелинскаго և այլն:

ւոյ Մխիթարեան հաւաքածոյ «Որ յաւուրսն յոբելինեան» շարականը և դանձերն ու մեղեդիք։ Ապա վեր են առնում կաթսայից՝ քօղը և խուփը և Աաթողիկոսը աճուրդ է կաթսայի մէջ նախ վերև յիշուած պատրաստած հիւթը, ապա հին միւռոնը։ Ձայնակապ է այստեղ յիշելը որ աղաւնւոյ ձև ոսկէ անօթի մէջ միշտ պահվում է անցեալում օրհնած միւռոնը, որ իբրև խմոր աճուրդով նոր օրհնելիքի մէջ, նոյնից յետոյ լցվում է և պահվում եկող միւռոնօրհնէքի համար։ Եւ այսպէս, ըստ ազգային աւանդութեան, պահուած է մինչև այսօր Ս. Լուսաւորչի ձեռքով օրհնած միւռոնի խմորը։ Հին միւռոնը աճելուց յետոյ՝ Աաթողիկոսը խաչաձև խառնում է կաթսայի հիւթը նախ Ս. Լուսաւորչի աջով, որի վերայ եպիսկոպոսական կամ հայրապետական իրաւունք կրող մատանի կայ, ապա նոյն ձեռով խառնում է խաչափայտով ու յետոյ Վեղարդով։ Այդ սրբութիւններով կաթսայի խառնելու ժամանակ՝ միջի հիւթը եռ է գալիս և գոլորշի արձակում։

Մխիթարեան օրհնութիւնը սովորաբար տեւում է երկու կամ երկուսուկէս ժամ, ապա շարունակվում է պատարագը, որոյ վերջանալուց յետոյ, առանց առաջուայ հանդիսի, վերադառնում է Վահափառը՝ օրհնելով ձեռնադիրին իւր բարեպաշտ հօտը։ Պատարագից յետոյ՝ ժողովուրդը դիմում է և համբուրում միւռոնի լի կաթսայն։

Ամէն

52.

Վարշա

Ով դուք ինձ տեսնէք գալիահալ դէմքով
Տրտում ու տխուր վշտացեալ սրտով՝
Դիտցի՛ք դուք, ով հայ աղնիւ պատանիք,
Որ դա ցաւերիս սիրելն է միայն։

Երբ դուք կ՚տեսնէք արտասուքն աչքիս
Դառնագին լալով վիճակը խղճիս՝
Դիտցի՛ք որ դա իմ բի՛ւր բի՛ւր ցաւերից
Մի հազարաւոր դեռ մասը չէ այն։

Ով տեսնէք ընկած ուշաթափ մէկդի
Ողեմգեան քնաւ սղմած իմ կրծքի,
Եւ փափուկ ձեռներս դըրած լարերի՝
Դա կեանքիս վերջն բոպէն է միայն։

Իսկ երբ դուք տեսնէք ընկած մի մարմին
Առանց ծածկոցի դէմ ապած հովին,
Եւ արեան բծեր երևին կրծքին՝
Դիտցի՛ք, դժբաղդիս դիակն է այն։

Ոայց երբ որ տեսնէք մի փոքրիկ բլուր
Ծածկված խոտերով, ծաղկունքով բի՛ւր բի՛ւր,
Եւ անուշ հոտը բոնած ամեն ուր՝
Դիտցի՛ք, թշուառիս գերեզմանն է այն։

Եւ դորա բոլոր թէ տեսնէք մինը
Ընդօր ձեռներով փորելիս հողը
Արտասուքն աչքին լալով իր օրը՝
Ընթադդիս միակ սիրուհին է այն։

Վարդենիս Տէր-Ներսիսեանց

53.

Խայու խաւաա (Տարօնցի բարբառ)

(Նուէր իմ Սարուբէգին)

Թուձաւ, էլ խէրիւք պաշաես ժանդ-զոսկի,
Ձ'սգինաճ մըր գարդ դու կէնիք մազան.
Փոր մի կուշտ-կուռ խայ խէրիւք չ'քզի՞
Թաւ ձեռտի քոմակ, կորե՞րի վաթան:
Ընչէկ բոլորտի, օլռտէ վաթան,
Ինդի ալգիուսա, խայու խալ համան:

Եր'կ'ց, խէ'րիւքդի, թորդ ալէլուան,
Խէրիւք ժամ, ծոմ, պաք, աղօթք քարոզիս.
Խինդ խարուր այսրի սրբերի դռան
Մացինք գիլիֆտար, բէ'-մալ, սէ երես:
Ընչէկ բոլորտի, ևայլն:

Տոտիկիդ խորպան, էյ Ձանկլու գիւան,
Խ'րիւքի ուզես խուռնկ, մոմ, խաչխամբուր,
Ձ'ուլըմ տաճկու ձեռ զարդ կէդի շիւան,
Տ'ուր ուժ կարճուն, խոչչաղ սիրտ ու թուր:
Ընչէկ բոլորտի, ևայլն:

Սարդցվ'որ գիտուն, խէրիւք խալվիսի
Ձ'ուռ ի տաս, ձդես, զաստիդ ու զաշխար,
Մամլաքաթի խալ, վ'ալլահ, համա՞նի,
Գ'իր, խալամ բո՞շի, թ'ուր խայու խամար:
Ընչէկ բոլորտի, ևայլն:

Գաշտեցի կարիճ, թ'ուրդ խոռովելտի,
Գուրթնի բարաքաթ էդի շնորց,
Գու մդիկ աչկէ թաղ խոփ, գերնդի,
Խայու լուս խաւաա չուզէ բահ-բլոց:
Ընչէկ բոլորտի, ևայլն:

Վա՜, աղջի՛, Մարան, թիսէ դունիկտի,
Մանէ՛ կէռ իլիկ, խինէ՛ խէնք կտաւու
Նարի փաթաթան, համ պատան մէդի,
Թաղ շալակ տղուդ, խրկէ՛ դաշտ կուվու:
Ընչէկ բոլորտի, ևայլն:

Ձէ՜, թուձաւ ճնայ ուր քէֆի խամար,
Ջ'ոջ, երէց մդիկ ծոմ, պաք քարոզէ,
Կարիճ գաշտեցին էդի գիլիֆտար,
Ձ'խանի իմդատ սըր Գիւրգոր, Մկրէ:
Վ'ալլահ լուս խաւաա չճնայ գաշխար,
Խարամ մըր մօր կաթ, թո՜ւք մդիկ խամար:

Կ'ուզէ

54.

Գ'օշմա

Թէ գիս կ'հարցանես, ով քաջ բանաստեղծ,
Տրտմութեան ծովէն ու ցամաքէն եմ ես.
Ահա կեանքս քիզի կը պատմեմ անկեղծ,
Գունով ամենասև թանաքէն եմ ես:

Յորժամ սկսեցի քնքնութիւնը,
Էքերուս երևցաւ իմ հնութիւնը,
Ջարդի աշխարհէն իմ բնութիւնը,
Ետաւ ինձ՝ սիրտ խոցող սլաքէն եմ ես:

Փրկչեն աշակերտ եմ, ես պլուժէն չեմ,
Թէպէտ և դիտուԹեան ոլոտուժէն չեմ,
Իմ գլուածքն էլ կ'ասէ՝ Թէ ուսուժէն չեմ,
Այլ սիրոյ մասնաւոր փափագէն եմ ես։

Ամի հազար ուԹ հարիւր և հօԹանասուն
Երևքեին[1]) ժողովեցի երգերս հայկազուն.
Պարտիզպան Մալխէ եմ, տարիքս չիսուն,
Եւ Ըհէքսանդրօպօլ քաղաքէն եմ ես։

55.

Ր ո լ ո ր ը տ ա ր ա ն ք

(Նուէր տաճկահայերին)

Թշնամեաց ճանր հարուածներից յետ,
Երբ մեր աշխարհը ամպի դարձաւ,
ԸսպառակուԹիւնք աւերից հայոց տուն,
Մեր սրբուԹիւնքը ոտնահարուեցաւ։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

[1]) Էջից այդ 1873 Թուից սկսուեցաւ «Մոխակ Էյասատանիի» հրատարակուԹիւնը, որի հատորների մէջ, ինչպէս և այժմ, շարունակ տպագրվում էին և մեր ազգային երգիչների գրուածքը։ Այդ էր պատճառը, որ շատ շատերը իրանց գրուածքը ժողովում էին և պահում, աչքի առաջ ունենալով կամ «Մոխակի» հատորների մէջ, կամ առանձին գրքոյկով հրատարակելու։ Այդպիսիներից էր և պ. Մալխէն, որի գրուածքներից մի քանիսը դեռ 1878 Թուին տպագրուեցան «Մոխակի» IV հատորում։

Գ. Վ. Գրիգորեանց

Ոսկի և արծաԹ, պալատք հրաշակերտ,
Խլեցին մեզնից՝ յոյնը ու պարսիկ.
Փառաւոր կեանքի, պայծառ բաղդի հետ
Կորուսինք նաև քաղցր հայրենիք։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

Երկնեւրանգ ծաղկունք, գալար սէգն ու խոտ
Ներկուեցան հայի անմեղ արիւնով.
ԹՀ գիւղ, ԹՀ քաղաք, լեռներ ու հովիտ
Ծածկուեցան հայ ոսկերց կոյտերով։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

Ընչքշլացնող մեր ապարանքին
Ընաանոց որջերը փոխանակեցին.
Հէն քաղաքայ տեղ՝ մեզի մղեցին
Խիտ անտառները, վհԹխարի լեռները։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

Մեր սրբուԹեանցը, մեր ոսկերց վերայ
Պուռանի որդին շինեց իւր տունը.
Ընդաղդ Էյասատան ընկաւ բնաւին,
Չեռն ի ծնօտ լացեց խեղճ պլրին։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

Պլրենի քիւրդն էլ մեր դէմ սուր վերցուց...
Էյրենիք դարձաւ արեան ճապաղիք.
Էյրը բողոքեց, ծիծաղ շարժեցուց,
Խուլումունջ գարձած անգուԹ Եւրոպի։
Ռոլորը տարանք համրի լռուԹեամբ։

Ստեփանոս Յովհաննէսեանց

56.

Ա. Հայրիկն Խրիմեան

Թող բարձրացնեն ձեռնէջ աղաղակ
Թուրթակ, կաչաղակ,

Միակ վայելուչ, միակ սրտառուչ
Երգիչն է Սոխակ։

Թող վայն բուեր, ագռաւներ անթիւ,
Հազար հաւ ու ձիւ,

Ամենից մեծը, ամենից բարձրը
Ի՛ ազատ Երծիւ։

Թող ատն՝ ում կուզին՝ մանեակ, մատանիք,
Նշաններ, գաւնիք,

Միակ արժանին, միակ սիրելին
Կը ճնայ Հայրիկ։

Հայրի՛կ, ո՛հ, Հայրիկ, քո քաղցր անուան
Լինեմ ես ղուրբան,

Աչե՞մ այն հողը, որ ծնաւ քեզ պէս
Հրեշտակ պահապան։

Ա՛վ Տէր, պահպանի՛ր Դու մեր Հայրիկին—
Քո հաւատարմին,

Ընպակաս արա մեր գլխներից
Նորա հովանին։

Պ. Ալպոյեանց

57.

Վանի մի դիտողութիւններ Խրիմեան Հայրիկի անձի և նորա բնաւորութեան մասին

Ա. Խրիմեան իբրեւ թեղէթ է, և դորան ուշադիր ընթերցողին խելամուտ անելու համար, հրաւիրում ենք կարդալ նորա կեանքի պատմութիւնը, սկսած իւր մանկական շրջանից մինչև Վանի վերջին սովի ժամանակը, թող շատ մանրամասնին քննէ իւրաքանչիւր ընթերցողը, արդեօք մի վանեցի ոստայնանկի աշակերտը զուրկ մի դպրոցական և հոգատար պատրաստութիւնից, առանց մեծ և բնական խելքի, կարող է այնպիսի մեծ և հաղորդակից գործեր գործելուց յետոյ, բարձրանալ մինչև Ն. Պօլսի Պատրիարքական Ընտրող։ Դիտո՞ք, Խրիմեանի պատրիարքութիւնից առաջ ինչ նշանակութիւն ունէր վանեցին պօլսեցուց մինչև իսկ այլ գաւառացուց աչքում։ Նա մկրտուած էր «խըմբըլ» անունով, և որքան անմտացելի էր Ն. Պօլսի պատրիարքական աթոռը մի վանեցու համար։ Ուրեմն Խրիմեանը իւր հաղորդակից խելքի շնորհիվն էր, որ այդ ամենաստոր վիճակից մինչև այդ բարձր կէտը բարձրացաւ։

Ր. Խրիմեանը ժողովրդական մարդ է և բարձր ժողովրդական. գոնէ այս վերջին դարում հայ պատմութեան մէջ ես չեմ գտնում այնպիսի մի մարդ, որ Խրիմեանից աւելի բարձր ժողովրդականութիւն ստացած լինի։ Այո, եղել են շատ ժողովրդական մարդիկ, բայց Խրիմեանի ժողովրդականութիւնը հէնց նորանումն է կայանում, որ նա իւր ժողովրդականութիւնը ոչ մի ցընցող հանդամանքից չէ ստացած։ Նախկս Աթոռզեկոսը

իւր ժողովրդականութիւնը ստացաւ իւր մեծամեծ գործերով։ Ներսէս Պատրիարքը Տաճկա-Հայաստանի բարենորոգութեան խնդրով։ Իսկ Խրիմեանը իւր ժողովրդականութիւնը ստացել է նոյն իսկ վարդապետական աստիճանում, իւր ազգօգուտ գործերով, իւր համեղ և սրտաթիւնդ գրչով և իւր բարեպահոս և հայրենասէր ոգևորիչ քարոզներով։ Դեռ վարդապետական աստիճանում էր, որ նորա դիւթիչ անունը հնչվում էր ամենահեռաւոր հայերի սրտերումն իսկ։ Դեռ այս ժամանակումն էր, որ նա իւր սիրող և պաշտող ժողովրդի կողմից ստացաւ «Հայրիկ» բարձր անունը, որ փոքր ի՛ջոցում այնքան ընդհանրացաւ, մինչև իսկ իրան պէս մի համեստ մարդ սովորեցաւ ինքն իրան էլ Հայրիկ անուանել և Հայրիկ ստորագրել։

Գ. Խրիմեանը, պէտք է համարձակութեամբ ասել, ունի անպարտ անձնական, ոչ վարդապետական, ոչ վանահայրական, ոչ առաջնորդական, ոչ պատրիարքական և ոչ այլ փոքր և մեծ յանձնարարական պաշտօններում իւր պարտաւորութեան, իւր ազգի և իւր խղճի դէմ չէ դաւաճանել, և չէ եղած մէկը, որ մերկացուցած լինէր նորա վերոյիշեալ պաշտօններում կատարած գործի և ազգասէր գործունեները։ Ընդհակառակն, ամբողջ ժողովուրդը այսօր Խրիմեանին ճանաչում է իբրև մի ամբիծ և հրեշտակակրօն մարդ և իբրև սուրբ պաշտում նորան։

Գ. Խրիմեանը ջերմեռանդ և նախանձախնդիր է դէպի ազգային եկեղեցին, այս յայտնի է նախ նորանով, որ Խրիմեանը յամենայն դէպս թէ բանիւ, թէ գրչով և թէ գործով չէ դադարել և չէ խնայել մարտիկել լի ցասմամբ և անաչառութեամբ այն օտարներին կամ օտարամոլներին, որ յանդգնել են մատ պարզել դէպի մեր ազգային եկեղեցին և նորա հարազատ որդիքը, նոյնպէս և մեր հատազդի այն հոգևորականներին, որք իրանց զազիր գործերով պղծել են ազգային եկեղեցականութեան պատիւը իրանց անվայել վարմունքով։ Ձէ եղած, ասում եմ, մի հոգևորական, որ Խրիմեանի պէս խիստ վարուած լինի դէպի իւր համապաշտօն անարժան եղբայրները, և այդ պատճառով է ահա, որ նա մեր հոգևորական դասի մեծամասնութեանը գրեթէ ատելի է, բայց և չկայ մի հոգևորական, որ Խրիմեանի չափ կարեկից լինի դէպի իւր ըմբոստ պաշտօնակիցները։ Խրիմեանն էր նոյնպէս, որ ամենքից առաջ հարկաւոր տեսաւ մեզ համար արժանաւոր հոգևորականներ պատրաստել և այդ նպատակով հիմնեց Վաղարշապատում «Ժառանգաւորաց» ուսումնարան։ Սորանից յետոյ պէտք է յիշել նաև իւր կրօնական և ազգային եկեղեցին պաշտպանող հոգեբուղխ, մեծ և փոքր, յայտնի և ծածկանուն բրօշիւրները և քարոզները։

Դ. Խրիմեանը ո՜ւո՜ճաւէր է, դորան վկայ նախ իւր անձը, որ մի այնպիսի խոր տգիտութեունում թաղուած անուսումնասէր քաղաքում, իւր անձնական աշխատութեամբ յաջողեցաւ ուսման այնքան պաշար ամբարել, որ «Հրաւիրականներին» հեղինակ կարողացաւ լինել։ Երկրորդ՝ իւր Վաղարշ և Ս. Կարապետ վանքերում հիմնած Ժառանգաւորաց բարձրակարգ ուսումնարանները, և երրորդ՝ իւր շատ տեղերի ուսումնարաններին մատուցած ծառայութիւնները, քաջալերութիւնները և համակրանքները։ Դ. այս գործում էր Խրիմեանը մի այնպիսի ժամանակում, երբ մեր մէջ «ուսումնարան» ասուած վայրերը մատով էին համարվում, և այն տեղերումն էր գործում, ուր որ իւր բարի գործերը կատարի հալածանքների էին ենթարկվում, իսկ հաղուագիւտ համակրողք արեգակի պէս ջոկվում էին ամպերից։

Ը. Երիմեանը քաջի յանդգնո–ւթի– ունի մեծ գործերում, այս բանի ապացոյցի համար ես թողնելով բազմաթիւ գործերը, յիշում եմ միայն մի երկու գործ, որոց վերայ, կարդալ լաւ ուշադիր լինի ընթերցողը: Մի՞թէ յանդգնութիւն չէր, որ համարձակեցաւ Երիմեանը առաջ գնալ Գութթէմբերգեան մեքենայն արհմուքից արհելք փոխադրել և հաստատել Տաճկահայաստանի երկու գլխաւոր վանքերում, Վարագում և Գլակում: Մի՞թէ յանդգնութիւն չէր, որ Երիմեանը համարձակուեցաւ Վարագայ նման աշխարհի մի խոր անկիւնում ընկած, ամեն յարմարաւոր պիտոյքներից զրկուկ, մի աղքատիկ վանքում հիմնել «Ժառանգաւորաց» բարձր ուսումնարանը: Ահա սոցանով Երիմեանը իւր ժամանակակից բոլոր հոգևորականներից բարձր է: Նկատելով որ այս բանները գործելու համար մանաւանդ, Երիմեանը իւր քսակումն նախապատրաստի կոպէկ անգամ չէ ունեցած եղել:

Ժ. Երիմեանը անզուգական անձնահաւէք անհատն է, որին կարելի է մի օրինակելի պատկեր վեր առնել պատմութեան համար. այս մասին ես ամաչում եմ մի ապացոյց մէջ բերել որովհետև իւր անունն իսկ ապացոյց է այդ անզուգ յատկութեան: Եւ որովհետև անզուգ ասացի, ուստի և զորանով կորուցի արդէն իմ սովորական համեմատութիւնը:

Ը. Երիմեանը անփառասէր է, զորան ապացոյց իւր ամբողջ կենսագրութիւնը և առաւելապէս իւր պատրիարքական վիճակի կեանքը, որպիսի անփառասիրութիւնը այժմ գրոյց է դարձած մեր ժողովրդի մէջ և բերանից բերան խօսվում պանծալի դովեստներով: Երիմեանը թէ վարժապետական, թէ վարդապետական, թէ եպիսկոպոսական և թէ պատրիարքական պաշտօններում միշտ միևնոյն համեստ մարդ մնաց, ոչ մի վիճակը նորա

վերայ փոփոխութիւն չբերեց: Նորա պատրիարք ժամանակը տեսնելիս, կարծում էիր թէ երէկուայ համեստ Միաբան վարդապետն է. իսկ Պատրիարքարանի պաշտօնական դահլիճը մտնելիս, կարծում էիր, թէ Վարագի անպաճոյճ խրճիթն ես մտնում:

Թ. Երիմեան օրինակելի վարուք կեանք ունի, որի մէջ նոյնպէս մեր բարձր հոգևորականներից շատերը տեղ են տալիս նորա առաջ: Նա չափաւոր է եղած թէ հագնելիքի և թէ ուտելիքի մէջ: Դեռ նորա վարդապետութեան ժամանակն էր, մի անգամ ես նկատեցի, որ նա իւր գրպանից հանեց մի թաղիքէ փոքրկ նորա վերայ անցկացրեց վեղարը ու ժամը մտաւ: Պատրիարքութեան ժամանակումն էլ ես այսօրինակ անշքութիւններ էի լսում յաճախ նորա մասին: Իսկ ուտելիքի մէջ նա չափաւորագոյն է: Եթէ յիշողութիւնս չի խաբում ինձ, կարծեմ լսել եմ, Երիմեանը պատրիարք եղած ժամանակումն իսկ իրան յատուկ խոհարար չի ունեցել: Այս ժամանակն է եղել, որ երկու Ռուսաստանցի ուսանողք հիւր են եղած Պատրիարքարանում, խնդձերը միշտ ևթևաւայելիս են եղել, որ այն օրը պէտք է վայելեն, որովհետև, բիւզանդական ինչ բաղմախորհրդական սեղան, բայց ինքան է եղել իրանց ախորժութիւնը, երբ ճաշի ժամանակը իրանց առաջը բերուել է լոկ մածուն և լաւաշ հայց միայն:

Ժ. Երիմեանը ճանաչո՞ղ է ձեր ապիը, ճանաչում է նորան, ոչ թէ հեռուից, հարևանցի, հատուկոտոր, բնթանացի և դրչի տակ կաշկանդուած տեղեկութիւններով, այլ շատ մօտից, իւր աչքով տեսնելով, իւր ականջով լսելով նորանց նեղութիւնները և լացերը, իւր ոտքով մանդալով նորա շատերի մէջ և վերահասու լինելով ամենամօտ կերպով նորա կարիքներին և ցաւերին և նորա ամենակերպ կեանքին. նա ճանաչում է ամբողջ ազ-

դին ընդհանրապէս իւր պատրիարքական պաշտօնով։ Նա ճանապարհ է ամենամօտ կերպով մեր Տաճկա-Հայաստանի ժողովրդին, իւր Վանի և Մշոյ առաջնորդութիւններով, թէ Տաճկա-Հայաստանում, թէ Ռուսա-Հայաստանում, թէ Պարսկա-Հայաստանում և թէ այլ տեղերում։

«Աբդիաճան»

58.

«Ո՛վ այսուհետև զմեզ յարգեսցէ զու-
«սուճ. ո՛վ ուրախասցի ընդ յառաջա-
«դիմութիւն աշակերտիս»։

Առակ. Խոր.

Թէ գիւղ թէ քաղաք, աւան ամայի
Բացինք դպրոցներ ամենայն տարի.
Նաև թուղթ և մելան, գրիչ և գրքեր
Տուինք հայ աղջկայ և տղի ձեռքեր.
Մինչ դպրոցասէր մենք չունինք մարդիկ,
Ո՛վ պիտի յարգէ մեր վաստակ և ձիգ։

Մեր գլուխ, մեր անձ տուինք քարէ քար,
Մտանք հանճարեղ իմաստնոց կառոյ.
Սորվեցինք պէս պէս լեզու և ուսում՝
Օրպէս զի պէտք գանք հայ դպրոցներում.
Երբ մեր արժանիք ճանաչող չունինք,
Ո՛վ պիտի յարգէ մեր ուսման բարիք։

Ամեն օր կանուխ դպրոց անդադար
Գիմումներ կրթել մեր միտք և հանճար,
. . . . . .
. . . . . .
Երբ մեզ քաջալեր չունինք մարդ ընտիր,
Ո՛վ պիտի յարգէ մեր ուսում և գիր։

Ելևէջք, հիւսիս, արևմուտք, հարաւ
Ուր որ տարաբաղդ հայը ոտք դրաւ,
Իբրև առաջնորդ նորա կոյր կիանքի
Հաստել ենք իւր մէջ աղնիւ սիրտ հոգի.
Մինչդեռ անտարբեր են մեր ժողովուրդ,
Ո՛վ պիտի յարգէ մեր խօսք և խորհուրդ։

Աշխարհիս վայելք առ ոտն կոխած,
Ամեն տառապանք աչքի տակ առած,
Գրում ենք, տպում պիտանի, ընտիր
Գարտէզներ, մատեանք ու շատ լրագիր.
Մինչ ընթերցասէր մենք չունինք մարդիկ,
Ո՛վ պիտի յարգէ մեր տաղանդ և ձիրք։

Ելանք շրջեցինք ամբողջ Հայաստան,
Գնեցինք նորա աւերք ցիր ու ցան.
Գնեցինք նորա բարձրաբերձ լերինք,
Ծառ ու ծով, ծաղիկ ու ջրվէժ երկինք.
Մինչ հայրենասէր մենք չունինք մարդիկ,
Ո՛վ պիտի յարգէ մեր վաստակ ու ձիգ։

Ամոլ եղնելով դաշտեր չոր խոպան
Ընդ միշտ հերկում ենք, ցանում ցանք ու ցան.
Գինևոլներ այգիք, պարտէզք մրգաբեր
Գարձեալ մեր ձեռքով են ծաղկիլ, աճել.
Մինչ գնահատող չունինք մենք մարդիկ,
Ո՛վ պիտի յարգէ մեր բերք, արմտիք։

Տապար, խոփ, մանգաղ, հատու սուր ու գէնք
Գաջ կռել կոփել ամենքս գիտենք.
Գիտենք նրբաթել և հիւսել կտաւ
Ամառ կարել աղնիւ հանդերձ և հալաւ.
Բայց ո՛վ մինչ ցայսօր կլաւ 'ի հանդէս
Եւ գովեց, յարգեց մեր արհեստ և մեզ։

Ո՛վ ժիր, գործունեայ հայ ազգի մշակք,
Դուք մի՛ գանգատիք թէ մեր ջան, վաստակ
Ձ՛յարգեց, գովեց աշխարհի առաջ
Ոչ տէր, ոչ ծառայ և ոչ զինուոր քաջ.
Զեր ձգանց փոխան այդ պատիւ, յարգանք
Մարդիկ մեզ կ՛տան ձիշտ այն ժամանակ,

Երբ դուք ձեր վսեմ լեզուով հայախօս
Ուսմամբ, արհեստով սիրէք մինչ Տօրոս։
. . . . . .

Սահակ ապիսաք

59.

Մշեցու երգը

Թորկիկը եմ խեղճ-ակլոլ զիմ ճժիր, զիմ տուն,
Կօլօրտիմ մէկ փշուր չոր խացի խատար,
Ըսկի չունիմ դադար, ըսկի չունիմ քուն,
Նօթի տալի է յինէ չունին մէկ խապար։

Ձըմ գինայ թէ՝ մկայ ի՞նչ ձուն տամ խալխս,
Կուրցուր են գիմ աչեր, մացեր եմ լալիս,
Դուռ մ՛ըլէ չի բացուի իմ սև խղճալիս,
Ջէմիլէ էն Կիկօն եմ անօթի անձայն։

Խայտ խաւատ, խայտ Նաւուսաճ, փրկէ գիս,
Դիպա Մշու դաշտը գիմ տուն խրկէ գիս,
Նա չէ, ան իմ խոգին-ումբրէս զրկէ գիս,
Ճամբանբս չիւրիկէ գիմ սէգիլ Նուպար։

Ընդե-Ջ-ան

60.

Մշեցի հնկան նամակը[1])

Իմ ամուսի՛ն Խաչօ.

Էլի ես միանգամ
Դիմում եմ քար սրտիդ. պիտի կարողանա՞մ,
Վերջապէս, յուզել քեզ և խլել այդ Պօլսէն,
Որտեղ հայ պանդխտին գերեզմանն է, կասեն։

Ձագիս երկու տարվայ մեր պատկն էր օրհնած,
Եւ երկու երեխայ տուել էր մեզ Նաստուաճ,
Մի օր ինձ ասացիր.—«Ամառայ, կի՛նս հարազատ,
«Ի՞նչ պիտի լինինք մենք պարտական և աղքատ։
«Տղայք մեծանում են և մեր պատկն է անկար.
«Պէտք է գընամ քաղաքն, նրանց և քեզ համար
«Փող ու հաց ճարելու։ Նաստուած քեզ պահապան,
«Ես շուտով կը դառնամ, մի՛ լար, իմ Ամառայ ջան»։

Շուտով... Եւ տասնուչորս տարի եղաւ Ջատկին՝
Որ Թողլիր, գնացիր քոյ որդիք և քոյ կին...
Տասնուչորս անգամ է, տեսանք մենք վար ու դան,
Եւ նոյնչափ կրօնականներն գընացին ու գարձան.

[1]) Ընկերդ շնորհակալութիւն մեծ. տիկին Ձրաչեային, որ «Ձայատառնի Սոխակի» ձայնը լսելով՝ բարեհաճել ուղարկել է այս «Նամակը» տպելու։ Ըյդպիսի մի գեղեցիկ զգացմունքի համար՝ ես էլ—փոխադարձաբար—ցանկանում եմ յարգելի տիկնոջ ամենայն բարիք, ամենայն աջողութիւն՝ հայկական թատրոնական ասպարիզին մէջ, որին նա սրտով և հոգւով նուիրուած է։ Գ. Վ. Գրիգորեանց

Եւ դեռ չես երևում։ Հազար ու մէկ նամակ
Պըրեցի քեզ լալով. խնդրեցի շարունակ,
Որ դառնաս մեղնից մօտ, չի թողնես մեզ անտէր,
Ալան դի մեր քաշածն դըժոխից էլ վատ էր.
Իսկ դու՝ յուղարկում ես երբեմն ինձ մի տող.
Եւ երբ հացի համար ստանանք մի քիչ փող՝
«Հարկ, տոկոս» ասելով՝ գալիս են անդադար՝
Խըլում են բռնութեամբ մեր բերանի պատառ.
Միշտ ասում ես—«Գարնան դարձիս սպասեցէք»—
—Իբր թէ գարուններն վերջանում են երբէք։—
Եւ ես սպասում եմ, և աղէտք անընդհատ
Թափվում են մեր վրայ։ Ընկարհէս յուսահատ՝
Ըստուածածնայ առաջ գընացի ամեն օր՝
Ըսացի—«Ողորմէ մի խեղճ և լքեալ մօր».
Բայց նա էլ չ'ողորմեց։ Ուշաղ, միթէ ան էլ
Հայաստանի կնկան երես է դարձուցել։

Խաչո, լաւ մտիկ դիր այսօր իմ ասածին։
Գուցէ չ'ապրիմ այնքան, որ քեզ տեսնեմ կրկին.
Բանդի արդէն սրտումս նըշաններ կան հիւծման,
Բանդի տառապանքն էլ ունի չափ ու սահման,
Բանդի էլ չի՛ մընաց և ոչ մի պատուհաս,
Որ չի գայ մեր գլխին։ Պէտք է որ իմանաս
Բո որբերուն վիճակ։

Ըսացի քեզ արդէն

Ցոէ մեր ծերուկ պապիկն մեռաւ. քոյ կարօտէն։
Նապլուն, Հառօն ու ես տանը մէջ առանձին
Մընացինք, յուսալով քոյ մօտաւոր գարձին։
Մի գիշեր լուրթիւնն պատել էր մեր գիւղում,
—Երևի ինձ նման շատերն էին արտում,—
Հառօն, մեր առյգ լաճ, և Նապլուն, մեր ազջիկ,

Պընել էին տանում, հանդարտ, միմեանց մօտիկ.
Եւ ես հսկում էի, չէի իմանում ես
Թէ մի հացի կտոր կարէ քուն տալ այսպէս։

Յանկարծ... մի աղմուկով օդերը եղան լեռ,
Լսուեցան փողոցում յիշոցք, սպառնալիք։
Իմացայ շուտ պատճառն, քանզի սովորել ենք,
Պրծերն էին։ Նըրանք՝ քաջ են, ուր չի կայ վէնք,
Մեր փարախում գայլերն մտել էին կրկին.
Գիշատիչ բորենիք զոհեր ուզում էին։
Մի քիչ վերջը մեր դուռն բացին ոյժով դուրսէն...
Խաչո, որտեղ էիր այդիօք դու այն ատեն...
Ո՞հ, բընաւ չեմ յիշում, Խաչո, թէ այն գիշեր
Ի՞նչ բան պատահից մեզ, և թէ այն գազաններ
Ո՞ր ատեն գնացին... Երկրորդ առաւօտուն
Հառօն շատ ախուր էր և հիւանդ էր Նապլուն...
Խաչո, դու մեր Նապլուն չի տեսի՛ր մեծացած,
Նըրան տեսք, բոյ ու բոսն գարձել էին առած։
Ձեկիր դու համբուրել սև յօնքերն ու աչունք,
Թըշերուն կարմիրներն և շատագոյն շրթունք։
Նըրան անուշ ծիծաղ չի տեսի՛ր դու բընաւ,
Նըրան սոխակի ձայն մինչև քեզ չի հասաւ։
Նա բացվում էր իբրև մի անմահական վարդ
Ձեկիր նըրան պահել նվ վախկոտ, անխիղճ մարդ.

Նապլուն, հոգիս Նապլուն, իմ խեղճ գառնուկն ալ գալ
Հառասուն օր մահճում տառապեց չարաչար.
Հալեցան կարմիրներն, ժպիտն էլ չի տեսի։
Միայն խոր աչերովն, բայց միշտ հիանալի,
Դէպի ճանապարհը նայում էր անհամբեր,
Կարծես մի սիրելի անձի սպասում էր։
Մի օր ինձ ասաց.—«Մայր, ինչո՞ւ համար Ըստուած

«Անօրէններու ձեռքն այսպէս է մեզ մատնած»։
Եւ յարեց, արտասուքն ցայտելով աչերէն.
«Նըրանք, որ հայր չունին, այսպէ՞ս մեռնում են»։
Եւ էլ ձայն չի հանեց. տէրտէրն օրհնեց նըրան,
Գընաց նա երկնքում, սուրբ տաճարակի նըման։
Խաչ... մեռաւ Նազլուն... Խաչ, չի կայ Նազլուն...
Տաններիք տարեկան տուինք սև հողերուն...

Էլ չի՛մ կարող գրել, ցաւըս է սպառվել.
Ձ'զիտեմ թէ որի՞ անէծք տամ առաւել.
Նըրանց, որ հայերին նեղում են անդադար,
Թէ նըրան, որ տաններն թողնում են վատաբար։
Բայց դեռ չ'աւարտեցի։ Վերջ օրից՝ անպաշտպան
Մի մայր և մի որդի մերթալ պիտի գընան։
Հօրենական մեր ատան դրաւից Հարկատուն.
Վաղը մեր պարտատէրը կը վաճառեն մեր տուն...
Հիմի, որ իմացար մեր վիճակին ահռելի՝
Խաչը, էլ դու գիտես... Մի խօսք ասեմ էլի.
Մեր գիւղի վարժապետն, որ թղթակ է կարգում,
Ասում է թէ իշխանք, մի հեռի քաղաքում,
Հայաստանի համար լաւ բաներ են խօսել.
Ո՞ր աաեն մի ազգի՝ օտարն է ողորմել։
Խաչը, թող այդ յոյսերն քաղքի յիմարներին,
Խափուռ է քեզ փողովդ պարտն ղաղէթաչին.
Դու՝ առ գաւրկ քոյ ուսին մի հըրացան փայլուն
Եւ եկի՛ր քոյ երկիրն, այն է մեր փրկութիւն։

Մընաս բարով, Խաչը։ Գրքոյկ՛ը մեր վրան,
Էյս վերջին թուղթն է, որ գրում է քեզ Սառան։

Տիգրան-Էշտ

61.

Խղճմտանք

Ինչ ասեմ քեզ, խղճմտանք,
Իմ տունը քանդողն դու ես.
Ուրքան արամ ես մոմտանք,
Տեսամ ինձ ջնասողն դու ես։

Ողջը տէրացան աշխարհին,
Վայելեցին նորա բարին,
Ընցաւ, գնաց ղուր իմ տարին,
Պատճառ, ինձ զրկողն դու ես։

Ուրն դառաւ մեծ փառայ տէր,
Ուրն բերաւ մեծ փողեր ձեռ,
Իսկ ես ճնացի անաւէր,
Վանդէ՛ չի թողնողն դու ես։

Ես էլ կ'կարայի շատ բան անել,
Ձեռս ընկածն թալանել,
Ուրիշներուի պէս կլանել,
Բայց ձամիէս կապողն դու ես։

Մեացար հետս ամօթի,
Թողար ինձ քաղցած, անօթի,
Ասելով. «Վերջ մի՛ մրոտի».
Միշտ ձեռս բռնողն դու ես։

Խաչատուրն քեզ տալով մտիկ,
Թողաւ ձեռից բոլոր բարիք,
Ու ճնաց վերջն անշափիկ,
Ուրիշ հասցնողն դու ես։

Խաչատուր Հովհաննէսեանց

62.

Ազգասէր

Ի՜նչ ջանք, ի՜նչ հոգսեր ես չքաշեցի,
Մինչև հայ ազգին այստեղ հասցրի,
Գիշեր և ցերեկ իմ քուն, իմ զաւակ,
Այժ, խելք, միաք և անձ ազգին զոհեցի։

Երբ որ լինում է խնջոյք, կերուխում,
Բաժակը ձեռիս ոտի եմ կանգնում,
Մինչև հայ ազգի կենաց ձառ չ'ասեմ,
Երբէք իմ բաժակ ես չեմ զատարկում։

Երբ բուլվարներում և պարտէզներում
Ընհոգ, խառն 'ի խուռ ժողովուրդ ձեմում,
Ես այն ժամանակ ղլուխս քարշ ձգած՝
Ազգիս կարիքը, ցաւն եմ մտածում։

Օտարը հային երբ անպատուում է,
Սիրտս այդ բանից սաստիկ ցաւում է.
Ես միշտ կրկնում եմ իմ ընկեր հային,
Թէ այդ վատ խօսքերը ինչո՞ւ տանում է։

Բաղձանքս եղել է միշտ հային տեսնել
Ընդորդ վիճակում, ազատ վտանգից.
Ես շատ եմ խօսել, բայց ձայն չէ եղել
Թէոդ հայն գանգատուի իրա չար բազդից։

Մի՜շտ ցանկութիւն եմ յայտնել յորդորել՝
Բանալ թանգարան, հոգալ զարդարել.
Փողապաշտութեամբ անհոգ կեանք վարել՝
Ես միշտ ատել եմ և ունիմ ատել։

Պանի՛ քանիցս ասել եմ բանալ
Ուսման տաճարները, որդւոց ուսում տալ,
Զի՞ որ ուսմամբ է մարդս մարդ դառնում.
Բայց ո՛վ է լսում և ո՛վ ընդունում։

Միշտ ցանկացել եմ հայ թատրոն գնալ
Բայց երբ տեսնում եմ շատերն են գնում,
Ին՛ն աւելորդ է. իսկ խորհուրդ տալու
Թատրոն գնալու՝ ես չեմ գլանում։

Դեռ կան այնպիսիք, որք կը բողոքեն,
Թէ հայ ազգի մէջ չ'կայ ազգասէր,
Ելլ ասողները, իրաւ որ խենթ են,
Ինձ՝ ազգասէրիս, մի՞թէ չեն տեսնել։

Մի քանիներն էլ խելքին զոռ տալի,
Թէ ասաճներդ գործով կատարի.
Չեզ եմ հարցնում, մի՞թէ քիչ բանէ,
Որ մարդ խորհրդով իւր ազգին օգնի։

Ինձնից աւելի հարուստներ շատ կան,
Ընդ ամենն ունիմ կէս միլիօն դրամ.
Չի՞ որ պիտ ապրինք-ես, կինս, ծառաս,
Կարծեմ գլխանք է անձիս, որ փող տամ։

Եհա՛ հայերիս ազգասէրները,
Որք պահանջում են միշտ պատիւ և փառք,
Իսկ գործով, փողով օգնել իւր ազգին՝
Նոքա գտնում են անձերին գլխանք։

Հայերիս տունը այն օրը քանդուեցաւ,
Երբ սուտ ազգասէրք այսքան շատացան,
Որք իրանց օգտի կամ պատուի համար
Դատարկ խօսքերով ազգասէր դարձան։

Պօղոսեան Ասպնեանց

63.

Ահա պանդխտին մորմոքը

Ինչպէս մոռնամ ես Հայրենեաց
Ընդոյշ ջրերն ու հովերը,
Վարդ, մանուշակ, շուշան պայծառ,
Ինչպէս մոռնամ ծաղիկները.
Էյն գեղեցիկ լերինք ու դաշտ
Ինչպէս մոռնամ բլուրները.
Ահովիւք և ծառք, դողտրիկ արօտք,
Ինչպէս մոռնամ հովիւները.
Կարծես աչքիս առջևնեն դեռ՝
Ինչպէս մոռնամ սրինգները.
Աղբիւրք և ծովք, լեռք և առուակք
Ինչպէս մոռնամ խոխոջները.
Թռչնոց անոյշ զերգ գայլայլիկ
Ինչպէս մոռնամ ծիծառնիկ,
Որ իւր սիրուն թևերը բացած՝
Կը ձոռոզէ անուշիկ:
Սոխակ, տատրակ և աղաւնեակ
Ինչպէս մոռնամ արծիւները.
Գալք և վագերք, արջ ամեհիք
Ինչպէս մոռնամ առիւծները:
Տաճարք և տունք այն հոյակապ
Ինչպէս մոռնամ պալատները.
Համալսարանք, հիւանդանոցք
Ինչպէս մոռնամ գմբեթները.
Ազատութիւն և բիւրաւոր
Ինչպէս մոռնամ ես վանքերը,
Որոց վերայ նայողին սիրտ
Ուրախանայր ու հրճուէր:

. . . . . .
. . . . . .
Ինչպէս մոռնամ ես Ըրագած
Եւ Սուկաւէտ և Մասիս.
Էյրարատայ նոքա են զարդ,
Ինչպէս մոռնամ քնարներ,
Որ ծեր Մասեաց սարէն՝ ի վայր...
Օշ կ'երգէին քաղցր ու ջեր:

Եղիշէ Չուբարեան Մեծապատուհանից

64.

Լուսին

Լուսին դու, լուսին, լուսատու երկրիս,
Ինչպէս վառ ճրագ խաւար սենեակում,
Տիանում ես անցքեր, գաղտնիք գիշերիս,
Գիտես ամենի եղածը սրտում:

Որ վառ լուսովը, թէ թևի տուած,
Շրջին պարտիզում աղջիկ ու տղայ,
Նրանց երգերին ծաղկունք ղմայլած՝
Ասիրհնեն քեզ, լուսին, որ Աստուած կեանք տայ:

Որ լուսի տակին, պարտիզի խորշում,
Վարդենեայ միջով կ'երգէ սոխակը,
Թարմ մանիշակի սիրտը չէ տրտում,
Նա լուռ գլխեկոր լսում է երգը:

Պարզ լուսիդ ներքև հայ հարուստ աղան
Ճնշված է փողի ծանր հաշիւով.
Կամ մի ուրիշ տեղ կայ մեծ թղթախաղ,
Ուր «աղան» վատնէ փող հազարներով:

Մի տեղում «քէֆ» կայ, իսկ միւսում՝ խնջոյք.
Զօնեն նուագներ, պարեն աղջկերք.
Հռայլ հարուստը գահն է բաժանում,
Համպանի շեշեր հարիւրով պարպում:

Անցնում ես, լուսին, բուն հայոց աշխարհ,
Ո՞րքան խեղճ, քաղցած են այնտեղ մարդիկ,
Չ'կայ ո՛չ խնջոյք, ո՛չ քէֆ, թզթախաղ,
Տխուր են հոգով և՛ այր, կին, աղջիկ:

Աշխարհիս փարթամ ճոխ, առատ փառքից
Օ՜ւրկ են բնութեան այդ անմեղ որդիք...
Ելիւն քրտինքով ճարեն պատառ հաց՝
Մրցելով կեանքի և մահու դիմաց:

Ո՛վ դալուկ լուսին, մի քիչ էլ շողե՛ր,
Ի՞նչ բարուքուի հայի վիճակը.
Ննկուշտ հարուստը դառնայ ազգասէր,
Մոլի կղերը՝ դիանայ իւր պարտքը:

Կ. Պոլիս

65.

Ընտանեաշունչ կոմս Լորիս-Մելիքեան

Լիահանճար անարատ շնորհայ շահմարան,
Վահմաշուք ազնիւ կոմս քաջդ Լօռու Մելիքեան,
Դու Հայաստան ծնուած ես,
Հայի հոգւով անուած ես,
Ընտահ փրկչի արիւնով,
Մկրտուելով, գնուած ես:

Գիշերկատիպ պատկերիդ նման այլ տեղ չի լինիլ,
Յիշիդ նման շատ երկիր՝ պատուհանէ ցեղ չի լինիլ,
Լուսինը իւր աստղերով քեզ պէս շքեղ չի լինիլ,
Հինքան ունիս քեզ վերայ փառաւոր շքանշան:

* * *

. . . . . .

Քեզ վերայ բան գրելու հարկաւոր է Հոմերոս,
Նախ՝ Պարսը կործանեցիր,
Տաճիկներին վանեցիր,
Հայրենեացդ պատիւը
Միշտ բարձր պահպանեցիր:

Թշնամիդ ամօթու քեզի դարձան բարեկամ,
Քո պատիւդ, քո փառքդ աւելացաւ ամէ ամ,
Տէրութիւնը քեզ սիրեց գթառատ բարեխնամ,
Հովին վարձատրեց, տալով բարձր աստիճան:

* * *

Քեզանով պայծառացաւ մեր հայութեան անունը,
Ուրախացաւ, բերկրեցաւ բոլոր թորգոմեան տունը,
Եւրոպացիք հասկացան,
Հարթեցան, զգաստացան,
Քեզպէսներով վեհ հոգի
Մեր ազգին լաւ իմացան:

Կեցցես, ապրիս, շատ ապրիս, կեցցես աէրութեան համար,
Ամենևին դործի մէջ չ'հզալ թևերի, անկատար,
Ծադումովդ, ցեղովդ որպէս մեկ հատ անգին քար,
Ամենայն մի դարի մէջ գնահատուող կարկեհան:

* * *

Մեր ողբմած կայսերի հարազատ թիկնապահը,
Հաւատարիմ ծառայող, ունելով տիրոջ ահը,

*

Մ՚իջոցնել հնարեցիր,
Նշած չարը մարեցիր,
Ինչքան դժուար գործ տուին՝
Բոլորը կատարեցիր։

Անզուգար աշխատեցար դիշեր ցերեկ առանց քուն,
Երկարդիդ Դաւթի որդին ես, դու Սողոմոն իմաստուն,
Վարակիչ հիւանդութեան առաջն առար հաստատուն,
Վտանդից աղատեցիր ողջ նահանգով Ըշտալխան։

* * *

. . . . . .
. . . . . .

Ինչ որ խնդրես՝ «չէ» չ՚կայ, ամենին յայտնի բան է,
Խնդրէ՛ հզօր Արծուին՝ հայոց հարցը պաշտպանէ,
Ես, Ջ-ի-ան, խնդրում եմ, Ատուած քեզի պահպանէ,
Ապրիս երկար միշտ խաղաղ, լինիս ազգիդ օգնական։

66.

Խաբերայ ես դու, ով անցաւոր աշխարհ,
Ո՞վ վայելաւ քեզնում ուրախութիւն երկար.
Մի՞թեմ չ՚էլաւ մէկ մարդ քո բնութեան յարմար,
Մեղաւորաց յոյսն ես, քեզ չէ սիրիլ արդար,
Մէկին կուտաս անչափ, մէկին կանես անճար։

Ինչ ով ասաւ «աշխար», պէտք է ասէր «ժանգ փող»,
Ով որ փող է պաշտում, քեզնում նա է յաղթող.
Թէ լինի մէկ հարուստ լերդը, աւազակ, կամ գող,
Չի թողնիլ աշխարհը, փողն է նրան սրբող,
Վա՜յ քո օրին, անգթատ, ամեն բանդ դժուար։

Գու չ՚ես թողնում մեզ, որ քննենք օրըն մահուան,
Գիտես թէ չ՚ենք մեռնիլ միշտ կու քշենք գովքան,
Շատն կայ, որ չ՚իլնում մին կտաւի արժան,
Մենք տեսնելով նրանց, չենք քնընում մէկ բան,
Ով անվայել աշխարք, գու ես սատանեն չար։

Թէ երկու չան տեսնես մէկ մէկու հետ ընկերի,
Ով մինումըն չի կայ սրտէ ՚ի սիրտ յոյս, սէր,
Որ հաւատով կանչեն։ «Ով կենարար սուրբ տէր»,
Շմարտութեամբ վարվող չկայ ոչ չահիլ ոչ ծեր,
՚Ի հարկէ, չար սիրտըն չի՛ տալ բարի մէկ բար։

Ով Եքրահամ[1]) պանդուխտ, տես աշխարքի վարքըն,
Հոդուդ մէկ շահ չունի, մի՛ յանկանալ փառքըն,
Ուր որ ունի պատրաստ ոսկեղէնի շարքըն՝
Ինչ պիտոյ է պատուի կարգաւորաց կարգըն,
Ամօթ չի կայ երբէք, մեզքն իլնլա աշկար։

Եքրահամ Ա՚արփէրեան

---

[1]) Շատ շատերը անշուշտ յիշում կ՚լինեն չամախեցի հանգուցեալ Եքրահամ Ա՚արափերեան «Օ՚արկեար» մականուանեալ բանաստեղծին և կարդացած նորա ընտիր և օրինակելի երգերն ու բանաստեղծութիւնները թէ՛ «Սոխակի» անցեալ հատորներում և թէ՛ «Օ՚արկեարի քնարը» խորագրով գրքոյկի մէջ։ Այս գրուածն էլ նորա գրչի անդրանիկ աշխատութիւններից է, որ հասցրեց ինձ պ. Ղէկոս. Ղաչարեանցը, և որը, ինչպէս երևում է, գրած պէտք լինի հանգուցեալը իւր հայրենիքից դուրս, օտար աստղերի տակ,—պանդխտութեան մէջ։

Գ. Վ. Գրիգորեանց

67.

Խոժոռադէմ Ըթանաս[1]),
Էլ ինձ այսքան խոստանաս,
Ուր ոչ կամք են և ոչ իղձ,
Պարապել քոց իմաստից։

Կորիցէ՛ քո այբուբեն,
Ուր միշտ քաղէ զիմ հոգին,
Օ՜շ թէ լեալ էր իմ անբան,
Եղն լծեալ՝ ի գութան,

Քան տեսանել զանողոք
Օձերս քո ինձ՝ ի մոլմոք
Եւ տրոլել ծաղիկ տիս
Ի տես քոյին ցնորից։

Եւ ի՞նչ պիտեն քո ուսմունք,
Քո ցաւագին սկզբունք,
Էյն ինչ ոսկի և արծաթ
Ըզմարդն առնեն միայն մարդ։

Մէսրովբ Թաղիադեանց

[1]) Ըթենաս, որ ըստ լատինացւոց minerva, է իմաստութեան, արուեստից և պատերազմի հ՛աստուածուհի։

Գ. Ա. Գրիգորեանց

68.

Ըթանաս[1])

Խարտեաշ հքնաճ Ըթենաս,
Էլ զիս խնամել ոչ անտաս.
Երբ տեսանես զիմ ջերմ իղձ,
Պարապիլ քո իմաստից։

Օրհնեսցի քո այբուբէն,
Ուր միշտ սփոփէ զիմ հոգին.
Ե՞ս թէ չեցէ քո հանճար
Ընդիւ կենացս միայն ճար՝
Ընշուշտ եղէց ես անբան,
Եղն լծեալ՝ ի գութան.
Եւ տրոլեսցէ ծաղկեալ տիս,
Յիմար փարթամն աշխարհիս։

Եւ ի՞նչ պիտին զանձք և փառք,
Ոսկի, արծաթ ժանդահարք,
Էյն ինչ ուսմունք և արհեստք
Ըմարդն առնեն միայն մարդ։

Նիկողայոս Տէր-Ղևոնեան

[1]) Ինչպէս հաղորդում է Տփխիսու Ա. կարապետ եկեղեցւոյ միաբան արժ. Յովհաննէս քահանայ Տէր-Յակոբեան, այս երգը գրել է Տփխիսեցի հանգուցեալ Նիկողայոս Տէր-Ղևոնեան՝ ի հանդէպ Ա. Թաղիադեանցի «Խոժոռադէմ Ըթանաս» բանաստեղծութեան։ Երկու բանաստեղծութիւնքն էլ տպուած են 1884 թուի «Ըրարատ» ամսագրի մայիս և օգոստոս տետրակներում։

Գ. Ա. Գրիգորեանց

69.

Մ ե ս ր ո վ բ Դ ա ւ թ ե ա ն Թ ա ղ ի ա դ ե ա ն ց

Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանցը, որ նոյնպէս դարուս նշանաւոր հայագէտներից մինն է համարվում, ծնվել է Երևանում 1803 թուին և իւր նախկին կրթութիւնը ստացել Ս. Էջմիածնում։ Ույդտեղ ձեռք բերած գիտութիւնը բաւական չհամարելով, և իւր խօսքով «յաւէտ չարեաց աշակերտեալ քան բարւոյ ուսման», ուղևորվում է դէպի Ռուսաստան և 1823 թ. հասնելով Պալկաթա, մտնում է Ընդղեացւոց Հիւր եպիսկոպոսի ձեմարանը 1826 թ. և ուսանում, ի միջի այլոց և անգղիարէն։ Բայց նա աւելի և աւելի աշխատելով և զարգանալով հայկական լեզուի մէջ, զանազան թէ ինքնուրոյն և թէ թարգմանական աշխատութիւններ է հրատարակում, որոնցից մի քանիսն ահա սոքա են.

«Հոգոնի Գրովսիոսի ձշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ», «Պաղեստին», «Ընդբենարան», «Ըղձալի օրագիր», «Պատմութիւն Պարսից», «Առակք Պարսից», «Պէպ Պարզգիսի», «Պէպ Պարսկան», «Առաջնորդ մանկանց», «Սօս և Սօնդիպի», «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», «Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Թաղիադեանց», և այլն։

Թաղիադեանցը 1830 թ. թողնելով եպիսկոպոսական ձեմարանը, ուսուցչական պաշտօններ է կատարում Պալկաթայի Մարդասիրական ուսումնարանում, Ջուդայու Ամենափրկչեան գպրոցում և ուրիշ տեղեր։ Բայց որովհետև Թաղիադեանցը հաստատամտութիւն չէ՛ ունենում, այդ պատճառով նա շուտ շուտ անցնում է մի քաղաքից միւս քաղաք և ոչ մի տեղ, կարծես, մխիթարութիւն չէ՛ գտնում։ Նա, վերջապէս, Պարսկաստանի

Հիւրաք քաղաքը դնալով վախճանվում է այնտեղ 1858 թ. 10 յունիսի, 56 ամաց հասակում, և թաղվում Բաչտոհ կոչուած հասարակաց գերեզմանատան մէջ։ Սորա կատակատար Թադէոս Խ. Ներսումը մարմարեայ քարից մի արձանագրութիւն է շինել տալիս Պալկաթայում և ուղարկում Հիւրաք, որ զետեղված է տեղական եկեղեցու արևմտեան դրան պատի մէջ՝ հետևեալ օրինակով.

«Մեսրովպ Դաւթեան Թաղիադեան
Պերճ վարժապետ մեծ պիտեական
Ա՛սեմ քերթող մատենագիր
Հանգիստ առնու յայս թուս դամբան։
Օ՛քեղ հայոց գիտնոց կաճառ
Պատուասիրէ միշտ սիրավառ
Եւ Նոր-Ջուղա և Պալկաթա
Ո՛չ մոռացին զՊեզ իսպառ»։

Յիշեալ Պալկաթայի բնակիչ Թադէոս Խ. Ներսումը, որ միևնոյն ժամանակ Թաղիադեանցի մտերիմ բարեկամն է լինում, հանդուցեալի համառօտ կենսագրութիւնը հաղորդելով Օմիւռնիայում հրատարակվող «Ընշալոյս Ընտրեաց» լրագրին, ցաւելով և վշտացած սրտով և հոգով այս ողբերգութիւնն է ուղղում հանգուցեալին.

«Եւ դու Մեսրովբ, անգին Մեսրովբ,
Եւ դու այսպէս վաղ հանգեար,
Ի վշտալից աշխարհէս մեր
Յերանաւէտն ճեպեցար։

Ա՛ստուածեցաւ այն մարմինդ՝
Այլ ո՛չ հոգիդ, ես գիտեմ.
Ընդմէջ հոգիդ միշտ աննկուն,
Մ՛իշտ վառվռուն, միշտ վսեմ։

Ախտս Մեսրովբ.—Իմ պէս բազումք
Ախտասացին այսուհետ,
Որոց հոգի ազգիս վառաց
Նախանձաւոր լցեէ եթէ։

«Մեռիր, յետոյ սիրեմ զքեզ»
Ըլլք ասասցին, բայց ոչ ես.
Ես սիրեցի զքեզ կանխաւ՝
Ողջասիրաւդ[1]) վկայես։

Ո՛չ ափսոսամ վասն քո ինչ,
Օ՜ի դու զլրծալ ի ցաւոց,
Օ՜արդիւնաշատ աւուրս քո
Ազգին ի սպաս զոհելով։

Որքան կացցէ լեզու Հայոց՝
Որքան կացցէ և մեր գիր՝
Պայծառ անուն իմ Մեսրովբիդ
Ընծահասցի անխափիր։

Ըլլ ափսոսամ վասն ազգիս՝
Որ քեզ պէս մարդ արդ կորոյս,
Որոյ նման հազուագիւտ է՝
Հայիմ յոր կողմ և ի կոյս։

Օ՜ի բանաստեղծ ի բնութենէ
Կարէ միայն ճնանիլը
Տաշեալ կոկեալն արհեստիւ
Ո՛չ կարէ յայն ժամանիլ։

[1]) «Ողջասէր» լրագիր։

Դու բանաստեղծ և ճարտասան
Միանգամայն յայտնեցար,
Թէև անձուկ էր ասպարէզդ՝
Սակայն ոչի՛նչ վերջացար։

Աշխարհանաղ Սօս Սեղբիպի
Եւ Ողջասէր լրագիր,
Բաւական են ի հաստատել՝
Օ՜որ ասացի լեալը։

Ո՛չ է ինձ հարկ թուել զամէն
Օ՜գործ մատանցըդ ճարտար,
Ժամանակաւ, զկնի իմ,
Վկայեցէ և աշխարհ։

Բայց ե՛կ, Մեսրովբ, ե՛կ, ասա՛ ինձ՝
Ի՞մ առ օտարս հետուր վազ,
Ո՞ւր Հայաստան քո հայրենիք
Եւ ո՞ւր Պարսիցն Շիրազ։

Յորոմբալս զքեզ լամ և գիմ ազգ՝
Վատարանդի ցան ու ցիր,
Ընդ ամենայն ոլորտս երկրի
Չան գնըսրայել տարագիր։

Եւ արդ՝ Մուսա, հաճեաց ընկալ
Հրաժարական զիմ ողջոյն,
Գնա՛, հանգի՛ր ի գալար սիրտ
Իմ ազգայնոց սիրասուն։

Ես ծերացեալ և վաստակեալ՝
Հանգիստ խնդրեմ առօրեայ,
Մինչև կամք Տեառն՝ օրհնեալն միշտ,
Եղիցի՛ և յիմ վերայ»։

Ձանգուցեալ Թաղիադեանցի հետաքրքիր և ընդարձակ կենսագրութեան հետ ծանօթանալ ցանկացողներին հրաւիրում եմ կարդալ և անպատճառ կարդալ Յովհաննէս խաչակիր աւագ քահանայ Ն. Մկրեանի խմբագրած և Պ. Ընդալ Յովհաննէսեանի 1886 թուին հրատարակած «Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Երևանցւոյ» խորագրով գրքոյկը։

Գ. Ռ. Գրիգորեանց

70.

Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է

Ծոյլը անպիտան, անգործ մարդը
Ընդաճ, չեղաճ՝ մէկ հաշիւ է.
Ինչպէս անգոյն, անհոտ վարդը,
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Լաւ մարդու ոտացն է կացին,
Թէ որ վատ է իւր դրացին.
Ձօրը համար անպէտք որդին
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Ինքն է իւր քսակի գողը,
Տանը վերայ մաղող հողը.
Շռայլ մարդու համար փողը
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Ընտանեին տուր գովասանք,
Նա ի՞նչ գիտէ պզպլիսի կեանք.
Անգգամին պատիւ, յարգանք
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Ո՞ա է այնպէսի կոյուստը,
Ձորս չափ կաւ է հագուստը,
Ժլատ, անօգուտ հարուստը
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Խելօք, հմուտ գիտնականը
Ձիմքը ամուր կանէ տանը.
Կիսատ-պռատ շինուած բանը
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Առողջ տղին տուր կրկվալ,
Որ թռչի, կրթայ սարէ սալ.
Ընոտ մարդուն հարթ ճանապարհ
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Կարիճ տղին է ինքնին հնոց,
Ո՞իշտ կարճակէ կրակ ու բոց.
Փախչող գօրքին բերդ ու ամրոց
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Խղճին ի՞նչ օգուտ իշխանը,
Որ չի հասնի նեղութեանը.
Ընտարբեր, պաղ աղգականը
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Երբ որ տեղը գայ ճշմարիտ,
Ձարկաւոր չէ լինիլ կրկիտ.
Ծատկից յետոյ կարմիր հաւկիթ
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Ուրախութեան օրը յատուկ
Կուրախանան ծեր ու մանուկ.
Ձարսանիքից յետոյ թմբուկ,
Ընդաճ չեղաճ՝ մէկ հաշիւ է։

Ջա՛ն, բարեսիրան է յարմար՝
Լսել սիրով երգ ու քնար,
Ձար ու դաժան մարդոց համար,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

71.

Խոստովանութիւն

Ծնուած եմ հայ իմ հարազատ հայ մօրից,
Թամբակի մէջ քնքուշութեամբ մեծցել եմ,
Ձի՛ն սըլացել «հայրիկ», «մայրիկ» իմ բերնից՝
Երբ շուրթերս առաջին անգամ բացել եմ...
Օրօրոցիս շուրջը կային դայեակներ,
Խայտառակի ձևով չէի կապկապած,
Ինձ սընանում, տածում էին պէս մայրիկ,
Մօրս երգը ես իմ կեանքում չեմ լսած...
Թէ ես լօրթ եմ, անզգայ եմ իմ եղբօրց՝
Մեղաւորն է կրթութիւնը իմ ծնողաց։

***

Գեղափթիթ իմ մանկական հասակը
Ընդ է կացել մի խորթ ծծմօր գրկումը,
Որ իւր կաթով տալիս էր ինձ իւր բալքը
Եւ հոգ տանում իմ մանկական օրկրուն...
Իսկ իմ ծնողը[1]) զիշեր ցերեկ բացակայ,

[1]) Թէ օրքան բնական, թէ օրքան անհրաժեշտ է ծնող մօր կաթը և նորա սնուցանելն ու պահպանելն իւր հարազատ մանուկին՝ այդ մասին ցանկացողը կարող է կարդալ «Ազնակի» առաջին հատորի երկրորդ տպագրութեան մէջ մեր ամենքին սիրելի Խրիմեան Հայրիկի «Մայր և զայեակ» վերնագրով գեղեցիկ գրուածքը, երես 218։

Գ. Վ. Գրիգորեանց

Մանկան թողած՝ պարելուճն էլ քաշքշվում,
Հանդէսներին, լօտոներին միշտ ներկայ,
Ես էլ օտար մի մօր գրկում միշտ մաշվում.
Եթէ այսպէս ատում եմ ես հայ եղբօրց՝
Մեղաւորն է կրթութիւնը իմ ծնողաց։

***

Մանկութիւնից սովրած եմ միշտ գոլծածել
Հարուստ զարդեր, պերճ ու շքեղ ակնեղէն,
Մարմինս վերայ յիմար բաներ տարածել
Սիրել զարդը, ունայնութիւն, ոսկեղէն.
Օտարազգի ակկինեներով մեր տունը
Լրիկոններն խաղի համար լքցրած,
Պատած էին իւրեանց խաղով իմ քունը,
Հրապոյրութեան իւրեանց կեանքը նուիրած.
Եթէ այսպէս շռայլ եմ ես հռչակուած՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց։

***

Կրթութիւն եմ ստացել բարձրագոյն,
Գիմնազիօնից համալսարան եմ անցել.
Լեզուս պերճ է, մաքիր ունիմ գերագոյն,
Մինչև անգամ Նեւոպա եմ գնացել.
Մի՞թէ գրիչս պիտանի է իմ ազգին,
Պարման տալու նորա ցաւին, մտածմանց,
Օգնելո՞ է այդպէս գոլծելը աչքին,
Որովհետև այս հոգին են թեւադրած.
Թէ անպէտք եմ ես իմ ազգի՞ն, իմ եղբօրց՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց։

***

Հայ կոչուելը ինձի համար ամօթ է,
Ինձ չէ շարժում ոչի՛նչ մի ցաւ ազգային,

Արծնը սխալ լեզուն կոպիտ և խորթ է,
Այսպէս եմ ես վերաբերվում միշտ հային...
Նաղըալի է, թէ հայն ունի փառք անցած,
Կամ քաջութիւն, հոգի ու սիրտ ռազմական,
Ինձ թըւում է, որ նա գետնուծին է թագած,
Անյուսալի ուրախ օրեր յաղթական...
Եթէ այդպէս հայն է աչքումն ատրացած՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց.
Որովհետև անպիտան եմ իմ եղբըց՝
Շատ լաւ կը լինէր, որ չը լինէի ստեղծուած:

Կ. Տէր-Ասրո-աճապրեան

72.

Տուն և ընտանիք

Ինչպէս որ երկու պսակաւոր լծակիցներէն ամուսնական միութիւն կը կազմուի, այսպէս նաև նոյն զուգակից միութենէն կը ծնի և կ'աճի ամբողջ ընտանիքը, որոյ նախածնող անդամներ են՝ հայր և մայր. իսկ ծըննեալ անդամներն են արու և էգ զաւակները՝ քոյր, եղբայր, որք կրթ ամուսնանան՝ փեսաներով, հարսներով և թոռներով կը յաւելուն ընտանեաց թիւը:

Ուսոի ընտանեկան կեանքին և տան շինութեան բուն հիմնաքարերը կը համարուին հայր և մայր: Ո՞րչափ պարծելի, զարմանալի են ամուսնական պարտիզին մէջ այս երկու մանանեխի փոքրիկ հատիկները, որ ըստ Աւետարանի առակին՝ երթալով աճելով՝ մեծ ծառ կը լինին և իրենց բազմապատիկ ճիւղերը կը համատարածեն բոլոր աշխարհը: Պատճառն ալ, ամուսնական արմատէն ընտանիքը կը հաստատուի, ընտանիքէն՝ ժողովուրդ, ժողովուրդէն՝ այլ և այլ ազգերը, ազգերէն՝ իշխանական պետութիւնները, և պետութիւններէն՝ ընդհանուր մարդկային համաշխարհական ընկերութիւնը: Յորմէ դիւրաւ կ'իմաստասիրեմք թէ մեր ընկերական աշխարհին բովանդակ շէնքը ամուսնական և ընտանեկան պատուանդանին վերայ հաստատուած է. ժողովրդոյ ոտքը և պետութեանց գահերը նորա վերայ դրուած են. եթէ քանդուի այս պատուանդանը՝ ժողովուրդ և գահերը ի միասին կը տապալին. այնուհետև ոչ ևս կայ ոչ աշխարհ, ոչ ազամորդի, ոչ կեանք, և երկիր կը գառնայ նոյն առաջին վիճակը՝ «Երկիր աներևոյթ և անպատրաստ»:

Ո՛չ ոք կարէ ժխտել թէ այս այսպէս չէ. աշխարհիս հին ազգաց պատմութիւն, արդի ընկերական վիճակը և մեր ազգին կեանքը՝ այս ամէն կ'ապացուցանեն թէ ոչ միայն մարդկային սեռի ածուճի, այլ և ժողովրդոց, ազգաց, հայրենեաց և թագաւորութեանց բազդը ընտանեկան կեանքէն կախուճի ունի. թէև մեր ընկերական երջանկութեան և թշուառութեան կան արտաքին ուրիշ այլ և այլ պատճառներ. բայց իմաստուն խելամտութեամբ նկատելով աշխարհիս իրողութեանց սկիզբն, միջոց և վախճանը, կը տեսնեմք, որ աշխարհիս չարեաց ու բարեաց սկզբնածնուդ մայր ընտանիքն է: Ապա ընտանեկան կենաց թէ՛ չարութեան և թէ՛ բարութեան պատճառն ինչ է. դորա պատճառն ևս շատ մօտ յայտնի է. այսինքն ծնողք՝ հայր ու մայր, որոց հպատակութեան տակ կ'ապրի ամբողջ ընտանեկան գերդաստանը:

Տուն և ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է, որոյ նահապետական աթոռի վերայ կը նստին ծնողք. հայրն իբրև թագաւոր, և մայրն իբրև թագուհի. և կը կառավարեն հպատակ ընտանիքը. սոյն ընտանեկան պալատին ու թագաւորութեան մէջ

ոչ ոսոխական կայ, ոչ սուր, ոչ բռնութիւն, ոչ գաւազան, այլ ամենուն տեղ հայրական սէր և մայրական գորովն է. գաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է: Այս օրինակը այնչափ բարի ու տպաւորիչ է, որ դիտես թէ լուսաւորեսային պէս թափանցիկ կերպով ծնողաց պատկերը նոյնատիպ կը հանէ իւր զաւակաց վերայ. և զաւակներըը այդ սկզբնական տիպարն առնելով՝ կը մրանեն ժողովուրդին և ընկերութեան մէջ: Այնուհետև տարածել կը սկսի օրինակէ առ օրինակ. և այսպէս ընտանեկան կենաց բարի և չար օրինակներէն ժողովուրդին կեանքը կը բարւոքի կամ կը զեղծանի, կը շինուի կամ դայթակղութեամբ կը փլչի, կենդանի կը մնայ աշխարհիս վերայ կամ կենդանւոյն կը մեռնի, և իւր յիշատակ կը բարձուի աշխարհէս:

Ժողովուրդ և ազգերը միայն հացով չեն ապրիր թագաւորութեամբ և ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարոյական կեանքով. և այդ կենսական կեանք տուողը ընտանիքն է: Ուշադի՛ր եղիր, և ես նկարագրեմ քեզ:

Ժողովուրդը կը յառաջադիմէ, իւր առաջին քայլը ընտանեաց սրահէն կառնու. եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրագէն է. եթէ կը միանայ, իւր ոգին և կապն ընտանիքն է. եթէ կը զօրանայ, իւր ոյժ և բազուկն ընտանիքն է. եթէ կը հարստանայ, իւր գանձարան և գանձապահն ընտանիքն է. եթէ իւր տուն և սեղան բարելից և առատ է, արդիւնաբեր անդաստանը ընտանիքն է. եթէ դրախտ գետերը կը վազեն իւր հրապարակը, աղբիւրը դրախտի ընտանիքն է. եթէ իւր կարասներըը լի են գինւով՝ կը խմէ, կ'ուրախանայ, խաղաղաբեր այգին ընտանիքն է. եթէ բարեճնունդ զաւակներով օր ըստ օրէ բիւրապատիկ կ'աճի, իւր նախանձողող խնամատար՝ ընտանիքն է. եթէ աշխարհիս ծանրակիր լուծերէն ազատել կ'ուզէ, Թող գիտնայ ու հաւատայ թէ իւր փրկիչ ձեռքն ընտանիքն է. եթէ կը բարձրանայ ու կը փառաւորի՝ իւր փառաց տաճարն ընտանիքն է. եթէ հայրենիքէն վարեալ հեռացեալ է և կրկին իւր հայրենիքը երթալ կ'ուզէ, նորա ուղեցոյց առաջնորդ ընտանիքն է. եթէ իւր հին կորուստները գտնել կուզէ, Թող չ'որոնէ զայն օտարին հրապարակը, զի իւր կորուստն ընտանիքին ծոց պահուած է. եթէ զաւակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կ'ուզէ, իւր բարեկրթութեան առաջին համալսարան՝ ընտանիքն է. եթէ այս աշխարհիս վերայ երջանիկ ապրիլ կ'ուզէ, Թող հաւատայ, որ երջանկութեան կեանքը բղխող աղբիւր ընտանիքն է. եթէ երկրէս յետոյ երկինք ևս ժառանգել կուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն, հաւատ, և եկեղեցին, այո, այդ սուրբ աւանդները անեղծ, անկորուստ պահելու խորանն ընտանիքն է: Տեսնենք սորա հակադիր պատկերը, և աւազ աչքով նկատենք, որ չարաբաստ, ապերջանիկ ժողովուրդը իւր կեանքի զեղծումները դարձեալ նոյն ընտանեկան պատկերէն կ'ընդօրինակէ և 'ի տես կը հանէ հրապարակը, և ահաւասիկ ցուցնեմ քեզ:

Ժողովուրդը երթէ զեղծանի կառավարութեամբ՝ իւր զեղծմանց սկզբնաւորութիւնը ընտանիքն է. եթէ բարոյական կեանք չունի, մեռելութիւն՝ ընտանիքն է. եթէ դէպի կորուստը կը դիմէ, իւր կորստեան ճամբայ բացող ընտանիքն է. եթէ ծունկեր կը մոռնի, իւր քայլերը յառաջ չեն երթար, լքումն ու կաղութիւն՝ ընտանիքն է. եթէ պատրիարքէ աւազանին քով կեցած գեռ կը դանդաղի՝ երբ ուրիշ հիւանդ ազգերը ողջացան ու գնացին, ո՜հ, ես գիտեմ, զայն անդամալուծող ձեռքն՝ ընտանիքն է. եթէ երկու ձեռքով կը հարստահարուի՝ մէկ ձեռքն ընտանիքն է. եթէ աշխարհիս կեանքի ճա-

*

նապարհին մէջ ուղղութիւն չունի, յառաջիմութիւն՝ ընտանիքն է. եթէ Եւրոպիոյ կախարդիչ նորասիրութիւնք գինքը պիտի կողոպտեն անխնայ, թող զգաստ լինի ու սեանայ, որ մեծ կողոպտիչ ձեռք իւր ընտանիքն է. եթէ իւր զաւակները օր ըստ օրէ կարօտ թշուառ կը լինին, այդ քաջ յայտնի է, որ ընտանեկան մշակները անաշխատ, հեղգ և անհոգացող են. եթէ առանց տնտեսութեան, առանց նախատեսութեան կը վատնէ իւր վաստակ և գանձ, ով չի դիտեր թէ շռայլութեան տնտեսապետն ընտանիքն է. եթէ իւր զաւակները առոյգ, ազնուաճնունդ չեն, ուրեմն ընտանեկան սերունդը հիւծելով սարկացած է. եթէ իւր օրիորդք և երիտասարդք վարակած են մաշղալան ախտով, ոհ, դոյա մահ և գերեզման փորող ընտանիքն է. եթէ կորաքամակ լինելով ազատ պարանոցն սարկացած է, սորա պատճառն ևս շատ յայտնի է, որ Մակաբէ և Համունէ մեռեր են: Ի վերջոյ եթէ ժողովուրդը կրօն, հաւատ, եկեղեցին կը թողու, աստուածպաշտութեան պարտիքները սրտէն կը հանէ և կը դառնայ դէպի ջրհեղեղին դարը, ամբարիշտ կեանք կը վարէ, դիտցիր, որ այդ ապականութիւնը Պայենի դասերաց հետևող ընտանիքն է:

Խրիմեան-Հայրիկ

73.

Պանդխտի երգը

Ծիծառ, ծիծառ, սիրուն ծիծառ,
Քաղցր լեզու, անոյշ բարբառ,
Եկեր գարուն ինձ կ'աւետես,

Բայց ինձ գարուն չէ պէտք իսպառ.
Դարձի՛ր, գնա՛ իմ հայոց տուն,
Ընդ աւետէ դու նոր գարուն:

Երբ ես այստեղ պանդխտած ընկած,
Հեռու, կարօտ իմ հայրենեաց՝
Ինչ պէտք է ինձ քաղցր օրեր,
Ինչ պէտք է ինձ ձայն աւետեաց:
Դարձի՛ր, գնա՛, Հայլէն:

Այստեղ գարուն պէտք է թէև,
Դալար ծաղիկ, կանաչ տերև,
Բայց ինձ չէ՛ պէտք տերև, ծաղիկ,
Եւ ոչ փայլուն կարմիր արև:
Դարձի՛ր, գնա՛, Հայլէն:

Այնտեղ սաստիկ ցուրտ ու ձմեռ,
Ցուպ ու բոլան, փոթորիկներ,
Սառն ու ձիւնը շրջապատած՝
Ծածկըված են սար ու ձորեր:
Դարձի՛ր, գնա՛, Հայլէն:

Այնտեղ հայերն անգործ նստած,
Ձմրան պաշարն էլ սպառած,
Ձեռներն՝ ի ծոց դրած կուլան,
Սպասում են քո աւետման:
Դարձի՛ր, գնա՛, Հայլէն:

Այնտեղ բոլոր կենդանիներ
Առանց գարման են ճտացեր,
Նօթի, ծարաւ գետին փռուած՝
Պ'բառանչեն յերկինքն՝ի վեր:
Դարձի՛ր, գնա՛, Հայլէն:

Ընտեղ չ՚կան արև, լուսնակ։
Մտեր, փակուեր են ամպի տակ,
Երկինք, երկիր, գիւղ ու աւան
Կարծես դարձեր են աւերակ։
Դարձի՛ր, գնա, Հայլն։

Ընտեղ, ուր կայ վեհն Արարատ,
Ուր կան հղբարքս իմ հարազատ,
Ընտեղ, ուր իմ սուրբ հայրենիք,
Ուր երկիրն իմ Վաղարշապատ։
Դէհ, ե՛լ թռի՛ր, ազնի՛ւ թռչուն,
Անդ աւետէ՛ դու նոր գարուն։

Մանուկ Թամքաճեան

74.

Մանիշակ

Ծաղկներուն թագուհի,
Թփիկ ունիս տերեւոտ,
Քու բուրմունքը գովելի,
Քաղցր դէմքդ ամաչկոտ։

Թագուն տեղում սովոր ես
Ժամեստաբար դուրս ելնել
Եւ գլխիկդ քաղցրատես
Դողդողալով բարձրացնել։

Մրթմրթ ջրից կը վախես,
Նրանց ձանկեր տեսնելով...
Դրա համար թագնուիս
Ծառուկ տեղում երկիւղով։

Դայց մի՛ վախիր ինձանից,
Իմ նազելի մանիշակ,
Ես քո քնքոյշ թերթերից
Չե՛մ զարդարել իմ պսակ։

Ողջ օրերով կը հսկեմ,
Որ չը պոկի քեզ ոչ ոք.
Վայրենիներին կը խլեմ
Երենց կոպիտ արմատով...։

Իմ մանիշակ, քեզ շատ եմ
Ես սիրում ու փայփայում,
Քո հոտիցը ապշած եմ
Ես այս թշուառ աշխարհում։

Դէհ, մանիշակ, սի՛րելի,
Դուրս եկ դաշտում համարձակ,
Թող քո բուրմունք տարածվի
Ամբոդ աշխարհ խնկելի։

Արփիձ

75.

Հուշան-ծաղիկ

(Ղէլէնտէրի)

Ծաղկի՛ր դու, շուշան, ցանկալի գարունն եկաւ, անցաւ,
Դարձեալ անուշիկ հովերի հնչիւնն եկաւ, անցաւ,
Տեսնում եմ ամէն ծաղիկը բողբոջ ու կանանչ է,
Դու դեռ ճնացել ես, աւա՜ղ, աշունն եկաւ, անցաւ։

«Յոյս չե՛ք շուշանին ծաղկելու», շաւարն ասում են ինձ,
Վանզի ծերացել է. նորա ալբուռնն եկաւ, անցաւ,
Յայտնի՛ր քո բացվելու օրը, սիրականիդ յոյս տուր,
Ընդառաջ է նա, աչքերիցը քունն եկաւ, անցաւ:

Խնդիրը Խայեա՜ սա է, փակ մի՛ ճնար, բացվի՛ր,
Ձ՛ասեն թէ՝ միայն իր մի լոկ անունն եկաւ, անցաւ:

76.

Ո՛շտունեաց երգ

(Վ՛ըրշտիք)

Կոտ ու կէս կորեկ ունեմ՝ ցանելու խամար,
Ա՛ընձըղներ ժողվան, եկան՝ ուտելու խամար,
Կղվաքար վերցըրեցի՝ զարկելու խամար,
Թռան-գացին բերդի տանին՝ գանգատելու խամար,
Գ՛ասըբներ ժողվան եկան՝ մորթելու խամար,
Իրեցներ ժողվան եկան՝ ուտելու խամար,
Պատվըներ ժողվան եկան՝ գողնոցի խամար,
Աղջըկներ ժողվան եկան՝ դեղտրի[1]) խամար.

Հայ ձընձղուկ,
Կարմիր ոտիկ,
Սիպտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ
Ընուի եզրիկ,

Փախնին, երթան մանգալու խամար:

[1]) Դեղտրի—սեցնել թերթերունքը:

77.

Կոյր աղքատ

(Ռհրանժէից)

Կոյր աղքատը իւր սաղով
Ա՛ամբայ կըգնի իւր գիւղէ
Ու թիւղերը զարնելով՝
Ընդոր ձայնով նա կերգէ.
«Ո՛ահիլներէդ կը խնդրեմ
Պատուաւոր ու շատ բարի,
Վանիմ՝ կոպէկ ձըգեցէք,
Ձեր արևը օրհնուի...

Վանիմ՝ կոպէկ ձըգեցէք
Գ՛րտակի մէջ ծեր կուրի»:

Աղքատը իւր որդուն հետ
Կը հանդիպի հարսանեաց,
«Գ՛ոզեցկուհի՛ք, քէֆ արէք,
Վ՛էր վէր թռիք պար բռնած,
Աղաչներէդ կը խնդրեմ,
Ի սէր սիրած ձեր սրտի,
Վանիմ՝ կոպէկ ձըգեցէք,
Յառաջ այսպէս ես չէի...

Վանիմ՝ կոպէկ ձըգեցէք
Գ՛րտակի մէջ ծեր կուրի»:

Ա՛օտնալով հնձողաց՝
Ն՛արակ կ՛երգէ այս նոցա.
«Ընտա բերմանց տունն ալ

Ղազաանկրուս հունձ չը կայ,
Ոսկի հաղող քաղելչեն
Դուք ուրախ էք աւելի.
Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք,
Ֆաղողս ալ իմ այդ լինի...

Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք
Գըտակի մէջ ծէր կուրի»:

Թէ ղօլքը ոսն կատարէ՝
Գաւաթը շուտ կը շարժի.
«Ես ալ ձեզ պէս եղել եմ,
Պ'ասէ ամեն զինուորի.
«Ըյժմ ալ ես միշտ պատրաստ եմ,
Ուժըս գառնայ թէ ինձի.
Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք
Ի յիշատակ զինուորի...

Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք
Գըտակի մէջ ծէր կուրի»:

Նա ոչ երբէք չի երթալ
Պալատները ոսկեզօծ,
Նորա տեղն է գիւղերը,
Որտեղ մի դուռ չը կայ գոց.
Առատ ձեռքը ճանչնալով՝
Ֆէչ չի տայ վերջ իւր երգի
«Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք
Որ ձեր բաղդը բաց լինի...

Վանիմ՝ կոպեկ ձըզեցէք
Գըտակի մէջ ծէր կուրի»:

Մկրտիչ Ալիքանեանց

78.

Երգ ի Սէյհադէ [1]) առ «Առուն կն Ֆայաստան Ընչաւրհի»

Առուն կ, քո թուխ թուխ աչերուդ մատաղ,
Իմ ցրուած եղբարցս դու ինտեղ տեսեր,
Նոցա կարօտիւք սիրտս է ծակ ծակ մաղ,
Երբ տեսեր դու, նրանց վիճակն ի՞նչպէս էր:

Ձիմացա՞ր արդեօք դու եղբարցս միտքը,
Կամք ունի՞ն Ֆայաստան գառնալոյ թէ՞ ոչ.
Դուցէ մոռացել են մեզ միամիտքը,
Կամեմ եմ առաքել քեզ նոցա ի կոչ:

Ֆայերէն խօսի՞ն, թէ յօտարաց բարբառ,
Ընտանեաց հագուստի ձևը ի՞նչ ձև է,
Գիտե՞ն արդեօք Նունդ, Ոատիկ, Վարդավառ,
Թէ այժմեան հաւատը նոցա թեթև է:

---

[1]) Հ. Ամախեցի Հանդուցեալ Սէյհադը արդէն յայտնի է ընթերցող հասարակութեանը իւր ազգային և ժողովրդական երգերով ու բանաստեղծութիւններով, և այսօր էլ հասարակութիւնը նորա անունը «ազգայինն երգիչ» տիտղոսով է յիշատակում: Սէյհադը բացի գրականութեամբ պարապելուց, նա պետական ծառայութեան մէջ զանազան պաշտօններ է կատարել և այդ պաշտօնների մէջ նա եղել է՝ որքան գործունեայ, նոյնքան և աւելի խիստ դէպի իւր ստորադրեալները: Եւ հէնց այդ էր պատճառը, որ հանգուցեալը, շատ թշնամիներ վաստակեց: Ի դէպ. հրատարակում եմ այստեղ հանգուցեալ Սէյհադի մի նամակի պատճէնը, որը ուղարկուած է եղել Թիֆլիս՝ պ. Յարութիւն Կարապետեան Հ. Ահազիզեանցին: Այդ նամակը կարդալով, կարելի է մի որ և է գաղափար կազմել հանգուցեալի կեանքի վերայ:

Գ. Վ. Գրիգորեանց

Պարկեշտութիւն ազգի մոռացան արդիօք,
Հայելով օտարաց խորթ բնութեանը.
Հայք նախնեաց ծիսին հաստատուն, կարծիօք,
Լաւ վարքը փոխող չի՞ն ընդ զեղխութեանը:

Մէկ քաղցր լուր ասա, զուվանայ սիրտը
Ազգային հարազատ երգիչ Սէյեարէ.
Դուրէ ցամաքի նորա ձակատի քիրտը
Եւ իւր վիճակից այլ չի դանդատի:

79.

Պատճէն նամակի

Թարեւթլ տէր իմ ապաւէն ի վերայ աշխարհի,
Ողա Յարութիւն Կարապետեան.

Թէպէտ ձեր ինձ վերայ ունեցած խնամոց հազար մասանց մէկին ես չեմ արժանի, բայց որովհետև ձեր՝ առ Աստուած հանգուցեալ վիհափառ հօրեղբօր մատաղն եմ, վասն որոյ դուք զես մինչ ցայսօր ձեր հովանաւորութիւնից՝ չէք զրկած:

Թշնամիք ձշմարտասիրութեան իմոյ՝ երկիցս կամեցան ի Համախի զրկել զես ի կենաց: Ես թէև ինքնին զղուած եմ կեանքից, բայց թերևս ոսոխք՝ չկարենան հրճուանօք կոչել՝ թէ «վա՜յ վա՜յ, կորուսաք զնա», զիմեցի առ վաղեմի ծանօթն իմ Ենովբալ Լօռու Մելիքեանցն ի քաղաքն Վլադիկաւկազ, զի տալով ինձ զպաշտօն մի ընդ իշխանութեամբ իւրով, փրկեսցէ զես ի ձեռաց ապիւնարբու թշնամեաց իմոց:

Նորին գերազանցութիւնն վերջապէս եղիա պաշտօն մի յիւրում կանգելարի՝ թէև անչարմար ընդունակութեանց և աստիճանի իմոյ, բայց ըստ առակի տաճկաց թէ «էշշակի մինարլար աթայ եթինջան», կամ թէ «նահաբլղան ջուլֆալըղ». ի՞նչ պիտի արած՝ սա լաւ է՝ քան զայն, որ Համախու մէկ պատի տակին՝ քո անտէր Սէյիադիդ՝ սրախողխող եղած գտանեն:

Ենովբալը այն պաշտօնը ինձ յանձնելոյ մասին, միջնորդել է նահանգիկ Ղլաւնի Հատապն ի 31 մարտի նուիրեայ 923-իւ, և թէ սրտացաւ հոգացող չէ լինի, ով գիտէ թէ մինչ ցի՞րբ պիտի ուշանայ, քանզի ոմն պէտքին է, որ ահա երեք ամիս է, ես աստ եմ՝ ահ քաշելով չարչարվում, իսկ գժբախտ ընտանիքս՝ ի Համախի:

Ջանիզ մատաղ, արտասուախառն եմ աղաչում, որ դուք ոչ թէ պյլոց միջնորդութեամբ, զի ժամանակը յոյժ ոխերիմ է, պյլ անձամբ անձին իմոնաք այն ստօլից Ղլաւնի Հատապի, ուր որ կենդրոնված են այս կողմերի բնակչայ գործերը, և ձեր գթառատ օգնութեամբը՝ այն առաջադրանաց վճիռը փութով ողորկել տաք, և զես ակընկալութիւնից ազատէք: Հաւատացէք, որ այս բանի մտմտանքն այնքան է հալել և մաշել զես՝ թէ մարմնով և թէ քսակով, որ յոյժ գիւրութեամբ կարող եմ ասպան ծակէն անցանել և մեծատուններին, ըստ հրամանի փըրկչին աշխարհի, արքայութեան արժանացնել:

Իմ բարերարուհի բարեպաշտ Մարիամ Թասեղեանին ի խորին սրտէ՝ ողջոյն մատուցանեմ, իւր լուսափայլ ձեռն, և որդւոց հոգեզմայլ երեսները համբուրելով:

Ըստ շատ ճշալոյս ողորմութեամբը՝ Հէյի Սաատու Գիւլթան (Վարդանոց) գիրքն պարզ աշխարհաբառ թարգմանեցի՝ յօգուտ հայոց մանկանց, ոչ թէ նման Նազարեանցի ռուսերէն թարգմանութեան, պյլ այն տեղերն, որ Սաատին ոտանաւորով էր գրել՝ ես էս նոյն գուռնակ ընթացայ և առաքեցի ի Պետերբուրգ, առ դատա-

քննիչն գլոց, և վերջումը՝ ի գիմաց իմոց այս բանը գրեցի գրքի հեղինակին.

Երանի՛ քեզ, որ լուսատու ճահ ես եղել քո գարուն,
Այն է պատճառ, որ ազգը քեզ միշտ է սրբոց շարուն,
Բանաստեղծք չեն ունեցել քո առարկայից նկարուն,
Սա երկնային պարգև է քեզ՝ ոչ թէ մտաց հնարուն,
Նոքա, որք միշտ ծունր են կրկնում Աստուածային տաճարուն,
Օրական հաց են ուտոնում՝ և ոչ թէ թանգ համարուն.
Ես քարոզիչ շատ եմ տեսել՝ թագնուած իւր վեղարուն,
Որ պէս վարդապետ չի լինիլ՝ ոչ գաշտուն, ոչ սարուն.
Երբեմն գու երանութեան յոյս ես տեսնում ակարուն,
Երբեմն սուրբ պարտք ես կոչում հաստատ անձանց մեծարուն.
Երբեմն երկինք ես հանում էքստրատց չարչարուն,
Երբեմն անչափ գովում ես էքնաղ նաղելեաց փարուն.
Երբեմնապէս գիտութեանց գանձ ես գուշակում յիմարուն,
Երբեմն նիրհած ես ծնում Աստղական տաղաւարուն.
Առքա նուրբ մտաց աշխոյժք են, և ոչ հաստատ յօժարուն,
Այսպէս, փոփոխութիւնք շատ կան հայկական «Նոր Կտակարանում»[1]:

---

[1]) Ակեաղի գրուածքները հրատարակվելիս են եղել դեռ 1857 թուականից, «Նոր Կտակարան» անունով, Մոսկվայում տպագրուած գրքոյկների մէջ, Ռևան Տէր-Գրիգորեան Յովհաննիսեանցի և Օ. արմայր Մսերեան Մսերեանցի աշխատասիրութեամբ:

Գ. Վ. Գրիգորեանց

Ակեաղն եմ, Էայկազանց[1]) երգիչ՝ յայնժամ կառնում գաղարուն,
Երբ մարմինս կը ամփոփին Երկաղեան խաչի քարուն:

---

[1]) Ձնայելով, որ Ակեաղը իւր գրուածքների մէջ անդադար «Հայութի՛ւն», «Հայրենի՛ք», «Էայաստա՛ն», «Էայկազանց երգի՛չ» էր բացականչում, բայց նա մի օր, յանկարծ, մոռանում է այդ բառերը, իրանց բուն և ընդարձակ նշանակութեամբ, և մնում յուներց եկեղեցու ծոցը: Եթէ ինձ էլ՛ք հաւատում, կարդացէք «Պարտիզիկ» բանաստեղծութեան մէջ՝ հայր Խորէն Միրզաբէգեանցի, այդ մասին արած ծանօթութիւնը: Այց չէ. գուցէ այդ գիրքը իսկոյն, հէնց իսկոյն չկարողանաք ձեռք բերել, ուստի ձեր հետաքրքրութեանը անմիջապէս բաւականութիւն տալու համար՝ ես ինքս կ՛բերեմ այդ կտորը ձեր առաջ, ահա նա. «Մխանգամ, Հ՝ամախում, մի երևելի պատուանուն քաղաքացու տան, հացկերութի ժամանակ, բանակուիւ է մտանում ինքն Ակեաղը տեղւոյն հանգուցեալ առաջնորդ Դանիէլ սրբազանի հետ. վէճը հասնում է այն աստիճանին, որ Ակեաղը վառուած և շարժուած կրքով, վշտացած և խռովուած հոգւով հեռանում է սեղանից և տանից: Մի քանի օրից յետոյ պարզ երևում է, որ Ակեաղը այլ ևս չէ՛ կամենում յարակցութիւն ունենալ տեղւոյն տպագրանի հետ իւր հոգաբարձական պաշտօնով. նա տալիս է հրաժարական թուղթ և արձակվում: Յետոյ դիմում է խընդրագրով Թիֆլիս՝ պատկանած տեղւոյն, որպէս զի ընդունեն իրան յուներց կրօնի մէջ (1867 թ.): Ընդունվում է: Խղճալին խաբուած տեսնելով իւրեան, մանաւանդ իւր հասակի վերջին տարիներում, կորագլուխ թողից հայրենիքը. գնաց ընտանիքով Երուսաղէմ յուխտ 1868 թուականում: Էյնտեղից վերադառնալով՝ մնաց Կ. Պօլսում այն նպատակաւ, որ գոնէ այնտեղ կարողանայ կրկին ձեռք բերել մեր ազգայիններից իւր կորցրած սէրը և յարգանքը, որ կային դէպի ինքն յառաջքան կրօնափոխ լինելը: Թէ և նա Տաճկաստանի մեր հայ եղբայրներից կարաց փոքր ի շատէ համակրութիւն ստանալ, սակայն Կ. Պոլսահայերի մէջ թողեց նոյն նշանակութիւնը, նոյն տպաւորութիւնը, որ ցոյց

Ես յս նեղքդ գրեալ սուգն՝ վասն անժամանակ մահու Նորին Պայսերական Բարձրութեան Նիկոլայ Ալեքսանդրովիչ[1]) ժառանգի գահին Ռուսաց եմ ասել.

Պետ նոր բացուած վարդ՝ կայսերութեան զարդ,
Պիմաք մէկ հրեշտակ, բարւոք հեզ, հանգարտ.
Ընդէ՞ր թողեր թաց՝ աչք քո հայրենեաց,
Նա դեռ չէր տեսած զմահ ժառանգաց:

Ժամայն Ռուսաստան՝ Պեզ սիրէր անհուն,
Յիշատակ նմա՝ որոյ կրես զանուն.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Գարուն Պոյդ կենաց՝ էանց սրընթաց,
Լեղի ալբեցոյց՝ Պվրաց, Ժայոց, Տաճկաց.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Սովկան է տխուր՝ զի մահուն Պո լուր՝
Ելրեց սիրտ Նորա՝ իբրև անշէջ հուր.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Լուսափայլ քո մայր՝ սուգ առեալ ողբայր,
Երբ բժիշկն ի Պէն՝ մահառիթ լուր տայր.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Ժայր քո վհատառ՝ զթութեամբ պայծառ,
Նա հպատակաց՝ վիճակ յոյժ պայծառ.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Կեանք արենակցաց՝ Պոյ եղև ողբ, լաց,
Նրանց սիրտքնք՝ հալսնացուդ ճնաց.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Ծօրապետք և զօրք, իշխանք, գառաւորք՝
Նէն ամենեքեան դառն սգաւորք.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Աչեաւդ եմ քիզ զոհ՝ կոյր բաղդէս անզոհ,
Փոխանակ Պոյ ջ՞ր՝ ես չէ մեռայ, ՚հ.
Ընդէ՞ր թողեր թաց և այլն:

Նորէք երկարաբանութեանս, քանզի «ճանան երգան թիւսթի չխալ», ասել են, միայն յուսամ, որ առաջին փոշիւ սրտիս մէկ ուրախարար լրով՝ զովութիւն պարգեւ էք:

Ձեր յաւիտենական ծառայ

Պետրոս Մոսկովով

28 ապրիլի 1865 ամի,
ի Ֆ. Վլադիկավկաս, այսինքն
Հինի և անձրևի ակն:

էր տուել իւր կրօնափոխ լինելովը: Նա վերջապէս երկար չապրեց. նա չհասած իւր նպատակին, 62 ամեայ հասակում, 1872 թ. մեռաւ Կ. Պօլսում, ուր և թաղվեցաւ փառաւոր հանդիսով հայոց եկեղեցւոյ կանոնով, հայ եկեղեցականների ձեռքով, ինչպէս ինքն ցանկացել է և խնդրել հիւանդ ժամանակին: Տեղւոյն հայոց պատրիարքը պատուել է հանգուցեալն իւր խոսած սրտառուչ դամբանականովը»:

Խաչէն Թահանայ Մէլիք-Բէգեանց

[1]) Նիկոլայ Ալեքսանդրովիչը ի Տէր հանգուցեալ Ալեքսանդր Երկրորդի անդրանիկ որդին էր և այժմեան կայսրի, Ալեքսանդր Ալեքսանդրովիչի, մեծ եղբայրը: Նա վախճանվում է Իտալիայի Նիս քաղաքում, 1865 թ. 12 ապրիլի և մարմինը բերվում Ս. Պետերբուրգ:

Գ. Վ. Գրիգորեանց

80.

Գիւլում-հայի երգ

Սիրած երգս գիւլում-հայ է,
Պատճառ, ազգս քուն հայ է.
Ախ, թող աչքս կուրանայ,
Թէ սուրբ հնութեան թիւր հայէ։

Մ. Ջ.

Ես հայ աղջիկ եմ, լաւ գիտեմ,
Որ միշտ անշուշտ ես պիտեմ
Սիրել իմ կրօնն, իմ ազգըս,
Ինչպէս իսկ իմ ջուխտ աչքըս։

Պարզասուր եմ, որ հայ եմ,
Ո՞նչ պէտք պլլոյ ես նայեմ,
Ես են իմ փառք, իմ պարծանք,
Ինձ ուրիշ ի՞նչ կասկածանք։

Ես եմ ես հայ քրիստոնեայ,
Ես ին սուրբ կրօնիս պաշտօնեայ,
Ձեմ թիքուիլ իմ օրէնքից,
Թէկուզ զրկեն ինձ կեանքից։

Ծնունդ եմ հայի հպարտատ,
Նոր ձև ազանդ ինձնից զատ,
Ոուն սերտունդիս մտիկիմ,
Ո՞հ, պահի՛ր ինձ միշտ, Տէ՛ր իմ։

Ես եմ, պիտի հայ մեռնեմ,
Ես ողջ հարանց հետ խառնեմ,
Ես լացդի տուն, տեղ, ոսկի
Ձե՛ն հարկաւոր ինձ իսկի։

Օտար տան դուռն չեմ կոխիլ,
Ես տպային չեմ փոխիլ
Ես ալլազդի մեծատան՝
Թէկուզ ինձ ողջ աշխարհ տան։

Մովսէս Օհրուբէեանց

81.

Ես ես ասում եմ ես հայ եմ,
Ինքս էլ ուղղափառ եմ,
Ես ես ասում եմ չար ծառին
Ընտանեսիլ տապար եմ.
Ես ես ասում եմ աշխարհի
Ամեն բանից խաբար եմ.
Ձե՛մ ասում որ ինձանից
Ոնաւ բուրթ ու գոլ չեկայ։

Ես ես ասում եմ մին ես եմ
Ժամում կանգնած հաւատով,
Ես ես ասում եմ մին ես եմ
Տնանկին տամ գաւաթով,
Ես ես ասում եմ մին ես եմ
Սամսոնի պէս զրաթով.
Ձե՛մ ասում որ էդ խօսքը
Ինձ ասիլի հոլ չեկայ։

Ես ես ասում եմ մին ես եմ
Իմ հօրըս յիշատակը,
Ես ես ասում եմ մին ես եմ
Ընտասանող շիտակը,

Էնց ասում եմ մին ես եմ
Հաւատի նահատակը.
Ձի՛մ ասում որ ինձանից
Էին հաւատ խօսող չեկայ։

Էնց ասում եմ մին ես եմ
Ընդարատատ խօսողը,
Էնց ասում եմ մին ես եմ
Պատուիրանքներ լսողը,
Էնց ասում եմ մին ես եմ
Մելխէսէդ[1]) խաղ ասողը.
Ձի՛մ ասում վատ էլ ասեմ՝
Ընտանեզ պրօտօկօլ չեկայ։

82.

Հայրենասէր օրիորդի մը հառաչանքը
Խուրեան գետի եղերքը նստած

«Սամաւարը պատուական է[2])»
երգի եղանակով։

Հայաստանի ախուր դաշտեր,
Հայաստանի արտում սարեր,
Քանի չիշեմ ձեր սև օրեր՝
Սուր, սուր խոցին սրտիս թռքեր.

[1]) Մելքիսեդեք (Ղաթաղանցի Ղեւոնդեան Պ. Ուկասեան Վրուշուբէկեանց) մեր նշանաւոր ժողովրդական երգիչներից մինն է։ Ով կամենում է աւելի մօտ ծանօթանալ Մելքիսեդեքի կեանքին և նորա տաղանդի հետ, թող կարդայ «Սոխակի» երրորդ հատորի մէջ նորա երգերն ու բանաստեղծութիւնները՝ իւր կենսագրութեան հետ։

Գ. Վ. Գրիգորեանց

[2]) Տես «Սոխակի» առաջին հատոր։

Ընչ սև դաշտեր, մութ դաշտեր,
Ընչ սև սարեր, մութ սարեր։

Հայաստանի ձորեր, ժայռեր,
Հայաստանի վանքեր, բերդեր
Սրտիս կաղդեն հազար ցաւեր,
Հոգիս թափեն բո՜ւր բո՜ւր վշտեր.

Ընչ սև ձորեր, սև ժայռեր,
Վա՜յ սև վանքեր, սև բերդեր։

Հայաստանի ագարակներ
Լցեր, ծածկեր են որոմներ.
Հայաստանի ճոխ այգիներ
Կորուսել են պտղեպաններ.

Ընչ սև հողեր, սև հողեր,
Վա՜յ սև օրեր, սև օրեր։

Հայաստանի սիրուն ծաղիկներ,
Հայաստանի վարդենիներ
Տրտում նստել են սօսիներ,
Ընդունք թափեն բոլոր ծառեր.

Ընչ սև օրեր, սև օրեր,
Վա՜յ սև ժամեր, սև ժամեր։

Հայաստանի համեստ հարսներ,
Հայաստանի օրիորդներ
Մերկացել են իրանց զարդեր,
Սև են հագել և թռչուններ։

Ընչ սև օրեր, սև օրեր,
Վա՜յ սև ժամեր, սև ժամեր։

Հայաստանի ծիր վտակներ,
Նոցա անոյշ, մեղմ ալիքներ
Դադարել են, կ՚ողբան օրեր,
Հայաստանի նախկին փառքեր.

Ըյ սև օրեր, սև օրեր,
Վա՛յ սև դարեր, սև դարեր:

Հայաստանի ոչխարք, գառներ
Ձիւ-ցան ընկել են սար, ձորեր.
Հայաստանի խնդմ հովիւներ
Կորուցել են իրանց հօտեր.

Ըյ սև օրեր, սև օրեր,
Վա՛յ սև դարեր, սև դարեր:

Հայաստանի սիրեմ տուներ,
Հայաստանի խնդրեմ հողեր,
Ձյն արգաւանդ սև սև հերկեր,
Որ իմ ազգին արեամբ ներկուեր.

Ըյ սև օրեր, սև օրեր,
Վա՛յ սև դարեր, սև դարեր:

. . . . . .
. . . . . .

Հայաստանի շա՜տ են վէրքեր,
Շա՜տ են նորա կրած վշտեր.
Հայաստանի աւետաբեր
Ազաւնին արդ է գուժաբեր.
Իսկ ես արտում, ախուր նստեր,
Ո՜հ, Ախուրեան գետոյն յեղեր՝

Յիշեմ, հեծեմ, ցօղեն աչեր...
Ո՛հ, ո՞ւր են իմ փառաց օրեր.

Ըյ սև օրեր, սև օրեր,
Վա՛յ սև ժամեր, սև ժամեր:

. . . . . .

Ընդէ՛ք վարժապետ Մեծոպո-Հէանց

83.

Մեր վէրքերը

Հայը Հային կը վնասէ,
Օտարք երբէք մեղաւոր չեն,
Հայերու սէրը պակաս է,
Իրար սիրելու սովոր չեն:

Հայերը այս բանով վատ են,
Իրարու ծուռ կը նկատեն,
Մէկ մէկու այնպէս կը ատեն,
Կարծես իրար հարկաւոր չեն:

Օտարին կը գովաբանեն,
Բայց իրար միշտ գաւաճան են,
Պապերէս ճնացած բան են,
Այս ցաւերը մեզի նոր չեն:

Ո՞ւ-ւոյ կ՚ասեմ անկասկած,
Մենք ենք տուել մեզի հարուած,
Օտարին մեզի հասուցած,
Բացած վէրքերը շատ խոր չեն:

84.

Դուբէիէ

Էրկ՛ինք նստես, ով ծոյլ ծոյլ ծոյլ,
Գլխէդ ձե՛ռքդ առ, առ, առ,
Օգտացի՛ր մաքով դոյլ դոյլ դոյլ
Գրկ՛ է՛ամուր ձառ, ձառ, ձառ։

Կարդա՛ սուբբ գիրքը թէրթ, թէրթ, թէրթ,
Մ՛տաք առ խորհուրդը մէրթ, մէրթ, մէրթ,
Իմաստութեանը է՛րթ, է՛րթ, է՛րթ,
Էաւաքէ՛ բաղում բառ, բառ, բառ։

Ձունկ սուբբ գիրքը բիծ, բիծ, բիծ,
Կը բաշխէ մանկանց ծիծ, ծիծ, ծիծ,
Իսկ ունկ կենաց գիծ, գիծ, գիծ,
Գրուած սուբբ հոգւով տառ, տառ, տառ։

Խօսէ՛ միշտ բարի բան, բան, բան,
Ձունեա տէրիցը դան, դան, դան,
Խաւարը՝ ի քէն հա՛ն, հա՛ն, հա՛ն,
Օգեցի՛ր լոյսը վառ, վառ, վառ։

Մնաս մինչ ե՞րբ ՚ի գուբ, գուբ, գուբ,
Յիսուսէն խնդրէ՛ ջուր, ջուր, ջուր,
Պատուղ ի ժամու տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր,
Մա՛ղէ բանաւոր ծառ, ծառ, ծառ։

85.

Նուէր Էայ եղբարց

Էայ ինք եղբարք, մի ինք լեզուով, մի հաւատով, մի ազգով,
Էայկայ արիւն, անուն, լեզուն ժառանգել չենք մեր ջանքով,
Այլ քաջ նախնեաց, նահատակաց թափած արեամբ, քրտինքով,
Իսկ մեր կրօն գըտինք սրբոց առաքելոց արդիւնքով։

Էյս իսկ մեր հնութիւնն,
Սուրբ գաւանութիւնն
Մեր փառք են, պանծանք,
Մեր գովեստ, պարծանք։

Էայ ինք, եղբարք, սիրե՛նք սրտանց, ցանկա՛նք բարին միմեանց միշտ,
Էրքե՛նք, մերժե՛նք չար կիրք բնաւին, ամեն վարք, գործ ամբարիշտ,
Պահե՛նք սուրբ կրօն, մեր ազգութիւն, մեր հին լեզուն միշտ և ճիշդ,
Բոլոր դէպքում բարի գործենք, ազգի օգտին չխնայենք ոչինչ։

Էյս իսկ ինքն Տէր
Տուաւ մեզ պատուէր,
Էյս մեր պարտք, պայման
Մինչև վերջմանն։

Ա՛յ հնք, եղբարք, Աստուած սիրենք, ընկեր սիրենք,
ազգ սիրենք,
Թէ այս չանենք, վարձ էլ չունենք թէ աշխարհի և
սիրենք.
Թէ իշխան հնք, ազգատ, հարուստ և թէ ծառայ, թէ
տէր հնք,
Բընաւ մարդ չհնք, ղերթ չոր ծառ հնք, եթէ պտուղ
չը բերենք:

Ա՛յս են միշտ վայելը
Որ ամեն հայ էլ
Աշխատել պիտին
Ընկերի օգտին:

Ա՛յ հնք, եղբարք, պիտի սիրենք այլ և արհեստ և
ուսմունք,
Ա՛յս մեզ պէ՛տք են, մեզ շատ օգուտ և այս մեր ի՛սկ
համոզմունք,
Փառք տանք Տէրին, չը կան նախնի արդիւք, կռիւք,
հալածմունք,
Յառաջ ըզնանք, յառաջ, հայեր, այս են դարուս պա-
հանջմունք:

Եւ այս ուսման սէր,
Շնորհիւ մեծ Կայսեր,
Պահե՛նք միշտ անշէջ
Ա՛յդոց ազգին մէջ:

Մ. Ալիշան Օշականեանց

86.

Ինչո՞վ եմ պակաս

Ձագուսանեաս շիկ, նոր մօղնի կալած,
Բոլորի շուրջը ծիպծիպիկ շալած,
Գոյնզգոյն ծաղիով կուրծքս զարդարած,
Ասացէ՛ք, խնդրեմ, ինչո՞վ եմ պակաս:

Գլխիս շէհապա, աչքերիս ակնոց,
Միշտ բռնած ձեռքիս հովհար, հովանոց,
Մինթէ պակսել են ձեռքերիս ձեռնոց,
Խնդրեմ, ասացէ՛ք, ինչո՞վ եմ պակաս:

Մատներիս մատնիք, թևիս բրասլէտ,
Մաքուր լուացուած օձիք և մանժէտ,
Ընդին օղերով ականջներս զուգած,
Ասացէ՛ք, խնդրեմ, ինչո՞վ եմ պակաս:

Վարպետ եմ քսուել սիրուն զարդարուել,
Գէմքս, պտերս դոյներով ներկել,
Մատքով հանապազ փողոցներ չափել,
Ուրիշ կանանցից ինչո՞վ եմ պակաս:

Գիտեմ ես խնջոյք, բալէտներ գնալ,
Ջերմեռանդութեամբ թուղթ, լօտօ խաղալ,
Սիրուիլ մարդկանցից, աշխատիլ դուր գալ,
Ա՛յ դուք ասացէ՛ք, ինչո՞վ եմ պակաս:

Հոգով և մարմնով մօղին հեռւում,
Մօղնի ժուրնալներ յաճախ ստանում,
Պատառում կարում, կարում կտրատում,
Գէ՜հ, դուք ասացէ՛ք, ինչո՞վ եմ պակաս:

Ասում են հայ ես, չգիտես հայկդեն,
Ձունես տեղեկութիւն քո տնէն տեղէն,
Չեզ եմ հարցնում, այժմ սիդ է մօդէն,
Մի՛ քաշուիք, ասէք, ի՞նչս է պակաս։

Ընշուշա կը պահէք դուք իմ խոստովանք,
Ասողներ կան՝ թէ խելօ է պակաս.
Ես դէ փոքր բանն էլ կարծեմ չէ՛ զլխանք,
Ա՛ա, հա՛ հա՛, տեսէք, ինչով եմ պակաս։

Պապաձեռ Մաթինեանց

87.

Առ Խրիմեան Ս. Ա՛այրիկ

Ա՛այրիկ, Ա՛այրիկ, քո հայրենիք Վ՛ասպուրական մեր աշխարհ
Վ՛արդի փոխան քեզ փուշ բերաւ, ցաւերդ արաւ մէկ՝ հազար.
Մ՛այիան եկաւ սոխակներով, վարդն թփիկ որոնեց,
Խպտաւ փուշի մացառ գտաւ, լալահառաչ ձայն հանեց։

Ա՛այրիկն ասաւ իմ հայրենեաց փուշերն անուշ, քան զվարդ,
Ես այն փշոց միջև գարձեալ կերտնեմ իմ սիրուն վարդ,
Էն սպրատսուր փուշերն ամէն փունջ կապեցէք շալ ի շալ,
Թողէք գլխուս պսակ կապեմ, որում ձակատս է յօժար։

Ա՛այրիկ, Ա՛այրիկ, սուրբ ձակատդ արիւնաշաղախ է, ո՛հ, միշտ,
Փթթեալ վարդից անվիշտ թերթեր ի՛րը պսակեն փառք միշտ.
Ա՛այրիկն ասաւ շատ սլաքներ կողես միջում շամփրած կան,
Ի՛այց հայրենեաց՝ բարեկամաց՝ վէրքն է հատոյր սիրական։

Ա՛այրիկ, Ա՛այրիկ, հայուն փիւնիկ, քո վէրքերուն վիրակապ,
Ո՛հ, չ՛կապեց քեզ հայրենիքն, որ զովանայր սրտիդ տապ.
Վ՛ասպուրական, ի՛ր չ՛ճանչես քո բարերարդ աննման,
Ի՛նչ հատուցումն այդ՝ զոր առնես, արդար կշռէ ամէն բան։

Ե՛րիսափեդէս, արդար անուան մի՛ նախանձիր կուրծքդ,
Պ՛օշմ աղուէսն մի՛ ընդունիր քու ձակատդ ՝ի կամար։

88.

Ա՛այոց Պ՛իւցանդը 1877 թուականին

Զմեռ էր սիրել հայոց աշխարհում,
Ուր կան Երասխան, Կարս և Էրզրումը.
Մ՛ասայ գագաթէն մինչև Սօղանլուխ
Երկու բանակաց զնդիր են տեսնվում։

Մէկ գունդը Ռուսաց, միւսը Օսմանցոց,
Օդինքներն թափին կայծակ, հուր ու բոց.
Ղազակ, գոսիւն, գոչիւն և թնդիւն,
Ա՛լսուին նաև անկելոց ողբ, կոծ։

Ոուս կարիճներ Օսմանցու առաջ
Կանգնած անվրդով կ՚կռուին քաջ քաջ.
Հարուած հարուածի, մահուան պնդակներ
Կ՚փոխեն հազար անշունչ դիակներ։

Մինչդեռ այն օրը յաղթութեան բաժակ
Կ՚յուսայ խմել Մուխտարի բանակ.
Ղզկային հանդէս կատարել անդէն,
Ոուսաց ձեռքէն խլած պաշարէն։

Ահա յանկարծ Ոուսք շարժում մի արին,
Եւ նոցա մէջէն հսկայ մի մարմին
Ելաղ քայլերով, վաշտերը ձեղքած,
Ոուրը աջ ձեռին ելաւ ընդ առաջ։

«Հապ երթանք կռուի, դուք իմ քաջ ընկերք,
Կանի ձեզ հետ եմ, երբէք մի՛ վախէք.
Այսօր կ՚որոշեմ մեր բաղդը ռազմի.
Կամ Կարսը կ՚առնեմ, կամ կ՚ընկնեմ գերի»։

Ասաց ու նստեց սպիտակ ձիուն[1])
Որ փրփուր բերնով կայր անդէն կանգուն.
Սլացաւ, մոաւ թշնամու բանակ,
Իրեն հետևից չորս հարիւր կազակ։

---

[1]) Այս ոտանաւորի հետ տպագրված է լիտոգրաֆիայով և հանգուցեալ գեներալ-լէյտենանտ Յովհաննէս Վասիլեան Լազարեանցի պատկերը «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հանդիսի 1881 թ. Վ տետրի մէջ՝ իբր «սպիտակ» ձիուն նստած ու երեք կողմից իբր զօրքով շրջապատած, որոնց առաջ կանգնած է զինուորական աստիճանաւոր պ. Վրիգոր Աիկողոսեան քաջ երիտասարդը, սուսերամերկ։ Պատերազմ է. նայեցէ՛ք, թ՚նչպէս տաճիկները շնչասպառ ընկած են գետնին, զօրքի առաջ։ Գ. Պ. Գրիգորեանց

Հատ քաջ տաճիկներ իրենց մահ տեսին,
Հատերը ահէն երես շուռ տուին.
Իսկ դեռ քաջ Գիւցաղնը խոժոռուած դէմքով
Ընդ ու ձախ հարուած կ՚տայ անխռով։

Ամեն մի հարուած, երբ նա կը կշռէր,
Երկու օսմանլի իւր տաին ընկճէր.
Իբրև նոր Աբէս պատերազմի մէջ
Հատերի կեանքին կ՚տար իսկոյն վերջ։

Սարսափից Մուխտար Գիւցաղնի դէմքէն,
Որոյ աչերէն կրակ թափթփէն.
Ձափից ու կշռից ոտքէն մինչ գլուխ,
Հոստ ճանապէից նա այդ պարագլուխ։

Թուլացաւ ոտներըս վհատիլ սկսաւ,
Ձգից ղէնքերըս, իւր ձիուն նստաւ.
Աստիկ հրաման տալով բանակին,
Ձգիլ ազատուած՝ Էրզրում փախաւ։

Միևնոյն օրը Գիւցաղնի ձեռքով
Եռաւ Կարսայ բերդ, առաւ իւր զօրքով.
Ոուսաց դրօշը Կարսում փայլեցաւ,
Սուլթանի աստղը խոպան մարեցաւ։

Ոայց ով էր այդ անձ, այդ հսկայն ով էր,
Որի երեսէն Մուխտար կ՚փախչէր.
Ով էր այդ Աբէս, որոյ աչերէն
Ընդդալը կրակ, արիւն, բոց թափէն.
Ով էր այդ Գիւցաղն Կարսայ առնողը,
Եւ ոուս զրօշակ նորա մէջ տնկողը։

—Ա՛յ Լազրոսն[1]) էր այդ, քաջն քաջարանց,
Յաղթութեան պսակ շատ անգամ առած
Ընդդէմ Շամիլի, ընդդէմ իսկ Տաճկաց,
Ընվախ, աներկիւղ շատ անգամ եղած։

Ա՛յ Լազրոսն էր այդ, գաւինիւք պսակուած,
Ամեն թշնամեաց ահ, սարսափ ձգած,
Որոյ մի ակնարկ՝ ի սիրտ թշնամւոյն
Բաւ էր ազդելու իբրև մահաթոյն...։

Ա՞խ, ինչու՛ թողում քո անթիւ գործերը,
Որոնք փառք, պատիւ քեզի են բերել.
Անմահ կ՚ինաս մինչև յաւիտեան,
Պարծանք հայութեան—Յովհաննէս Լազարեան։

Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց

89.

Առնամանիք

Ձմեռն է, ձմեռ, սիրուն երեխէք,
Ձմեռն է, և դուք դողում, մրսում էք.
Բայց դուք մենակ չէք. ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պէս դողում, սարսռում։

---

[1]) Ապաստամ ենք պ. Գր. Նիկողոսեանի «Լազարեվ և Ա՛յ գաղթականութիւն» անունով տպագրելի աշխատութեան, որ մի հետաքրքրական և գեղեցիկ գործ պէտք է լինի։ Գ. Չ. Գրիգորեանց

Բայց դիակ, արդիօք, ի՞նչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարուած ծերը.
Ո՜հ, մի՛ հալցանէք, ես սարսափում եմ,
Երբ դրա արարքը մէկ-մէկ յիշում եմ.
Այդ անիրաւը, ուր ոտք է դնում,
Մահ է տարածում ամեն կողմերում.
Երեսին տուած ծերունու դիմակ՝
Մէղմից ծածկում է բուն դէմքն այլանդակ...։

Շատ ժամանակ չէ՛, ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ.
Դորա երկիւղից դեռը քար կարեց,
Չէքչան առուն լռուեց, պապանձուեց,
Դալար բոյսերը սառան, փետացան,
Նախշուն հաւքերը թռան, հեռացան,
Բայց էլե շատին իր ճանկը ձգեց,
Ռուք, բոլան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցրեց,
Սոխակի լեզուն տակիցը կարեց...։

Ո՛վ դու կեղծաւոր փարիսեցի ծեր,
Դու ունիս, դիտենք, շողոքորթներ էլ,
Որոնք բոլանդ, թիփիդ չեն տեսնում,
Ոչ բուք, բորեաղետ տակ ցրտահարվում։
Սառնեղէն սրտին ի՞նչ բուք, ի՞նչ բոլան
Կարէ ներգործել, կամ ի՞նչ ցուրտ, ի՞նչ բան.
Նոքա սղղում են իբրև անզգայ,
Չիւնով պատանած զոհերիդ վերայ...
Եւ դու, երեսպաշտ, լաւ ես որոշում
Ձարսոնին խեղճից և ջոկ-ջոկ որսում.
Մէկին տալիս ես կճեպ վառարան,
Միւսին և ոչ մի խեցեայ կրակարան.

Մէկին թանգագին մալիղէն մուշտակ,
Միւսին և ոչ մի ցնցոտի մաշկեակ.
Մէկին տալիս ես մի սիրտ սառուցիկ,
Միւսի թոքերը հանում ես կուլծքից.
Մէկին տալիս ես միջոց զուարճութեան,
Միւսին դառն օրեր, օրե՛ր ախորութեան.
Մէկին տանում ես դէպի մոլութիւն,
Միւսին դէպի մահ, անդարձ գերութիւն.
Մէկին խաբելով, միւսին երկիւղով՝
Թակարդ ես ձգում դիւական ցանցով...:

Ընտէղ մանուկներ, սիրուն երեխէք,
Փոքր ինչ հեռացայ... դուք ինձ կը նեղէք.
Եթէ իմանաք, թէ այս լոպէիս
Ի՜նչ պատկերներ են առաջս գալիս.
Բայց ո՛ր մէկին ասեմ, ո՛ր մէկը թողեմ,
Կամ ի՞նչպէս ասեմ, որ ձեզ հասկացնեմ...
Տեսի՞լ էք, արդեօք, խախուտ խրճիթներ,
Ծորիկ, գլխաբաց, տկլոր մանուկներ,
Պատառիկ ամբարներ, հորեր, մարագներ,
Ընդ պէս լեզուած երկայն մուրնեներ,
Էջքերը պլըշած, քաղցած տաւարներ,
Սիրտ պատռտորող մայեր, բառանչներ...:

Ջրաղաց չկայ,—ջուրը սառել է,
Ձանապարհ չկայ,—ձիւնը կապել է.
Թէ՛ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած,
Ոդբում, լալիս են մահուան դուռն ընկած:

Օրը կարճացել, գիշերն երկարել
Լոյսը նուաճուել, խաւարն է տիրել
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,

Գարունը հեռու, ցուրտը կատաղած...
Ըլսպէս է ահա՛ սոսկալի ձմրան
Ելիքով ծածկած պատկերը դաժան...:

Յուրտ է, սաստիկ ցուրտ, սի՛րուն երեխէք,
Եթէ ինձ նման դուք էլ մրսում էք,
Եկէ՛ք միասին մի հնար գանենք,
Ձմրան ձանկերից մեր գլուխն ազատենք:
Ես իմ բազմաճեայ հասակիս փորձով,
Դուք ձեր մանկական անարատ մտքով,
Եթէ կամենաք՝ խելք խելքի կը տանք,
Եւ ինչից ասես, կրակ կը ստանանք—
Կրակ լուսատու, պայծառ, անսուտիկ,
Որ տաքացնէ գօսացած ձեռներ,
Որ հալեցնէ սառցապատ լեռներ...:

Դէհ, մտածեցէ՛ք. ես էլ միտք կանեմ,
Որ կիզ-ապակու խորհուրդը գտնեմ...:

Առ այժմ այսքան,
Եւ ուրիշ անգամ
Ինչ որ մտածեմ,
Ձեզ կը հաղորդեմ...:

Գ. Ըղայեանց

90.

Ձնծաղիկ

Ձիւնի տակից դուրս ելար,
Կարմիր, ձերմակ ձիւնծաղիկ,
Դաշտեր, ձորեր սփռեցար,
Ծաղկներու անդրանիկ:

Մարտի ամսին երբ տեսար
Թերթիկներդ բաց էլած,
Փառք տուիր ու գոհացար
Բընութեանը՝ զմայլած։

Ուրախացար, երբ տեսար
Նոր արև, կեանք և նոր օր,
Ծուարթացար, զօրացար,
Վեղ կացուցիր փառաւոր։

Ուրախացար, երբ անոյշ
Մաքուր պարզ օդ ծրծեցիր,
Կազդուրվեցար, շունչ առար,
Սիրուն տեսքով փայլեցիր։

Ուրախացար, երբ տեսար
Նոր եղանակ, նոր գարուն,
Տուիր հազար, փառք հազար,
Որ աշխարհս կայ կանգուն։

Ցնծութենէդ փութացար,
Կաթիլ բերիր քո ղլխին,
Հոտով տուիր դու կատար
Կեանքիդ բոլոր թելերին։

Փոյթ չէ, կեանքը քո թէ և
Խիստ շուտ եղև կարճատև՝
Վո փափաքն էր միմիայն
Նոցա տեսնել ակներև։

Ե՞ս, թէ մի օր հայերն էլ
Մարտի ամսին հասնէին,
Առ ձիւների տակերից
Դուրս թռչէին, երևէին։

Փափուկ, կարմիր, սպիտակ
Թերթիկները բանյին,
Ընծաղեկի նմանակ
Դաշտերս, ձորեր փառուէին։

Ե՞ս, թէ մի օր հայերն էլ
Նոր կեանք, նոր օր տեսնէին,
Ուրախութեամբ, ցնծութեամբ
Փառք, գոհութիւն կարդային։

Ե՞ս, թէ մի օր հայերն էլ
Անոյշ գարնան մաքուր օդ
Շնչէին ու ըսէին.
«Փառք քեզ, ով լոյս անաղօտ»։

Ե՞ս, թէ մի օր հայերն էլ
Գլուխները վեր բռնած,
«Իրաւ, աշխարհս կայ կանգուն»,
Ըսէին «Փառք քեզ, Աստուած»։

Ե՞ս, տեսնէին այսպիսի
Օրեր, փոքր ինչ ժամանակ,
Ո՛ւր չէր, երէ մտնէին
Դարձեալ սառը ձիւնի տակ։

Ո՞հ, չկայ օր, չկայ փառք
Թշուառ, անտէր հայերին,
Վանի որ կայ Գլադստօն,
Վանի որ կայ Գուֆֆերին։

Մանուկ Թոմաքաշեան

91.

Այդեպան, ի՞նչ ես անում,
Համբը բուրաստան չի՛ լինիը
Ա շ ը գ - Ե ր բ ի ն

Ո՛արտաքսակ՛ ես, աւազն վերայ օթևան չի՛ լինի,
Գայլն ձագը կրծելով՝ ընտանի կենդան չի՛ լինի,
Ակերախտ մարդուն օրը հազար տեսակ պատիւ անես՝
Նա քեզնե աշխատակից իրը օգնական չի՛ լինի։

Պայծքարը կարմիր արիւնների մէջը ներկես հազար,
Գեղեցիկ գոյն առնելով՝ գիտցի՛ր, կարկհան չի՛ լինի,
Թուխթակը սովորելով վարժութիւնով մի քանի խօսք,
Խօսելով մարդու նման, նա մարդ իսկական չի՛ լինի։

Աշխարհի բոլոր եղած գրքերը ողջն հաւաքես,
Շաղուելով մի գիրք շինես, դեռ Աւետարան չի՛ լինի.
Փայլում է արևի պես ձեմարանը Մոսկուայի մէջ,
Ընդհանուր հայերի մէջ մէկ հատ Ղազարեան չի՛ լինի։

Մարդու ծնած երկիրը արքայութեան չափ քաղցր է,
Ո՛չ մի տեղ հայրենիքից բարձր ասպնձան չի՛ լինի,
Ո՛վ Ջ-ան, դու երգիրուդ թէ խառնես էլ մեղը ու շաքար,
Շիրինի ասածներու նման դուրական չի՛ լինի։

92.

Ա ն ջ ա տ ու մ ն

Ո՛շմարի՞ս է, որ ես հեռանում եմ
Իսպառ քեզանից, հայրենի երկիր,
Առանց բաժանման դառն արտասուաց,
Առանց համբուրից սիրտ բարեկամաց։

Ո՞հ, ծանր է այս վիշտ։ Ընպիսի՞ն միայն
Հեռու է գնում իւր հայրենիքից՝
Ով չունի դէպ նա սէր, միանգամայն
Ծուրկ է սիրոյ նոր և թարմ ոյժերից։

Իսկ ես, Տէր-Աստուած, կարող ես տեսնել
Որ բոլոր սիրտս նորան նուիրել՝
Առանց մի փոքր ինչ տարբանալու՝
Պատրաստ եմ բոլոր ոյժերով հոգու։

Մի՛ կարծէք, որ արդ՝ ես այս անջատմամբ՝
Օտար աշխարհում երջանիկ օրեր
Ձեռք բերել կամիմ քմահաճութեամբ.
Ո՛չ, եղբայրներ, ո՛չ. մինչ իմ օր յիսին՝
Հայրենեաց մէջն է իմ գժբաղդ հոգին։

Գ-ան

93.

Սոխակ

(Գեբուղա նուէր «Սոխակի» խմբագրին)

Մելամաղձոտ տխուր դէմքով
Հոլջում էի կանաչ դաշտում,
Նիհար ձեռքս դրած ճակատս՝
Ես վշտացած միաք'ի անում։

Ծաղում էի փուչ աշխարհի
Սրատաշուկ կարգ, կանոնից,
Եւ սրտիկս գառնացել էր
Ատոր մարդոց բիրտ խօսքերից։

Ամէն կողմից ատելութիւն
Դէպի բարին ու գեղեցիկ,
Ամէն կողմից մամռնային
Խնկարկում են մոլի մարդիկ...

Դրա համար սիրուն դաշտը
Փախել էի սարսափահար,
Որ բնութեան ազատ ծոցում
Գտնէի ես ինձ մխիթար...

Յանկարծ մի ձայն մեղմ, սրտառուչ
Ելուժ հնչեց իմ ականջին,
Յետ նայեմ, ահ, տեսնեմ Սոխակ՝
Կանգնած ծառի փոքրիկ ճիւղին։

Նա երգում էր իր երգն անոյշ
Ինչպէս քաղցր, այնպէս մեղմիկ,
Որ դայլայլիկ նորա ազգու
Հալժէր սրտիս քնքոյշ թելիկ...

Ես մոռացայ համայն աշխարհ
Իր անզգայ հնչողներով
Եւ վերացան իմ ցնորքներ
Խորհրդաւոր իր մաքերով...

Իսկ աչերս լցուեցին
Գոհարի պէս արտասուքով,
Վշտահարած սիրտս ճմաած
Անմահական խնդութիւնով։

Ես հասկացայ այն Սոխակի
Ելուժելի անոյշ լեզուն,
Ես իմացայ արտասուելով
Այն թռչնիկը ինչ էր ասում։

— Նա լալիս էր այս աշխարհի
Վկայ մարդոց գործոց վերայ,
Որ կենարար արդարութիւն
Նըրանցից է միշտ բացակայ...։

Նա պըկաճին, յուսահատին
Եւ կեանք, և յոյս էր նկրնչում,
Նա չարերին, անգութներին
Վհ Ըրարչից մահ էր խնդրում։

Նա սպրուկներին, ճնշածներին
Յորդորում էր դէպ աշխատանք.
Որովհետև աշխատութիւն
Ի ճորտութեան միակ փրկանք...

Երգի՛ր, սուլի՛ր, չքնաղ Սոխակ,
Քո աննման երգը սիրուն։
Հնչի՛ր ձայնդ բարձր բարձր,
Որով ցնծայ սիրտը հայուն։

Ըզգեցի՛ր, ո՛հ, կոտրած սրտիս.
Քո ոգեշունչ մեղմ երգերով...
Ահա կրկին դեպի մարդիկ
Ես դիմում եմ պինդ քայլերով...

Սչինգ

94.

Մարմնամարզական խաղ

(Մանկական)

Մեր գիւղացու հարսանիքում
Տղերքն ուրախ եռալ են խաղում։
Առնաբռնուկ ծլւաշարժում,
Պրնկակոխ քայլում, շարժվում,
Ապա քաղցր ձայնով երգում։
«Դալլեն ահա, եալլեն ա՜,
Մեր սիրտ, ձեր սիրտ բարին ա՜,
Հնոց էս խաղդ տարին ա՜,
Լուէ, հլուէ, բարին ա՜,
Հնոց էս խաղդ տարին ա՜...

Մին ձախ, միւն աջ,
Հէյ, հայ, հէյ, հայ,
Թռչունք առաջ,
Հէյ, հայ, հէյ, հայ...»

Ահա այգպէս թռչկոտում են,
Իրանք իրանց կոտրտում են.
Առաջ կամաց—ծանր ու օրօր,
Յետոյ միջակ, ապա յորդոր...

* * *

«Ասա, տեսնեմ, մեր գիւղում
Սովերն ի՞նչպէս են կթում»։
—Ահա այսպէս են կթում՝
Հորթին կապում մօր ծնկից,
Ծիծը խլում գլուակից.
Սովկիթն իրանց ձեռքն առնում,
Ապա կոզքին կրկըղում—

Փըշշ բըժժ...
Փըշշ բըժժ...

Ահա, այսպէս են կթում,
Փոքրիկ հորթին լացացնում...

* * *

«Ո՞նց են հարում խնոցին,
Հնոց էս օր էլ հարեցին»։
—Ահա այսպէս հարեցին՝
Թոկը ծառից կապեցին,
Հասա խնոցին կախեցին,
Երկու շաբթուայ հաւաքը
Նորա մէջը ածեցին,
Տաք ու հով ջուր խառնեցին.
Ապա ծայրից բռնելով,
Տարան, բերին, շարժեցին—

Թըլըխկ, ջըլըխկ,
Թըլըխկ, ջըլըխկ...

Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին։

Ե. Էլթափեան

95.

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
Միշտ ազատ, ուրախ համով կեանք վինի։

Տրա լա լա Լայլն։

Ամեն սար ու ձոր, ամեն տափ, մըրի
Մեր պալատներն են սաղ բոլոր տարի։

Տրա լա լա Լայլն։

Մեր առտանը մեզ լաւ է պահում,
Մեր ամեն հոգսը նա ինքն է քաշում։

Տրա լա լա Լայլն։

Թէ գործ պատահի ու լաւ կատարենք,
Միշտ մեր փայը մենք հալալ ստանում ենք։

Տրա լա լա Լայլն։

Ամեն երկրում ջոկ անուն ունենք,
Ամեն տեղ սիրող մենք հիշա ձարում ենք։

Տրա լա լա Լայլն։

Ուրեմն համենք լեզ թասով վինի,
Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չունի։

Տրա լա լա Լայլն։

96.

Լ. Լեոն Օ. բանաի մէջ

Մատաւ արևս երջանկութեան, գլխիս պատից մութ,
Գլխիս պատից մութ.
Պաղցրիկ օրերս, պայծառ ժամերս ի՞նչպէս անցան շուտ.
Ի՞նչպէս անցան շուտ.
Գիշեր ցերեկ կ՚հառաչեմ, չ՚կայ ինձ օգուտ,
Չ՚կայ ինձ օգուտ.
Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս որո՞ւն ես պատմեմ,
Որո՞ւն ես պատմեմ.
Աշխարհ ինձի աւերակ է, մինչ հայէ գուրկ եմ,
Մինչ զահէ գուրկ եմ.
Մինչ թագէ գուրկ եմ։

Ո՜հ, հայրենիք իմ անուշութիւնդ ցաւոց մէջ հեծէ,
Ցաւոց մէջ հեծէ.
Մի՛թէ սիրոս ապառաժ է, որ չը հառաչէ,
Որ չը հառաչէ,
Իւր հայրենիք, պալատ, գինուորդ ի՞նչպէս չ՚յիշէ,
Ի՞նչպէս չ՚յիշէ։

Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս, Փարիզ, քե՛զ պատմեմ,
Փարիզ, քե՛զ պատմեմ.
Դու մի՛ լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ։

Ամիսս է դար, օրըս՝ տարի, ո՜հ, ժամերս՝ ամիս,
Ո՜հ, ժամերս՝ ամիս.
Սէր Կիլիկիոյ անուէր գահոյս լալով կոչէ զիս.

Եղիպտացիք, ազգ խուժադուժ քանդեն հայրենիքս.
Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս, Լոնդոն, քեզ պատմեմ,
Դու մի՛ լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ:

Մէջ վանդակիս փակեալ Լեռն սեգ առիւծն հայոց,
Սեգ առիւծն հայոց.
Դացէք վանդակս, եւրոպացիք, տեսէք զոյժն հայոց,
Տեսէք զոյժն հայոց.
Վերջին ոյժն իմ, վերջին ձիրն իմ Ոսկինեան գահուն,
Լուսինեան գահուն:

Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս էլ ձեզ եմ պատմեմ
Էլ ձեզ եմ պատմեմ:
Փարիզ, Լոնդոն աւերակ են, ի զուր մորմոքեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ:

Վերջին կտակս ձեզ, ով հայեր, սիրով միացէք,
Հոգւով միացէք,
Ձեր միութեան և սիրոյ մէջ սատար խնդրեցէք,
Փրկիչ խնդրեցէք:

Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս ձեզ պատմեմ, հայեր,
Ձեզ պատմեմ, հայեր.
Եշխարհ ձեզի աւերակ է՝ թէ դուք չունիք սէր,
Թէ դուք չունիք սէր:

Ո՛հ, բայց արէք ձեր հին վէրքեր. դուք էք ձեզ խոցած,
Դուք էք ձեզ խոցած,
Հայն ի հայոց, ոչ յօտարաց, է միշտ յաղթուած,
Ի միշտ յաղթուած.
Գէն և նախանձ հայոց ազգի տուն տեղն է քանդած,
Տուն տեղն է քանդած:

Դուք ձեր վէրքեր, դուք ձեր խոցեր սիրով բուժեցէք,
Սիրով բուժեցէք.
Եշխարհ ձեզի աւերակ է, թէ զերծ չ'սիրէք,
Թէ Մասիս չ'սիրէք,
Թէ կրօն չ'սիրէք:

Ս. Գ...ն

97.

Մշոյ օր-օրը

Մութն էր առել ջրոս դին խաւար.
Չանի կերթար, կը թանձրանար,
Ձէր գագարիլ հողն ու մրրիկ,
Կը խըռովէր գաշտը սաստիկ.
Բարդ բարդ կուգար ձիւնը նորէն,
Սարէն, վերէն, ամեն կողմէն:
Մուշի գաշտեր այսպէս ձմեռ
Ձեին տեսել վաղուց ի վեր.
Ո՛չ մի անցորդ չէր երևէր,
Եւ ոչ կըռինչ մի կը լըսուէր:
Ո՛չ մի տանէ ճրագ կամ լոյս
Եւ չէր ծրխար մի ծրխնելոյզ.
Խոր լռութիւն. կէս գիշեր էր.
Խեղճ շինականն կուշտ կը ննջէր:

Խըռիւ կըռիւտ վառարանին
Մէջը լեցուած կը մրխայեն.
Ընտօ մրեմին և կիսավառ
Տրնակը լոյս կ'առնուր կուտար:
Օրօրոցին քով Հուշանիկ

Պ՛երկրյընկը մեղմիկ մեղմիկ,
Գլուխը կախած լալէն լալէն
Կը հառաչէր այսպէս սըրտէն.

«Իմ քունն հատաւ, անոյշ որդի,
Գէ՛թ դու ննջէ, դու հեշտալի.
Ա՜խ, մի՛ զարթիլր, սիրուն որդեակ,
Եւ մի՛ լըսեր ձայնս ողբերգակ։
Տարին անցաւ, հայրըդ գնաց,
Դեռ մի համբաւ, լուր չեմ առած.
Ըրօր, դուքան, կահ-կարասի
Մի պատառիկ հացի տուի։
Շատ օր քաղցած և ծարաւի
Դու մնացիր, ի՛մ սիրելի.
Ըզքեզ հազար ու բիւրաւոր
Յաւօք բերի մինչև այսօր։
Ոչ մի համբոյր անմեղ ձակիտ
Ո՛չ մի նաև քաղցըր ժըպիտ,
Առանց ցաւոց և արտասուաց՝
Դու շըրթունքէս չի՛ս ստացած.
Ամէն համբոյրըս հառաչանօք,
Ամէն ժըպիտ էր արտասուօք։
Բայց դու ննջէ՛, սիրուն որդեակ,
Ննջէ՛, սրտիս հատոր միակ.
Մի իմանար դու իմ ցաւերս,
Մի՛ թշուառ մօրդ հետ արտասուներս։

Պատառոտուն իմ և քոյին
Զոլձերս այսօր ըրաւ առին,
Ըյն անողորմ քուրդն անիրաւ
Եկաւ գոմէն եղը տարաւ,
Եւ շահասէր չար փոխատուն
Զուզէ գրթալ մեր արևուն։

Վաղիւ, երբ որ օրը բացուի,
Պիտի զարթիս դու սրբտալի.
Դատարկ համբարն, ըսկինքս ցամքած՝
Դու պիտի լաս ծարաւ, քաղցած։
Վհեղ կը մնայ, քեզ ապաստան
Թըշուառ քո մօր ծոցը միայն։
Մինչ ձիւնն ամպէն, քամին լուռնէն,
Ընդերթութիւնն մարդկանց սըրտէն,
Ես ձորէ ձոր և սարէ սար,
Թափառելով մըլեզնաբար,
Դրռնէ՛ի դուռ քեզի համար
Պիտի մուրամ հացի պատառ։

Իսկ քեզ, որդեակ իմ սրբտակաթ,
Վհեղ կը թողում այս միաւանգ.
Հօրըդ նըման տունդ ու աշխարհ
Դու չի՛ թողնես, քալես թափառ։
Վո աշխարհին ջուրք և վըտակք
Անդադար են, անապակ,
Հոդն արդաւանդ, ծառն պտղատու,
Պայծառ արևն միշտ լուսատու։
Վո հայրենեաց ցաւք, նեղութիւնք,
Տառապանքներ և դառնութիւնք
Վան ամենայն բաղդ, մեծութիւն
Եւ անհատատ երջանկութիւն
Օտար երկրի և աշխարհի՝
Վաղդր են, որդեակ, անցանելի։

Մ. Պալեան

.98

Կալի երգ

Մեր գիւղացին երբ տեսնում է
Լճած եղը անքալիս,
Երբ արևից նա այլվում է
Խուրձը հալած անելիս,
Կամանն վրա երբ կանգնում է
Ջուխտ եղներին քշելիս,
Ընդա, այսպէս նա երգում է
Իրան կալը կասկելիս.
«Ե՛ղը Ջան, կա՛լ արա, կալիդ մա՛ն արա,
Հասկերը փշրի՛, ցորե՛ն դուրս արա,
Հաշանը տրորի՛, լաւ դարմա՛ն արա։
Ես ու դու մին ենք,—իրար եղբայր ենք,
Մինչև երեկոյ իրար հետ տանջուենք,
Ես երեկոյեան կալը կը ննջե՛մ,
Դէպի կանաչ խոտ քեզ բաց կը թողնե՛մ.
Լուսնակ գիշերին թեզը կը քաշե՛մ,
Ցորեն-տարմանը իրարից ջոկե՛մ.
Տարմանը մղանով մարաքը կ՚ածե՛մ,
Ցորենը ջուալով ամբարը լցնե՛մ։
Երբ որ ձմեռը կ՚գայ, կը մրսենք,
Դուք տարման կ՚ուտէք, մենք ցորենով կապրենք.
Ե՛ղը Ջան, կա՛լ արա,
Կալիդ մա՛ն արա...։

Ե՛ղը Ջան, եղբայր, դու իմ աչ կուռն ես,
Իմ թև ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
Քեզ որ չունենամ, արտ չե՛մ ունենալ,

Կալ էլ չեմ կալսիլ, ցորեն ստանալ։
Բայց, աֆս...ցորենը իմ տուն չէ՛ մտնում,
Հորևս-ամբարս ցորենով չե՛ն լցվում.
Եվ...աչքը դուրս գայ մեր պարտքատէրի,
Մէկ փութի պարտքի տեղ՝ վեց փութի կը տանի.
Խեղճ երեխանցս ձմեռուայ կիսին
Քաղցած կը թողնի, ինձ գերի կ՚անի...։

Կա՛լ արա, մատաղ,
Գառն է քեզ մատաղ...։

Ե՛ղը Ջան, քեզ հետ տանջվում եմ, մաշվում,
Գաշտում-արտում վարուցանք անում.
Բայց այդ ցանքը արմատից կերած,
Գևռ կանաչ վախտը հնձած եմ, բաժնած։
Ցորնի պարտքը չէ՛ իմ այս ասածը,
Գարդ ու կրակ է իմ վզին դրածը։
Փողի պարտք ունեմ—ցորնից եմ տալիս,
Հարկ ու բէգհառ—ցորնից դուրս տալիս,
Տան կարիքները ցորնով եմ հոգում,
Տէր-տէրի հարկը ցորեն եմ բաշխում,
Ընշղեն, որբի-ցորնից մաս հանում.
Խօսքով. ցորենը մեր բոլոր յոյսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.

Մա՛ն տուր, իմ եղը,
Ընկրի քու պողը...։

Ե՛ղը Ջան, տեսա՞ր, թէ ինչպէս ծանր է
Մեր օրն ու կեանքը և որքան դառն է...
Գու հէնց կարծեցիր, որ աշխարհքումը
Միմիայն դու ես գերի բանտումը...
Բայց լա՛ւ իմացիր, որ ինձ պէս մարդիկ
Աստ վիճակուած են, քան թէ կենդանիք։

Ըսա՛, ով կառնի քեզնից տարմանը,
Ո՞վ կը խլի քո ձմրան պաշարը...
Բայց, տե՛ս, մեզանից շատ մոլի մարդիկ
Խոպառ խլում են մեր չոր ուտելիք...

Մէջ արա, եղը ջո՛ն,
Յանյս քեզ ղուլբա՛ն։

Ե. Չրաքեան

99.

Հայ ուսուցիչ

Մաշում է հոգին, պատռում է թոքեր,
Կրթում է մատաղ հայ մանկտւոյ մտքեր,
Մոռցած աշխարհի փառք ու պերճութիւն՝
Իւր ձեռքն է առել մանկտւոյ կրթութիւն,
Ընդամէն պիտանի պատրաստել ազգին.

Ո՛վ մանկտւոյ կրթիչ
Դու հայ ուսուցիչ

Սատկիր փոխարէն՝ ղրկանք ահագին։
Սատմքսը դատարկ, կօշիկը պատռած,
Գոյնը երեսին գալկացած—մեռած,
Շնչատպառ վազում՝ դիմում է դպրոց՝
Խելք, հոգի, միտք տալ մանուկ երկոց.
Նոցա նկրշնչել աղնիւն ու բարին՝

Նահատակ կրթիչ
Խե՛ղճ հայ ուսուցիչ

Որ մի՞թէ ծաղր լինիս աշխարհին...
Վհատով պատրաստած սերունդը կայտառ,
Թաթաղուն մտաք, զգացմամբ բոցավառ,
Դառնում է քեզնից անարգանք դէմքին,
Թըքում երեսիդ, ծաղրում քո խելքին,
Թէ դու հնացել ես, դու մարդ ես փտած,

Ոտնակոխ էակ,
Հայ դաստիարակ—

Դու մարդ պատրաստի՛ր—եղի՛ր անարգած։
Մուրթը գետնափոր, խոնաւ խրճիթում
Դաւառում նստած՝ սերունդ է կրթում։
Հայի ճամբայ է մանկանց պատրաստում,
Մրսաց խաւարի շղթայք կոտրատում։
Բայց երբ յանդգնի արեան գին ուզել՝

Խեղճ հայ ուսուցչին,
Մանկանց կրթիչին

Կը սկսեն ուժգին նեղել ու զգել։
Էյնտեղ բիւր մանկունք կրթում զպրոցում,
Իսկ իւր զաւակներ քաղցից ողբ կոծում,
Ոսոնք սով-մահից գերեզման տանում։
Բայց արդիօք մարդիկ այդ միտք են անում...
Մի օգնող չը կայ մշակին քրտնաջան,

Կրթութեան դու ղեկ,
Հայ ուսուցիչ հեգ,

Էյս է զաւակդ տխրագին վախճան...
Տանը սովատանջ, ղրսուճն անպատուած,
Նեկան այսպէս խեղճ, թոքերն էլ մաշուած...
Իսկ իւր ապագան...կանգնած իւր ոտքին,
Էջքերը մթնում—փչում է հոգին...
Տանում են խորում այս անկեալ գիակին—

Հայ դաստիարակին...

Բայց ո՞վ է նայողն նորա ընտանիքին։
Հասարակութիւն.—ո՛չ, Հայն ամենիս.
Տեսէ՛ք թէ սուտ է— թըքէք երեսիս...։

Կ. Տէր-Ասպո–աֆապչեանց

100.

Հոգեւոր մուխամմազ

Մնացի մեծ նեղութեան մէջ, ով բարերար, Տէրըմ
Մարմինով, մտքով, հոգւով հիւանդ ու տկար Տէրըմ,
Ա՛զաչեմ ու կը հայցեմ, ինձ ապա մէկ ձար, Տէրըմ,
Ինձանից լոյսն հեռացաւ, ո՛հ, Տէր, ես խաւար Տէրըմ.
Խաւարի և մեղերի տակը յոյժ երկար Տէրըմ։

Փրկի՛չ իմ, այցելութեան՝ գնացս մաքուր ե՛ղ ընդհէ,
Հոգիդ հոգւոյս վերայ մի՛ խնայիր, հե՛ղ ընդհէ,
Լինի միշտ խնդիրս իմ հոգիդից, համեղ ընդհէ,
Վերքերուս սպեղանի և ցաւերուս դե՛ղ ընդհէ,
Ու ներկ մեղքերս իմ, ով անչիշաչար, Տէրըմ։

Կոչ ձայնդ, ով Յարուցիչ լսելու՝ բաց ունկերս իմ,
Գալես եմ դէպի քեզի, ընդունէ այս խոնկերս իմ,
Ջօրացո՛ւր, Տէր իմ Յիսուս, ոտքերս ու ծունկներս իմ,
Պաղաքե՛ր արա նաև քոյսպարզի տունկերս իմ,
Զի առանց քեզ չ'գտայ սրբիլու հնար, Տէրըմ։

Եհա՛, Տէր, այս հունիցըս ձեռքդ ինձի՛ տուր, անցանիմ,
Օգնէ՛ ինձ 'ի մէջ ծովոյս, զի Պետրոսի պէս սուզանիմ,
Լա՛ւ եղաւ, որ վշտացայ, զի ձանապարհդ ուսանիմ,
Աչքերդ խոնարհելով՝ գանգատիմ ու խոստովանիմ,
Յանցանքներս գործած օրէս յետ՝ անվհատ Տէրըմ։

Ո՛վ հօտիդ քաջալերող Տէր, ինձ էլ քաջալերացո՛ւր,
Գաղաչեմ, զես պաշարող ամպերը մեկէն վերացո՛ւր,
Ընդունդ սաղմոսելու՝ պաղած սիրտս աղբերացո՛ւր,
Մաղթը քեզ պաշտելու համար սիրով վառերացո՛ւր,
Թէպէտ ես ամեն գործով քեզի անչարմար Տէրըմ։

101.

Երգ ուսանողաց

Մենք սիրում ենք ուսումն,
Հաստատ ենք մեր յոյսումն,
Որ ուսումով օրէ ցօր
Գիշեներնք խելօք շնորհքով նոր։

Ուսումն է շատ հարկաւոր,
Ըյն կ'անէ մեզ յարգաւոր։

Մենք յոյս ունենք ուսմունքով
Մեզա փութաջան մեր ջանքով
Գալքով բարի և համեստ
Գըտնել մարդկանց մէջ գովեստ։

Ուսումով մարդ՝ է իսկ մարդ,
Առանց անոր՝ անհոտ վարդ։

Մենք պատրաստ ենք միշտ և միշտ
Պահել հարանց հին դիրք ճիշտ.—
Սիրել մեր ազգ Հայկազուն,
Սիրել սուրբ կրօն, մեր լեզուն։

Ըյս է մեր պարտք առաջին,
Որով սիրտ, միտք մեր առնին։

Մենք գիտենք և մեր միտս պարտք,
Որ բարեսուն բոլոր մարդք
Պիտեն բերել մարդկութեան
Գործքով օգուտ՝ բերք արդեան:

Մովսէս Խորենացի

102.

Յիմարի լռելն է իմաստութիւն,
Իմաստնոյն ինն-խօսելը

Մարդ կայ, որ միշտ խօսում է սուտ,
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ.
Մարդ կայ, խօսի՝ ունի օգուտ,
Չը խօսելուց՝ խօսելն է լաւ:

Մարդ կայ, խօսելու ժամանակ
Կարծես սրտիդ խիթն գնդակ,
Ընդհէս մարդը, կուզես շիտակ՝
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ:

Մարդ կայ, խելօք-սրամիտ է,
Լեզուով, գործով ճշմարիտ է,
Խօսքը անդին մարգարիտ է,
Չը խօսելուց՝ խօսելն է լաւ:

Մարդ կայ, գաղափարը խառն է,
Մտքերը կոպիտ, ինքը սառն է,
Լեզուն դիպչողը խօսքը գառն է,
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ:

Մարդ կայ, տեղովը հոգի է,
Լաւ քարոզիչ՝ սուրբ առաքել է,
Խօսքը գին ունի յարդի է,
Չը խօսելուց՝ խօսելն է լաւ:

Մարդ կայ, նենգ է, օձափոր է,
Սիրտը խարդախ, կարի հոր է,
Խօսաւ՝ կախ կը յոլդրէ,
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ:

Մարդ կայ, ծագումով բարի,
Լաւանում է տարէց տարի,
Խրատող է շատ հազարի,
Չը խօսելուց՝ խօսելն է լաւ:

Մարդ կայ, կարծես խելքից թևթև,
Վեր կը վարէ խօսքը խև-խև,
Լաւ խօսելու չի գիտեր ձև,
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ:

Մարդ կայ, որ խօսքը կրթիչ է,
Ինքը խոհեմ ուսուցիչ է,
Դէպի բարին համոզիչ է,
Չը խօսելուց՝ խօսելն է լաւ:

Ջէ՛ան, խելին մի՛ տեղեք տալ
Որանից քեզ օգուտ չի գալ,
Պիտի դուրս տայ սուտ ու սխալ,
Խօսելուց՝ չը խօսելն է լաւ:

103.

Կաթիլ մի արտասուք

Ի փոխուին յաստեացս Տէր-Վէորգ Վ. ազգասէր և ուսումնասէր Կաթողիկոսի ամենայն Հայոց
(6 դեկտ. 1882 թ.)

Յոյժ սգաւոր հնչէ ահա զնուագ
Ընկմիածին, ծածկեալ ի քօղ սեւորակ.—
«Ընկերացայ, այրի ճնամ, մինչև ցի՞րը...
Հայաստանեայքս չ'սգացին, ասա՛ ցի՞րը...
Մասիս, Գրգուռ, և Երագած, և Անի
Տխրատեսիլ արտասուեսցեն, ո՜հ, քանի՞.
Եւ տխրամածն այս վիհ աթոռ Գրիգորի՝
Սևաքօղեալ, քանի՞ ճնայ ո՛րբ, այրի...
Սեղանք խնկոց և վարագոյր տաճարիս,
Սաղմոսարանք և շարականք սուրբ բեմիս,
Բազպանք, շուրջառք, խաչք և սկիհք ընդհայց,
Եւ վակասին աչք ի տրոյ՝ կան ի լաց:
Մովսիսական ցուպդ և խոյրն սգաթոյր՝
Ըռ անարատ պոչ՝ ցի՞րը ճնան միայնոյր.
Ո՛վ Տէր-Գէորգ, Հովիւդ քաջ և արի,
Ընդահացա՛ր...անմահեսցիս յաշխարհի:
Ջի՛նչ նոր Մովսէս երևեալ մեզ արդարև,
Նոր ինն Յեսու, նոր Մեսրովբ, Սահակ Պարթև.
Սա՛մ նոր Ներսէս, և կամ Յովսէփ ցանկալի,
Բարոյական կերակրիչ քոյոց հօտի:
Ի յարձանի զրոշմեցաւ Վո անուն,
Ո՛չ յոսկեղէն, այլ՝ ի մեր սիրտ զգայուն.

Հառք Վոյ վայրաց այլ ոչ երբէք ջնջեսցին,
Վոյ շնորհաց արգասիք՝ միշտ փայլեսցին:
Գիտեմ՝ ցաւիս, զի Ռեմարանդ փոյթ թողեր.
Ոչայն՝ որ յանուն Վո «Գէորգեան» կոչեցեր,
Ոչայն՝ որ քրտամբք Վո և աղգիդ կառուցեր,
Ընդ հովանեաւ Մայր Եթոռոյդ անվհտեր...
Մի՛ մտածեր, խաղաղ ննջեա՝ ի շիրմիդ,
Նուիրական է գա՝ աւանդ սուրբ ուխտիդ.
Եւ թէ ցոլչափ կացցէ, մնասցէ հայոց տուն,
Գարուց ի գարս՝ միշտ պանծասցի Վո անուն.
Նորոգեսցի որպէս փիւնիկ՝ ամէն օր,
Յերգս արկեալ զերջանիկ Հայրդ օր՝ ի յօր.
Գու՝ ոչ միայն զայս Ռեմարան և զԵթոռ
Հաներ՝ ի լոյս, այլ զպլպլոցս բոլոր՝
Ի լոյս մտաց, ի գիտութիւն Գու ածեր,
Վոյր և եղբայր՝ ի խաւարէ փրկեցեր.
Ոտպարանս և «զԵրարատ» ամառգիր
Ծաղկեցուցեր իմաստութեամբ երկնաձիր:
Ռրագունք վառին, սիրտ ական լուսարփիք,
Շուրջ դշիրմաւդ՝ նոքա հայոց են մանկտիք.
Նոցա հառաչք չերթան՝ ի բաց, ի շիրմէդ,
Նոցա արցունք՝ ի սուրբ ոսկերս Վո յաւէտ...
Եւ ցոլչափ քիրան հեղեր՝ ի սէր քո ազգի՝
Մարգարտազարդ թագ ձեւացաւ պանծալի.
Եւ ի թագին Վոյմ հովանի՝ փթթեսցին,
Վարդն և շուշան, արմաւենին, ձիթենին:
Լո՛ր անվրդով, ծաղկունք Վո՝ ոչ թարշամին,
Օրհնեալ է հողն՝ յոր սիրտն արկեր Գու՝ անպին.
Ոչ չև աչք, ձեռն աւարառու չե՛ք և ատ...
Ի միութիւն սիրոյ՝ և մեք կամք զգաստ...
Գայլ և վագրեք, արջք և առիւծք, օձ և կարիճք
Մի՛ իշխեսցեն հպիլ ի Սա, և ուտիճք:

Ամբոյր շիւմիդ, հաղ֊ր համբոյր, ով Այր մեր,
Այցեմք, ընկալ զայս արտասուս վշտաբեր.
Ողբամք զարև կենաց վիհիդ՝ շատ ողբամք,
Օրհնալք ի Քէն, յորչափ ե՛ւ Քէն անբաժ կամք։
Ի՛ւծեալ մնաքեն մանկունք Նորոյ Աիօնի,—
Յե՛րբ լուիցեն այլ ևս ՚ի ձայն զանգակի,
Թէ «ահա գայ փեսան, ելէ՛ք յառնի՛ք...»
Այրի ճնամ լամ և սգամ թախծալի։

Եղիշէ Վրդ֊պետ Մեծապո֊Հեանց

104.

Հանդիսատ

Վ֊հափառ Այրապետի ամենայն Այոց և Ծայրագոյն Պատրիարքի Ընաքեղական Ընթոռոյ Ս. Էջմիածնի

Տ. Տ. Գէորգայ Ձորըորդի

(8 դեկտ. 1882 թ.)

Ահա գուժից մեզ Ելարատեան սաղոտից բօթալի ձայն... «Այլ ևս կենդանի չէ Գէորգ Գ...» Նորին Օծութիւնը հանգեաւ սրբազան նախահայոց գերեզը և Ս. Լուսաւորչայ տաճարվից գարեայ Աաթողիկոսական Ընթոռը ճնաց թափուր։ Տխրութիւն պատեց Ս. Էջմիածնի և Ս. Գրիգորի հօտը գարձեալ ճնաց անհովիւ։ Ձանգեաւ ազգիս Գահանայապետը և Ձայրապետական թագը և գաւազանը ճաճկուելան սև քօղով։ Նորից կամեցաւ Տէրը փորձել իւր հաւատացեալ ժողովուրդը,

ինթարկելով մեզ այսօրուայ ցաւալի կորուստին։ Նահանջութիւնը գրկեց Այոց ազգին իւր արթուն Առաջնորդից, հրաւիրելով հօտը ՚ի զգաստութիւն, ՚ի խոհուն ինքնաճանաչութիւն, ՚ի լուրջ մտածողութիւն...։

Եւ վաղուց էր արդեօք, որ Այրապետական սեռը ոգբաց իւր սիրած Ներսէս Ե.-ի «Եկեղեցւոյ պաշտպանի» ախուր վախճանը...։ Վաղուց էր միթէ, որ հանգեաւ ՚ի Տէր ազգիս բարի Գահանայապետ Աաթէոսը...։ Միթէ շա՛տ ժամանակ անցաւ այն օրից, երբ Գէորգ Գ.-ի ընտրութեամբ՝ «Ուրախ լեր եկեղեցի» աւետիքով հրճուեցաւ Ս. Էջմիածինը և «ովսաննայի» աղաղակներով Վաստիոլի եղերքից մինչ Աասեաց լանջերը ցնծութեամբ դիմաւորեց իւր նորընտիր վեհափառին հայ ազգը և ազգապետը, իշխանը և շինականը...։ Վերջապէս միթէ շա՛տ տարիք անցան, որ իբրև մշակ ժիր և արժանի, նորին օծութիւնը ջանք և ճիգ թափեց Տիրոջ իջման տեղում մի լուսափառ փարոս կառուցանելու՝ մշուշի մէջ ընկղմած հօտին դէպի փրկարար լոյսը, դէպի բարոյական վերակենդանութիւնը առաջնորդելու համար։

Եւ մինչ հազիւ հոլովուից Գէորգ IV-ի գահակալութեան տասն և հինգամեակը, ահա այսօր եկեղեցւոյ սրբոյ զանգակահարութիւնը հրաւիրում է մեզ ճնկաչք աղօթիլ սուրբ տաճարի առաջ մեր բազմաշխատ Հովուապետի հոգւոյ հանգստեան համար...։ Այո՛, այլ ևս չըկայ Նա, որոյ անկած այգին մօտ է հասուն պտուղներ տալուն. այլ ևս չը կայ Նա, որի վերայ էր ամենուրիք սփռած ազգիս յոյսը և ապաւէնը...։ Նահանջութեան անօրէնութեամբ կատարուեցաւ բնութեան անժխտելի օրէնքը և ո՛չ վեհ կոչումը ոչ սրբազնագոյն աստիճանը, ո՛չ փառքն և մեծութիւնը, ո՛չ գիտակիրտ սէրը դէպի իւր հօտը և ո՛չ վերջապէս, եկեղեցւոյ անընդհատ խնդրուածքը՝ կարողացան փոխել Նորա անհատա-

նելի կամքը, որի ձեռքին է վերից և վերհասեալ սիրտը և կեանքը:

Այսպիսի խորհրդաւոր բոպէին ուզենք կարող է մեր թարել որբացած ազգիս, բացի Ջերմ աղօթքը Փրկչի առաջ, ուրտեղից մեր նախնիք սովոր էին վառաքել իրանց հառաչանքները ասլուԹեան ժամանակ և օրհնուԹիւնը՝ երկնքից՝ ընդհուպ և ողջմուԹիւն ստացած օրերում:

«Ընչաքաղց»

105.

Ի Տէր հանդուցեալ Գէորգ Գ. Կաթողիկոսի համառօտ կենսագրական ցուցակը

Տէր-Գէորգ Գ. ծնաւ Ռուսաստում 1813 թուին: 22 տարեկան հասակում՝ այն է 1835 թուին ձեռնադրուում է վարդապետ, Գրիգոր ծննդեան անունը Գէորգ փոխարինելով: 1847 թուին հրաւիրուում է Ս. Էջմիածին և Սերսէս Ե. երջանկայիշատակ կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուելով մեկնում է ի Ռուսաստան. ուր քանի և երկու տարի առաջնորդական ծանր պաշտօնը վարելով շատ բարեկարգուԹիւններ է անում, որոց մէջ նշանաւորներից մինն էս այն է, որ տեսնելով Ռուսաստի հայերի ողբալի վիճակն իրանց մայրենի լեզուի դիտուԹեան մէջ, հիմնում է ուսումնարան և ջանք է առնում հայերէն լեզուն տարածել իւր հօտի մէջ. իւր հովանաւորուց յետոյ ուսումնարանն անխնամ մնալով փակուում է: Ռուսաստից գալով Ս. Պօլիս՝ յանձն է առնում Պատրիարքական պաշտօնը, որը վարում է երկար տարի.

որից յետոյ կրկին վերադառնում է ի Ռուսաստան, որտեղից 1866 թուին ընտրուելով Ընդհանրական Աթոռին, գնում է Ս. Էջմիածին, ուր մի տարուց յետոյ, այն է 1867-ին օծվում է Եպիսկոպոսապետ և Աթոռակոս ամենայն Հայոց:

Տէր-Գէորգ Գ-ը իւր Աթոռակոսական սուրբ և վսեմ պաշտօնի հետ սերտ կապում է և ուսումնասիրական նուիրական խնդիրը. Նորա կաթողիկոսուԹեան նշանաբանն է լինում՝ եկեղեցի և ուսումնարան: Այդ երկու նուիրականուԹիւնները սերտ կապուած է տեսնում միմեանց հետ հարազատ գանուելով իւր նախորդները. ուստի և առաջին գործն է լինում կազմել Ս. Էջմիածնում մի ուսումնական ժողով, որի գործը պիտի լինէր ուսումնարաններ բանալ, ծրագիրներ մշակել, եղած ուսումնարանները բարեկարգել, հսկել նոցա վերայ և այլն: Այդ ուսումնական ժողովը պատգամաւոր է կարգում երկու ականաւոր եկեղեցականների, այն է՝ Խորէն եպիսկոպոս Նար-Պէյին և ի Տէր հանդուցեալ Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանին. բայց ափսոս, որ վերհասեալ հօր այդ բարձր ձգտումը նպատակին չէ հասնում. կարճատև է լինում այդ ժողովի գոյուԹիւնը, որովհետև, հակառակ վերհասեալ յանկուԹեան, ուսումնական ժողովի պատգամաւորները թողնում են իրանց յանձնառած պաշտօնը և մեկնում են, իսկ գործը մնում է անկատար: Սակայն չի վհատում իւր գործունէուԹեան մէջ հաստատակամ հայրապետը: ԱթոռակոսուԹեան երրորդ տարին, այն է 1868-ին, կարգադրում է Էջմիածնական տպարանը, ձեռնացնում է ընտիր տառերով, մեքենաներով և զգալով կարօտուԹիւն մի կրօնական թերթի հրատարակուԹեան, ամենայն ձիգն թափում է և կարգադրում է հրատարակել «Ընտրատ» ամսաթերթը: Այդ ամսաթերթը պարտաւորիչ է համարում տառնալ բոլոր հոգևորական դա-

սին, որպէս զի միջոց ունենան դորանով ծանօթանալու կրօնական դիտելեաց, եկեղեցական կանոններին և կարգադրութեանց: Ընդհակառակն սորանից յետոյ ձեռն է արկանում կազմել նախագծանը, այն է՝ ընդարձակումէ Ս. Էջմիածնայ աւագ պահարանն երեք բաժանմունքներով, որոց մէջ բարեկարգ կերպով զետեղումէ եկեղեցական սրբազան անօթները, զգեստներն և թանգագին իրերը: Կարգադրումէ և ձոխացնում Էջմիածնի վանքական մատենադարանը և ցուցակագրել է տալի մատենադարանի բոլոր ձեռագիր և տպուած մատեանները: Կարգադրում է, որ եկեղեցականների (վարդապետների և եպիսկոպոսների) մահուանից յետոյ, նոցա կայքը, եթէ չէն կտակուած յօգուտ ուսումնարանաց կամ այլ բարեգործական նպատակի, անպայման մտնէն վանքական արկղը, որով միջոց կունենայ վանքը հոգալ իւր ուսումնարանների վերայ: 1871 թուին սկսում է հիմնարկել այն սքանչելի Ն՛եմարանը, որ, յիրաւի, միակ պարծանքն է բոլոր հայերի համար. 1872 թուին շինութիւնն աւարտվում է և կատարվում է Ն՛եմարանի օրհնութեան հանդէսը[1]). Ն՛եմարանը, իւր հիմնադրի անուամբ, կոչվում է «Ղէորգեան»: Հրաւիրում է ապա բանիմաց և ուսումնական վերադիտողներ, տեսուչներ և ուսուչիչներ և հրաւիրում է ազգին հայրապետական օրհնութեան կանդակներով՝ նիւթական օժանդակութեամբ օգնել իրան՝ իւր սկսած մեծ գործի մէջ, ապահովելով Ն՛եմարանի գոյութիւնը: Ազգը իւր անխոնջ հայրապետի սիրալիր հրաւէրին ամենայն համակրութեամբ հպատակելով՝ կարկառում է իւր օգնութեան ձեռքը. և ահա նոյն Ղէորգեան Ն՛եմարանն և

[1]) Ա՛յդ հանդիսի մէջ երգուած երգերը ցանկացողը կարող է գտնել «Մոխակ Հայաստանի» առաջին հատորի երկրորդ տպագրութեան մէջ: Գ. Վ. Գրիգորեանց

և այսօր հսկայապէս կանգուն կայ յօգուտ և ի լուսաւորութիւն մանաւանդ կրօնական դասուն և ի պարծանս ազգիս:

Հանգուցեալ հայրապետը ի ցաւ սրտի տեսնելով հայ ծխական ուսումնարանաց ողորմելի և խղճալի դրութիւնը, յղացաւ իւր մէջ թեմական վերատեսուչներ կարգելու կարևոր միտքը, ուստի, առանց ժամկոտոյց լինելու, 1873 թուին յունուարի 2-ն հոկտեմբերի, համարաւ 463 հրամանագրից Սիւնեաց սրբոյ Էջմիածնի, այդ առթիւ փութապէս պահանջելով զորա իրագործումը: Դայց առաջքան զայս, նա հիմնուելով մեր Ս. եկեղեցւոյ աւանդութեան վերայ, Ուսուց Օգոստափառ Պայսեր հրամանն է ինդրում՝ թոյլ տալ իւր հովանաւորութեան և հսկողութեան ներքոյ ունենալ հայ եկեղեցւոյ կից ուսումնարաններ ի լուսաւորութիւն հայ մանկտւոյն: Նորին Մեծութիւն թագաւոր Պայսրը Դարձրագոյն հրամանաւ բարեհաճում է սրբագործել հայ եկեղեցւոյ այդ իրաւունքը և այնուհետև թեմական վերատեսչութեան հաստատութեամբ սկսում են բարեկարգուիլ հայ ուսումնարանները, դուրս գալով իրանց նախկին խղճալի դրութիւնից: Այս և այսպիսի բազմատեսակ կարգադրութեամբ հանգուցեալ հայրապետը եկեղեցին և ուսումնարանը անխզելի կապով միաւորից իրար հետ և նոցա բաժանման մէջ կորստաբեր հետևանք նախատեսաւ: Ամենայն տեղ օրհնութեան կոնդակներով բանալ տուեց ուսումնարանները եկեղեցւոյ գաւիթներում և ամենայն քաջութեամբ պաշտպանեց ուսումնարական խնդիրը մինչև իւր կենաց վերջին օրհասը, որով և տուաւ իրաւունք պսակելու իւր անմահ անունը «Պաղպաղան հայ ո-ստո-ճառքանաց» փառաւոր և արժանի տիտղոսը:

Տեսնելով Տէր-Ղէորգ Դ-ը եկեղեցական աստուածպաշտութեան խանգարումները շարականաց և հոգևոր կր-

դերի եղանակները մէջ, հրաւիրեց Ն. Պօլսից Նիկողայոս Թաշճեան ականաւոր ձայնագիրն և ձայնագրո-ընկեան ատենապետը Ս. Էջմիածնի մէջ. պատրաստեց ընտիր աշակերտներ, որոնք յետոյ, ցրուելով զանազան կողմերը, սկսան ուսուցչական պաշտօններ վարել ուսումնարաններում՝ ձայնագրութեան արհեստի մէջ: Տպել տուեց և տարածեց ձայնագրեալ շարականներ և այսպիսով ցանկացաւ Վեհափառ Հայրապետը, որ առ միշտ մի որոշեալ կարգի և կանոնի տակ լինի մեր եկեղեցական երգեցողութիւնը, քաջ իմանալով, որ ներդաշնակ երգեցողութիւնն, Աստուածպաշտութեան ժամանակ, ժողովրդի մէջ ջերմեռանդութիւն արծարծելու և բարեպաշտական զգացմունքները շարժելու միակ միջոցն է:

Վերջապէս, Տէր-Գէորգ Գ-ն էր, որ 1882 թուին իւր օրհնութեան կոնդակով հրամայեց Կովկասեան հայ ուսումնարանաց թեմական տեսչին, կազմել Տփղիսում ամենայն թեմերի հայ ուսուցիչներից և տեսուչներից մի ընդհանուր ուսուցչական ժողով, մշակելու մի որոշ ուղղութիւն և կանոնաւոր ծրագիր թէ ծխական և թէ միջնակարգ ուսումնարանների համար և ուր պէտք է լուծուէին և վճռուէին այնպիսի խնդիրներ, որոնք մինչև այդ օրը մնացին անացած շատ հայ ուսումնարանների համար: Ժողովը վեհափառի օրհնութեամբ կայացաւ. բայց—տարաբաղդաբար—նորան չը յաջողուեցաւ տեսնել նորա արդիւնքները:

Այսպէս, ահա, վեհափառ Տէր-Գէորգ Գ. հայ ազգի ընդհանրական հայրապետը, հայ ուսումնարանաց պաշտպանը փաստ և վկայ փաստի անձանձիր տքնութեամբ գործելով, ամենայն տոկունութեամբ, համբերութեամբ, հաստատուն կամքով և բնաւորութեամբ, սիրով և յօժարութեամբ տանելով իւր ուսերի վերայ հայ ազգի դրած հայրապետական վսեմ կոչման ծանր լուծը, շատ երկար

մաքառելով զանազան արգելքների և խոչընդոտների դէմ, որոնք շատ դէպքում աւելի բարձր էին քան իւր ոյժերը, հզօր և անշարժուն կամքով, ազգի և եկեղեցւոյ գոյութեան և պայծառ բարեզարդութեան տենչով լցուած, հայ ուսումնարանների բարեկարգութեան և յառաջադիմութեան սուրբ փափագով ոգեւորուած, հայրապետական վարչութեան ղեկը վարելուց, ահա դեկտեմբերի 6-ին 1882 թ. մահուան անկողնի միջից տարածում է իւր հայրապետական բաղձիները հայ հօտի վերայ, սրտառուչդն օրհնում է վերջին նուազ իւր սիրելի որդիքը—հայ ազգը, կոակում է նոցա սէր և միաբանութիւն, եկեղեցի և ուսումնարան, սլանում է դէպի երջանիկ կեանքը՝ խառնուելու իւր դասակից սուրբ հայրապետներին:

«Վարդան»

106.

Յառաջ

(Նմանութիւն)

Յառաջ, սիրելիք, անվախ, անկասկած
Դէպի փառաւոր մի գործ քաջութեան.
Երդէն ես տեսայ երկընքում ծագած
Վառ արշալոյսը մեր սուրբ փրկութեան:

Երձակ, համարձակ միմեանց տանք ձեռքեր
Եւ յառաջ գիմենք բոլորս միասին.
Եւ թող գիտութեան ղըրօշակի տակ
Մեր դաշնակցութիւն զօրանայ կըրկին:

Մենք չենք կանգնելու մեզ համար կուռքեր
Ո՛չ երկրի վերայ և ո՛չ երկրնքում.
Եւ աշխարհային բոլոր փառքերին
Ընդառաջ տալու չենք երկրպագութիւն։

Մենք կը քարոզենք սիրոյ ուսումը
Մեծատուն մարդկանց, չքաւորներին.
Եւ դորա համար հալածանք կը կրենք,
Նեղելով ցնորած թշնամիներին։

Երանի՜ նորան, որ միշտ մըցման մէջ
Տարաժամ հոգսերում է կեանքը մաշել,
Եւ ծոյլը խորամանկ ծառայի նըման
Իրան տաղանդը գետին չէ թաղել։

Թո՛ղ մեզ ուղեցոյց աստղի փոխարէն
Սուրբ ճշմարտութի՛ւն լուսափայլ վառուի.
Եւ հաւատացէք, որ աղնիւ ձայնը
Ձյս աշխարհի մէջ 'ի զուր չի՛ անցնի։

Ո՛ւնին դրէք, ե՛ղբայրք, ձեր եղբօր ձայնին.
Քանի որ թարմ ոյժ է մեր մէջ եռում—
Մենք յառաջ դիմենք, ինչ էլ որ բաղդը
Պատրաստած լինէր մեզ ապագայում։

Վ. Խալաֆեանց

107.

Ըստուած չ'անէ

(Թարգմանօրէն)

Նոր դարի հետ մի վէճ չունիմ,
Ինձ համար լաւ թէ վատ կ'ապրիմ.
Ինչպէս մարդ նոր գաղափարի,
Կ'համարուիմ մօտ ամէնի.
Գործերս ունին լաւ նպատակ,
Ես նորութեան չեմ հակառակ.
Բայց հեռանամ հնո–ընէնէ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Շատ դժուար է, որ մարդիկ միշտ
Օրերն անցնեն խաղաղ, հանգիստ.
Ես շատ երկար աշխատել եմ,
Թոյլ կողմերուս վերջն առել չեմ...
Աշխատքն է վատ, երբ իմացայ՝
Թողնի, որքան կարողացայ.
Բայց թողնելս էլ պէտք եւէ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Ես ուրախ եմ միշտ ասելու.
Մէկ դի ընենք մեր չար լեզու,
Ծրպարտութիւն, անարգ նախանձ
Ձայն բերին որքան վշտաց...
Քանի՛ կրկնեմ, եղբայրք, քանի՛,—
Թէ օգնե՛նք մենք խեղճ ընկերի.
Բայց մի ընկեր երբ ինձ դիմէ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Ես պատրաստ եմ քարոզելու
Օգուտը մեծ պըտակուելու.
Յարգել սիրուն և հայրենիք՝
Ըզգասիրի գործն է բընիկ.
Թողնե՛նք ջահիլ մեր վարմունքները
Եւ ամէն մի պակաս կողմեր.
Բայց ես թողնեմ, թէ այս լա՜ էչ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Խըրատ երբէք չեմ խնայել
Երբ տեղն եկաւ՝ միշտ եմ օգնել.
Ձեմ սիրել ես ո՛չ չարութիւն,
Ո՛չ բամբասանք, ո՛չ վատութիւն...
Ես միշտ կ'ասեմ թէ մի՛ք խմել,
Ընդ կարող է ձեզ վնասել.
Բայց այս խըրատ և՛ ինձ ազդէ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Եւ այսպէս ես մի վէճ չ'ունիմ
Նոր դարի հետ, խաղաղ կ'ապրիմ.
Ինչպէս մարդ նոր գաղափարի
Կը համարուիմ մօտ ամենի.
Գործերս ունին լաւ նպատակ,
Ես եմ արդար, խըղճով խստակ.
Բայց թէ նըման լինիմ գոնէ՝
Ըստուած չ'անէ, Ըստուած չ'անէ։

Մկրտիչ Ալէքսանեանց

108.

Մաղթանք

Երգուած 'ի գալստեան Վ. Հ. Հափառ Կաթողիկոսի[1])

Ալ ի բարձանց ակն արկանես 'ի մեր աղերս, ով Տէր,
Եւ համայնից ընդհաբաշխես զառատ քո նուէր.
Օրհնեմք զքեզ Տէր, որ զձայն մեր հաճեցար լսել,
Եւ ընդհեցեր մեզ հովիւ և տէր զ՚այրապետս մեր։

Կեցո՛, Տէ՛ր բարերար,
Վ. Հ. մեր պետն Մ՚ակար
Ամս ձիգս և երկար
'Ի գահ իւր բարեփառ։
Եւ զՆորին քաղցր անուն
Թող հնչեսցեն 'ի սիրտ վառ,
'Ի յերդ անուշ 'ի կենդառ
՚Այ մուսային, հայորեար։

Փառք Բարձրելոյդ պարգևողիդ անճառ, անզըուռ բարեաց,
Փառք ի բարձունս մեք երգեսցուք քեզ, անմահ Ըստուած,
Տո՛ւր Սմա ոյժ, զօրութիւն, զի հովուեսցէ զմեզ,
Յուպ տածողական հուժկու 'ի ձեռին զերծ Մովսէս։
Օրհնեմք զքեզ և այլն։
Կեցո՛, Տէ՛ր բարերար, և այլն։

[1]) Նորին վեհափառութիւն Տէր-Մակար, Թագաւոր կայսրից, 1885 թ. 18-ին յուլիսի, Խարձրագոյն հաստատուելով «կաթողիկոս ամենայն ՚Այոց» վեհ կոչման մէջ, Ռասարաբիայի Քիշնեւ քաղաքից ուղևորվում է դէպի Ս. Էջմիածին և այսօր, 29-ն նոյեմբերի, ժամանում է այնտեղ։

Գ. Ռ. Գրիգորեանց

* * *

Պահեա, Տէր, ողորմութեամբ քով զայս Տաճար սրբա-
վայր
Դարուց ի դարս անդրդուելի ցանգ շէն և պայծառ.
Պահեա և զազգ մեր հայկազեան աջովդ հայրական
Եւ զորդիս իւր հեգ տառապեալ յար սիրով, միաբան:
Օրհնեմք զքեզ, և զքեան:

Տո՛ւր մեզ, Տէր բարերար,
Տո՛ւր շնորհ, ձիր առատ՝
Ջհակղեցի և զազգ մեր
Միշտ պահել անպատառ:

Սահակ Սպիտակ

109.

Տ. Տ. Մակար Կաթուղիկոս ամենայն Հայոց

Նորին վեհափառութիւնը աշխարհական ծագումէ և 70 տարեկան պատկառելի, փորձառութեամբ և հմտութեամբ բարդաւաճեալ հասակ ունի: 1834 թուին իւր ուսման ընթացքը Մայր Աթոռոյս հոգևոր դպրանոցում աւարտելուց յետոյ, հաճութեամբ հանդուցեալ ի Տէր Յովհաննէս Ք. կաթուղիկոսի, ստացել է հոգևոր կոչման չորրորդ աստիճան. 1838 թուին ապրիլի 12-ին ձեռնադրուել է սարկաւագ. 1842 թ. մարտի 25-ին ձեռնադրուելով վարդապետ՝ նշանակուել է Մայր Աթոռոյս հոգևոր դպրանոցում Ուսուցիչ, և 1843 թ. յունուարի 21-ին Սինոդի օրագրութեամբ կարգուել է

տեսուչ նոյն դպրանոցին: Հանդուցեալ ի Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսի հաճութեամբ և առաջարկութեամբ, Բարձրագոյն հաստատութեամբ 1847 թուի ապրիլի 30-ին կարգուել է անդամ Սինոդի. 1848 թուին, մարտի 15-ին գնացել է Պարսկաստան՝ հին ձեռագիրը դրքեր որոնելու. 1849 թուին ստացել է Մայր Աթոռոյս մատենադարանի վերատեսչի պաշտօնը. 1852 թուին ապրիլի 12-ին ձեռնադրութեամբ հանդուցեալ ի Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսի բարձրացել է յաստիճան Ծայրագոյն վարդապետութեան. նոյն թուի օգոստոսի 15-ին ձեռնադրուել է եպիսկոպոս, նոյն թուի նոյեմբերի 10-ին նշանակուել է Մայր Աթոռոյս վանական կառավարութեան անդամ և ծախսարար. 1858 թուին դեկտեմբերի 15-ին Սինոդից նշանակուել է պատգամաւոր և գնացել է Կ. Պոլիս հանդուցեալ ի Տէր Մատթէոս Կաթուղիկոսին հրաւիրելու Ս. Էջմիածին:

1859 թուի մարտի 10-ին ստացել է արքեպիսկոպոսութեան կոչումն և նոյն թուի յունիսի 13-ին Սինոդի օրագրութեամբ նշանակուել է Աւագ-Լուսարար Մայր-Աթոռոյս. 1861 թուի ապրիլի 2-ին հանդուցեալ ի Տէր Մատթէոս Կաթուղիկոսից ուղարկուել է Թիֆլիս՝ տեղւոյն Ներսիսեան հոգևոր դպրոցը կարգաւորելու համար: 1862 թուի օգոստոսի 9-ին հանդուցեալ ի Տէր Մատթէոս Կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Թիֆլիսի թեմի կառավարիչ և 1864 թուի մարտի 15-ի առաջարկութեան համեմատ Բարձրագոյնս հաստատուել է Վրաստանի և Իմերէթի հայոց թեմի վիճակաւոր առաջնորդ: 1876 թուի փետրուարի 20-ին, հանդուցեալ ի Տէր Գէորգ Գ. կաթուղիկոսի առաջարկութեան համեմատ, արձակուելով Թիֆլիսու առաջնորդութիւնից՝ Բարձրագոյնս հաստատուել է վիճակաւոր առաջնորդ Նոր-Նախիջևանի և Ռոստովբնոյ, և ըստ առաջարկու-

թեան հանգուցեալ ՚ի Տէր Գէորգ Գ. կաթուղիկոսի, 1883 թուի յունվարի 7-ին, Կարնոյ առաջնորդական պաշտօնը: Նոյն 1883 թուին գալով Մայր-Աթոռս և ստանձնելով Սինոդի անդամութեան և ըստ աւագութեան՝ Սինոդի առնապետի տեղակալի պաշտօնը՝ նոյն թուին ՚ի կողմանէ Մայր-Աթոռոյս դնացել է Մոսկվա Ամենաողորմած Թագաւոր Կայսեր Ալէքսանդր Գ.-ի թագադրութեանը պատգամաւորելու: Այնուհետև նոյն թուի աշնանը գալով Մայր-Աթոռս, վարել է տեղակալութեան պաշտօնը, իմաստութեամբ և խոհեմութեամբ, նախագահելով 1884 թուի մայիսեան կաթուղիկոսական ընտրութեան ժողովներին, որից յետոյ դնացել է իւր թեմը. իսկ այս տարի ապրիլեան ընտրութեան ժամանակ Էջմիածինը լինելով ամսոյս (օգոստոսի) 2-ին բարեհաճ կամեք Թագաւոր Կայսեր՝ արձակուելով Սուրբ-Նախիջևանի և Ռուսաբաբիոյ առաջնորդութիւնից՝ Տ. Տ. Մակար Հասատուից Կաթուղիկոս ամենայն Հայոց:

Նորին վեհափառութիւն Տ. Տ. Մակար ՚ի սկզբանէ անտի Մայր-Աթոռոյս մէջ կատարել է բարձր պաշտօնները, որով արժանացած է ժամանակի վեհափառ կաթուղիկոսների բարեհաճութեան՝ ստացել է եկեղեցական բարձր աստիճաններ և վարձատրուել է հանգուցեալ ՚ի Տէր Սերսէս Ե. կաթուղիկոսից, 1851 թուի փետրվարի 14-ին, ջերմեռանդն ջանքի և աննկուն հաւատարմութեան համար՝ վարդապետական ականակուռ խաչով, ՚ի յիշատակ 1853-56 թուի արևելեան պատերազմի՝ բրօնզեայ խաչով և մեդալով և 1854 թուի մայիսի 22-ին ստացել է եպիսկոպոսական պնագէ: Հանգուցեալ ՚ի Տէր Մատթէոս Կաթուղիկոսից վարձատրուել է Թուրքաց Մէջիդիէ պատուանշանը ստանալով, և հ-

կեղեցու բազմաժամանակեայ հաւատարիմ ծառայութեան համար 1863 թուի օգոստոսի 30-ին Ս. Վլադիմիրի Գ. աստիճանի պատուանշանը ստանալով: Հանգուցեալ ՚ի Տէր Գէորգ Գ. կաթուղիկոսի միջնորդութեամբ վարձատրուել է 1869 թուի մայիսի 9-ին սրբոյն Ստանիսլաւի առաջին աստիճանի և 1881 թուի յունվարի 1-ին սրբոյն Աննայի Ա. աստիճանի պատուանշանները ստանալով:

«Ըմպտպ»

110.

Պանդխտի ողջոյնը

Ողջո՛յն տուէք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն:
Ողջո՛յն տուէք աւերակաց
Երարատեան գաւառներուն:
Ողջո՛յն տուէք Եւարայրին
Երիւնանիւրկ սուրբ վայրերուն:
Ողջո՛յն տուէք ախոյր լուսնին,
Որ լացն է սև շիրիմներուն:
Ողջո՛յն տուէք պանդուխտ հայուն,
Թշուառ հայուն, չուառ հայուն:
Ո՛հ, ձի՛ոք տուէք, ո՛հ, սի՛րտ տուէք,
Հոգի՛ տուէք անկեալ հայուն:
Ողջո՛յն տուէք ոլոր մոլոր,
Ո՛ղոր վազող գետակներուն,
—Ողջո՛յն տուէք պղտոր բոլոր
Ողե լեղե աղբիւրներուն:

Ողջոյն տուէք ՚ի հող եղած
Ընքայական պալատներուն.
Ողջոյն տուէք գետնատապած
Սրբոց անբիծ մասունքներուն:
Ողջոյն տուէք դուք խումբ ՚ի խումբ,
Որ կան թաղած հոգիներուն,
Ուր հայ սոխակք թումբէ ՚ի թումբ
Կեանք կը խնդրեն դեռ շատերուն:

111.

Գ՝օշամա

Ով իմ առաւօտեան անուշիկ հովիկ,
Խնդրանօք ձեզ տալու նամակ ունիմ ես.
Շո՛ւտ հասուցէք Բաֆո՝ և անցէք ծովիկ,
Ընտեղ ինձ բարեկամ «Սոխակ» ունիմ ես:

Որ սարդի դէմ ազատ խօսող թռչունին,
Ամէն ցանցից չ՚երկնչող թռչունին,
Ով որ նի լեզուով երգող թռչունին
Աչքերովս տեսնելու փափագ ունիմ ես:

Վ՝երջին շեալ նամակս ընթերցող լեր,
Ով անուանաւոր ասութեանս դու ներող լեր,
Գո Խայեաղբ[1]) եմ, երգիդ մէջ միշտ յիշող լեր,
Ձէ, անխզելի սէր հաստատ ունիմ ես:

[1]) Սուքիաս Ղահրիեանց, Ալեքսանդրապօլցի, մականուանեալ Աշըգ-Խայեաղբի, մեր ժողովրդական նոր երգիչներից մինն է, պարապում է, այժմ, Թիֆլիսում դերձակութեամբ, իսկ ազատ ժամերին՝ երգեցողութեամբ և քնարի նուագածութեամբ, տեղական սրճանոցներում:

Գ. Վ. Գրիգորեանց

112.

Մի զուարթ մանկան

Ուրախութիւն քեզ անպակաս
Ով դու մանուկ սիրելի,
Ծիլ ես, ծաղիկ և ծիրանաս,
Տալով պտուղ արժանի:

Որպէս ծաղիկ, մանո՛ւկ, քաղցր ես,
Եւ շնորհագեղ որպէս օր.
Մա՛նուկ, մանուկ, ինձ չ՚խաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր:

Նայիր վերև, տե՛ս. ինչ սիրուն
Ընտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են, և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր:

Ընտեղ, հոգեակ, բնակվում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուշադրում է
Եւ կեանք, և Աէր, և Հոգի:

Նա ծագում է իւր արեգակ
Ամենայն օր քո վերայ,
Որ զուարճանաս որպէս թռչնակ. —
Օրհնի՛ր Ընուն սուրբ Նորա:

Ունի Որդի մի Միածին,
Նա է Փրկիչ աշխարհի.
Նա խաչ ելաւ, տուեց հոգին...
Որ դու լինիս մարդ բարի:

Նա սիրելով իւր թշնամիք,
Օրհնեց խաչին և ներեց,
Եւ մեզ գնեց իւրեան որդիք.
Սիրել միմեանց պատուիրեց։

Նա հեզութեամբ յաղթեց չարին,
Եւ մեզ ասաց, որ և մեք
Հետևինք այդ օրինակին, —
Չհպարտանանք մեք երբեք։

Ս. Հ–ճ–պ–ղ–ն–ց

113.

Դիւբեկիզ

Ա՛հ, իմ առողջ անձիս՝ օտարք
Հիւանդ ու տկար են ասում.
Ընդէմ բժշկի պէս, յիմարք
Ընդդէմս անձար են ասում։

Թէ ուննայամ բարիք բաղում,
Դա բնաւին չէ՛ երևում.
Ես այս բանին եմ զարմանում՝
Մի վատս—հազար են ասում։

Ով որ չունի բարի անուն՝
Նա կ՛ծնայ միշտ երերուն.
Իւր հայրենեաց մէջ Խայտառակ
Պանդուխտ և օտար են ասում։

114.

Մայրիկս

Ո՜վ կերակրեց գիս՝ տալով ծիծ անուշ,
Ո՜վ առաւ իր գիրկն, որ ննջեմ մուշմուշ,
Իմ վարդ երեսին ծաղիկներ թափեց.
Մայրիկս։

Երբ իմ աչքերէս վախաւ քունն գնաց,
Ո՜վ ինձ անուշիկ օրօրներ ասաց,
Եւ թևերուն մէջ օրեց, որ չ՛լամ.
Մայրիկս։

Ո՜վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն,
Երբ մէջ ոլորեիս ննջէի սիրուն,
Եւ սիրոյ քաղցրիկ արտասուքներ թափեց.
Մայրիկս։

Երբ կծու ցաւով կու լայի ես միշտ,
Ո՜վ իմ աչք սրբեց, թևերացուց իմ վիշտ,
Ես ու դող ըղձաց, որ ես չ՛մեռնեմ.
Մայրիկս։

Ո՜վ վազեց օդնել երբ ես ընկայ վար,
Եւ պատմեց ինձ վէպ, որ լինի ինձ ճար,
Պագաւ ցաւած տեղն, որ տանի զարմանք.
Մայրիկս։

Ո՜վ աղօթք ուսուց իմ բերնիս քնքուշ,
Ու պաշտեմ զԱստուած, լինիմ միշտ զգուշ,
Եւ խնդքով, ընուհգքով իմ կեանք անցունեմ.
Մայրիկս։

Եւ կրնամ երբէք մոռնալ քեզ, հոգիս,
Դու որ սիրեցիր և հոգացիր ինձ,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դիրիր,
Մայրիկս:

Ո՛հ, այդպիսի բան մաքէս չէ անցնիր,
Եւ դու, ո՛ Աստուած, իմ արև պահիր,
Յուսամ վարձատրել քո անբաւ հոգեր,
Մայրիկս:

Իսկ երբ գառնաս դու տիար, պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ,
Եւ պիտի սիրեմ բոլոր քու ցաւիր,
Մայրիկս:

Եւ երբ որ տեսնեմ՝ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հսկեմ մօտ քու մնարի,
Եւ սրտիս խորէն պիտ՝ արտասուք թափեմ,
Մայրիկս:

Մ. Մանո-եան

115.

Հ ե ք ի

Ո՛վ վարդ արևելեան, բոյս կենդանութեան,
Խրախոյս մարդկութեան ցոյց տուր քո տերև,
Ապաստէ քո գարնան ծառայ և իշխան,
Վերջից մարդիկն համայն խնդրում են պարզև:

Սոխակ սիրաբանդ է երգիչ տանդ,
Խնդրում է արժանդ լոյս բուրաստանդ,
Կանչէ այգեպանդ, ուղղէ շրջանդ,
Բաց քո պատուհանդ, թող ծագէ արև:

Երկիր ճնաս տխմար, մարդկանց անյարմար,
Եղէր շքեղ գոհար, քանի կաս գալար,
Ձարէ նոր գաղափար, մի՛ ճնար խաւար,
Էջքերդ ալա՛ զամբար, չ'ճնայ կեղև:

Սոխակին հաւանող, միշտ ծափ հարկանող,
Վերջն կոյս պահպանող և քաջ անուանող,
Եգուսին սպանող, մօտը չ'տանող,
Երէր գարուս նմանող, գոլ նորաձև:

Ո՞ւ-անո-ս խրատես և համեմատես,
Որ անուն հաստատես, վերքս փարատես,
Կեանքիս հարազատ ես, բոյս անարատ ես,
Նորատունկ արմատ ես, քեզ պէտք է անձրև:

116.

Ե ղ օ ի ք մ ա ն կ ա ն ց [1])

(Նուէր իմ սիրելի աշակերտներին Վ լադիկավկասու
Ա. Ա. Պապրոցի)

Ո՛վ դու Տէր մեր քաջ հայրերի,
Ո՛վ Աստուած Հայաստանի,
Ընդունի՛ր մեր մանուկ սրտից
Խնկաձ աղօթքըն քաղցրալեզ:

[1]) Ինչպէս այս, նոյնպէս և «Ընդ հայ պօետն» վերնագրով ոտանաւորներն ստացել եմ Վ լադիկավկասից, օրիորդ

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Սուրբ ես դու, Տէր, սուրբ սրպէս հուր,
Սիրես մանուկ խելօք, մաքուր.
Պարտաւորութիւն դու, Տէր, մեզ տուր —
Լինել խելօք և մաքուր։

Օրիորդ Եղիսաբէթ Ըրայեան, Ասպրախանից

Եղիսաբէթ Ըրայեանից, 1884 թ. ապրիլի 27-ից գրած։ Նամակից երևում է, որ օր. Ըրայեանը վարժուհի է եղել տեղական հայոց դպրոցում։ Բայց երբ տքան ցաւ ղգացինք, երբ լրագրութեան մէջ կարդացինք, որ օր. Ըրայեանը, մի քանի անսիրտ մարդիկների զրպարտութիւնը տանել չ'կարողանալով՝ մի տխուր օր, 1885 թ. մարտի 2-ին, ընդունում է կարբոլեան թթու (карболовая кислота) և վերջ դնում իր կեանքին, 18 տարեկան, դեռ կոկոնած, հասակում.., Մահից յետոյ դուրս է գալիս և կատարեալ կերպով ապացուցանվում, ինչպէս երևում է լրագրութիւնից, որ օր. Ըրայեանը մի անձնուէր, մի ճշմարտասէր և առաքինի անձնաւորութիւն է եղել իր շրջապատող աշխարհում, մանաւանդ մանկական աշխարհում։ Օրիորդը զոհուեց... այո, զոհուեց... ահա քաշելով, բայց նորա «ահա»-ի ձայնից անհանգիստ չէ՞ն լինում, արդեօք, նորան զրպարտող անսիրտ մարդիկ...

Ներում եմ այստեղ հանգուցեալ օր. Ըրայեանի յուղարկաւորութեան համառօտ նկարագիրը, Վ. լադիկավկասից գրած։

Գ. Վ. Գրիգորեանց

117.

Հանգուցեալ Եղիսաբէթ Ըրայեանի յուղարկաւորութիւնը

Հանգուցեալ օրիորդ Եղիսաբէթ Ըրայեանի յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ բաւական շքեղ կերպով և խուռն բազմութեան ներկայութեամբ։ Հանգուցեալի դագաղը տեղաւոյս լեհական դպրոցի աշակերտները, որոնցից մեծ մասը պլազդիներ են, ուսերին բարձրացրած տարան մինչև եկեղեցին։ Դագաղի վերայ դրուած էին երեք պսակներ, որոնցից աւելի աչքի էր ընկնում «աշակերտուհիներից իրենց անմոռանալի վարժուհուն» մակագրով պսակը, իսկ միւս երկուսն էին իւր ընկերներից և ընկերուհիներից։ Եկեղեցում պ. պ. Պարիբեան և Խանազատեան ճառեր կարդացին, որոնց մէջ բացատրուեցան հանգուցեալի գործունէութիւնը և նրա տարաժամ մահով ժողովրդին հասած վնասը։ Եկեղեցուց դագաղը տարան հայ օրիորդները մինչև օրիորդական ուսումնարանը, որտեղ հանդէսը կանգնեցնելով, հայր Ալուսիկեանը արտասանեց մի քանի խօսքեր հանգուցեալի մասին, բայց արտասուքից խեղդուելով, էլ չը կարողացաւ շարունակել։ Դրանից յետոյ հանգուցեալի դագաղը խուռն բազմութեան ձեռքէ ձեռք անցնելով փոխադրուեցաւ գերեզմանատուն և ժողովրդի սիրելին յանձնուեցաւ սառն գերեզմանին։ Այդ օրը ամբողջ քաղաքը, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, մասնակցում էր յուղարկաւորութեան և ընդհանուր սուգ և տխրութիւն էր ամենքի սիրտերում վերայ։ Հանգուցեալը յայտնի էր և Աստրախանում որպէս ընդունակ ճառախօս. նա թողել է մի քանի աշխատութիւններ։

*

Հանգի՞ստ ոսկեքնեվիդ, անբաղդ Եղիսաբեթ Ալայեան. ննջե՛ր հանգիստ յաւիտենականութեան մէջ։

«Նոր-Դար» Վ.

118.

Երկու Տող

Ով չե՛ սիրել անձը իւրան,
Ուրիշին սիրել չե՛ կարող,
Ինչ մարդ չե՛ պահել պատուիրան,
Այլոց պատուիրել չե՛ կարող։

Հասուն խելքն է բան շինողը,
Ընտիր խօսքեր յօրինողը,
Կամացը տէր չը լինողը՝
Իր տանը տիրել չե՛ կարող։

Ընկած—վեր մարդն է յարդի,
Նա է գառուած մաքուր ոսկի,
Անփորձ, վախկոտ Հարուստն իսկի
Մի փող նուիրել չէ, կարող։

Ինչքան լինի մարդ իմաստուն,
Իրանից կայ բարձր անուն.
Բայց որ Աստուած շինէ մի տուն՝
Ոչ ոք աւերել չե՛ կարող։

Ջե՛ան, մարդն է բանական,
Դիմացող է մեծ նեղութեան,
Չի դնենալ բարի վախճան,
Ով որ համբերել չե՛ կարող։

119.

Կարօտ

Ո՜հ, օրեր, օրեր, ո՜հ, սար ու ձորեր,
Ի՞նչ չէք երևում, ո՞ր տեղն էք կորել.
Չեր միջին ո՛րքան կեանքս էր ներշանիկ,
Եւ սրտիկս ուրախ, անոյշ հայրենիք։

Չեր պայծառ օդը, ձեր քաղցր հողմունք,
Օրհնու՜ի այն ձեր սրբակերտ հիմունք,
Այն ձեր կենսատու կաթնահամ ջրեր,
Ծիւրք բիւրոց դաշտեր, հազար առուակներ։

Վանի մտածեմ՝ մաշվում է հոգիս,
Ապշած, շուարած կը հայեմ չորս դիս,
Չը կայ քեզ նման, սիրո՛ւն հայրենիք,
Դու իմ ծննդեան, անդեան տեղիք։

Ընարչի ձեռքը քեզ մէկ է ստեղծել
Աշխարհիս միջին անհատ գեղարուեստ,
Եդեմայ չորս գետ քեզնից են բղխում,
Ոչոր ու մշոր դաշտերդ թանում։

Վո՛ւ միջին է կանգնած ծերունին Մասիս,
Գլուխդ գլխոց Հայկազեան ազգիս,
Նպատակ ու Ընտրած քո ջուխտակ բերդեր
Որի՞ սրտի մէջ կարօտ չեն ազդեր։

Այն հազար ու մէկ սիրուն վանքերդ,
Հանապազ տեսակ ինքնաբոյս բերքդ,
Ո՞ր աշխարհն ունի քո ունեցածները,
Ծէկուզ մէկ տեղ դան բոլոր երկիրները։

Ես միայն զօրուած այս բիւր բարիքից,
Վ՚եր ընկած պանդուխտ յաշխարհ վշտալից,
Տեղէ արտասուաց՝ արիւն եմ լալիս,
Վո այս յատկութիւնք երբ միտս են գալիս:

Վո հողն էլ է սուրբ, քո վայրէ էլ մաքուր,
Մարդից սկսած մինչև ջուր.
Թէ հաւատա կ՚ասես, թէ սէր, թէ օրհնք,
Էլի քեզնուա՜ն է, ինչպէս հաստատ շէնք:

Վեղնում ո՛չ Լուսակր, Կալվին, Մակեդոն
Կրցան հաստատել չարափառ կանոն.
Վո հաւատա, քո ծէս է աստուածդիր,
Որին չէ տիրել կեշտ խաբեպատիր:

Ս. Վ. Մ—ղբղբեանց

120.

Դուբէիդ

Ո՛ւնին դիր, որ պիտի ասեմ
Վեղէ բան, սիրտ, քեզէ բան, սիրտ.
Փոխուելոյդ մինչ ե՛րբ սպասեմ,
Ապա ջան սիրտ, ապա ջան սիրտ:

Յոյց կը տայ քննութիւնը,
Սիրտ, քեզի քու բնութիւնը.
Ձարութեան հետ հնութիւնը
Ի քէն հան, սիրտ, ի քէն հան, սիրտ:

Դու քու վրայ մտածէ՛ խոր,
Այ քեզի արդար դատաւոր,
Եւ քեզ զգեցուցիչ մեկ նոր
Պատմուճան, սիրտ, պատմուճան, սիրտ:

Այս աշխարհը տուն է երկանց,
Եւ գալու աշխարհն է անանց,
Պէտք է սիրել զԱստուած սրտանց,
Չէ՛ թէ անսիրտ, չէ՛ թէ անսիրտ:

Մա՛հկէ, ամօթը, ահը,
Ծանի՛ր քու վնասը, շահը,
Մի՛ մոռանար Փրկչեդ մահը
Յաւիտեա՜ն, սիրտ, յաւիտեա՜ն, սիրտ:

121.

Ողբ

Ներսէս Պատրիարքի մահուան առթով

(1883 թ. հոկտ. 26)

Ողբա՛, Մայր իմ Հայոց Սիոն,
Կորուսիր անարատ Ներսէս.
Աստուածասէր — արբակրօն,
Էլ ո՞ւր է հարազատ Ներսէս:

Ներսէսներ մեզանում շատ կան,
Բայց չեն նոքա Վարժապետական,
Եզակի և անզուգական,
Շէնք գանիլ բազմաշխատ Ներսէս:

Եպիսկոպոսների միջին
Մի հասիկ մարդն էր առաջին,
Ուշ կը ծնի, հայր, կրկին,
Ներսիսին համեմատ Ներսէս։

Ողբա՛, ազգդ հայոց տխուր,
Քո ողբալդ չի՛ գնայ ղուր,
Երկու գահեր եղած թափուր,
Աուլան-կուզին հաստատ Ներսէս։

Էթոռը Սուրբ Էջմիածնայ
Ընհայրապես նստէր, կուլայ,
Պօլսումն էլ պատրիարք չկայ,
Թողել է անապատ Ներսէս։

Լացէ՛ք ինձ հետ, ձորե՛ր-սարեր,
Լացէ՛ք ծովեր, գետե՛ր-քարեր,
Պիտի անցնեն ոչքա՛ն դարեր,
Որ մեզ ծնի մի հատ Ներսէս։

Չայոց արևն է խաւարել,
Չայ ազգի ճրադն է մարել,
Մեր սիրելին մահն է տարել,
Ձկայ մեծ գովաշատ Ներսէս։

Սուրբ հովիւն ազգային,
Կամքը այսպէս էր երկնային,
Ծանօթ էր ողջ Եւրոպային
Վ. հհաղն-պայազատ Ներսէս։

Մեր հովուապետների միջում
Ներսէսների գործն է փայլում[1]),

[1]) Յիշեցէ՛ք, պ. Ղ. Ալիշանի, Ս. Էջմիածնայ Գէորգեան Ձ'եմարանն ու Թանգարանը, մամուլն ու ձայնագրութեան

Վ. հայ հատ Ներսէսների թուում
Չէ պատահել մի վատ Ներսէս։

Նա էր խելքի շահմարան,
Շնորհքի, մտքի գանձարան,
Տարաւ հետը սև գերեզման,
Թողից այգին աղքատ Ներսէս։

Ջ.է—ան, երկնից սուրբ Ընեղը
Չասցնող է վերայ դեղը,
Ներսէս պատրիարքի տեղը,
Խնդրենք մեզ տայ մի զատ Ներսէս[1])։

122.

Ներսէս Պատրիարքը

Չանդուցեալ Ներսէս Պատրիարքը ծնուել է 1837 Թուի յունվարի 28-ին Կ. Պոլսի Խաս-գիւղ կոչուած արուարձանում և ուսել նոյն տեղի հոգևոր դպրոցում։ Մանուկ ժամանակ ուսման սէր և եռանդ ցոյց տալով, պրաւեց թէ ուսուցչաց և թէ դպրոցի վարչութեան ուշադրութիւնը։ Երիտասարդ Ներսէսն աշխատասիրու-

արհեստը, հայկական դպրոցների աճումն ու զարգացումը, թեմական տեսուչների հաստատութիւնն ու ուսուցչական ժողովները և այլն։ Մօտիկ, այո՛ շատ մօտիկ անցեալի արդիւնք են. դրա՛ի Տէր հանգուցեալ Գէորգ Գ. կաթուղիկոսի իմաստուն աշխատութեամբ և նորա օրով են եղած։ Ուրեմն ուրիշներն էլ են եղել գործով փայլող։

Գ. Վ. Գրիգորեանց

[1]) Ընժամեան պատրիարքն է Յարութիւն արքեպիսկոպոս Վ. հհապետեան։

Գ. Վ. Գ.

թեան հետ և նշանաւոր ընդունակութեան տէր էր, մեծ յիշողութիւն, ըմբռնող միտք ունէր, որոնք և նպաստեցին նրան ուսման ընթացքն իբրև յառաջադէմ աշակերտ աւարտելու։ Նորա կոչումն էր եկեղեցականութիւն ընդունել, ուստի և երիտասարդ հասակում ամուսնանալով եկեղեցական պաշտօնեայ դարձաւ. միայն բաղդը չկամեցաւ, որ նա իբրև քահանայ գործէր ժողովրդեան մէջ, ուսուցանելով և քարոզելով։ Ներսիսի սիրելի ամուսինը ծաղիկ հասակում վախճանեցաւ և նա կրօնաւորեցաւ։ Վարդապետ Ներսէսը շատերի ուշադրութիւնը գրաւեց իբր քարոզչական հանճարով և շատ նպաստեց Նուպար-Շահնազարեան դպրոցի բացման, Նուպար փաշային գործին մասնակից լինել յորդորելով։ Ինքն էլ նոյն դպրոցում ղեկավար ուսուցչի պաշտօն վարեց բաւական ժամանակ։ 1862 թուականին Օէյթունում տեղի ունեցած ապստամբութիւնից յետ, Ներսէսը ուղարկվեցաւ այնտեղ Ազգային Վարչութեան կողմից, գործին յայտող ելք տալու համար, քննութեան ժամանակ, և այս միջոցին Սիս երթալով Ներսէս վարդապետը ձեռնադրվեցաւ եպիսկոպոս։

Ընդունելով Ներսէսին, իբրև բարձրաստիճան եկեղեցականի, աւելի բարձր պաշտօնների և նշանաւոր գործերի ձանձապարհ բացվեցաւ։ Նա արդէն վիճակաւոր առաջնորդ է Սիկոմիդիոյ վիճակին, որ Ներսիսի մէջ դասաւ իբր ցանկացած հովիւն։ Ներսէսը բարեկարգեց իբր վիճակը մանաւանդ, հոգալով մասաղ սերնդի դաստիարակութեան վերայ։

Մատթէոս կաթողիկոսի մահից յետ, կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, Ներսէս եպիսկոպոսը եկաւ Ս. Էջմիածին իբրև ներկայացուցիչ տաճկահայոց եկեղեցական պատգամաւորաց և շատ նպաստեց Գէորգ Դ.-ի ընտրութեան։

Այս միջոցին Ներսէսը, տեսակցելով շատ ռուս-հայերի հետ, գրաւեց նոցա համակրութիւնն իւր ճարտասանութեամբ և ճարպիկութեամբ։ 1872 թուականին Ներսէսը կրկին երևեցաւ Ռուսաստանի սահմաններում, ժողովարարութեան համար, յօգուտ Նոզդրատի սովելոց, և ճանապարհորդելով Սովկասեան նահանգներում, հանգանակութեան համար, ամենուրեք սիրկլի եղաւ ժողովրդեան՝ իւր եռանդուն և ազդու քարոզներով։ Վերադարձին Ս. Էջմիածին հանդիպելով, Վեհափառ Գէորգ կաթողիկոսից կոնդակ ստացաւ եպիսկոպոսութեան և Էջմիածնայ միաբանութեան, որով Ներսէս եպիսկոպոսին բացվեցաւ ճանապարհ աւելի բարձր եկեղեցական պաշտօնի համար Տաճկաստանում։ Նա վերադառնալով Ս. Պոլիս, մի քանի ժամանակից, Խրիմեան Հայրիկի պատրիարքութիւնից հրաժարվելուց յետ, բարձրացաւ պատրիարքական գահն, ուր և ճնաց մինչև իւր մահը, (ընդելով իւր բազմից հրաժարման) համաձայն կամաց Վեհափառ Սուլթանի։

Պատրիարք Ներսէսի ամենանշանաւոր գործն եղաւ 1877-ի պատերազմից յետ Ս. Ստեփանոսի դաշնագրութեան մէջ 16-երորդ յօդուածը մտցնելու ձիգն, թախանձանօք, և այդ յօդուածն էր, որ Բերլինի դաշնագրութեան մէջ 61-երորդ յօդուածի փոխվեցաւ, որ խոստանում էր Տաճկահայաստանին բարենորոգումնք։

Ներսէս Պատրիարքի անընդհատ աշխատանքներն և հոգածողութիւնք ընկճեցին նորա մարմինն և նա վերջին տարինները անցուց ծանր հիւանդութեանց ենթարկեալ։ Ներսէսը վշտացաւ, հիւանդութիւնը ծանրացաւ, մարմինը մահացաւ. միայն յիշատակը կենդանի և անմահ ճնաց։ Այդ ազգն, իւր բնատուր երախտագիտական զգացմամբ, չնայելով Ներսիսի բազմից հրաժարման, ուղից նրան մխիթարել, կոչելով Ս. Էջմիա-

ծնայ Հայրապետական Աթոռը. բայց նա անկարող և ապիկար հրաժարեցաւ այդ ծանր և սրբազան պաշտօնից։

«Մեղու Հայաստանի»

123.

Մի՛ հաւատար

Չ'հաւատաս դու, թէ որ քեզ ասեն՝
Հանգիստ դու նստի՛ր ու յուսով եղիր,
Օրեր, տարիներ անհոգ թող անցնեն,
Քեզ համար գործը կըգայ ինքն իրեն։

Դու մի՛ հաւատար, թէ որ քեզ ասեն՝
Ձեռք մի՛ շարժիր, նստի՛ր ինչպէս կուտ,
Երծիւն ու առիւծ ոսկի կը բերեն,
Քեզ համար օտարք անդուլ կը գործեն։

Դու մի՛ հաւատար այլոց խօսքերին,
Աչքդ մի՛ ձգիր այլոց ձեռքերին,
Այլ դու հաւատա՛ քո իսկ ոյժերին
Եւ քո խելացի, առողջ մտքերին։

Տ. Սահակեան

124.

Մշակ

Պայծառ առաւօտ մէյդանի վերայ
Անհամար մարդիկ շարժում են ահա.
Մին արհեստանոց, մին կրպակ վաղում,
Միւս դէպի կիւռ բեռը շալակում,
Երծաթ վաստակել
Ընտանիք պահել։

Փոքր առ փոքր արև բարձրանում,
Նորանոր մարդիկ աչքի են ընկնում.
Կանայք ըսպիտակ էչմօվ ծածկուած՝
Փոքրիկ մանուկներ՝ գիրկները առած
Ընդնում փողոցից
Ուրախ խնդալից։

Եւ ահա մինը աչքերը ձոթռած,
Նա անցորդներին նայում է ապշած.
Խոլը հառաչանք վրդոված հանում,
Աչքից արտասուք գետի պէս թափում.
Ընտանիք ունեմ,
Բայց ի՞նչ օրի են։

Քաշուեց պատի տակ, քարպանին յենուեց,
Ծրտելով վիզը, ծանր ահ քաշեց.
Շուրջ տասը տարի հայրենիք թողած,
Այս օտար երկիր եմ պանդխտացած.
Երծաթ վաստակեմ,
Պարտքից ազատուեմ։

Բայց մինչև այսօր մինս երկու չեղաւ,
Դարձեալ նոյն տանջանք, նոյն վիշտ և նոյն ցաւ,

Իմ շուրջըս պատած տանջում են տանջում,
Ընտանեացս հոգսի հետ հալումաշ անում.
Ելածաթ էլ չունեմ,
Նոցա ուզարկեմ:

Մրճիջաց մշակը դեռ անյայտ խօսքեր,
Վէպի քաղաքը պարզեց իւր ձեռքեր,
Ձոքեց, տնքալով բեռը շալակեց,
Քրտինքում կորած՝ աղէ տուն հասցրեց.
Աչքը աղային
Զգած է ձեռին:

Երկու սև ֆապայ խեղճին շրպրտեց,
Դուռը երեսին շրխկալով խըփեց.
Առաւ մըշակը, ասաց ինքն իրան.
«Որանո՞վ պահեմ ողջ մի գերդաստան».
Կըլուխ քաշ գնաց,
Թուլացած, յոգնած:

Ձուրկ ընտանեկան քաղցրութիւններից
Ու իմ սիրելեաց քաղցր տեսութիւնից,
Պանդուխտ տանջւում եմ երկար տարիներ,
Վաստակածս ուտում եմ պարապ օրեր.
Ելանդիստ էլ չունեմ,
Ե՛ստուած, ի՞նչ անեմ:

Բայց ինձ նմանները, թէ ինձ կը լսեն,
Ասած խօսքերիս ականջ կը դնեն,
Իւրեանց հայրենիք ղուր տեղ չեն թողնիլ
Ձարուստի ղրան դառնապէս տանջուիլ.
Ինչ կը վաստակեն,
Բայց հալալ կ'ուտեն:

125.

Ե ս հայ պօէտն

Պօէտ՝ սիրելի միշտ մուզանելին
Դու երգի՛ր ազատ՝ ինչ որ քո հոգին
Կը թելադրէ քեզ Աստուծոյ շնորհքով.
Ուսի՛ր, որ լինես նաև անվրդով:

Քո ձշմարտութիւն հային կը տայ միշտ
Ոգեալ իւր ազգի ցաւերն ու վիշտ.
Բայց ինչո՞ւ խոռվես հայի խաղաղ կեանք
Եւ միշտ յիշեցնես աղէտք անվախճանք:

Թէ կամիս լինել հային սիրելի՝
—Գովե՛ր դու նախնեաց գործերը սխրալի.
Մի՛ յիշեր երբէք նորա վատ գործեր,
Որոնց անձնատուր լինում են հայեր:

Ընտանի՛ր «այժմեան հսկայ անվեհեր»,
Որ գուցէ խեղճը երազած էլ չէր.
Մի՛ գովեր երբէք ազգօգուտ մարդկանց,
Այլ իւրեան կոչի՛ր «դիւցազն դիւցազանց»:

Բայց դու, ով պօէտ, երբէք չ'հրապուրվես,
Եթէ կ'ընդունեն կեղծութիւնդ ու քեզ.
Այլ դու անկաշառ հոգւովդ՝ անվերջ
Երգի՛ր, ինչ տեսնես հայոց կեանքի մէջ:

Օրիորդ Եղիսաբէթ Երկեան, Ասպրոխանոյ

126.

Սոխակին

Սուլիչ «Սոխակին»
Մի փունջ տուեցի[1]),
Նորա խմբագրի
Մօտը ձամբեցի.
Փունջս կիսաբաց
Վարդերից հիւսած,
Ընուժ թելերով
Կապած, կապկապած.
Գրիգորեանցը
Ամուր թելերով
Կապէ, կապկապէ,
Նոր ձևեր տալով,
Գրկէ հայերին
Սիրուն «Սոխակով»,
Փունջիս թերերը
Միացնելով:

Մանուկ Թամբաչեան

[1]) Բացի ներկայ «Սոխակի» միջի տպագրուածներից, պ. Թամբաչեանի գրուածքներից հրատարակված են «Սոխակ Հայաստանեայ» և առաջին, և երկրորդ, և չորրորդ համարներում: Հեղինակը մտադրված է բոլորը միասին առանձին գրքոյկով հրատարակելու. աջողութիւն:

Գ. Վ. Գրիգորեանց

127.

Ընքատ

Ապրիլնած դէմքով, շորը պատռած,
Յաւաքար կլիճքում անհամար հոգսեր,
Նէրուկ աղքատի ձեռին գաւազան՝
Հաղիւ փոխում է դողդոջուն քայլեր:

Մէծ-մէծ խորշոմներ ակօսի նման
Զգուել են նրա մաշված երեսին,
Մարած աչքերը յոնքերի տակից՝
Կարծես կանչում են «Հաց, հաց...» ամենին:

Ձեռքը դէմ արած, շլինքը ձկած՝
Ողորմութիւն է խնդրում ամենից.
Սակայն չէ՛ն ուզում լսել խեղճուկին,
Եյ՛, ամենն էլ զզվում են նրանից...:

Կենսաբեր գարուն դեռ նոր էր մտել
Մեռած աշխարհը կանաչով զուգել
Ողջիկ, պատանի, մանուկ ու մեծեր
Օձառ-զառ հանդերձով ամեն տեղ փռել...:

Տեսաւ ամենը հանդած ծերունին,
Ըլցունք աչքերում ճնաց քարացած...
Հասաւ գիշերը, աստղեր ցոլացին,
Փողոցում նրա դիակն երևաց:

Սրինգ

128.

Գ՚օշմա

Սուգի տուն երթալը սիրե՞ս, ով իմաստուն,
Խնդալ չի՛ պատկանիլը լալ կը պատկանի.
Ընքաա անձանց վրայ խորհի՞ս, իմաստուն,
Ագալ չի՛ պատկանիլը տալ կը պատկանի։

Ստեղծիչը աշխարհի եղեալ է քանակ,
Ամեն գործ ըստ ինքեան ունի ժամանակ.
Հիւրակայ սահմանը հունձից յետ, մշակ,
Պաղալ չի՛ պատկանիլը կալ կը պատկանի։

Ո՛վ Մալխը և դու միշտ եղի՛ր ժրաջան,
Ձօրը, Որդւոյն և սուրբ Ձոգւոյն օրհնաբան.
Երբ իջանես ՚ի գուբ և դրուես տապան՝
Պարզալ չի՛ պատկանիլը, ծալ կը պատկանի։

129.

Իմ կտակը

Վերջին անգամ բե՛ր համբուրեմ
Եյդ քո սիրուն, փայլուն աչեր,
Վերջին անգամ թող փարատեմ,
Վեղ ցրկելով, սրտիս ցաւեր։

Պատճառ, ահա ես ղգալով
Իմ մահուանս վերջին րոպէն՝
Ուզեմ թողնել քեզ, սուրբ սրտով,
Իմ կտակը հէնց ի՛սկ այժմէն։

Պատկառեմ եմ, որ դու լինես
Սիրող՝ ընկեր և մարդկութիւն,
Ու դորանով պատիւ բերես
Ձայ ազգութեան և ցնծութիւն։

Եւ, վերջապէս, երբ ես տեսնեմ,
Ու իմ կոպակ կատարել ես՝
Այն ժամանակ ես կ՚աղօթեմ—
Վեղ երկնքից բարիք պէսպէս։

Գ. Վ. Գ.

130.

Ընտանեկան կտակ և յիշատակ

Ընտանեկան կենաց մէջ ծերունի նահապետք իրենց վերջի օրհնութիւնէն յետոյ՝ վերջին անհրաժեշտ պարտք մի ևս ունին, այն է կտակը, որով յետ մահուն կ՚անմահանայ նոցա անունն, կեանք և յիշատակ և կ՚ապրին նոքա հաղարաւոր տարի. և նոյն իսկ դերեզմանին մէջ։ Թէ՛ սուրբ գրոց և թէ՛ ազգային պատմութեանց մէջ նկատելով կը տեսնամք, որ կտակը երկու կերպ աւանդուած է, կամ իբրև բարոյական պատուէր և կամ նիւթական նուէր։ Նիւթականին օրինակները կը տեսնամք շատ մեր վաղեմի և արդի յիշատակարանաց մէջ որ բազմաթիւ աստուածապաշտ անձինք թէ՛ ալք և թէ՛ կանայք իրենց սեպհական կալուածներէն կամ հարստութեան գանձէն կտակելով նուիրած են՝ եկեղեցւոյ, վանորէից շինութեան և յարատեւ պայծառութեան, որոց առհասարակ տէր և ժառանգորդ եղեր է ժողովուր-

դը առանց վատահելոյ: Եթէ հետազօտեմք մեր նախնեաց ձեռագիրը յիշատակարանները, բազմաթիւ վանորէից ու տաճարաց արձանագրութիւնք, պիտի գտնեմք, որ դոցա մեծ մասն՝ կտակաց շնորհիւ հաստատուած են առանձին առանձին իշխանաւոր և հարուստ ընտանեաց ձեռքով:

Ո՞վ չի հաւատար, որ Ընտոյ հազար և մէկ եկեղեցիք կտակաց ու յիշատակատուաց օժանդակութեամբ կառուցուած են. որոց անուննները դեռ կը նշմարուին աւերակ և կիսակործան տաճարներու վերայ: Եւ ոմանք տեսնելով կը զարմանան ու այսպէս կը դատեն թէ հոյոց թագաւորութեան ճոխութեան և երկրի գանձերը՝ վանքերու և հոյակապ տաճարներու շինութեան համար սպառած են: Իսկ բարոյական կտակ ու պատուէրը, որ խառն լի է օրհնութեամբ ու դառն անիծիւք, այդ ևս աքանչելի կերպով կը տեսնեմք սուրբ գրոց մէջ: Աբրահամ նահապետը իւր վախճանին մօտ, կասկածելով թէ գուցէ, ինքն կանուխ մեռնելով՝ Իսահակ որդին մոռնայ հայրենի տան ազգակցութիւնը, պանդուխտ երկրի մէջ օտար ընտանեաց հետ ամուսնանայ, կը կոչէ իւր հաւատարիմ ծառայն և կտակաւ կը պատուիրէ, որ Քանանացւոց երկրէն չընտրէ ամուսին Իսահակ որդւոյն համար, և ուխտիւ երդում կ'առնու իրմէն չզրժել այս կտակին դէմ: Նոյնպէս Իսահակ՝ Աբրահամէն ուսեալ նոյն կտակաւ կը պատուիրէ Յակոբայ Քանանացւոց երկրի աղջիկներէն չառնուլ: այլ միայն իւր մօրենական տան ազգակցութենէն ընտրել իւր ամուսին: Յովսէփ նահապետին կտակը շատ նշանաւոր էր, որ ցանկութեամբ կը խնդրէր ու կ'ըսէր թէ «Երբ Տէր Աստուած այցելութեամբ կը հանէ Իսրայէլի տան ժողովուրդը Եգիպտոսէն, հանէ՛ք և դուք իմ ոսկորներս այն երկրէն՝ և տարէ՛ք ամփոփեցէ՛ք իմ հարց շիրիմներուն ծոցը»:

Նահապետաց կտակէն յետոյ առաւել մեծ և նշանաւոր էր Մովսիսին կտակը, որ իւր վախճանին մօտ բոլոր Իսրայէլի ժողովուրդին կ'աւանդէր, որ էր միմիայն Աստուծոյ օրէնք և պատուէրները. զոր կրկնելով կ'աւանդէր Յակոբայ տան և ընտանեաց. երկնից օրհնութիւն կը ցօղէր օրինապահ որդւոց գլխուն. իսկ անէծք և նզովք կը սպառնար նոցա, որ ստունդանելով պատուիրանաց կը լինին:

Այլ մեր գթած Յիսուսին կտակը լի էր ամենազեղուն օրհնութեամբ զոր վերջին ընթրեաց իրիկուն կ'աւանդէր իւր սիրելի խմբին և բոլոր հաւատացելոց. նորա սուրբ կտակը՝ սէրն էր, զոր միշտ կրկնելով կ'աւանդէր, և կտակագիրն Աւետարանն էր: Այս կտակագիրը Թողուց Յիսուս չէ թէ միայն ընտանեաց կամ մի ազգի համար, ինչպէս Մովսէս, այլ համայն եկեղեցւոյ ընտանեաց կ'աւանդէ իւր հայրապատուէր կտակը. որ լի ու լի պատարուն է երկնատուր օրհնութեամբ. զի նորա սուրբ և անգնահելի կտակապատուէրը՝ իւր աւանդած հաւատքն է, ընկերասիրութիւնն է, համատարած խաղաղութիւնն է, կարեկից մարդասիրութիւնն է, խաչ և հալածանքն է, խոպառ համբերութիւնն է, Թողութիւն և ներողութիւնն է:

Թողունք այս բարոյական կտակը, որ մեր մասնաւոր առարկային բարձր է. խօսինք դարձեալ նիւթականին վերայ, որ աշխարհիս բախտաւոր և հարուստ ընտանեաց համար մի անհրաժեշտ պարտիք է: Մարդ, թէ՛ այր և թէ՛ կին, երբ յիշէ իւր օրհաս վախճանը և մտաբերէ թէ ինքն մահկանացու է, և պիտի մեռնի ու Թողու այս աշխարհս, ընտանիք, սիրելիք, գանձ, հարստութիւն և շատ կալուածները. իմաստուն և արդար տնտեսն է այն մարդը, եթէ ցանկայ իւր մահուան և գերեզմանին մէջ ևս ապրիլ: Եւ ի՞նչպէս. կը-

տակաւ և բարի յիշատակով. այսինքն իւր սեպհական հարստութենէն մի բաժին հանէ ազգին. բաժին հանէ աղքատ ընտանեաց առանց երբէք զրկելոյ իւր ան ընտանիքը: Երջանիկ կը լինէր ազգը, երջանիկ կը լինէր մեր հայրենիքը, եթէ ազգին մէջ գտնուած իւրաքանչիւր գանձատէր անձինքը առանց կտակի և յիշատակի չ'մեռնէին:

Կտակարարութեան պարտիք միայն մեծատան ընտանեաց համար չէ. այլ ազգին իւրաքանչիւր անհատ անձինքը առանձին իրենց կտակը ունին: Երծաթով և անարծաթ կղերները Թ՛ող մէկը իւր արծաթը կտակէ, միւսն իւր գիրք և խրատ: Թ՛ող կտակին նոքա եկեղեցւոյ որդիքներուն հայրենատուր հաւատք և հարց ա ւանդութիւնք պինդ պահել: Թ՛ող կտակին նոքա հայոց գաղթական զաւակներուն՝ ուր որ կը լինին՝ Երարատ և Նչմիածնի կաթուղիկէն չի մոռնան: Թ՛ող կտակին նոքա սուրբ Վ՛էոնդեանց ու Վ՛արդանանց խաչ և անձնուիրութիւնը: Թ՛ող կտակէ քաղաքացին իւր ընտանեաց՝ արհեստ, աշխատութիւն, վաճառաշահութիւն, անտուսութիւն, խնայութիւն և բարոյական կեանք: Իսկ շինական աշխատամաշ ծերունիքը Թ՛ող այս կտակը ա ւանդեն ընտանեաց, որ սիրեն հին, նա հայկական պարզ կեանք, սիրեն մշակութիւն, հողն ու մաճը. երբէք չի վաճառեն իրենց կեանքը և հարստութեան մշտաբուղխ աղբիւրը. այսինքն հայրենի երկիրն ու գետին:

Եւ դուք ի՞նչ պիտի կտակէք, հայրենեաց կարօտ խեղճ պանդուխտ հայեր. դուք կտակեցէք ձեր զաւակաց ու եղբարց, երբ օտարութեան մէջ կը հասնի ձեր վերջ, ո՜հ, մահ ու գերեզման... այո, նզովեցէք կտակեցէք, որ նոքա հայրենեաց հողին ու երկրին մէջ աքնին ու աշխատին. Թ՛ող չարաչար լինի, Թ՛ող կոփահարին, Թ՛ող հարստահարին, Թ՛ող մաշին, Թ՛ող մեռնին, Թ՛ող իրենց

գերեզման իրենց արտիկ լինի, Թ՛ող չի գան այս տանջանաց տեղը, ուր ձեր աղատ եղն ու մաճ Թողլով բեռնակիր կը լինէք. և շատ անգամ բեռանց ծանրութենէն ձեր ոսկորները կը ձարձատին և ձեր հուժկու բազուկները կը Թուլնան. երես ընդ գետին կը Թաւալէք փողոցի սալայատակաց վերայ. կը բառնան ու կը Թաղեն զձեզ անյիշատակ շիրիմներու մէջ, ուր չեն ու չկան ընտանեկան գերեզման, ձեր պապերուն ու մամերուն խաչաքարեր և ոսկորներ:

Իսկ դո՛ւ, հէ՛ք արծուիդ Վ՛ասպուրական. քո կրտաւին ի՞նչ է. Թէ որ մահն գալիք պանդխտութեան մէջ նետահարէ, «Ամէն Տեառն օրհնեալ եղիցի» կ'ասեմ և կ'աւանդեմ իմ կտակը իմ սիրելի, հաւատարիմ և մտերիմ ազգին, որ ջես բառնան տանեն այն հողին աւանդեն, և դնեն ջես ի դիր հանգստեան Վ՛արագայ խաչաքարերու տակը, ուր Թերևս շիրիմն ու ոսկորներս խառնուի Եղիսէի նման սուրբ հարց շիրիմներուն հետը. ես մեղապարտ մեռեալս, արժանի լինիմ նորոգ յարութեան՝ ննջելով ի Քրիստոս հաւատով և յուսով:

Ներսէս Ֆայէկ

131.

Մաղթանք

Օգոստափառ Կայսեր Ռուսաց

Տէր, պահեա զԿայսր մեր, հզոր Ինքնակալ:
Թագաւորեա դու մեզ 'ի պարծանս:
Թագաւորեա Կայսր յերկիւղ Թշնամեաց.
Տէր, պահեա զԿայսր մեր:

132.

Կ ա ն ք

Տեսե՞լ էք արդեօք ծով անդնդային,
Երբ որ մրրիկը գոռալով վերան՝
Ելած տանում է նորան բարկագին
Եւ նա սրընթաց վազում է անբան...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան։

Տեսե՞լ էք արդեօք պատերազմ ահեղ,
Որտեղ թափվում են առուներ արեան,
Որտեղ ընկնում են շատ զոհեր անմեղ,
Որտեղ պիտոյ է կռվել անվախճան...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան։

Տեսե՞լ էք արդեօք մի անոյշ երազ,
Որ ձեզ տանում է աշխարհ դիւթական...
Դուք նորան գրկել կամիք հանապազ,
Բայց նա թռչում է աղաւնու նման...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան։

Կ. Պոլսեցեանց

133.

Մ շ ե ց ու վ ի ճ ա կ ը

Տրտում է տրտում Մրշեցին տրտում,
Յաւերն ունէ պատմէ. մարդկան թէ պլտում։
Տրտում է տրտում, ձայն արէք հընար,
Մըխիթարեցէ՛ք Մրշեցին թըշուառ։

Նըստած է ահա սարին ըստորոտ,
Գլուխը կախած, ձեռն դըրած ծընօտ.
Էջք խոռվայղղ պլպլած երես,
Իսկ սիրտն անհանգիստ, շարժուն ծովի պէս։
Ո՜հ, բըրիչ արօր, լուծ, եղինք, գութան
Դաշտին մէջ թողած՝ խառն ցիր և ցան.
Թէ երեան նայիս կամ թէ ճակատին,
Կ՛իմանաս ամէն գաղտնիքը սրտին։

Կը բառանչէ եղն, կ՛ելլ՛ Մրշեցի,
Տարաժամ է օրն, է՛լ ձե՛ռք զարկ գործի,
Ճակատիդ քըրտամբ վարէ՛ և ցանէ՛,
Ըստուած վերևէն կը տեսնէ, կ՛օրհնէ.
Ընձրև, արեգակ կուտայ, որ աճին,
Շահով կը ստանաս բարիքը երկրին.
Մին կուտայ քըսան՝ միւսը երեսուն,
Շահամարաններդ կը լեցուին դոյն դոյն։
Բայց չուզէ կարծես՝ չուզէ ըսթափիլ
Կը սիրէ միմիայն ցաւօքն ըսփոփիլ.
Ահա վեր նայեց, ման ածեց աչեր,
Հառաչեց, լըսենք թէ ասածն ի՞նչ էր։
«Ո՜ւմ համար արօր, ո՜ւմ համար գութան,
Պիտի արօրին կորդ հողն ու խոպան,
Հերկին ու տանին այս լուծն անդադար։
Ո՜ւմ համար ցանեմ՝ ո՜ւմ այս վարուցան
Օտարք կը հնձեն, օտարք կ՛ուտեն զայն։
Կէ՛տն կուտամ Վրըդին, կէ՛տն Սուլթանին,
Ծարաւի, քաղցած կը ճնամ տարին,
Պատառիկ մի հաց ճարելու համար
Ի զուր կ՛աշխատեմ ձըմեռն ու ամառ.
Եղինքս արևին՝ ես տաք ցուրտ օդին,
Դարձեալ կարօտ եմ մի պատառ հացին։

Ոչ ափ կը յանեմ հուն և սերմանիք,
Նոյնչափ կը թափեմ արիւն և քրտինք։
Թէ օտարք ձեռքէս այն չի խլէին,
Երջանիկ էի և դոհ իմ բաղդին»։

Մ. Պալեան

184.

Հոայլութիւն

(Թիֆլիսեցոց դանգատները)

Տհհար-մեկը շևապայով,
Վաշտած ձեռին շան կաշին,
Հուշի կտորն աչքերին՝—
Լուս ընկաւ քո առաջին։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Պահրբուրքումը միթօմ,
Եւարտիլ է իր ուսում,
Փիլիսոփայ է, կոսիս,
Խուրը տրկէմէն է խօսում։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Մի ձեռը նա փըքվելով,
Ունի շալվարի ջեբում,
Առարավելով միւս ձեռով
Ւզած մազերն է քօքում։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,
Մէջքը կոտրած կատուի պէս,
Երբ չափում են բուլվարը։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Մէկը, տեհնումիս, պոչը
Թրև է տալի զայրաթով,
Կօսես քուչեքի աւլիը
Վեր է կալի փոդրաթով։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Մէկէն՝ օչխարի նըման
Ընդնէն կապիլ է ղըմակ,
Ա՛օսես, դալբնի մեծ փուքսով
Փըչած ըլէն իր քամակ։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Ե՞ս, էն դամբի պէս դոլծած
Ընկանելի էն քուղը
Սապոկնելի ճռճռոցը՝
Վանդում են իմ ըզուղը...

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Ձմ՛ կանացի, հալս Եատծու,
Բարկութիւնն իմ սանձել
Ակսում եմ վայ տալով
Մեր կնանիքն անիծել։

Ընկնոց է, մոդա է, մոդա է, մոդա է։

Էդ անիծուած չար մօդան
Էլ չէ տեւում մէ տարի,
Գէլաքնուրի ծախողն
Էնքան չ'ունի մուշտարի։

Էսէնց է, մօդա է, մօդա է, մօդա է։

Յ. Մելիք-Յակոբեան

~~~~~

135.

Բայաթիք [1])

(Էյրիք)

Տեսնում է ձեզ, հայեր, Էն,
Ման շատոնք, որ հայկը ևն,
Բայց չգիտեն հայերէն,
Որով և շատ հայ երևն։

[1]) Էյս «բայաթի» կոչված ասիական եղանակը—ճշմարիտը ասած դեռ ժողովրդականութիւն չէ՛ ստացել մեր հայերի մէջ։ Ու եթէ քանի մի անհատներ այդ եղանակը գիտեն, նոքա էլ երգում էն, դժբաղդաբար, թիւրքերէն։ Ու որովհետև իմ միակ ցանկութիւնն է եղել և է՛, որ ամեն տեղ, որ ամեն հայ շրջանում հայ լեզուն, հայ բարբառը տարածուէր, և ամեն մի երգ, թէկուզ եւրոպական, թէ կուզ ասիական եղանակի վերայ յարմարեցրած, հայ բառերով հնչուէր՝ հէնց այս պատճառով մեծ բաւականութեամբ հրատարակեցի այստեղ հանդուցեալ Մովսէս Ջ.օհրաբեանցի «բայաթիքը», որոնք թէ՛ երգելու յարմարութիւն ունին և թէ՛, մանաւանդ, շատ հետաքրքիր կարող են լինել ամեն մի ընթերցողի համար՝ իրանց բազմազան իմաստներով և դարձուածներով։

Գ. Վ. Գրիգորեանց

Գեղջուկ մի՝ երբ կալ կասէր,
Իւր կնոջ, որ ծոյլ էր՝ կ'ասէր՝
Օգնի՛ր, անգո՛րծ կին՝ կասի՛ր,
Թէև սրտումդ քիչ կայ սէր։

Մարդ մի տիւք նոր հաս էր,
Ողջ իւր կայքին, ինչ հաս էր՝
Վ՚ատանեց,—հարցրին՝ թէ հասի՞ր
Կամքիդ, ասաց՝ հա՜, հա՜... սէր։

Կան մարդիկ, զուր չարչարին,
Կան՝ որ ուժեք չար չարին.
Կան և շատոնք՝ լի ոխով
Չատուցանեն չար չարին։

Թէ փորձես դու սով, որ ես
Տեսի, գուցէ սովորես
Ապրել ինձ պէս չափաւոր,
Եւ ոչ ինչպէս սովոր ես։

Գո՛հ եմ ես ողջ կողմանէ,
Տէր պաշտպան իմ կողմանէ,
Ո՞հ, երանի՜ այն մարդոյն,
Որ Նորան իւր կողմն անէ։

Երանի՜ այն տան, ուր ա՜լս։
Վ՚ախ, ցաւ չկայ, այլ ուրախ
Կենում են, որ ասել է
Ջոկ խօսքերով՝ խրա՜խ ուրա՜խ։

Մի՛ համարիր խաղ օղին,
Էյն արիւն է խաղողին,
Յետ թէ չառաջ կ'կորչին
Խելք նրանով խաղողին։
~~~~~

Մ'ինք ուզեմ գնել մեծ գետին
Ամա մեր յայտնի մեծ գետին,
Բայց ցաւ է՝ թէ չը հասնեմ
Ես յս ցանկալի իմ կէտին։

Գիշերք՝ ուզիմ ես, հա, մեղ,
Դու էլ աւել մեղմ, համեղ
Խօսքով գլխիս քսուս ես
Մեղադրանքի ցեխ, համ եղ։

Մի մարդ ասաց ինձ՝ բա՜, գին
Ձ'ունի փոքրիկ ձեր բակին,
Բայց ափսո՜ս, որ կայ այս տեղ
Եւ այժմ կռատուն կամ բազին։

Դու՝ որ տան հարս ես առաջ,
Գործքով միշտ քեզ տար առաջ.
Եւ ողջ բանից դու առաջ՝
Էհզ կաց մեծիկ և առաջ։

Ինձ պէս կարդին կաքաւել
Կարող չէ ոք, կաքաւ էլ.
Բայց ափսո՜ս, որ չեմ կարող
Ինձնուս ինչ մեղք կայ,—քաւել։

Ես 'ի բնէ եմ ջանասէր,
Մայրս միշտ ինձ ջան ասէր,
Մի՛ տար քեզ շատ նեղութիւն,
Ելդքան սատիկ ջանասէ՞ր։

Ասում են՝ թէ մի մտան էր
Վասակին, որ ազգ մտանէր.
Բայց իմ կարծեօք արժան էր
Արել Նորա ողջ մտանել։

Յոգնակի են՝ ել կամ նել,
Մեք եզակի ունինք նել,
Որ իւր բարքով ու վարքով
Չարդ էր մեր տան երկար նել։

Երբ հասակիս հասաւ չափ,
Հասկացայ իմ գին ու չափ,
Եւ դրի ամեն բանիս չափ՝
Առելով վատն մահու չափ։

Ես ինձ համար սատար եմ,
Բայց և այլոց սատարեմ,
Պատճառ՝ ունիմ ջոկ արհեստ,
Ասել կուզեմ՝ սատար եմ։

Մարդ, ունիս կեանք կարճ, պատիր,
Բարի գործքով քեզ պատիր,
Որ ասել է՝ միւս կեանքում
Վայելչութեան քեզ պատ դիր։

Մի մարդ ձեռին ջուխտ մոմ վառ,
Ուսին խաչ վառ, ջոկ մեծ վառ,
Ուխտ էր գնում երգելով
Շարականին երգը՝ վառ։

Ստեղծեց մարդին մի օր Էն,
Կանք միշտ հաստատ այն օրէն,
Բայց, ափսո՜ս, որ չենք պահում
Նորա առաջ սուրբ օրէն։

Վատ խաղըդ մի տարածիր,
Եւ քո ամեն տարած իր
Ապօրէն է, մի՛ պահիր,
Ինչ տեղ կ'ուզես՝ տար, ածիր։

Մայրս առաւ մի գիրք փոխ,
Երբ սովրեցայ ասել փոխ—
Օրհնեց սիրտըն, ասելով՝
Բարով որդեդդ լինի՛ փոխ։

Ձմեռ ուներել դէպք լալի,
Ձեռ էլ սիրտս ձայն լալի.
Բայց սիրտը եմ ես անչափ
Թանգ քարերի և լալի։

Էին երգող մին՝ գիւղմ—Հայ է,
Մ'իթէ կայ ոք, ով հայ է՝
Որ չ'պատուէ հին աւանդ
Եամ անտարբեր նրան հայէ։

Իմ բայաթին նոր երկ է,
Եղանակով ջոկ երգ է,
Ո՛վ կամենայ՝ թող կարդայ
Եամ թէ հաճի՝ և երգէ։

Մ. Աղեքս. Օհրաբեանց

136.

Ո ւ ղ ե ր ձ

Ի հանդէս օծման Արբաղնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգի Երուսաղեմի Տեառն Մակարայ Ա. Ընտրեալ Մայր Եկեղեցւոյ՝ Արբոյ կաթուղիկէ Էջմիածնի՝ Տեառն Մակարայ Ա. Ռաջնոյ, և Ընտիր զանազան կայսերական շքանշանաց։

(10 Նոյեմբերի 1885 թ.)

Տարփողական՝ ձայն յԵթեկաց՝ կից ընդ ահեղ՝ որոտման.
Յերկեր սուրեալ՝ ընդ մէջ ցկլեաց՝ զերկնից կամարն՝ ամպրոպական։

Էին Ընթոռ՝ ընդ այն կամար՝ ընդ կապուտակ՝ երևի.
Օ. ուարթնոց երամ՝ թևապարփակ՝ անդ յերդ անդուլ՝ ակմբի։
Բամից զուարթնոց՝ պարագլուխ՝ Հրեշտակապետն Գաբրիել
Վ. հ յԸնթոռոյն՝ աւանդ առնու՝ նա՝ և պատգամ, մեզ բերել։
Մարգարտայեռ՝ թագ է աւանդն՝ և շափիւղեայ՝ ոսկեհուռ.
Եւ Գաւազան՝ եղեգնաձև՝ ցուպ հովուական՝ կարծր 'ի կուռ,
Ընդունագեղ՝ Վոդ ընդ նոսին՝ արեան Փրկչին՝ ապացոյց.
Օ. որ Նա ընդ իւր՝ 'ի համբառնալն՝ փառաք յերկինս՝ վերացոյց [1])։
Կան ի ձեռին՝ պերճ զուարթնոյն՝ երեք աւանդք՝ այս անզոյգ.
Պարգեւք՝ բաշխեալք ի կողմանէ՝ Եռանձնութեանն՝ համազոյգ։
Ակնկառոյց՝ առ զուարթուն՝ կացուրդն համայն, կայ յակաճիռ.
Թէ ո՞ւմ արդեօք՝ վիճակեսցին՝ մեծ այս պարգեւք՝ երկնաձիր։
Բախճանական՝ ձայն յԵթերաց՝ առ Գաբրիէլ՝ հաս անդէն.
Օ. առեալ պատգամն՝ ընդ փոյթ մեկնել բնաւից կարծիս՝ փարատել։
Կորովամիտ՝ այն զուարթուն՝ յայտնէ զպատգամ՝ հրամանին.
Թէ «զՏէր Մատար՝ Ընտուաճ ընտրեաց՝ յԸնթոռ Մեծի Պարթևին»։

[1]) Եսայեայ կգ. 1 և 2։ Յայտ. ժթ. 13.

Ապա ղԹաղն՝ դնէ ի Գլուխն, Գլուխ կալցիալ Հայկազանց.
Զուարթ բառբառով՝ ասէ ցնա «Աստուած ՀԻՒղ պահակաց»:
«Թագ այս բերէ՝ ընտանութիւն՝ Հարսնեան՝ սուրբ խուրբ [1]):
Ի զօրանալ՝ ընդդէմ թշնամեաց՝ հակել հօտին՝ հայրենի»:
«Ասկեձամուկ՝ ցուպս Հովուական՝ յահալիկութիւն՝ ըմբոստաց.
Ի հալածել՝ զգայլս ի հօտէ՝ ի սահմանաց Հայրենեաց»:
«Իսաճ զայս ՊՈՂ՝ անձեռագործ, պարզեալ առամբք՝ լուսափայլ,
Պաշտօնէիցն՝ ակնբեղոց, կրել յառաջուստ նաղաքայլ՝»
«ՊՀակավարիս տանս Թորգոմեան՝ ՎՀՀաղնէիս՝ Մեծափառ.
Զի մի՛ յերկիր՝ ծաւալեսցի՝ մաքուր ընչոյն՝ տուրևառ»:
Ի սպասու՝ ՎՀհափառիս՝ կան յաջ յահեակ՝ սրբազանք.
Ազօթանուէր՝ սուրբ հայցուածոյն՝ յերկինս սլանան՝ արձագանք:
Պաճառ խմբիցն՝ սրբազանից՝ պայծառազարդ հրաշատես.
Շուրջ բոլորեալ՝ զանձամբ ՎՀիս՝ հրաշին համակ՝ յայս հանդէս,
Ոմն ի նոցունց՝ ըստ Մովսիսի՝ առեալ զեղջիւր՝ ի ձեռին.
Իւղ անուշից՝ յերկինից բաշխեալ՝ ի գլուխն հեղու՝ ՎՀհանձինն [2]):

[1]) ՊՀատ. ը. 9.
[2]) ՊՀատ. ը. 12.

Սատար հրեշտակն՝ պատգամաբեր՝ անդրէն յերկինս սլանայ.
Զպատգամացն՝ յամբովկ բերումն՝ ԵռանձնուԹեանն՝ յայտնէ Նա:
Ընդէն և անդ՝ պարք անմահիցն՝ խնդան հրաշուին՝ համօրէն.
Ընդ մահացուացս՝ ԵռանձնուԹեանն՝ տան գոհուԹիւն՝ փոխարէն:
Մեծն Մասիս՝ զերկր շափառուկ՝ զարտմուԹեան՝ անփարատ.
Ի բաց մերժէ՝ ցնծայ պարէ՝ ի սիրտ վառեալ՝ անարատ:
ԵրկնաԹռիչ՝ յերկր զադաԹանց՝ զմեծ գոհուԹիւն՝ յայն եԹեր.
Վերառաքէ՝ առ Երարիչն՝ փայլեալ ի դէմս առընԹեր:
Նա ինքն Մասիս լեառն լերանց գոռ ի բարձրանցն օդաչու.
Վհվիս Մեծի ցանկայ մատչել՝ ոտիցն համբոյր՝ երկնաչու:
Ե՞րբ անանակուռ յաղԹի հիմանց՝ ընդ իւր գագաԹ պսակալարդ.
Որոտաձայն՝ տայ աւետիս՝ Նախնոյն Հայկայ՝ ալէզարդ:
Յոխորտ ի ձայն Նորին զարմից՝ և սերնդոցն՝ քաջազանց.
Զնոյն կարդայ՝ Նա զաւետիս, ձայն տան կմախք ի շերմաց:
Նախնեացն Մեծի Լուսաւորչին և յաջորդացն սուրբ ոսկերք,
Եաչ առեալ՝ բերկրին ցնծան, զոգեաս խօսին և համբոյր:
Հայկազնեան յոյս՝ սուրբդ ԵԹոռ՝ զքող պարսԹեանդ սևաԹոյր.
Ի բաց մերկեալ՝ հրաշուեաց խնդա, զՓեսայդ զրկեա ի համբոյր:

*

Ընդհանուր Փեսային՝ զայս սուրբ Ընծա՝ զայս սուրբ ա-
ւանդ Հայրենեաց.
Ընախատ պահեալ և անարատ՝ Հօտդ Մեծի Հաւատաց:
Յոյս անխաբ է՝ յաղթ Ընտանեան, թէ եռանդուն Դուք
հոգւով.
Նկրտեսջիք ի բաղդ փայլել՝ զԸզգն և զԸթոռ՝ մեծ
գթով:
Ո՛վ Ընարիչ՝ զմեր Հայրապետ՝ զմեր Հովիւ՝ հոգևոր.
Նաև զԸթոռ՝ Մեծի Դիտիս՝ պահեա յաւէրժ փառաւոր:
Յնդուսին սրտի՝ մեծին Մասեաց՝ նաև բանիցն արձա-
գանք.
Յաղեալ ի յիշձ՝ դաղար առին, դաղար առցին և իմ
բանք [1]):

Ամենապատկառ ակնածութեամբ ուղերձ է՝
Յովհաննէս Հահանայ Տէր-Յակոբեանց, Տփղեցւոյ

137.

Օծումն

Տ. Տ. Մակար Ա. Կաթուղիկոսի ամենայն Հայոց

(10 նոյեմբ. 1885 թ.)

Այսօր Ս. Էջմիածնայ Մայր տաճարում կատարվում է մեր ազգի Ընդհանրական Հայրապետի օծումն: Նկրկայումն դա հայ ազգի կեանքում ամենանշանաւոր

[1]) Ակզբնատառք տանց ոտանաւորիս բաղհիւսեն «Տէր Մակար Կաթուղիկոս Ամենայն Հայոց»:

հանդիսան է և երևոյթը: Հայ եկեղեցւոյ վարչութիւնն, որ մօտ երեք տարի առանց գլխոյ ճեացած էր, վերջապէս պիտի ստանայ իւր Օծեալն այսօր, որ պէտք է գլխավարէ հայ եկեղեցւոյ հօտի հոգևոր և մտաւոր կեանքը: Հասկանալի է, թէ որպէս ծանր և տաժանակիր է հայրապետի պաշտօնը, մանաւանդ ներկայումս: Ամեն հաւատացեալ հայի վերայ պարտք կայ այսօր աղօթելու, որ Սուրբ Օծման շնորհիւ Հոգւոյն Սրբոյ շնորհքն առատօրէն զեղանի Օծելոյն վերայ, որպէս զի նա կարող լինի, իբրև արժանաւոր յաջորդ Ս. Լուսաւորչի, Քրիստոսի հօտը հովուել, ուղիղ վարդապետութեամբ կրթելով և դաստիարակելով նրան հոգեպէս և մտաւորապէս: Այսօր ամեն հայ պէտք է ջերմեռանդութեամբ աղօթէ Ամենակալ և մաղթէ, որպէս զի Նորա Տիրական խօսքն, որ Պօղոս առաքեալին քաջալերում էր ասելով. «Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի» քաջալերէ և մեր նոր Օծեալ Հայրապետին՝ յօդուտ և ի ծառայութիւն իւր սուրբ եկեղեցւոյ և սիրելի ազգին:

Այսօր թող ամեն ճշմարիտ հայ աղօթէ և մաղթէ, որ վերոյիշեալ խօսքերը Ամենակալ քաղցր հայեցողութեամբ հայ եկեղեցւոյ և ազգի վերայ իրագործվին և մեր Հայրապետի, իբրև մարդու, տկարութեան մէջ, երևի Նորա զօրութիւնը ի շինութիւն անթիւ մարտիրոսներ և նահատակներ տուած հայ եկեղեցւոյ և սորա հօտի:

Տարակոյս չը կայ, որ այսօր Հոգին Սուրբը կը զօրացնէ և կը կազդուրէ մեր Հայրապետի զօրութիւնքն ի ծառայութիւն սուրբ եկեղեցւոյ. իսկ մեզ, սորա զաւակներիս, կը ճեայ սիրով խմբվելու Նորին Օծութեան շուրջն իբրև որդիք հարազատք իրանց հօր մօտ և Նորա ղեկավարութեամբ գործելու յօդուտ ընդհանուրի, իւրաքանչիւրն իւր լումայն դնելով հասարակաց դանձանակի

մէջ, որ իւր մտաւոր և հոգեկան ոյժը նուիրելով, ոչն իւր նիւթական միջոցները զոհելով։

Ըյսպիսի պարտականաւորութեամբ միայն Աստուծոյ հաճելի կարող ենք լինել և մեր գործերին արդիւնաւոր ընթացք և ելք տալ։

«Մեղու Հայաստանի»

138.

Կրօնափոխութեան վերայ

Փողն կամ կնոջ համար կրօնը փոխողը վատ է,
Ձէ համաղուած կրօնափոխ լինողը անհաւատ է,
Աչքիցը կելլէ դեղեցիկ կինը՝ փողը հատնելով,
Ըստ որում նոր ընդունած կրօնի մէջ անհաստատ է։

Երկրնուց ոմվ լուր բերեց, թէ սա ազգն է դրախտական,
Ով բարի արդար եղաւ, տանջանքներից նա ազատ է,
Ամեն ազգ մի սար ունի, քամակը տուել է նրան,
Ով ջ֊լուան, մեր ազգի էլ հաւատը սուրբ, անարատ է։

139.

Հայրիկն Հայոց

Փութա՛, հովուապե՛տ, սիրող յար ազատ՝
Հարազատ,
Փարատի՛ սև ամպ, փայլի արդ արև
Նրդարև,

Փողփողին դաշտեր, ազատ առնինք քայլ
Առ հնոց գայլ
Յրցուր ցուպերդ, հայերն կանչէ յ՛արօտ մի՝
Յար հոտ մի։
Ճանկեր արիւնոտ կուրծ մեր թափ առինք,
Հափառի՜նք,
Եկո՛, հովուէ՛ մեզ, սիրածդ, ազգասէր,
Ազգ աս էր։
Դու գրթոտ նըման երկնի հայրիկին՝
Յ՛այր՝ ի կին՝
Յ՛որոց և յ՛ալես սփռէ լոյս սէր,
Ո՞յս ևս է՞ր
Յաւի՝ էը զարթնու հրաշուած յ՛այգուն յ՛այն
Յա՛յ, քուն հայն։
Սոխակ մ՛էիր մերթ ի նոճս, ե՛րգերդ՝
Վ՞երգերդ
Առած բիւրաւոր՝ դեռ դու կանչեցիր՝
Ա՜ն, չ՛է ցիր
Երդերդ միշտ մեր սիրտ, սիրոյ՝ հոգւոյ ձայն,
Յ՛ոգւոց հայն
Հանեց՝ վառեցաւ ձայնէդ՝ իմացաւ
Իմա ցաւ.
Վա՛ղ խնդրէ հայն արդ, ամբոխ ամբոխ չ՛է
Ամբողջ է.
Երդ ըսէ՛ հայուն, ըսէ՛ ազգ անոր
Աստանօր.
Ես կարօտ եմ վառ սրտից՝ ձեռքերի,
Ձեր գերի,
Եղբարքն ազատե՛լ լոյս տալ ի Ա՜սիա,
Ի մաս յ՛իս
Առնել իմ նախնեաց արիւն արտասուքէն,
Երդ սուգէն

Ելնեն հայք՝ օրհնեն սիրով յաւէտ իս
Յ'աւետիս.
Յանկամ, որ հայք ինձ լսեն ահ, յամայր
«Ահա մայր».
Այս իմ վերջին տենչ միշտ ձեռք Հայկայ կան
Հայկական։

Պետրոս Դուրեան

140.

«Մեղու Հայաստանի» Լրագրի 25-ամեայ յոբելեանին[1])

Քսան հինգամեայ դորձքիդ ձիք շընչան
Այսօր լրանայ, Մեղու ժրաջան.
Գործքդ խոհական, լուիկ ու անձայն,
Իսկ գործքիդ վաստակ՝ հռչակ հանրական։

[1]) Ընդունի հայ հասարակութիւնը, պատիւ համարելով իրան և հայ գրականութեանը, 1883 թ. յունվարի 2-ին, կիւրակի օրը, մեծ հանդիսով և շքեղ կերպով կատարում է «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեայ գոյութեան տարեդարձը, որի նկարագրութիւնը ցանկացողը կարող է տեսնել նոյն լրագրի, № 3-ի մէջ։ Ահա, այդ փոքրիկ, այդ մի բուռը հայ հասարակութիւնը, բաւական չ'լինելով միայն ճառախօսական բարեմաղթութիւններով, ազգային երգերով և անվերջ ծափահարութիւններով ու կեցցէ'ներով, իրականապէս էլ կամեցաւ ցոյց տալ իրա սրտի ուրախութիւնն ու համակրութիւնը։ — Եւ ահա, իրա մի քանի անդամների մէջ, պ. պ. Մ. Մերզոյեանցի, Մ. Կարապետեանցի և Ե. Նալբեանցի աշխատութեամբ, ժողովելով 1777 րուբլի, այդպիսով գնահատում է նոյն լրագրի խմբագիր պ. Պետրոս Միմէոնեանցի անձնուէր գործունէութիւնը և քաջալերում նորան իւր ընտրած ասպարիզին մէջ։

Դու էիր յաջող այն քաջ նաւավար,
Ու յառաջ տարար նաւ խոհեմաբար.
Մինչ գոռ ովկիանու ալիք կատաղի
Նուվ տալու ուժգին էին պատրաստի.

Դարշապարիդ տակ խոնարհից ովկիան.
Ալիքներն իրենց յետ առին սահման.
Եւ դու նաւապետ խոհեմ յաղթանակ
Պարզեցիր ալեաց վերայ համարձակ։

Դու էիր խելօք, խոհեմ պարտիզպան,
Պարտէզն էր սքուր, տընկուր մեներան.
Ու բուն իւր վայուն չըչէր զոր գիշեր,
Ընջուր, անպըտուղ, տերևթափ ծառեր.
Մըտար այդ տընկուր պարտէզ մենաւոր,
Ջ'ուր, պըտուղ տըվիր հարիւրաւոր.
Շունչ առաւ պարտէզ. թռաւ բուն սքուր,
Ծիծառն ու Սոխակ եկան ուխտաւոր։

Դու էիր անխոնջ այն քաջ բանաւորը,
Ու վտահ մտար փըշալի դաշտը.
Փշոտ, քարքարոտ դաշտը մաքրեցիր,
Աներմ նուիրական դու անդ ցանեցիր.
Դաշտը փըշալի տըւաւ մեղ առատ
Ծաղկունք ու ցորեն՝ բարիք հարատատ.
Փշերն ու որոմն իսպառ չը.քացան.
Վ'երաճնեց կրկին յոյս կենդանութեան։

Դու էիր խոհեմ հովիւ աչալուրջ.
Դաշտ սար ու հովիտ ոչխարք անտրտունջ
Յարօտ կ'ելնէին աներկիւղ վստահ,
Չ'ի քեզ պէս հովիւ ունէին հոկայ.

Հօտդ ազատ ճեաց. չը կորաւ ոչ մին.
Նոքա խըմբովին էին միասին,
Օի քաղցր և անուշ սրըընդիդ ձայնը
Շուրջըդ բոլորէր քեզ սիրող հօտը:

Ովկիան կատաղի իւր ալիքներով
Քաջ նաւավարիդ խոնարհեց փութով:
Պարտէզ մենաւոր և բուն սրգաւոր
Տեղ տուին պաղոց, թռչնոց ուխտաւոր.
Դաշտը քալքարոտ և փըշերով լի
Տըւաւ մեզ ծաղիկ, ցորեն բարիլի.
Ոչխարք անհովիւ, հովիւ ունեցան,
Երձակ համարձակ յարօտ դուրս եկան:

Վո այս աշխատանք հըռչակ հանուեցաւ
Այս յառաջ գալով, խաւար հեռացաւ.
Խաւարին որդիք թողին ասպարէզ,
Լուսոյ ժառանգներ եկին ի հանդէս.
Երևնեկ տըւին քեզ շատ հարազատներ,
Դէպ քեզ օգնութեան մեկնելով ձեռքեր.
Առողջ խորհրդով կազմեցին խումբեր,
Նոր ոյժ, զօրութիւն քեզ բերին նըւէր:

Նոցա փառք, պարծանք,
Երախտագէտ են.
Նոցա յիշատակ
Անցցէ միշտ աւեն:

Իսկ քո օգտակար վաստակ ժըրաջան
Եյսօր և յապագ կեցցէ՞ անսասան.
Նահապետ անուն ոսկեայ տառերով
Հայ ազգը ձակտիդ թող գըրէ սիրով:

Ելոհեն Թահմազեան Բաֆըտպաշեան

141.

Ուղերձ առ զօրապետ Լազարեան[1])

Քաջ զօրապետ, մեծահամբաւ Լազարեան,
Ելածայի, Պարսկ հերոս, քաջ իշխան,
Ընտիր արիւն, աղնիւ սերունդ հայկազեան,
Փառք հայերուս, որ դու ես մեզ ազգական,
Հայ սրտերից չես հեռանար յաւիտեան,
Դու քո ազգիդ փառք ու պարծանք պատուական:

Հարազատն ես դու մեր Այսերն Ինքնակալ,
Ով դիւցազուն, մեծ Լազարով գիներալ,
Ընչաղէտ ու վեհ, որպէս Պահան, Աննիբալ
Քիչ զօրքերով շատին անող ձերբակալ,
Երեսըդ պարզ, ձակատդ բաց անսխալ,
Տէրը պահէ քեզ յարաժամ անսասան:

Երբ դու ելար Ելածայի կատարը,
Տաճիկ զօրքին պատից մուրճն ու խաւարը,
Խափանեցիր տաճկաց բոլոր հնարը,
Պաշարելով նոցա զօրաց գումարը,
Տեսաւ Էիվնի քաջ, հեռատես Մուխտարը,
Թողից, փախաւ, զօրք, թնդանօթ, հրացան:

---

[1]) Յովհաննէս Պաւլեան Լազարեանցը վախճանած է 1879 թ. օգոստոսի 14-ին: կարդալ «Մոխակ Հայաստանեայ» առաջին հատորի երկրորդ տպագրութեան մէջ «գեներալ Յովհաննէս Պաւլեան Լազարեանցի տապանագիրը» խորագրով բանաստեղծութիւնը, իւր համառօտ կենսագրութեան հետ:

Պ. Վ. Պըլճըրեանց

Վահ Լօլիսից դու առնելով օլինակ,
Գոռող տաճկի զօրքին արիր խայտառակ,
Հզօր ձեռքով բարձրացուցիր զլօշակ,
Ընչաղէծ ալծուդն շատ մարդ դարձաւ հպատակ,
Սուրբ խաչն առաւ կիսալուսնին ոտքի տակ,
Փայլից Փրկչի եկեղեցին սլբազան։

Ա՛վ դու քաջ հայ, քաջ զօրապետ անդրանիկ,
Բարձրահասակ, կերպարանքով դեղեցիկ,
Հզօր, կտրիճ, պատերազմող մէկ հատիկ,
Վեզպէնելով է մեր ազգը ելջանիկ,
Տխուր հայոց ուրախութեան աւետիք,
Քաջ հայերով կը պարծենայ Ռուսաստան։

Կեցցէ այժմեան Հուշի քաղաքն հաստատուն,
Որ ծնել է քեզի նման բանիբուն,
Պատերազմի գործոց հմուտ և գիտուն,
Ուր որ լինիս թշնամիդ է քո նկուն,
Անվեհեր ճնշայ շառաւիղդ միշտ կայուն,
Քաջերի ծնի զերդ պատանդ քեզ նման։

Մեծ գործերուդ բոլոր աշխարհն է վկայ,
Քաջ անունդ հասաւ մինչև Եւրոպայ,
Թէ լինէի ինքս Գամառ-Քաղիպայ,
Հատ լաւ խօսքեր կը գրէի քեզ վերայ,
Խեղճ Ղ-ֆ-ան հազիւ քանի մ՛խօսք գոյ,
Տէր իմ, խնդրեմ, լե՛ր այսքանով բաւական։

142.

Կաղակի մօր օրօրոցի երգը

(Լերմոնտովից)

Վերնի՛ր, որդեակ, իմ սիրասուն՝
Օ՜ր ՚ր, բալա՜ս իմ, ՚ր ՚ր։
Լուսին նայում է փայլածուն
Օրօրոցիդ պճնաւոր։

Վեզ կը պատմեմ անցք ու դէպքեր,
Երգեր կ՛երգեմ զեղաւոր,
Նիրհի՛ր, սիրուն, փակի աչքեր...
Օ՜ր ՚ր, բալա՜ս իմ, ՚ր ՚ր։

Տիեզ սահէ քարէ ցքալ,
Տմոյն ալիքն են ծփում,
Սողում է անդ չէչենը չար,
Ելիում խանջարը սրբում։

Բայց քո հայրն է քաջ պրկին՝
Մարտադաշտի հին զինուոր...
Վերնի՛ր, մանկիկ, իմ միածի՜ն,
Օ՜ր ՚ր, բալա՜ս իմ, ՚ր ՚ր...։

Հուտով կը գան, դու կը տեսնես,
Ելիշաւանի օրերն.
Եսպանդակներ ոտդ դընես,
Զեռդ առած հրացանն։

Թամբդ մարտի պիտի նախշեմ
Ոսկեքանելով, իմանա՜ս.
Վերնի՛ր, որդեակ, հարազատ իմ,
Օ՜ր ՚ր ՚ր ՚ր, իմ բալա՜ս։

Հսկայ կը լինիս երեսիդդ,
Հոգւով կաղակ այն օրը.
Պիտ մուրցացի տաս ձեռովդ
Ձամբայ դժող քո մօրը:

Գաղանագողի... աչցունք... ոլքան
Պիտի թափեմ այն գիշեր.
Կընի՛ր, հրեշտակ, իմ սիրական,
Կուն դայ աչքիդ քաղցրաբեր:

Կալօտովդ պիտի հիւծեմ,
Ընդմիջմամբ քեզ սպասեմ:
Ամբողջ օրը պիտ՝ աղօթեմ,
Գիշերները ֆնալ ձգեմ:

Թուի պիտի թէ՝ տաղտուկ ունիս
Պանդխտութեան մէջ օտար,
Կընի՛ր մինչև հոգսեր չունիս,
Օ՜ր որ, բալա՜ս իմ, ալդար:

Կեղ պիտի տամ՝ հետդ տանես
Սրբապատկեր պահապան՝
Աղօթելուց նորան նայես,
Էյն պատկերին, գլխական:

Ո՛ր կռուի մէջ որ էլ մտնիս,
Մի՛ մոռացիր քո խեղճ մօր...
Կընի՛ր, ուրիակ իմ սիրելիս,
Օ՜ր որ, բալա՜ս իմ, որ որ:

Գ. Նապետեան

143.

Հայ բնութեան գաթիկը

Կան տաքի է, որ իմ քաղցր ամուսին
Ընուշ մանրիկ զաւակներուս հետ մէկ տեղ
Կաղցած, ծարաւ, թողեր մեր տուն մեր երկիր,
Պանդխտութեան մէջ կը տանջուիմ ես այստեղ:

Իմ հայ՝ մոխիր, ջուրըս լեղի է փոխուիլ
Երատասուիլէս աչքերուս լոյսն է քաղուիլ.
Օ՜օր ու գիշեր ծանրը բեռներ կըրկիէս
Մէջքս ծռեր, իսպառ կըմախք եմ դարձեր:

Հայց գեռ նոյնն եմ, նոյն բնութիւր եմ աղքատ.
Մերկ ու քաղցած գիմ կեանք կ'ողբամ յուսահատ.
Իմ բաղդակից շատ մի անսիրտ հայ մարդիկ
Կու գան կ'ասեն «շընորհաւոր քո գաթիկ»:

Ո՛չ. մենք մեր գաթիկն այն օր կը տօնենք,
Երբ մեր գաւկաց, մեր ամուսնուն հետ մէկ տեղ
Մեր պապերու օճախներուն մէջ ժողված՝
Մեր քրտինքով վաստակած կ'ուտեմք հալալ հայց:

Ո՛չ. մենք մեր գաթիկն այն օր կը տօնենք,
Երբ կը շատան մեր մէջ բարի հարուստներ,
Որ մեր ձեռք ոյժ և մեր գաւկաց գիր ուտում
Տալու համար չը լինայեն արծաթներ:

Ո՛չ. մենք մեր գաթիկն այն օր կը տօնենք,
Երբ կը շատան մեր քաջ արթուն հովիւներ,
Որ հայու սուրբ եկեղեցւոյն չեն թողներ
Որ ձեռք գարնեն մեզ պղակրօն մարդոցներ:

Ելյ՛. այն օր «շընորհաւոր մեր զատիկ»
Սարենք ասել մենք մէկ մէկու խնդագին.
Ելյ՛. այն օր հայրը որդուն, որդին մօր,
Եղբայր եղբօր զատիկ կարդայ շընորհաւոր։

ՍԷՔ

144.

Ա՛ս Տարաշխարհիկն Վարդանոյշ

(«Հանգիստ իմ անոյշ»[1])
երգի եղանակով.

Վոյր իմ Վարդանոյշ, ո՜հ, ո՛ւր գնացիր,
Հայրենի տնակդ, ասա, ո՛ւմ թողեր.
Վո սիրուն այգին, անոյշ նշենին
Ի՞ր թողեր տրտում վարդն ու ձիթենին։

Ընբուժ վէրքերով ես էլ կամ 'ի խոց,
Սոխակի նման միշտ աղէտակոծ.
Եռուսաղն ի կարկաջ՝ լայ, ողբայ հեղեկ,
Սիրակէզ այգիդ մի՛ մոռնար, քոյրիկ։

Պէտ շա՞տ թափառիս դու օտար աշխարհ,
Շա՞տ ալեցունք թափես աչքդ 'ի ձանապարհ.
Պայծառ ճակատիդ սև ճակատագիր
Ո՞վ կնքեց, քո՛յրիկ, ճնշալ տարագիր։

Եւ իմ այլ աչաց արև խաւարի,
Ի տես սիրելոյդ հոգիս կը տապի.
Ո՜հ, այս իմ ցաւին գարման ի՞նչ պիտի,
Ի սէր, 'ի կարօտ կամ միշտ ծարաւի։

[1]) Տե՛ս «Սոխակ Հայաստանի»-ի Ը. հատորի Ն. տպագրութեան մէջ։

Ելյ թէ քանի՞-օն վիշտ կնքեալ են քեզ,
Վէրդ իմ, տակաւին և դու չդիտես.
Օտար երկնի տակ, օտար երկրի մէջ՝
Ողէտից հրով կայրուիս անշէջ։

Թէ Եսուաճ կամի քեզ դարձ ցանկալի՝
Ողջամբ ժամանես քո տուն հայրենի,
Ուր քո սիրելիք կ՛սպասեն անձկով,
Կ՛սպասեն, այո՛, ո՜հ, մեծ կարօտով։

Եղիշէ Վրդ. Մէջ-ապո-Հէանց

145.

Նուէր

Հայ մանկավարժ
Ա. Ա. Թահմիզեանցի յիշատակին

Վո գործեր, որպէս մի ծաղկեայ պսակ,
Դատաղիդ շուրջը կապած շրջանակ,
Վո երախտագէտ սանների սրտում
Վառ են պահելու քո սուրբ յիշատակ։

Թէպէտ դու հեռու մութ գերեզմանում
Ամէն հողի տակ հանգիստ պարկեցար՝
Սակայն քո անմահ անուամբ, նո՛վ մշակ,
Ամեն մի սրտում յարդանք ստացար։

Հանգիստ ոսկերացդ թող շնորհէ երկինք—
Երբև փոխարէն այն վաստակների,
Որով քո կենաց ամեն վայրկեանում
Ցոյց տուիր սէրդ ազգին սիրելի։

Յակոբ Ղազարեթեանց

146.

Առաքել Բահաթրեանց

(† 1883 թ. փետր. 5)

Յանկարծակի հիւանդացած Առաքել Բահաթրեանցին բժշկելու համար տեղափոխում են Նոր-Նախիջեւանից Խարկով քաղաքը: Հաղիւ թէ այդ ցաւալի լուրը հասաւ մեզ, և երկրորդ օրը, փետրվարի 5-ին, նա մեռնում է: Մեռա՜... ինչպէս հեշտ է արտասանվում այդ բառը և ինչ կարճ է նա և ինչպէս խորհրդաւոր:

Մեռաւ, վչացաւ, ժամանակի շրջանից դուրս եկաւ նա, մտաւ յաւիտենականութեան մէջ... ոչնչացաւ:

Բայց ով մեռաւ. ընտանիքի հայրը, որ թողնում է իւր ամուսինը, իւր մատաղ երախաներին սուգի մէջ անմխիթար և անխնամ: Մի ընկե՛ր, բարեկամ, որի կորուստը ընկերներին, բարեկամներին սիրտը ցաւով, վիշտով լցնում է, մի հայ-քրիստոնեայ, մի հայ-մարդ (բառի հասարակ նշանակութեամբ), որի մահը լսելով իւրաքանչիւր անցորդ ցաւակցութիւն է յայտնում և «ողորմի հոգուն» ասելով անցնում է... միմիայն: Ո՛չ այդ ամենը հերի՛ք չեն հանգուցեալ Բահաթրեանցի «մեռաւը» լրացնելու:

Առաքել Բահաթրեանցը մեռաւ, մեռաւ և առաջաւոր մշակներից մէկը, ոչնչացաւ մի անկեղծ հայ երիտասարդ ոյժ, որ նուիրուած էր ազգի բարոյական վերածնութեան: Մեռաւ Բահաթրեանցը և հայ հասարակութիւնը մանկավարժներից մէկը պակասեցաւ... քանի՞սը մնաց:

Հանգուցեալ Ա. Բահաթրեանցը Ղարաբաղի է. նա այն դաւառումն է ծնուել, որտեղի հայերը իրենց ընդունակութեամբ հռչակուած են: Մոսկվայի Ղազարեան Ճեմարանից դուրս գալով Գերմանիայում նա ընտրեց իրեն համար մանկավարժութիւնը իբրև մասնագիտութիւն: Եւ մանկավարժութեան դասախօսութիւնները լսելով և այդ ճիւղի մէջ ուսմունքը աւարտելով, իբրև մանկավարժ գործում էր նա Կրիմու Սիմֆէրօպոլ քաղաքում, մինչև որ Նէրսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրեց նրան Թիֆլիս՝ այդ դպրոցի բարձր դասատան աշակերտներին մանկավարժութիւն սովորեցնելու: Այդ ժամանակից հանգուցեալը աւելի յայտնի դարձաւ հասարակութեան, և անցեալ տարի, երբ Նոր-Նախիջեւանում բացուեցաւ բարձրագոյն հաստատուած հոգևոր դպրանոցը, հանգուցեալը հետևելով Նոր-Նախիջեւանի պատուաւոր հրաւէրին, գնաց գործելու այնտեղ իբրև տեսուչ նորաբաց հոգևոր դպրանոցի աւելի ձեռնտու պայմաններով:

Իբրև մանկավարժ, իբրև ուսուցիչ, և իբրև տեսուչ դպրոցական շրջանում գործելով նա ժամանակ էր գտնում և մեր աղքատ գրականութեան մէջն էլ իւր լումայն ձգելու. բացի հատուկտուր յօդուածներից, հայ ուսուցչական աշխարհում ծանօթ են և նրա «Հոգեբանութեան» և «Մէտոդիկայի» դրքերի հետ:

Մենք չունինք հանճարներ, հաղուագիւտ են մեզանում և տաղանդները, մեր դպրոցները նոր են սկսուել բարեկարգուիլ, մեր մտաւոր-հոգեկան հորիզոնի սահմանները դեռ նեղ են, հայութեան անդաստանը դեռ խոպան է, երբ մեր մէջ մի փոքրիկ ոյժ էլ գտնում ենք, որ կամենում է ազգին ծառայել և կարող է ծառայել, մենք պէ՛տք է, ըստուած վկայ, պէ՛տք է այդ ոյժը

պահպանենք, խնամենք. մենք ամեն լաւ բանով և ամեն լաւ կողմից դեռ աղքատ ենք:

Ման մարդիկ մեզանում, հարիւրաւոր մարդիկ, որոնք ելել մեռնէին, թուերից կը պակսէին, և աւելի ոչինչ: Բայց մեր խեղճ ազգի մէջ, երբ Առաքել Բահաթրեանցը պակսում է, պակսում է անտարակոյս անդաստանի մշակներից մէկը. յուսահատեցնողն այն է, որ տեղը պարապ է մնում: Մարդիկ մեզանում շատ քիչ են, գործողներ, այն էլ անկեղծ և անձնուիրաբար գործողներ, ջրտեղ են նրանք և քանի՛ հատ են:

Իւրաքանչիւր հայ, ելել ուզում է յարգել հանգուցեալ Ա. Բահաթրեանցի յիշատակը, ելել նա իւր մէջ գործելու ընդունակութիւն է զգում, այժ է ներկայացնում, թող մտածէ իւր առողջութեան վերայ, որ աւելի երկար կարողանայ գործել հայութեան համար: Իւրաքանչիւր հայ, որի սրտին մօտիկ է հայ ազգի բարօրութիւնը և վերականգնումը, թող մտաբերելով հանգուցեալ Ա. Բահաթրեանցին՝ պահպանէ, խնայէ իւր ազգի մէջ երևացող ընդհարկ, օգտաւէտ ոյժերը[1]): Թող յիշեն ամենքը, որ հանգուցեալ և մեր ամենի սրտին

[1]) Այդ հասարակ գիտութիւնը, այդ առօրեայ կեանքի դասը, ցաւելով պէտք է ասած,—կարծես—դեռ չէ՛ սովորել հայկական ազգը... նա գործողին, աշխատողին, օգտակարին, ասես թէ, չէ՛ տեսնում, չէ՛ ճանաչում, և բանի տեղ անգամ, չէ՛ դնում նրան: Բայց—համեցէ՛ք—երբ նա մահանում է, երբ նրա աշխատութեան գործիքները դադարած են, երբ նա այլ ևս գործելու ընդունակութիւն չունի ազգի, հայրենիքի, հասարակութեան համար—քանի՛ հոգոցներ, հառաչանքներ են դուրս թռչում ամեն մի սրտից. որքան «ողորմի հոգուն» ձայներ են լսվում շա՛տ շա՛տերի բերանից, և ի՛նչ երկար ու բարակ գանգակի ձայներ են ղողանջեցնել տալիս հայ եկեղեցւոյ գմբէթներից...փաստերը շա՛տ են, բայց տխուր:

Գ. Վ. Գրիգորեանց

մօտիկ Առաքել Բահաթրեանցը մեռաւ—ծաղիկ հասակում, դուցէ դեռ երեսունհինգ տարին չը հասած:

Սպանդար Սպանդարեան

147.

Խաչ օգնեա ինձ

Նուէր ծնողասէր մանկանց

Օրօրանիս մօտը նստած՝
Մայրըս անուշ երգելով
Ինձ շատ անգամ քուն էր արած՝
Խաչանշան կընքելով:

Ընչո՞ւ խաչը քեզ պահապան
Ընթիւ անգամ կրկնել էր,
Խաչն իւր սիրոյն միշտ ապաստան
Ամեն ժամում կանչել էր:

Երբ որ թոթով լեզուս բացաւ՝
Խաչի դասըն աւանդեց.
«Խա՛չ օգնեա՛ ինձ», կրկնի՛ր, ասաց,
Գրքոյս սիրով պատուիրեց:

Հանի՛ տարի էս սիրուն դասն
Ես շարունակ կրկնեցի,
Մօրըս հետը ժամ գընացի,
Խաչելութիւն սիրեցի:

Ուխտաւոխղե, թէ մատուռներ
Ուր որ ես ուխտ գնացի,
Համբուրեցի ես խաչքարեր՝
«Խա՛չ օգնեա՛ ինձ», կրկնեցի:

Երբ որ փոքր ինչ ես մեծացայ,
Մայրըս տուաւ քերական.
«Խաչ օգնեա ինձ», կրկնի՛ր, ասաց,
Խաչն է ուսման օգնական։

Խաչն՝ օգնական ինձ կանչելով
Ելլ ու բէնէն ըսկսայ,
Ամէն դասում միշտ կրկնելով,
Շուտով կարդալ սովրեցայ։

Վերականըն աւարտեցի,
Յետոյ մըտայ վարժարան.
Նօթը տարի ես կարդացի,
Ուսմունք առի զանազան։

Քանի՛ քանի շարագրածներ
Ու ես ինձէն գըրեցի,
Դեռ չըսկըսած՝ ձակատներըն
«Խաչ օգնեա ինձ» դրոշմեցի։

Աստուածաշունչ, աւետարան
Ոչխափ սիրով կարդացի,
Էյնքան խաչին սիրոյ նըշան
Սըրտիս մէջը ըզգացի։

Ըզգացի՛ որ խաչի ձառըն
Մեծ ուսմունք է մարդկութեան,
Մեր փրկութեան գլուխըն է նա
Ճշմարտութեան սուրբ նշան։

Ըզգացի՛ որ նախատանքով
Գողգոթայում տընկուեցաւ,
Բայց և յետոյ անհուն փառքով
Գըմբէթներում փայլեցաւ։

Ըզգացի՛ որ նա է բաժին
Ճշմարտութիւն գոչողին,
Նա է կենաց անձուկ ուղին
Ճշմարտութիւն սիրողին։

Երդարութիւն, ճշմարտութիւն,
Նըրան ծընունդ երկուսեակ,
Խաչըն է նըրանց այժ զօրութիւն,
Ազելութեան մայր դայեակ։

Ըզգացի՛ որ երկունք խաչին
Օձանը է քան ցաւ ծնող մարդ,
Բայց և ծնունդք արի, ուժգին
Ու ոչ որպէս հէգ կանանց։

Ըզգացի՛ որ առանց խաչի
Ճշմարտութեան սէր չը կայ.
. . . . . .
Ո՛չ կեանք, ո՛չ լոյս միտակայ։

Ըզգացի՛ որ խաչեալն Աստուած
Սիրոյ համար խաչ շալկեց,
Մարդկանց սիրով խաչը գըրկած՝
Խաչ վերս առնուլ քարոզեց։

Ըզգացի՛ որ խաչ կայ պատրաստ
Ամէն մարդու առաջին,
Ով կը ցանկայ լինիլ ըզգաստ
Գընալ գհետ մեր Փրկչին։

Ըզգացի՛ որ ես էլ ունիմ
Իմ յատուկ խաչն աշխարհքում,
Ու անտրտունջ պիտի տանիմ
Սիրով ամէն դիպուածքում։

Խաչ կայ մարդուն իր կրքերից,
Խաչ ամէն տեղ, ամէն ժամ,
Խաչ կայ անքուն ոսոխներից
Պատ, հալածանք յարաժամ։

Խաչ կայ կենաց աղէտներից
Խաչ բընական դիւրատար,
Խաչ կայ մատնիչ յուդաներից
Խաչ դժուարին ծանրատար։

Խաչ կայ անմիտ ոգէտներից
Խմասատակը հանճարին.
Խաչ կայ աշխարհ պաշտողներից
Եշխարհի հետ մրցողին։

Խաչ կայ խաւար յամառներից
Լոյս որոնող մաքերին.
Խաչ բարբարոս իշխողներից
Գերութեան լուծ ատողին։

Խաչ կայ անշարժ թոյլ վատերից
Յառաջադէմ ձրգտողին,
Խաչ կայ մոլար կարծիքներից
Ճշմարտասէր դիւցազին։

Խաչ կայ նենգաժոտ խարդախներից
Պարզ և ուղիղ սրտերին,
Խաչ կայ ըստրուկ ոգիներից
Պարտք իրաւունք խնդրողին։

Ըզգացի՛ որ. էսքան խաչերն
Էն խաչն մծա ոչինչ են,
Որ մարդասէր գրիծոտ Տէրըն
Բարձաւ իր ուսն հեղօրէն։

Նա է սիրոյ անհուն նշան
Խաչեալն սէր գրկխովին,
Սփոփանաց մեծ ապաստան
Սիրով իր խաչ բարձողին։

Ըզգացի՛ որ Փրկչէն խաչն էր,
Որ օգնական ինձ կոչեց,
Երբ որ մայրըս հեզ, որդեսէր
«Խա՛չ օգնեա՛ ինձ» դաս տուեց։

Քանի՛ քանի՛ նեղութիւններ
Որ իմ հանդէպ դուրս եկան,
Միտըս բերի մօրըս պատուէր,
Կոչեցի խաչն օգնական։

Քանի՛ քանի՛ հեշտութիւններ
Որ ես ինձէն գրկեցի,
Թափեցի յորդ արտասուքներ,
«Խա՛չ օգնեա՛ ինձ» կրկնեցի։

Վիշտ ու վտանգ փարատեցան,
Ըզգացի մեծ սփոփանք,
Ուրախ, փոթորիկ կուտակեցան,
Ընդի մէջէն անվտանգ։

Օրհնուի քո գերիզմանը,
Որդեխնամ մայր գթոտ,
Որ դու խաչի փրկարար դասն
Ուսուցիր ինձ համառօտ։

Թէ որ մանուկ թարմ հասակէս
Ձաղդէիր ինձ խաչին սէր,
Ո՞նչպէս պիտի լինէի ես
Մըրրկաց մէջ անվհատ։

Թէ որ խաչէ անյաղթ ոյժը
Ինձ յարաժամ չը սիրփէր,
Ո՞նչպէս պիտի տանէի ես
Սուտ անիրաւ զրկանքներ։

Մ՚այր իմ, դասըդ չեմ մոռանալ,
Վանի որ ես կենդան եմ,
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ
Խաչն ինձ պարծանք կանուանեմ։

Ուրախութեամբ ես կը տանեմ
Ամէն զրկանք, ամէն խաչ,
Վանի սիրով ես կը տեսնեմ
Փրկիչն ի խաչ բարձրացած։

Գ. Ասպետ[1])

148.

Պանդխտի երգ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հայրենիք, քեզ յիշելով կ՚արտասուեմ։
Զրկայ ծնող, չ՚կան որդիք, քոյր, եղբայր,
Զի՛ք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։

[1]) Այս «Խաչ, օգնեա՛ ինձ» բանաստեղծութիւնը թէև կեղծ անուան տակ է տպագրուած, բայց սա, ինչպէս ասում է բժիշկ Երամեանը, Գարեգին Մուրատեանցի «բանաստեղծական հանճարի գոհարներից մինն է», որ գրել է Վերսիսեան դպրոցում՝ դասատու եղած ժամանակ, 1863 թուին։ Այս բանաստեղծութիւնը, որքան յիշում եմ, տպագրուած է «Մեղու Հայաստանի» լրագրի 1866 թ. № 9-ի մէջ։ Գ. Վ. Գրիգորեանց

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին։
Ինակարանս՝ տխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց։

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն։
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ, նա իմն է, սիրէ զիս։

149.

Յանպատրաստի աղաչ բան[1])

Օրհնյս բռնաւոր, անխիղճ, անողոք,
Ա՜յ ինձ պէս անբաղդ աշխարհում այլ ոք։
Վանի՞ կան մարդիկ բարեբաղդ, անհոգ,
Իսկ ես տխրագոյն՝ սրտիս միշտ մորմոք։

[1]) Յանդուգնեալ Մովսէս Օհրաբեանցը Երզնկեցի էր և աստիճանով մայոր։ Նա ծնուած է 1810 թուին և իրա կրթութիւնն ստացած յայտնի հայկաբան Պօղոս վարդապետի մօտ։ Յանդուգնեալ Օհրաբեանցը, բաւական տարիներ պետութեան ծառայութեան մէջ զանազան պաշտօններ վարելով՝ արժանացած էր առանձին համակրութեան, զանազան կարգի շքանշաններ ստանալով։ Յանդուգնեալը—միևնոյն ժամանակ—թէ՛ քաջ, թէ՛ անձնուէր զինուորական էր և թէ՛ հայ գրականութեամբ պարապող մի ազգասէր, մի անվաստակ անձն։ Նա ընթերցող դասին արդէն յայտնի իր «Պարապոյ ժամք», «Մի քանի խօսք Յունական եկեղեցւոյ գլխաւորութեան մասին», «Վէպք զուարճալի

Մ՛ի՞ղբս են պատճառ, թէ ի բնէ այսպէս
Տուաւ ինձ վիճակ անլուր և անտես.
Վանի՛ վատ ցաւեր իմ վերայ կուտես,
Ընչ՞ս է քո չնորհաց, քո գութի հանդէս։

«Որ համբերիցէ, նա կեցցէ իսպառ»,
Այս էր իսկ իմ յոյս, իմ խօսք, իմ բարբառ,
Բայց կա՞յ գրիչ լեզու, որ պարզէ պատճառ
Իմ փորձած ցաւոց, հարուածքիդ անձառ։—

Այն անգին իմ գանձ-ջուխտ աչքերիս լոյս
Խլեցիր, Թողիր ինձ կոյր, անբաղդ, անյոյս.
Եւ այսուհետև ի՞նչ կեանք խղճալոյս,
Աորաւ հայելին սրտիս և հոգւոյս։

անցից», «Ընթադր Սանդուխտ Ղուանցի», «Նուէր ուղղափառ քրիստոնեայներին», «Յուցակ յիշատակարանի» և «Վիտուխոն շնորհաց» տպագրուած թէ՛ ոտանաւոր և թէ՛ արձակ աշխատութիւններով։ Նա 1870 թուին, հանգուցեալ բարեյիշատակ Դաւիթ Յարութիւնեան Ռոստոմ եանցից յետոյ, ընտրուեցաւ Նագուի Ֆայոց «Մարդասիրական ընկերութեան» նախագահ, և այդ բառի ընդարձակ նշանակութեամբ, կառավարեց երեք տարի։ Բայց նորա վերջին տարիների անմխիթար դրութիւնը ցաւ էր ամեն մի մտածող սրտի համար։—Նա կորցնում է իւր աչքերի տեսութիւնը և 1873 թուին գնում Թիֆլիս՝ նորան վերականգնելու, բայց ի՞նչ . . . վանճանվում է այդտեղ, նոյն թուին, 63 ամաց հասակում, և, ի մխիթարութիւն նորա ընտանեաց և նորա բարեկամաց, մարմինը բերում են Նագու և յանձնում սառը գերեզմանին . . . Թէ ի՞նչ տպաւորութեան տակ է գըտնըվել հանգուցեալը, երբ զրկուած է եղել իւր աչքերի տեսութիւնից, չ՛գիտեմ։ Այդ մասին ինքը, հէնց ինքը հանգուցեալ Ղ. Հրաբեանցը—կամեցաւ խօսել իւր «Յանպատրաստի ասած բան» խորագրով բանաստեղծութեան մէջ. ուրեմն լսեցէ՛ք։

Գ. Վ. Գրիգորեանց

Ընչ ունէի Թանգ քանց լոյս աչքերիս,
Ընչ կայ համեմատ նոր խիստ վէրքերիս,
Մնայիլ եմ յուսով ձեռաց, ոտքերիս,
Ուստի՞ զբանեմ ձայ անշուշտ հարկերիս։

Մութն է ողջ աշխարհ, չեմ տեսնում ես ինչ,
Գիշեր և ցերեկ խառն են, ջոկ ոչինչ
Լոյն է ինձ դարձել խաւար բնաջինջ,
Նոյն են ինձ համար թէ՛ արթուն թէ՛ նինջ։

Ձին ինձ երեւում արեգակ, լուսին,
Եւ փայլուն աստեղք երկնից երեսին.
Ջուղ, ջուր, բոյսք, դաշտեր, սարեր միասին
Թըւում են խառնուած մթնազգած օդ սին։

Միտքս են գալիս անցեալ տարիներ
Աչքովս վայելած կեանքիս բարիքներ.
Իմ տեսած դաշտեր, ձորեր ու սարեր,
Ծաղկունք, բոյսք, գետեր, աղբիւրներ, ծառեր։

Վանի՛ երկիրներ, քաղաքներ, գիւղեր,
Վանի՛ դիպուածներ, անցքեր ու տեղեր,
Վանի՛ խնջոյքներ, ընթրիք ժողովներ,
Վանի՛ աչք-ունքեր . . . քանի . . . սիրուններ . . . ։

Եւ որքան ծանօթք, ընկերք, ընտանիք,
Դէմք, երեոյթներ և այլ նըմանիք
Թըւում են երազ՝ տեսիլ խաբուսիկ
Կամ զինչ խօլական կարծեաց արդասիք։

Գալիս են իմ մօտ շատոնք այցելու,
Թէ՛ հարկաւ և թէ՛ գործքով տեսնելու.
Ձունիմ ինչ հրնար ոք ձանաչելու,
Մընում եմ միայն ձայներն լսելու։

Նըստած եմ միշտ մութ սենեակում մենակ,
Ոչինչ պարապմանց չեմ ես ընդունակ,
Ընդոծ, փոշեթաղ մընան ցիր, խառնակ
Գրիչք, թղթեր, գրեանք իմ. բաղմագունակ[1]):

Ձունիմ էլ հընալ գրել կամ կարդալ,
Ձանձիր ժամերից գէթ փոքր ինչ խոյս տալ
Ինձ էլ ի՞նչ յուսալ, էլ ի՞նչ հաւատալ
Թէ կարող կ'լինիմ կեանքովս խնդալ...:

Էյս վատ վիճակիս, անգութ իմ օրհաս,
Ւասուցիր դու ինձ տուիր պատուհաս,
Ձը գիտեմ դու էլ բաւական կը ճնաս,
Թէ ունիս տալու ինձ և զոհ վընաս:

Էյժմ էլ ինձ ի՞նչ ձար, ի՞նչ ցաւ դլխիս տամ,
Ո՞նչպէս կեանք վարեմ դրութեամբս տարտամ,
Թէ անաչառ ես, ի՞նչպէս հաւատամ,
Մ՚ի՞թէ էլ պիտի լըռեմ, չը ծըպտամ:

Ընիծե՞մ, օրհնե՞մ. ինչի՞ ես արժան
Յետ այս ինձ տուած ցաւիդ վատ դաժան.
Թո՛ղ փառաբանէ քեզ սիրող խուժան,
Ես քեզնից դժգոհ, յաւիտեան բաժան:

Աշխարհից ոչինչ չունիմ բնաւ շահ,
Ձունիմ էլ քեզնից ո՛չ յոյս և ո՛չ ահ,
Ընհամբոր մընամ ես ամէն մի պահ,
Թո՛ղ խաւար աչքերս շուտ գայ, փակէ մահ:

Մ՚ովհէս Ո՚ՀՐԱԲԵԱՆՑ

[1]) Ւանգ. թողել է մի հարուստ գրադարան, ընտիր գրքերով: Յանկալի էր, որ յարգ. տիկ. Ո՚ՀՐԱԲԵԱՆՑը գրքերի գէթ մի մասը նուիրէր «Ա՚արգասիրական ընկ.» գրադարանին, մանաւանդ որ՝ այդ հանգ. սիրած և գուրգուրած ընկերութիւնն է եղել:
Գ. Ղ. Գրիգորեանց

150.

Ընհատի կարևորութիւնը

Ընհատաւոր եմ, ուրախ ամենքից,
Ամուր երկաթէ կաղմուածք ես ունիմ:
Շինում եմ գործիք թանգ ու պատուական,
Օգուտ եմ տալիս մարդկային ազգին:

Ընև չը ծագած՝ խանութի եմ գնում,
Գործս ծիծաղ դէմ-երդով սկսում:
Եւ թանձր մուրճի ամուր հարուածքից՝
Գործատան պատերն եմ շարժեցնում:

Ժանգոտ երկաթի պինդ-պինդ կտորներ
Շնորհիւ քաջ բազկիս ուժեղ հարուածքի՝
Լաւ տափակում են, ընդունում ձևեր
Ոանաղան տեսակ սիրուն գործքերի:

Ձաշում եմ ես միշտ համեստ հասարակ,
Ձոր հացը համեղ պատառ է թուում:
Թէպէտ անկողինս է կոշտ կոպիտ շոր,
Բայց ես շատ հանդիստ ու լաւ եմ քնում:

Եւ քունը շուտով գալիս է աչքիս.
Խիղճս հանդարտ է իբրև մի մանկան.
Իմ աշխատանքիս սակաւ վաստակով
Էյ՛, լինում եմ ես միշտ բաւական...

Տարուայ տասներկու երկար ամիսներ
Ընցնում են ինչպէս մի մի կարճ շաբաթ.
Թէև քիչ անգամ հագնում եմ նոր շոր,
Բայց պինդ կուրծք ունիմ իբր ամուր պողպատ:

Այսպէս իմ օրեր սահում են ուրախ,
Յիսուն տարիս է — մօտ եմ ծերութեան,
Եւ երբ մահս գայ, ես բազկատարած,
Գրկելով նորան կընկնեմ գերեզման...

Եթէ մեռնեմ էլ առաւել շուտով,
Բայց աչք չեմ դնիլ ուրիշի փառքին.
Եւ երբ հոսում է քրտինքն իմ ճակտով՝
Կարծում եմ աէր եմ բոլոր աշխարհքին...

Սրինգ

151.

Երգ երգող

Կայլ գուսան եմ, լոյս կերգեմ,
Լոյսս շեջաւ, լոյս կերգեմ,
Յուսով դարձեալ լոյս կերգեմ,
Յոյսս հատաւ, խոյս կերգեմ։

Չուք ոտք ունիմ, ոյժ չունիմ,
Գլխիս միջում խելք չունիմ,
Լեզու ունիմ, խօսք չունիմ,
Լեզուիս տակը վէրք ունիմ։

Վէրքերս անբուժելի,
Կեանքս դառն ցաւով լի,
Բժիշկ չունիմ սրտացաւ,
Ո՛չ հոգ ո՛չ դեղ բուժելի։

Գլուխս բաց, չունիմ ծածք,
Տունս փլուած, չունիմ ծածք,
Երև կիզուս, անձրև հեղուս,
Ընտէր, անձայր, չունիմ ծածք։

Հացս դառն, ջուրս աղի,
Երբ վայելեմ, սիրտս դողի,
Երակներիս ջերմ արիւնը՝
Վանի գնայ, պաղի պաղի։

Թևիս մէկը անփետուր,
Թռիչք չունիմ ո՛չ մի ուր,
Զաղերս ինձնից տարաշրէին՝
Բաղէն անգութ և ուրուր։

Աչքս բացուեց, միտքս առին,
Միտքս բացուեց, խելքս առին,
Խելքս կարեց, գլուխս հալին,
Գլուխս քանի՛ քարին հալին։

Հոգիս առին, կմախք թողին,
Կմախքս էլ հողում թաղին,
Սուրբ աղս էլ անհամ արին,
Կերակուրս էլ ի՛ւր յաղին։

Կայլ գուսանիս առաջնորդ,
Առաջ մղող առաջնորդ,
Չունիմ խոհեմ առաջնորդ,
Լոյս տուք կուրիս առաջնորդ։

Մանուկներս խաւարում,
Լոյսի սպասեն խաւարում,
Ո՞վ կտայ նորանց վառ ճրագ,
Մինչ երբ ճնան խաւարում։

Խաչէն Քահ, Մելիքեանց

152.

Պաղ-աղբիւր

Հնադարեան աւերակք,
Ձին շլրիմներ քաջերի
Եւ բերդն, աւան, վանօրայք
Կան շրջապատ պաղ-աղբրի։

Դարեր անցուց վսեմ, մեծ,
Շատ գարուններ պանծալի.
Ծովցուց սրտեր դիւցազանց
«Պաղ-աղբիւրն» գովանի։

Շատ շրթունքներ համբուրեց՝
Ձայ իշխանին, կղերին.
Եւ փափկասուն հայ կանանց
Վճիտ աղբիւրն այն անգին։

Էր, երբեմն, զարդարուն՝
Գերան, ծորակ ոսկեձոյլ.
Մարմար վեմով քանդակուն
Կարկաչահոս այդ աղբիւր։

Կենդանութիւն և շարժում
Եռար շուրջը աղբիւրին.
Երծաթ սափոր ձեռքերում՝
Կանայք գային սառ ջրին։

Ասիձաններ բազմածալ։
Իր հովանին ոսկեհուռ.
Շատրան-շատրան շուրջը կար
Աղբրին կանաչ սօսն ու ուռ։

Պողպրիկ շրթան հետ կապես
Սառ աղբրին մի սափոր,
Որ վարդաձև էր կերտուած,
Այսից նման, կուսին նոր։

Վարդավառին կ'ցօղէր
Սիրաբորբոք հայ տղան
Իր մատներով դող թշեր
Տարփուհիին անման։

Մի ջուր, սրտի զովացում,
Տար ամբխած կոյն այն.
Ծպիտ, նայուածք կախարդուհի
Պաղէր հոգին հէգ տղայն։

Այժմ ի՞նչ կայ, հայ աչքեր,
Ծայռեր, բեկորք, հողակոյտ,
Եւ փշենիք, տատասկներ
Առնեն աղբեր շրջակայք։

Երկու մամռոտ, կոշտ քարեր
Գլուխ՝ դլխի խոնարհած,
Պահին անցքը պաղ-աղբեր
Եւ ծորակը տղմամած։

Խաշնարածին տայ համբոյր.
Ուրն ու գառնուկ ջրէ նա
Եւ անդաստան խոպանի՝
Ոռոգէ՝ խոտ ու նոճի։

Մի պահապան կայ արդեօք
Որ գէթ մաքրէ յատակին,
Տիղմն, աւազ ու նոճիք,
Հոսկէ այն զով ջրերին...

Ե՞խ, պիտ՝ տեսնեմ ես գարձեալ
Նոյն ծորակն ու սափոր,
Պարկեշտասուն աղջկան,
Իշխանիկն տարփաւոր։

Եւ անցեալը նորոգուի՝
Կանգնին շէնքեր ողջաւեր,
Վարդ ու Սոխակ դրկուին՝
Մերձ ջրերին «պաղ-աղբեր»։

Կ՚պակՀ

153.

Ենթ ըստ հղանակին

«Какъ у нашихъ у воротъ
стоитъ озеро воды...»

Ընդ, մեր տան առաջին
Ջ-ըրով լիքը մի լիճ կայ,
Տրա լի լա, տրա լի լա,
Ջ-ըրով լիքը մի լիճ կայ։

Փեսայացուն ձին բերից
Մեր դըրան մօտ ջուր տուից։
Տրա լի լա, տրա լի լա,
Մեր դըրան մօտ ջուր տուից։

Փայտից կապից իր ձիուն,
Իջընդրից աղջկան սիրուն։
Տրա լի լա, տրա լի լա,
Իջընդրից աղջկան սիրուն։

«Սիրուն աղջիկ, իմ հոգի,
Իջընդրիմ նըժոյգ ձիս պահի։
Տրա լի լա, տրա լի լա,
Իջընդրիմ նըժոյգ ձիս պահի։

Իջընդրիմ նըժոյգ ձիս պահի,
Նըժոյգս հազարներ արժի։
Տրա լի լա, տրա լի լա,
Նըժոյգս հազարներ արժի։

Որ չը պոկի իւր սանձը,
Որ չը կոտրի իւր թամբը։
Տրա լի լա, տրա լի լա,
Որ չը կոտրի իւր թամբը։

Թ՚արգմ. Ն. Տէր-Գ՚ա-ղեանց

154.

Վ՚անի մէջ[1])

Յամաք յարդին վերայ պառկած,
Թ՚շուառ Մրտօն կը քնէ,
Երկու օր է՝ չէ՛ կերել հաց,
Ո՞նչ ձար անէ, ուստի՞ գտնէ։

Վ՚ո՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնէ,
Ցիւրդն էլ կը գայ, քեզ կը թալնէ։

[1]) Ա՚յս ոտանաւորը մեր յայտնի և տաղանդաւոր դերասան պ. Ադամեանի գրչի ծնունդներից մինն է։

Գ. Ա. Գ՚ըլճըոլեանց

Ո՛ւ աղքատիկ, մերկ յարկին տակ
Թէպէտ սուգ է միայն քո բաժին,
Սակայն ունես դուռ մի հրեշտակ,—
Ո՛ւ լաճ սիրուն, քո ամուսին։

Վա՛ր կաց, Մրտո, էլ մի՛ քնէ,
Ո՛խիւրդը կը գայ, նրան կը տանէ։

Ելդէն մեռան սուաճ, քաղցած
Երկու քնքոյշ քո զաւակներ,
Նրանց դիակունք, դուռ չեն թաղուած,
Խեղճ մայրիկնին մօտն է պահել։

Վա՛ր կաց, Մրտո, էլ մի՛ քնէ,
Ո՛խիւրդը կը գայ, մեզ կանպատուէ։

Ե՛յն լոպէին, քիչ հեռուից,
Զիանների ոռնաձայնը
Վա՛ր թռուց խեղճ մայրն իւր տեղից,
Ու զարթեցնէ քնած մարդը։

Վա՛ր կաց, Մրտո, էլ մի՛ քնէ,
Ո՛խիւրդը եկաւ, որ քեզ թալնէ։

Վա՛ր կաց, արև, հոգս, իմ Ջան,
Պաշտպանիր ինձ, տէս, մօտեցան,
Թշնամին գաւաւ մեր տան Ջամբան,
Վա՛ր կաց գոիր քո հըրացան։

Զարթի՛ր, Մրտո, էլ մի՛ քնէ,
Եհա՛ քիւրդը մեզ մահ բերէ։

Ա՛խր, գիւղէ շներն հաչեն,
Խարխուլ դռներն կը կոտրատեն,

Ա՛խր, ի՞նչպէս մահ կը գոչեն.
Սև օրն հասաւ, լոյս է արդէն։

Վա՛ր կաց, Մրտո, զարթի՛ր, ժամէ,
Ել ինձ այստեղ դուռ չես գտնէ։

Նա պինդ բռնեց մարդու ձեռքից,
Ուժով թոթռուց, որ վեր կենայ,
Սակայն սառած՝ ցնցուղից ահից, —
Ելդէն սովից մեռած էր նա։

Վա՛ր կաց, Մրտո, էլ մի՛ քնէ,
Ո՛խիւրդն ահա՛ մեզ թալանէ։

Ո՛խիւրդն էլ հասաւ, ու ներս մտաւ,
Երեք անշունչ դիականց հետ
Կիսամեռ դողդոջ մի կին գտաւ,
Հ՚ալահն առած, եղաւ անհետ։

Թէ խեղճ Մրտօն խոր քնոյ մէջ է,
Ելդեօք կինն ո՞վ կը պաշտպանէ։

Պ. Ե. Ալպոյաճեան

155.

Հովուի անկողինը

«Սարի լանջն է մահճակալը
— Ուխա՜յ, ուխա՜յ, ի՞նչ փափուկ է.
«Ձիշտ քարը՝ գլխակալը
— Ուխա՜յ, ուխա՜յ, ի՞նչ կակուղ է.

«Մի հին կապերտ ուսերին,
— Ուխայ ուխայ, ի՞նչ նախշուն է
«Էյս է հովուի անկողին.
— Ուխայ, ուխայ, ի՞նչ սիրուն է:

* * *

«Երբ անձրև է կաթկաթում,
— Կաթկաթում.
«Ես կապերտը թրխկթրխկում
— Թրխկթրխկում.
«Հովիւն անուշ քնի մէջ,
— Կապերտում.
«Ջաղջը երազ է տեսնում:
— Ես լանգում, ծիծաղում,
Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ,
Քունդ անուշ:

«Ազնիւ Հով—ական» [1])

156.

Իմ կեանքի նշանաբանը

Թող մանկահաս բնութիւն
Ներկէ դաշտերն ու բլուր.
Գեղածիծաղ տեսք գարուն
Սփռէ ծաղկանց անուշ բուր:

[1]) Ներողութիւն, պ. Ղազեանց. շատ սիրեցի:
Գ. Վ. Գրիգորեանց

Գետին խոխոջ պղպջուն,
Թռչնոց քաղցր մեղեդին,
Թող սոսափիւն ուռիներուն
Խառնի հովուի սրնգին

Բաբէ, քնարս է բեկբեկ.
Թախիծ հոգոյս ու սրտիս.
Ամենը ինձ պժգալի,
Ոչինչ սիրեմ աշխարհի:

Ձուլեմ նուագել օձի պէս,
Բաղնել դուռը իմ բաղդի.
Թէ բնութիւն ուժգնապէս
Ինձ հոգ, մոխիր իսկ առնի:

Երեան հոսանք կատարեմ
Մէջ փշալից — վարդերուն.
Յանկամ ազգիս ողջակէզ
Առնել կեանքիս գոյութիւն...

Կրպէ

157.

Յիշէ՛ ինձ

Երբ առաւօտեան մեղմ զեփիւռի հետ
Դու պարտէզ մանես, շուրջ շատրուանի,
Եւ սոսափիւնը թփերի խիտ-խիտ
Գրաւեն ուշքդ, բուրմունքը վարդի,

Յիշէ՛ ինձ այն ժամ, աղջի՛կ գեղանի,
Մեր սիրաբոլբոք անցեալ վաղեմի.

Երբ կէս օր լինի և դու անդադրում
Անդրիկ մտանելով ասեղնէգործես,
Վ՚ԷՐ նայէ երկին, տես թխպոտ ամպեր
Վազեր են արևու ճաճանչ ու երես,

Այն ժամ դու յիշէ իմ ծաղիկ հասակ
Եւ ոսկիների ամպեր սև դունակ։

Երբ, իրիկնադէմ, արևը դէպ՝ մայր
Սաւառնի՝ իջնի՝ հետու հորիզոն
Եւ հազար մտքեր կուտակուած գլխիդ՝
Ձմլին աղեքդ նաև հեզ հոգիդ,

Յիշէ դու այն ժամ սիրոյս վերջնալոյս
Եւ դառ վշտերը իմ տառապելոյս։

Երբ գայ եղանակ ամռան—տօթագին
Եւ դու դաշտ, բլուր շրջելու ելնես,
Ընուշ բուրմունքով բերկրի քո հոգին
Ի՝երփներանգ ծաղկանց դողդրիկ փունջ կապես,

Յիշէ ինձ այն ժամ, աղջի՛կ դեղանի,
Եւ իմ մատուցած փունջերը վարդի։

Երբ ուռենոց տակ նստես անվրդով.
Գետի փրփուրներ խայտալով անցնին,
Եւ բիւրեղանման մաքուր վտակով
Ի՝շխջուցանես ծարաւ քո սրտին,

Այնժամ յիշէ ինձ, կոյս եթերային
Եւ անմարելի սիրուս դառ կսկիծ։

Երբ բազկատարած դու յիշես Աստուած,
Ծորին աչերդ կաթիլ մարդարտի.

Եւ սուր խոցերից հոգիդ բեկբեկուած՝
Թողութիւն խնդրես գործքերիդ բարի...

Այնժամ օրհնէ ինձ մէջ աղօթքներիդ,
Նաև մեր քաղցր—սիրոյ յիշատակ։

Երբ նոր փեսացուք շուրջ պատեն քեզի,
Խնդրեն քո ձեռը, սէր և սիրտդ հեզ.
Իսկ դու թէ անգութ լինես ու կապուես
Մխութեան կապով անխորտակելի,

Յիշէ դու այնժամ արցունք և խոստում
Նաև սրբազան քո ուխտ ու երդում։

Երբ աստեղազարդ երկնի երեսին
Ցոլան բիւրաւոր աստղեր ու լուսին
Եւ փոքրիկ ասուպ, ո՛չ այնքան փայլուն՝
Սպրթի ու ընկնի մէջ կապոյտ երկուն,

Գիտցի՛ր, որ կեանքս՝ նման ասուպի՝
Սիրոյդ խարույկով անհետ պիտ՝ լինի։

Երբ տաք քլտինքով Գաբրիէլի առաջ
Ողողուի ճակատս և դալուկ երես,
Մահուան տագնապում մի վերջին հառաչ—
Օրհնէք անուանդ—թռչի սրտիցս,

Այնժամ տուր, աղջի՛կ, յետին համբոյրդ,
Ինչ անգին աւանդ ինձ հետ տանելու։

Կանցնին տարիներ. ժանդ, մամուռ դեղին
Կ՚ներկեն քարը իմ գերեզմանի.
Որթերի ճարակ, խլուրդների բոյն
Գառնան ամիսներ քո խեղճ Աբգէն,

Այնժամ եկ, աղջի՛կ, դառ արտասուքով
Թրջել—ողողել—քարը իմ շիրմի։

158.

Իմ Ջուրթակը

Առանց քեզ կեանք չունիմ, սիրելի ջուրթակ,
Դուն ես սրտիս մխիթարիչ, սփոփանք.
Վեհանով եմ բարձրացնում աղաղակ,
Դուն ես ամեն միջոց ինձի համալ կեանք:

Տրամեալ երեսներուն դու կուտաս ծիծաղ[1]),
Վեհանով օրերս անցնում է խաղաղ,
Վաղցրանուադ երգող լարերիդ մատաղ,
Դէպ ի քեզ ամեն սիրտ կ'ընծայէ բաղձանք:

Ոչինչան յիշատակն ես, ով մեծահանճար,
Կամ թէ՝ Ապողոնն է տուեր քեզի լար,
Անյնքան ազդեցութիւն ունիս, ով քնար,
Որ քեզնով կ'արթննայ սիրտ ու խղճմտանք:

Վեհ չ'սիրող մարդն է նախանձ, ժանտաժուտ,
Կեանքի պայմաններից երբէք չէ հմուտ.
Հիւանդն անգամ քեզնից կ'քաղէ օգուտ,
Մեղմ ձայնդ լսելով՝ չի ղգայ տանջանք:

---

[1]) Թէ երաժշտութիւնը ինչ նշանակութիւն ունի կեն-
դանաբանական աշխարհում և որպիսի ազդեցութիւն է անում
նա մարդկային սրտի և հոգու վերայ, այդ առիթով տպա-
գրում ենք այստեղ հայր Յովսէփեանի թէպէտև համառօտ,
բայց սիրուն գրուածքը: Իսկ, այդ մասին, աւելի ընդարձակ
տեղեկութիւն ստանալու համար, առաջարկում ենք կարդալ
«Նոր-Դար» ամենօրեայ լրագրի 1884 թ. 167 և 168 №№-ի
քանասիրականները «Երաժշտութեան բնախօսական (ֆիզիո-
լօգիական) ազդեցութիւնը» վերնագրով:

Գ. Վ. Գրիգորեանց

Ուրախութեան վայելիչ, ով սիրուն Հերմէս,
Վեհանով է ամեն ցնծութիւն, կրկէս,
Առանց քեզ չի լինի հարսանիք, հանդէս,
Ինքդ ես զուարճութեան ուսուցմ, հրահանգ:

Սուրբ զբքերից ես բերում եմ օրինակ,
Յորջորջին ես դու Ճնացել յիշատակ,
Երբ Դ-ա-ւ-ի-թ ձեռքում կ'հնչես, ջուրթակ,
Արտիս խորքերիցը կ'բղխէ մաղթանք:

159.

Երաժշտութեան ազդեցութիւնը

«Ազդուժն երաժշտական եղանակին... ընդոստուցեալ զարթուցանէ սրտիս ա-
մենեցուն առ ի տենչումն շնորհին. քանզի չէք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ
յուրախութիւն կամ ի տրտմութիւն, որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս
պարան է՝ լինիցի. վասն այնորիկ և ե-
կեղեցական աւանդութիւնն ընկալաւ
զայն»: Ներսէս Լամբրօնացի

Երաժշտութիւնը՝ մարդկային զգացմունքները կըր-
թող, քնքշացնող և ազնուացնող ամենազօրեղ տարերքից
մինն է, որի կանոնաւոր ուսումը դարերի ընթացքում
հետզհետէ կատարելագործուելով, զրեթէ բոլոր լուսա-
ւորեալ ազգերի մէջ ընդհանրացել և պահանջ է դար-
ձել, և երաժիշտ հանճարների շնորհիւ, վերջին կատա-
րելութեան և նրբութեանն է հասել: իսկ մեզանում,
իբրև նորութիւն, շատ սակաւները միայն նոր են սկսել
սովորել: Երաժշտութեան ազդեցութիւնը այնքան վե-
սեմ և բարձր է, և այն աստիճանի հզօր է, որ զգալի

կերպով սաստիկ ներգործում է ոչ միայն զանազան տեսակ բնաւորութիւն ունեցող մարդկանց սրտերի, մտքերի, հոգւոյ և զգացմունքների վերայ, այլ և՝ դիշատող վայրենի գազանների, անասունների, թռչունների և պէս պէս կենդանիների վերայ։

Նախնի հեթանոսական դարերում, քուրմերը զանազան երգերով և բացականչութիւններով էին կատարում իրանց կրօնական ծէսերն ու արարողութիւնները, և այս կերպ ազդելով խաւարամիտ ամբոխի զգացմունքին, ամենայն դիւրութեամբ կարողանում էին նրանց սրտի և մտքի վերայ իշխել։ Յունական օրէնսդիր Լիկուրգոսը իր ժամանակին սկսեց ոչնչացնել զանազան անպիտան գործիքների պարապմունքը իւր հայրենիքի քաղաքներում, բացի երաժշտութեան վերաբերեալ գործիքներից, ըստ որում նորա կարծիքով երաժշտութիւնը ամենահզօր կերպով ազդում է մարդկային սրտի և զգացմունքների վերայ։

Հին առասպելապատում յոյների կարծիքով, կանոնաւոր և նպատակնաւոր երաժշտութեան և ազդու, իմաստալից բանաստեղծութեան կախարդիչ ներգործութիւնն ու զօրութիւնը զօրեղ կերպով ազդում է առհասարակ մարդկային սրտի և հոգւոյ վերայ. և չափազանցօրէն ասում էին թէ՝ — «երբ որ Քառապեղջ Ոլիմպոսը երգո՜ւ և նո՜ւագո՜ւ էր պա՜տղն վերայ, ձա՜ւերը, գետերը, ձովի կապոյտ ջրերը և վայրենի անասո՜ւններբը պարպո՜ւմ էին ղարմից և, հեռացած, Ոլիմպոսի գեղեցիկ նո՜ւագերգո՜ւն էին լսո՜ւմ»։ Սուրբ գրքից մեզ յայտնի է, որ Սաւուղը երբ որ յուսահատութիւնից և հոգևկան սաստիկ ձնշող մտածմունքներից զառանցանաց մէջ էր ընկնում, նորա հոգևկան հիւանդութիւնը փոքր ինչ մեղմելու համար, պալատականները կանչում էին սաղմոսերգու Դաւթին, որ իւր հոյակապ քնարի քաղցրահնչ լարերի վերայ նուագէ, որպէս

զի՝ նորանով հանգստութիւն գտնէր իսրայէլեան գոռոզ թագաւորի յուզուած սիրտը, և Դաւթի քնարի քաղցրիկ ձայնը այնչափ հանգստութիւն և սփոփանք էր պատճառում նորա սրտին։ Այդ հնաւանդ սովորութիւնը ճնացել է մինչև այժմ նաև մի քանի հայ գիւղերի մէջ, և երբ որ գիւղական մի մարդ կամ կին հոգևկան հիւանդութեամբ ցնորվում է, նորանք ոչ մի բժշկական միջոցի չեն դիմում, այլ՝ ուղղակի իսկոյն բերել են տալիս իրենց մէջ յայտնի նուագածու դուսաններին (աշուղ) և սկսում են ամենայն եռանդով նուագել տալ ասիական զանազան սրտաշարժ եղանակներ և պարեր, որոնցից շատերի ջղերին վրկարար ներգործութիւն է առնում, որ և բժշկվում են կատարելապէս։

Մի անգամ երևելի երաժիշտ իտալացի Սարտինին ընկաւ արիւնարբու աւազակների ձեռքը, որին մի քանի վայրկենից յետոյ պէտք է գլխատէին. բայց յայտնի երաժիշտը, դիմելով աւազակապետին, խնդրեց, որ մի քանի րոպէ ժամանակ տրուի իրեն, որպէս զի՝ մի մաղթանք երգէ առ ամենաբարձրեալն Աստուած, և ապա գլխատուի։ Աւազակապետի համաձայնութիւնն ստանալուն պէս, քաջ երաժիշտը ծունկ խոնարհած, այնպիսի հրաշալի մի մեղեդի երգեց, որի սրտառուչ հնչմունքը ազդու խօսքերի հետ միացած՝ ցնցեց նորանց և այնպիսի մի կախարդիչ ներգործութիւն ունեցաւ աւազակապետի և նորա բոլոր ընկերակիցների ապառաժ սրտերի և մեռած զգացմունքների վերայ, որոնք միաձայն վճռեցին քաղցրահնչ սոխակին կեանք և ազատութիւն շնորհել, ասելով. «Սիրելի, Աստո՜ւած լսէց ի՛ ապրե՛ր... գնա՛, Աստո՜ւած ձեզ հետ»։ Շատ հետու կ'տանէր մեզ, եթէ մի առ մի յիշելու լինինք թէ երաժշտութիւնն ինչպիսի ազդեցութիւն ունի մարդի առհասարակ բոլոր կազմուածքի վերայ. միմիայն ուշադրութեամբ պէտք է

ընդել կեանքի առօրեայ երեւոյթներըը, և այն ժամանակ երաժշտութեան թովչարար ոյժն ու զօրութիւնը ակնարկ կ'լինի ամենին, և այս անժխտելի փաստերով անշուշտ կ'համոզուին, որ արդարև յուզուած, յուսահատ, տխուր և կեանքի դառն վշտերին և սրտամաշ հարուածներին ենթակայ սրտերը միայն այն ժամանակն են սփոփանք և թեթեւութիւն զգում, երբ որ ազգու երաժշտութեան հրապուրիչ ձայնն են լսում:

Հայրենի տնակից զուրկ, ընտանեկան սիրալիր փայփայանքին և սրտացաւ բարեկամներին կարօտ, կիլոզ արեւի, անձրեւի, ձիւնի և այլ դառն եղանակներին ենթակայ մահու չափ քաղցած, ծարաւ և բոկոտն զինուորը, երբ որ հայրենանուէր երգերի կախարդիչ ձայնն է լսում, իսկոյն նորա մարմնական ոյժերը նորոգվում են, նորա յոգնած ոտքերի թլացած ջղերը ձգվում ամրանում են, և վերին աստիճանի ոգևորութեամբ զրեթէ արբած, հնարագէտ եւրոպացու ահեղագոչ թնդանօթի սպանիչ զնդակների առաջ, անվախ, աներկիւղ, բաց ճակատով իրեն առաջ է մղում բոլէ առաջ թըշնամուն յաղթելով զավթելոյ պատկ ստանալու, կամ հայրենիքի փառքի և մեծութեան համար մահառիթ զնդակով քաջութեամբ մեռնելու նպատակաւ: Երաժշտութիւնը հզօր կերպով ազդում է ոչ միայն հասարակաւոր մարդկանց վերայ, այլ և՝ փոքրահասակ մանկիկների քնքշիկ սրտերի վերայ: Ո՞վ չէ տեսել մեզանից, երբ որ մանուկը ասիական վաղեմի կոպիտ սովորութեամբ պինդ կապկապած է օրօրոցում, և երբ որ նա այդ զարհուրելի տանջանքներից ազատուելու համար ճիչ ու ձակակելով լալիս է անդադար, մայրական ոչ մի գորովալից խօսքը և փաղաքշանքը չէ՛ ազդում նորան, այլ՝ միայն և միմիայն նաղելի մօր սրտաբուղխ նանկին քաղցրիկ ձայնն է ազդում նորա անմեղիկ սրտին, որով նա կամաց կամաց

հանդիստ քնում է: Ասանձաւոր և մշակուած երաժշտութիւնը, կրթելով մարդի սիրտն ու հոգին, հետևապէս զարթեցնում է նորա հոգւոյ մէջ ազնիւ և բարի զգացմունքներ: Այս իսկ պատճառաւ, մեր խնկելի սուրբ հայրապետներն ու հինդերորդ ոսկեղենիկ դարու հրեշտակապսն թարգմանիչները, իրանց հեղինակած հոգեբուղխ շարականներն ու այլ հոգևոր երգերը սքանչելի եղանակներով էին երգում Ասուածոյ սուրբ տաճարին մէջ, որպէս զի՝ նոր ուխտի հաւատացեալների զգացմունքներն ու սրտերը երկնաւոր Հօր հետ ի մի կապուած լինէին: Երաժշտութեան թովչարար ոյժն ու զօրութիւնը նոյն իսկ մեր երկրի հովիւներից շատերին գործնական փորձերից յայտնի է, վասն զի երբ որ ոչխարների ամբողջ հօտին կամենում են ջուր տալ, կամ մի բլուրից փոխադրել մի ուրիշ խոտաւէտ յարմարաւոր տեղ, սընգահար հովիւն սկսում է սուր ձայնով սուլել «ալիլուհանքի» կամ «ղաբան քայեասի» ասուած սրտաշարժ եղանակը հովուական սրնգի վերայ, և հօտի առաջն ընկած՝ նշանակեալ տեղն է առաջնորդում: իսկ ցրուած հօտը մի քանի րոպէի մէջ ի մի ժողովուած, զարմանալի կարգապահութեամբ իրանց սրնգահար հովուին է հետևում:

Պ. ապարտ Ահարոնեան Յովսէփեանց

160.

Երգ լեռը տակաւրի

Ուռած փորիդ, ցցուած պորտիդ,
Դէրուած միջքիդ, դուզ շինքիդ,
Երկար ու ձիգ ձիգ կողերիդ,
Տուզ տուզ պճղներիդ,

Մեծ անուններդ, զօրութիւններդ,
Եւ պատուական բնութիւններդ
Տամք համբոյր խօսքս կրկնելով,
Օվ արբուսցես մեզ քո լուլով։

Դու բնակարան երանելի,
Ինակողն իքեզ միշտ ուռնելի,
Որոյ անունն է սուրբ գինի,
Որոյ տունկը օրհնեալ լինի,
Որոյ տնկող ըմպող Նոյը
Էր երջանիկ, առաքինի.
Ուստի և մեք զսա ուղղակի
Երբեմն բան Նորին օրինակի։

Ուրեմն լե՛ց, ով սանահէր,
Լիքը լիքը մեր բաժակներ.
Խմենք, կարգանք միշտ օրհնութիւն,
Խնդրենք Նոյին ալքայութիւն,
Որ սորան մշակեց, տնկեց,
Յետոյ մեր գլխին կտակեց.
Վասն որոյ միշտ կուշտանք ազատ
Մենք, ժառանգներս հարազատ։

Սինեցի Վարժապետ

161.

Պահապան հրեշտակ

Ամառ գիշեր ձեր մօր կողքին՝
Քաց բակիմնում լինիք նստած
Եւ աչքերնիդ ուղղած յերկին,
Լուրիկ նայէք վառ աստղաց,

Էյն ժամանակ, որ մանկտիք,
Անտարակոյս դուք տեսած կաք,
Թէ ինչպէս յանկարծ մի վառ լուսիկ
Կը սըլանայ շողն իքամակ։

Նա աստղերի միջով կարծես,
Թռչըտելով անց է կենում,
Մէկ էլ իսկոյն մի կայծի պէս՝
Մթնանում է և շեջանում։

Նա հրեշտակի՝ ձեր պահապան
Հոգեակըն է, այլ ոչ աստղիկ,
Որ թողլով իւր լոյսի շըջան,
Երկիր իջնէ, դայ ձեզ մօտիկ։

Գայ քննելու ձեր ողջ օրուայ
Եմեն բարի գործերն ու վարք,
Եւ ձեր փափկիկ անկողնի վրայ
Պարզէ թևերն իւր յուսավառք։

Պետրոս Ս. Էքսէեան

162.

Փոքրիկ Աստղիկիս

Ես սիրում եմ քեզ, երբ մօրդ դոդում
Քաղցրը փակում ես քո սև աչիկներ,
Երբ քընաթաթախ օձիքից բըռնում
Եւ մըշ-մըշալով ուտում ես ծըծիկ։

Ես սիրում եմ, երբ ապշած աչքերով
Օրընում ես մօրըդ դէմքի նուրբ գըծեր,
Երբ քո մըտաքն, ուժեղ թաթիկով
Պինդ-պինդ քարշում ես նորա գեղ հիւսեր։

Ես սիրում եմ, երբ անուշ ժըպտալով
Անգանի սալեզ հանում ես մեղմ ձայն,
Երբ գառան նըման առյդ խայտալով
Մերկ գըլըվում ես գորգերի վերան։

Ես սիրում եմ քեզ, երբ մի վայրկենում
Ըլտասվում ես և յանկարծ ծիծաղում,
Կարծես ցօղապատ ծաղկանց երեսում
Գարնան արևի շողերն են խաղում...։

Ապշած աչքերով վըրադ նայում եմ
Մի առատ խանդով լըցվում է հոգիս,
Եւ սըրտիս խորքից վերադէում եմ.
Տէր, թևիդ տակին պահի՛ր Աստղիկիս։

Սիմեօն Սափալեանց

163.

Երբ հրսկայական անվախ մատներըդ
Առաջին անգամ վերցըրին գըրիչ,
Երբ քո անհիւանդ-առողջ ուղեղըդ
Աշխատել սկսեց, ով անմահ երգիչ.

Էդ նոյն վայրկենից ծանրացաւ վերադ
Ձըննշող մեծ բեռը վըշտակիր ազգիդ,
Նորա տրնքոցի ձայնը յուսահատ
Իր տրխուր հընչմամբ հասաւ ականջիդ։

. . . . . .
. . . . . .

Դայց, աւաղ, յանկարծ երկինքը մըթնեց,
Հուր, փայլակ, կայծակ վերևից թափեց,
Եւ դու, քաջ ղենուոր, կեանքըդ թանկագին
Անվախ զոհեցիր այդ վառ շանթերին...։

Եւ ի՞նչ է հիւսել ապերախտ ներկայն
Երժանի պըսակ ծեծ-մըրմունջից համար...
Ո՞չ. երախտագէտ ապագան է այն,
Որ գիտէ յարգել անցեալն հանճար։

Պանդնի սև խաւար, կը գայ լոյս պայծառ,
Նոր սերունդ-ևս քեզ թագ մարգարտաշար։
Վաղանցիկ ցերեկն էլ երկիւղալի,
Վաղանցիկ ձըմեռն է զարհուրելի։

Սիմեօն Սափալեանց

164.

Նամակ

Գրիգոր քահանայ Գրիգորեանցին

Ժամ է, սիրելի՛, նախապաշարմանց
Խորտակել փըշրել չարաշուք կապանք.
Նախնեաց արիւնը հընամոլ մարդկանց
Մեր երակներին չէ՛ կարող տալ կեանք։

Մենք ասէն պարո՛ կոչվում ենք որդիք,
Ինչո՞ւ անցեալի ծըծենք անղօր կաթ.
Մեր կերակուրը, մեր մրտքի սընունդ
Պարո՛ պահանջին պէ՛տք է համեմատ։

Մ՚ինք պիտ՝ գիտուԹիան ճըրագը վառած՝
Առաջնորդ լինինք խաւարն ընկածին,
ՏըգիտուԹեան դէմ գըրահաւորուած՝
Սընապաշտներին տանք մեր աքացին։

Մ՚ինք բարոյական բռնած խարազան՝
Պիտ՝ անկըրԹուԹեան հալածինք խաւար.
Նորա փոխարէն տարածինք արդեան
Լուսաւոր մըտքեր և Թարմ դաղափար։

. . . . . .
. . . . . .

Մ՚ինք պիտ՝ աշխատինք դոյա ցանածը
Ոչընչացնել հէնց իր ծըլի մէջ,—
ԹէՀ չէ «ամեն մարդ իր սերմանածը
Մի օր կը ժողվէ՞ շտեմարանի մէջ։

Մ՚ինք խուլ մընալով այդ մարդոցաների
Ելած ու գործած բիւր չարիքներուն՝—
Նըպաստում ինք, վա՜շ, նոցա Թիւր, մոլի
ՎարդապետուԹեան շուտ տարածուելուն։

Ո՜նչ հարկ կայ, ասէք, գըլուխ խոնարհել
Եյդ հոգի ուտող ցեցերի առաջ,
Ո՞անի նոցա դէմ կարող ենք հանել
Ե՛ւ Ա-էպոպան, և՛ զօրաւոր Խապ։

Մ՚իԹէ կարծում էք հայի սըրբուԹիւն
Ոտուսել է իր նախկին զօրուԹիւն.
Ո՛չ բայց ցաւն այս է. «չը կայ այն աչը,
Որ կարողանայ բըռնել այն խաչը»։

Լսում էք. ահա ձայնը քարոզչի
Ձեզ հրաւիրում է՝ «գէ՛նք տանք, գէ՛նք առնենք»։
Դուք զինուոր էք—հոգևոր Փրկչի.
Էլ ո՞ր սեւ օրուայ պահել էք ձեր զէնք։

Սիմէոն Սափաքեանց

165.

Յոյս

Երբ որ երկինքը սեւ ամպով պատած՝
Կայծակ ու որոտ խառնում է իրար,
Ես վիզս ծըռած, ձեռքերս ծալած՝
Աղօթք եմ անում, որ Տէր բարերար։

Երբ որ կարկուտը մեծ զընդակներով
Ահով լըցնում է ձորեր ու դաշտեր,
Ես տանըս չոգած՝ աղի արցունքով
Թացում եմ, Փրկի՜չ, քո հրաշալի պատկեր։

Երբ որ կատաղի հիւսիսի քամին
Թընդացընում է ամբողջ աշխարհը,
Ես իմ աչքերը յառած երկընքին՝
Օգնեմ կանչում ինձ սուրբ Տիրամայրը։

Բայց երբ արևը երկնակամարից
Առատ ցըրում է իր ոսկի լոյսը,
Ես ըսԹափում եմ իմ ահ ու դողից,
Նորոգում կըրկին իմ հատած յոյսը։

Մե՜ծ է Ընարիչ. և ո՛վ կարող է
Վերննել Նորա դործ... Նա կը տայ կայծակ,
Կարկուտ ու քամի, բայց և ծագող է
Վըշտացած սըրտին ուրախ արեգակ:

Մի՛ յուսահատի՛ր, ո՛վ մարդ հողեղէն,
Երբ անբաղդութեան կըրում ես բեռներ.
Կը դայ ժամանակ, որ կը յաջորդեն
Վոռ սև ժամերին լուսաւոր օրեր:

Ալեքս Սափալեանց

166.

1884 թ. մայիսի 21-ի աղետը Ագուլիսում

Երկնակամարը կապոյտ և պայծառ
Ծածկվում է ահա սև սև ամպերով,
Կարմիր արևը, փայլուն արեգակ
Ծածկում-թագցնում է դէմքը շտապով:

Փչում է սառը քամի հիւսիսից,
Ձողմ և փոթորիկ մռնչում ուժգին,
Մարդ և անասուն, ծառեր ահագին
Վոռռում, դողդողում ահից, սարսափից...:

Իսկ որոտմունքը՝ սաստիկ և ուժգին
Կարծես ուզում են ծակել ամպերը
Եւ զարհուրելի փայլակն ու կայծակ
Պղտղեցնում են լեառն ու սարերը...

Մի անպատմելի հեղեղ է գալիս.
Բարձրացել է խիստ ջուրը գետակի,
Ընկնում քանդում և աւերում է
Բազմաթիւ տներ, պարտէզներ, այգի...

Գերեզմանական լռութիւն խորին
Հանկաւ օրը պատած է գիւղին,
Յուսահատութեան, թշուառի կնիք
Պրոշմուած է մարդկանց անբաղդ ճակատին...

Ուր որ գնում ես, ամայութիւն է.
Ձորս կողմէ մարդկանց դիակներ փռուած,
Յորդառատ արցունք կաթում է աչքից
Կենդանի մարդկանց ապշած-շուարած...

Մեծ է կորուստը և անդառնալի
Ձքնաղ ու քաղցրիկ Ագռ-լիս գիւղին.
Վառատուն և ջրաս մարդ է պակասել,
Եվ հաշիւ չկայ աւերակներին...

Մէկը միւսից վատ բացվում են աչքիդ
Տեսարանները ահռելի, վշտագին,
Ո՜հ, ի՜նչ սոսկալի պատուհաս է այս,
Ամենակարող Աստուած երկնային...

Ահա մի կողմում, խելագարի պէս,
Երիտասարդը, տուն — տեղից զրկուած,
Յուսահատութեան աղի արցունքով
Կանգնած է այնտեղ ապշած-մոլորուած...

Նա վերատակները քանդում է, փորում,
Իւր սիրելիքը փնտռում-որոնում.
Մայրը և որդին, սիրած ամուսին
Ծոհուած են անկուշտ, անգութ հեղեղին...

Մի այլ տեղ ահա մի խումբ աղջիկներ,
Որպէս երկնային անմեղ հրեշտակներ,
Ծաղիկ հասակում, դեռ կեանք չտեսած,
Կատաղի ալեաց բաժին են եղած...

Նոցա առաջև դեռ նոր էր բացվում
Փայլուն օրերը ծաղկաւէտ գարնան...
Կեանքի պարտէզը բիւր-բիւր վայելքով
Դեռ նոր էր ծաղկում նոցա կուսական...

Ձքացան, կորան անդարձ յաւիտեան,
Խաւարեց նոցա աստղը անմման,
Եւ թառամեցան որպէս մի-մի վարդ
Ընթաղդ ծնողաց պատճառելով դարդ...

Մեծ Ասուածածնայ փոքրիկ տաճարում
Դարսած են անմեղ զոհերը շար-շար...
Լքցուած-դիզուած է այնտեղ բազմութիւն՝
Ամփոփել նոցա մարմինքը թշուառ...

Մայրը ողբում է սիրելի մանկան,
Հայրերը՝ իւրեանց զաւակց սիրական,
Մարդը փնտռում է գլխի մազերը,
Տալով իւր վերջին ողջոյնը կնկան...

Լուռ են ամենքը, տխուր, սգաւոր,
Ողբում են իւրեանց սիրելոց մահը,
Ընդհանուր սրտից արիւն է կաթում,
Թո՛ղ մխիթարէ նոցա Ենմահը...

Ե. Տ.

167.

Իմ պատկը

Ալեքսանդր Ղազարէ-Պայսկի
տապանի վրայ[1])

Ես չեմ բերում քեզ, Հայր Ղազարէ,
Անգին քարերով զարդարած պըսակ,
Այլ երկու խօսքով — որպէս մի երգիչ —
Պնծարել կամիմ քո սուրբ յիշատակ:

Ինչ հարկ կայ ոսկով և գոհարներով.
Յիշատակել այն մեծ — մարդու անուն,
Որն իր սրտալի անմահ գործերով
Հայրենեաց ֆառֆէ պչյան է լըռուն:

Էլ դավիներով, ասէք, ի՞նչ հարկ կայ
Վեր-բարձրացընել այն հըսկայ մարդուն,
Որի արիւնով աստղերի վերայ
Իր և ռուս ազգի ջըրուել է անուն:

---

[1]) Ներքին գործերի մինիստրը հեռագրում է Կովկասեան փոխարքայ պաշտօնակատարին մարտի 1-ին 1881 թուին. «Այսօր, մարտի 1-ին, ժամը 1-ին և 45 րոպէին, թագաւոր Կայսրի զինակոչից վերադառնալու ժամանակ, կատարուեցաւ սպանութեան փորձ Նորին Մեծութեան սրբազան կեանքի դէմ, երկու ճայթող ռումբերի միջոցով: Առանցից առաջինը ձեռաց Նորին Մեծութեան կառքին, իսկ երկրորդը ճայթվելով՝ ծանր վէրքեր պատճառեց թագաւորին: Վերադառնալով Ձմեռնային պալատը, Նորին Մեծութիւնը բարեհաճեց ընդունել սուրբ հաղորդութեան խորհուրդը և այնուհետև ի Տէր հանգեաւ: Ձարագործներից մէկը բռնված է»:

«Մշակ» հեռագիր

Մահը մեծ-մարդկանց անմահութիւն է
Թէ այս աշխարհում, թէ հանդերձեալում.
Վո պատիւ, քո փառք նոյն չափով մեծ է —
Ինչպէս մարդկանց մէջ, նոյնպէս և շիրմում:

Հայրասպան ձեռքը չարագործների
Կապեց, կաշկանդեց քեզ այս տապանում,
Բայց այն բիւրք բիւրոց ազատասիրների
Կապել կարող է բերան և լեզուն:

Դու հայրենիքի համար ապրել ես.
Նա յիշուելու է, քանի ապրում ես.
Վո հաճով նրբան երբ կեանք տուել ես,
Նորա մէջ և դու միշտ ապրելու ես:

Թող անխիղճ մարդիկ սրբեին, ջիգ թափեն
Սև ատուր ձրգելու քո փառքի վերան,
Թող անմիտները կապել աշխատեն
Վո երախտագէտ որդւոցը բերան:

Բայց այն սուրբ հողը, ուր Մեծ-Մարտիրոս,
Որտեղ թափուել է քո մաքուր արիւն,
Պիտի առանձին մի հրպարտութեամբ
Երգէ գարերին քո փառք և անուն:

Թող լռեն մարդիկ, լռիկուն, պապանձուն,
Կապեն նենգաժէտ իրանց աչքերը,
Բայց նրբանց տեղակ պիտի բարբառե՞ն
Այս չոր քարերը, ապառաժները:

Ծողն էլ թող ղժայ իր ոչընչութիւնը,
Ծողը, որ երկաթն անգամ մաշում է, —
Բայց մեծ — մարդերի փառք և անունը
Աշխարհից ջընջել անկարանում է...

Երնջե՛լ դու հանդիստ այդ սառ հողե տակ,
Մ՛վ ապագային սրտանէ ջա՜ակ.
Վո վեհ գործերը կ՛ապրեն, կը մեծնան,
Լիբանանու գեղ մայրիքի նման,
Եւ նրբանց ախորժ հովանու տակին
Մի օր աշխարհի չքնաղ թագուհին —
Ծըղօր Ռուսիան՝ բազմած գեղապանծ՝
Կը շարժէ իւա քոյրերի նախանձ...

Ընդունիր, Ծայրե՛կ, մարդասիրաբար
Էյս անշուք երգը որպէս մի «պըսակ».
Սրբան հիւսում եմ ոչ նորա համար,
Որ անմահացնեմ քո սուրբ յիշատակ, —
Էլ միայն և եթ այն նրպատակով,
Որ յաւէտ յիշուի քո անուանը հետ
Էյս տողերը քեզ անկեղծ յարգանքով
Նուէր բերող և նուաստ հայ-պօէտ:

Արշակ Սափաքեանց

168.

Կայսր Ալեքսանդր II[1])

Վ՞ախճանվել է Նա, որ 26 տարի ղեկավարել է պետութեան բոլոր գործերը, որի ձեռքումն էր Ռուսաս-

[1]) Ալեքսանդր II Կայսեր լիակատար կեանքի հետ ծանօթանալ ցանկացողներին՝ կառաջարկեմ — կարդալ Հանգուցեալ Մուրէնեանց Յակոբ աւագ քահանայի «Ալեքսանդր Բ. Կայսր Ռուսիոյ 1855—1880» խորագրով գրքոյկը, որ տպուած է Մոսկվայում 1880 թուին:

Գ. Վ. Գրիգորեանց

տանի ամբողջ բաղդը: Ռան և վեց տարվայ ընթացքում կատարվեցաւ Ռուսաստանում Նրա կամքով այնքան, որքան ուրիշ երկիրներում դարերի ընթացքում է կատարվում: Ռան և վեց տարվայ, իսկապէս շատ կարճ ժամանակամիջոցում, կատարվեցան այնպիսի վերանորոգութիւններ, որոնց իւրաքանչիւր ազգութիւն պարծանքով կ՚արձանագրէր իր պատմութեան էջերի վրա:

Ճորտերի ազատութիւնը, դատաստանական նոր կանոնադրութիւնը, քաղաքային և նահանգական ինքնավարութիւնը, մարմնի պատիժների վերցնելը, մամուլի աւելի ազատ իրաւունքները, կանանց բարձրագոյն ուսման իրաւունքի տալը, ընդհանուր զինուորագրութիւնը,— ահա այն խոշոր, ընդհանուր մարդկային վերանորոգութիւնները, որոնք հանդուցեալ Պայսրի կամքով մին միւսի հետևից կատարվելով, միանգամից դրեցին Ռուսաստանը եւրոպական միւս երկիրների շարքում:

Այլ ևս չենք խօսում աւելի մանաւոր և միայն Ռուսաստանի նեղքին կեանքին վերաբերեալ բազմաթիւ վերանորոգութիւնների մասին, որոնց առատաձեռնութեամբ պարգևեց հանդուցեալ Թագաւորը իր հպատակներին: Ամբողջ քսան և վեց տարին, բայց մանաւանդ այդ փառաւոր թագաւորութեան առաջին և վերջին երկու տասնեակները մի եռանդուռ աշխատանք էր կատարվում, ամեն հին ձևերին ձեռք էր տրվում, ամեն եղած կազմակերպութիւններին նոր ոգի էր ներշնչվում: Մի կողմից հիմնվում էին նոր դպրոցներ և դիմնազիաներ, լիցէյները համալսարանների կերպարանափոխվում, գրվում էր համալսարանական նոր կանոնադրութիւնը, կազմվում էին յանձնաժողովներ՝ շինականների հողերի հարցը կանոնաւորելու, կամ տպագրական օրէնքները վերաքննելու համար, ուրիշ կողմից հրէայ հպատակները գրեթէ կատարեալ հաւասարվում էին իրանց իրաւունքների

մէջ ռուսաց միւս քաղաքացիների հետ, վերցվում էր ամբոխի համար աղի վրա ծանր հարկը, — մի խօսքով ամբողջ Ռուսաստանը իր կեանքի բոլոր ճիւղերում, քան և վեց տարի շարունակ վերանորոգութիւնների անընդհատ աշխատանքի մէջն էր գտնվում մի մարդու ջերեղ կամքի շնորհով: Եւ այդ Պայսրը, որ այդքան սրտաւ իր հայրենիքի համար, տարածեց իր ազատիչ կամքի ոյժը և իր պետութիւնից դուրս: Նոյն թագաւորութեան պատմութեան փառաւոր էջերից մինը անշուշտ լինելու է և Թիւրքիայի քրիստոնեայ ազգերի ազատութեան համար պատերազմը:

Եւ ո՛չ թէ միայն Ռուսաստանին ազգակից սլավեան ազգերը, բայց և հայոց ազգը իր ազգային և քաղաքական վերակենդանութեամբ պարտական կը լինի Պայսր Ալեքսանդր II-ի ջերեղ պաշտպանութեանը: Նրա անունը անխզելի կապերով կապված կը լինի միշտ հայոց խնդրի հետ: Պայսր Ալեքսանդր II-ի անձնական համակրութեանը դէպի հայոց ազգը, ինչպէս և դէպի ամենաձնշված ազգութիւնները, հայերը պարտական են Սան-Ստեֆանօի դաշնագրի կայացնելով և հայոց դատի պաշտպանելով Բերլինի աւազաժողովում:

Ռուսաստանից և մարդկութիւնից պակասեց մի մեծ մարդ, որի պատկերը շատ դարերից յետոյ կերևայ ապագայ սերունդներին ինչպէս մի հսկայ նրան շրջապատած մանր ժամանակակիցների շրջանի միջից:

«Պ՚շակ»

169.

Նամակ Յովհաննէս Աթփեանեանցին

Տասն տարի է պանդխտութեան
Կապել է ինձ ամուր շղթան.
Գարուն կեանքիս մատաղ շուշան
Թառմել է մէջ օտարութեան:

Տասն տարի է, որպէս հրէայ,
Ես չափ-չափուում եմ սառ Ռուսիայ.
Ի՞նչ նըպատակ ունես, ասա՛.
—Ո՜հ, Յովհաննէ՛ս, թո՛ղ այդ մընայ:

Եղբարց, ծնողաց, ազգականի
Կարօտ եմ մի բարեկամի.
Գեռ չը բացուած, գեռ պատանի՝
Փախադում եմ գերեզմանի:

Կարծում ես՝ թէ մարմնակա՞ն
Սէրն է մատնել պանդխտութեան.
Ո՛չ ա՛չքի լոյս, ո՛չ սիրական,
Ես վա՛ղ մոռցել եմ Ըստղլեան:

Մարմնակա՞ն սէր. ի՞նչ եմ խօսում,
Վ՚առնած օրիս եմ ափսոսում.
Էլ ի՞նչ սէր սէր ես որոնում
Մի աւերակ, մեռած սըրտում:

Խեղճ քընարը երգչի ձեռքին
Սկ՚ը կարող է հընչել կըրկին,
Երբ քերթում է ձեռքը փաշին
Ֆայ եղբօրըս վըզի կաշին:

Սկ՚ը կարող է հընչել քընար,
Երբ տընքում է իմ պառաւ մայր
Կիսալուսնի դաժան և չար
Ղըծի տակին ամբողջ վեց դար:

Սկ՚ը կարող է երգել քընար
(Ո՜հ, եղե՛ւկ քեզ, Ֆայոց աշխարհ),
Երբ մեր ժամը-մեր սուրբ տաճար
Գոմ է շինել քուրդը մուռատ...:

Ո՛չ հեռացաւ, թըռա՛ւ, հոգեակ,
Սըրտիս միջէն սիրոյ սոխակ.
Նորա տեղը չարագուշակ
Սև ագռաւն է նըստել մեռնակ:

Մ՚ել այս դառը, նեղ վիճակում,
Գերեզմանի դըրան շէմքում,
Վա՛յ ինձ, սէր էլ ես պահանջում.
. . . . . .

Ընդվո՛ւմ եմ ես Վ՚անայ ծովով,
Ընու քանդուած տաճարներով,
Ո՛ր շըղթայած ոտք ու ձեռքով
Ձե՛մ երգելու «էլ իմ «Սազով»:[1])

Կ՚երդուում հայի անցած փառքով,
Սուրբ Մեսրոպի դըտած տառքով,
Ո՛ր լըծի տակ տընք-տընքալով
Պիտի չե՛րգեմ «էլ իմ «Սազով»:

---

[1]) Գ. Ս. Սափարեանց մի գըքոյկ հրատարակեց իւր հեղինակած բանաստեղծութիւններից «Ես էլ իմ սազը» վերնագրով, որի երկրորդ հատորն արդէն պատրաստ է տըպագրութեան համար: Գ. Վ. Գյուլբենկեանց

Եղիշէի կ'երդուիմ հոգով,
Վաչէ Վարդանայ թափած արնով,
Հռիփսիմեան նահատակաց
Աւսաց ընդուղ դերեզմանով։

Կ'երդուիմ Բզգարու հաւատով,
Շուշանիկի հալալ կաթով,
Որ կոլըսաեան վիհում նըստած՝
Սէր չե՛մ կարող երգել «Սազով»։

Կ'երդուիմ Սիւնեաց հին սերընդով,
Գարաբաղի կըտրիճներով,
Օհէթունի հայ քահանայի
Մէջքից կապած սուր խանչալով,—

Որ քանի այս սև վիճակը
Բռնած ունի մեր հակակը,
Առած սըրտիս աւերակը
Չի՛ տաքացնիլ պո–ըէ կըռակը։

Ես պիտ' շըրջիմ ծով ու ցամաք,
Շէն, դիւղ, աւան, դիւղաքաղաք,
Ուր տեսնեմ խեղճ հայի տըղաք՝
Հաւքիս, ժողվիմ իմ ձեռքի տակ.

Կըսթեմ, նըրանց աչքը բանամ,
Ուսուցանեմ, քարող կարդամ,
Ամենքին էլ ազատ ցոյց տամ
Իրանց պարտքերը սրբազան։

. . . . . .
. . . . . .

Ես պիտ' մանդամ հայի տըներ,
Ընքուն մընամ ցերեկ, գիշեր,
Մըշակիմ խամ անդաստաններ,
Ցանիմ սիրոյ զօրեղ սերմեր։—

Ա՛յս է, հոգիս, իմ նըպատակ.
Թո՛ղ ինձ ծաղրեն, առնեն կատակ.
Ծաղրածութեան անզօր մըտրակ
Էլ գի՞ն չունի մեր ժամանակ։

Սիմէոն Ապաբեանց

170.

Ամպի կտոր

Հեռու, շա՜հ հեռու, օդերէն ծովում
Մի փոքրիկ կըտոր սև ամպ էր լողում։
Անյոյս գիւղացիք, խաչած ձեռքերով,
Նորան են սպասում՝ արցունքով, լացով։

Ջրաեռը չոր էր, ձիւնը խիստ սակաւ,
Գարունքն էլ մի կաթ անձրև չը եկաւ։
Ամառը հասաւ։ Յորնի արտերը
Ծըռել են իրանց դեղնած հասկերը։

Տէր-տէր, տիրացուք խաչով, խաչվառով
Ընդաստան արին աղօթքով, լացով.
Բայց տապ ու երաշտ կարի սաստկացաւ,
Երկընքի դուռը ոչ ոք չը բացաւ։

Փոքրիկ մանուկներ նուրբ շրինեցին՝
Տընից տուն նորան խընդրով մանն ածին,
Ելիւր, ձու, ցորէն, իւղ ժողովեցին,
Փողով ծախեցին՝ մի գառ գընեցին։

Գառը ժամի դուռ տարին-մոլթեցին,
Աննախանձ սըրտով Տիրոջ զոհեցին։
Աստուած ընդունեց նորանց մատաղը,
Ամպին հրամայեց սալքել իր մաղը։

Ամպը լայնացաւ՝ երկինքը ծածկեց,
Ոլոտը գոռաց, կայծակը փայլեց.
Հինգ վայրկենից յետ՝ ցանած թէ՛ անցան
Դաշտեր, արօտներ ջրերով ծածկուեցան։

Ընձրևը կանգնեց. երկինքը պարզեց.
Ծարաւ երկիրը փորը ուռցրեց։
Երևը բացեց իր ոսկի աչքեր՝
Վաղորը ժըպտացին տըռըզած բոյսեր։

Սիմէօն Սափարեանց

171.

Մշեցի հօր կտակը

Դառն, սև օր շատ էք տարել, իմ որդիք,
Ողբատ, քաղցած, տկլոր, բոկոտ մնացել,
Մեր տուն, մեր տեղ, սուրբ տաճարներ, հայրենիք
Ընդունթ տաճիկ կործան, աւեր դարձուցել։

Զկայ մէկը, որ մեղ զթայ ու խղճայ,
Ծուժէ վէրքերս, մեր կարիքներ նա հոգայ,
Ո՛ար մենք չունինք, խղճուկ որդիք, աչքիս լոյս,
Մեծ է Աստուած, չիտրենք մեր սրտի յոյս։

Մօտ է գարուն, չունիք արօր, որ վարէք,
Ձուններք գալոց, որ անդ գնաք բան սովրէք,
Չեր մայր եղաւ անդունթ տաճկին զոհ-գերի,
Մեծ եղբայրդ յօտարուներան թափառի։

Ոսկ ձեր հայրը հալմաշ, խղճուկ, ծերացած,
Իրա յոյսը ձեզ վրայ է նա դրած,
Աշխատեցէք, անմեղ փոքրիկ գառնուկներ,
. . . . . .

Ո՜ւռ է տանելիք այս օտար կեանք, խղճութիւն,
Ո՜ւռ է յուսալ ուրիշից ազատութիւն,
Աստուածեցէք իմ կտակը, ով որդիք,
Ձեզմով միայն դուք կ՝ստանաք փրկութիւն։

Վաղցածներին խորհուրդ շատեր միշտ կուտան,
Բայց հայ և ջուր, հանգերձ, դրամ չ՝յուսան.
Այժմ մարդիկ խելքով, ուսմով միշտ միայն
Փափագելին և ցանկալին ստանան։

Պետրոս Պոլիսեանց

172.

Ինչ էր կանէի

Եթէ լինէի դատաւոր կամ տէր,
Վաղաքաղցուս, մեծ պաշտօնատէր,
Կամ թէ խմբագիր մի մեծ լրագրի,
Գիտէ՞ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի։

Եթէ լինէի ձայնաւոր քաղքի,
Կամ թէ գանձապահ քաղաքի արկղի,
Այս բանը հոգով, սրտով եմ սիրում,
Գիտէ՞ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի։

Եթէ լինէի ստարշին կլուբի,
Կամ թէ դիւրակօսր մեծ գումար բանկի,
Կամ թէ երեցփոխ ձոխ եկեղեցւոյ,
Գիտէ՞ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի։

Եթէ լինէի կատակատաւ,
Կամ ազգականի որբոց խնամատաւ,
Այդ պաշտօններըը ինձ լաւ են յայտնի,
Գիտէ՛ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի։

Եթէ լինէի ես հոգաբարձու
Փողերով հարուստ ուսումնարանի,
Կամ տեսուչ մի մեծ ձոխ դպրանոցի,
Գիտէ՛ք՝ թէ յայնժամ ինչեր կանէի։

Հատ բաներ մտքումս վաղուց եմ դրել
Ոսկով և սրտով պատրաստ եմ անել
Եթէ այդ բաներ ես չեմ կատարում՝
Ազգն է մեղաւոր, որ ինձ չէ ընտրում։

Քանի որ մեկը լաւ պաշտօն ջունի,
Դատարկ խօսքերով շատ բաներ կանի.
Իսկ երբ ստացաւ այդ չաղ պաշտօնը,
Բաց իրա օգտից ոչինչ չի անի։

Պ՛առնի լաւ տներ, կառքեր, ձիաներ,
Գեղեցիկ մի կին-Ֆրանտ ու ջահել.
Բարօնի, կոմսի պէս ինքն էլ կապրի,
Ահա, տեսէ՛ք, թէ նա ինչեր կանի։

Ալտպէտ Մատինեանց

173.

Մեր կրօնքը

Պատճառ հայն քաղցած է՝ չունի հացի դին,
Գերի է դառել անօրէն տաճկին,
Գաղթում թողնում է իրա տուն և տեղ,
Միշտ չարչարվում է զերթ գառն անմեղ։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Պ՛ատճառն անտէր է և անօգնական,
Զուրկ իրաւունքից, զրկուկ լաւ ապրուստից,
Եթէ չ՛հատնինք շուտով օգնութիւն,
Ընդունայն կը զրկուի հայն իրա կեանքից։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Պատճառն հայերը մերկ են և թշուառ,
Հատ ցաւալի է նոցա կեանք չուառ,
Ունեցածներն էլ քուրդ խլում, տանում,
Ընդամէնոցա կեանք նա չէ խնայում։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Քանդուել են հայի բերդ ու պարիսպները,
Ճշիւն են դարձել վանքեր, տաճարները,
Եղածն էլ տաճկի աւերում, քանդում,
Թշուառ հային անյիշատակ թողնում։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Ասում են հայի խղճուկ օրերդ
Մանում է թօնիկ, որ ծածկէ ամօթ,
Պարկեշտութիւնը նորան չէ՛ թողնում
Երևիլ մարդկանց մերկ, տկլոր, բոկոտ։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Ուսումնարաններ, վարչութիւն չկան,
Որ հայոց գաւակայ գիտութիւն, լոյս տան,
Ձկայ և մի ազգ, որ հային գթայ,
Ծուժէ վէրքերը և ցաւը հոգայ։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Թէև զրուցան յոդուածք, խօսուցան,
Բայց հայկը մինչ ցարդ ոչինչ չատացան
Ու անձրևացեալ տանում են, տանում
Հարուածք թշնամու անխօս և անձայն։

Ասացէ՛ք, խնդրեմ,
Ես ի՞նչ անեմ։

Հատերը դիմում են ինձ՝ կրկնօսխ,
Խնդրելով անել հային օգնութիւն,
Ասելով. պարտ ենք հոգալ մեր եղբարց,
Տալու կեանք, ապրուստ, նաև փրկութիւն։
Ո՞նչեր կը խօսեն,
Բան չունե՞ն։

Ելյապէս, ահա, մեր շատ կրկոսներ
Երբ որ կիմանան խեղճ հայի ցաւերը,
Նոքա խիստ անհոգ կը պատասխանեն
Թէ՝ «ինչ կարող են» և «է՜հ, ի՞նչ անեն»։

Իսկ երբ կը խնդրես նոցա օգնութիւն—
Հոգալ, աղատել հայն ու հայի տուն,
Մինչդեռ նոցանից շատ յոյսեր ունես,
Միշտ քո պատասխան կընի՝ «բան չունի՞մ»։

Պարոյեան Մոպինեանց

174.

Տաճկա-Հայաստան

Հայաստանը ընկած, կորճան,
Ձէ՛ կտրվում նորա կական,
Ձկայ մէկը լինի պաշտպան,
Բայց միշտ կ'ասենք, որ մենք հայ ենք։

Императорскій Санктпетербургскій Университетъ
БИБЛІОТЕЧНЫЙ
ОТДѢЛЪ

Վանքեր աւեր, բերդեր քանդած,
Սուրբ տաճարներ հողով ծածկած,
Հայի խղճուկ որդիք ցրուած,
Բայց միշտ կ'ասենք, որ մենք հայ ենք։

Սուրբ հարց երդոց տեղ, նոցանում
Ոռու բուն իւրա վայն է կանչում,
Եւ իւր բերդեր, տաճարք ողբում,
Բայց միշտ կ'ասենք, որ մենք հայ ենք։

Նախնեաց շիրիմք հաւասալ հողին,
Ձկան Վալդան և Գարեգին,
Ո՛չ հետևողք նոցա շաղկին,
Բայց միշտ կ'ասենք, որ մենք հայ ենք։

Համայն են դարձել դաշտեր,
Ցամքել յստակ, վճիտ ջրեր,
Ընդունէ տաճիկ նոցա տիրեր,
Բայց միշտ կ'ասենք, որ մենք հայ ենք։

Պաղից հայեր միշտ կոտորուին,
Սով է տիրում Հայաստանին,
Ձուզենք օգնել խղճուկ հային,
Ո՞ւկ խօսքերով կ'ասենք՝ հայ ենք։

. . . . . .
. . . . . .

Պարոյեան Մոպինեանց

175.

Նամակ Աբէլ Ապբէսեանցին

Հ՛նց նոյն ժամուն, երբ իմ Մուսան
«Սազիս»[1]) լարում էր թեւերը,
Երբ հրաբուղխ սարի նման
Բոլբոքվում էր սրտիս սէրը.

Հ՛նց նոյն ժամուն, երբ Ապոլոն
Շողունչ էր փչում լարերիս,
Երբ սուրբ շնորհաց ծաղկի կոկոն
Նոր բացվում էր մէջ սրտիս.

Հ՛նց նոյն ժամուն, երբ իմ հոգին
Թրռնչ էր դէպ՝ անտէր Վան
Եւ կիսաշունչ հայի գլխին
Բոլորում էր իր շրջան.

Երբ ընկրկմած մրտածութեան
Խոր ծովի մէջ անյատակ՝
Պառն արտասուք ցաւակցութեան
Թափում էի ես մենակ.

Ուր նրկարուած էր առաջիս
Հայաստանիս սէւ պատկեր,
Ծիրուկ գլխով հրսկայ Մասիս
Ողբում էր իր գառն օրեր.

Ուր հեգ «հոգին Հայաստանի»—
Ըրքնաղագեղ այն կուսիկ՝
Լուռ գրննելով աւեր Ննի՝
Փետում էր իւր խոպոպիք.

Եւ ուր մեր մայր անտէր ընկած՝
Եւանգում էր իր հոգին.
Նորա կողքին թուրքը նըստած՝
Փայտ էր սրղում դաղաղին.—

Ո՜հ, այն պահուն, ազնիւ Աբէլ
Զեռքըս ընկաւ քո նամակ,
Բայց նուաստիս խօսքերդ յանձնել՝
Ըր գտաւ նա ժամանակ։

Ընդյաւ հինգ ժամ։ Առի-բացի
Էյդ նամակի գեղ ծրար,
Մէծ հաճութեամբ ես կարդացի
Տողերնրը գեղաշար։

Շատ ես թափել անշուք «Սազիս»
Վերայ գըրուատ և գովեստ.
Թէ ընդունիմ, գուցէ երգչիս
Ինքըդ կոչես անհամեստ։

Ինձ չե՛ն գրաւում գովեստներ պերճ,
Ո՛չ նկրծողանք, աչքի լոյս,
Իմ սրտամաշ արհեստի մէջ
Թանգ է ինձ քո խրատոյս։

Ո՞նչ գովասանք արժէ թափել
Աիրամարգի մի վերայ,
Որի փայլուն գեղ փետուրներ
Փեսել է մի անրզգայ։

---

[1]) Տե՛ս պ. Սափարեանցի «Նամակ Յովհաննէս Սափանեանցին» վերնագրով բանաստեղծութեան ծանօթութիւնը։

Ո՜նչ գովասանք արժէ տալ այն
Սիրակարօտ սոխակին,
Երբ մի սև բու նորա մեղմ ձայն
Խեղդել է մէջ հակակին։

Ո՜նչ սև գովեստ արժէ, ընկե՛ր,
Տալ քընարիս գեղամերկ,
Երբ քաղցրաձայն նորա լարեր
Խըղել է մի անգութ ձեռք...։

Ո՜հ, ի՜նչ գովեստ. ինձ խըրախոյս,
Մի՞րտ պիտոյ է, սիրական,
Ո՛ր դուրս քաշէր սրտից անյոյս
Վ՚ըհատութեան չար մըխան։

Ինձ անկեղծ խօսք քաջերութիւն
Պիտոյ է այս վայրկենիս,
Ո՛ր զօրութիւն, կարողութիւն
Տար իմ փըշրած թևերիս։

. . . . . .
. . . . . .

Գովել մի գործ-այն էլ խուզած,
Ո՛ր զե՛րծ չէ շատ սխալանքէ.
Կարեմ ասել արձակ ու բաց՝
«Աւելի քան յանցանք է»։

Էյ՛, այդպէ՛ս։ Ինչ և քընքուշ
Հընչէց ինձ քո նամակի
Մ՚իւս կէսերը՝ զերթ վարդ անփուշ
Նուէր բերած սոխակի։

Ինձ հատնում են խօսքերս, բառերս
Վերջ լծովին յայտնելու
Իմ փոխադարձ յարգանք և սէր,
Ո՞վ պանդխտիս այցելու։

Ինչ ներսի՛ս ինձ, որ «Սազիս» մէջ
Ձըգտի մի ուրախ լար,
Որ նամակիս գոնէ մի էջ
Նուիրէի քեզ, եղբա՛յր...[1]։

Ալիքսի Սափաքեանց

176.

Արտ փափագ

Թո՛ղ մի օր հոգիս մարմնիցս անջատուի,
Թո՛ղ ցուրտ հողէ տակ փոշիս ամփոփուի,—
Եւ գերեզմանի խոր ու մութ բանտում
Ինձ կը ճնայ քո սէր անմոռանալի։

Հատ օրերս, տարիք եկան դնացին
Հեռաւոր վայրում պանդխտականիս,
Իմ սիրտ և հոգի միշտ կարօտ ճնացին
Ընտիրարհիկ սիրոյ իմ սիրականիս։

Ո՛րչ՛ափ մեծութիւն բարձրանիստ գահի,
Ո՛րչ՛ափ փառք, պատիւ հողանիւթ երկրի
Կարող են մեղմել ցաւերս հազար.
Դուղ, ձար ինձ չկայ քեզանից հեռի։

[1]) Նշ ո՞ր օրուայ համար է «Սոխակը», որ «Սազը» է՛սիրէր և Ձեր նամակը է՛ընդունէր իւր թևիկների տակ— տանելու, հասցնելու պ. Պարճանեանցին։

Գ. Վ. Գրիգորեանց

Երբ միաք եմ բերում, թէ մի շունչ օտար
Ցուցէ շօշափէ այդ քո դէմք պայծառ,
Պաղես է վերաս ահ, սասանութիւն,
Ռանում են հոգիս ցաւեր չարաչար:

Կը լինի՞ արդեօք, որ ինձ միտ բերես,
Մխիթարական հնարքով ինց այդ ելանես.
Ո՛ւ խօսքեր քաղցրիկ կեանքս կը նորեն
Օձաբերացուցիչ գարնան ցօղի պէս:

Բայց ո՛չ. անօգուտ իմ յոյս և բաղձանք,
Այս երկրիս վերայ ինձ լոկ տառապանք.
Ձ'տեսայ մի վարդ, բայց փշեր հազար,
Երտասուք միայն, քո սիրոյ ղրկանք:

Ընհամբեր սրտով ահիդ առնին
Մնում եմ լսել դատակնիք վերջին,
Ինչ որ այս կեանքում չէր ինձ վիճակուած,
Էյն կեանքում Ո՛ւ սէր, Ո՛ւ սէր երկնային:

Ենքէնիա Սահակեանց

177.

Առանց փող

(Տասիթան)

Նուէր ծոլերին [1])

Ականջ դիր ինձ, ով իմ ընկեր աննման,
Ձի կատարվիլ իսկի մի բան առանց փողը
Ձի կատարվիլ ո՛չ խօսք և ո՛չ հրըամանն՝
Թէ լինիս աշխարհիս իշխան առանց փողը:

[1]) Յոյց տալով, թէ որքան թշուառութեան, որքան դժբաղդութեան պատճառ են դառնում իրանք իրանց մեր ծոլերը՝ բերում եմ այստեղ գերապատիւ Հայր Ս. Սահ-

Խելք ու միաքդ քո գլուխը հաւաքիր,
Ամենևին ծոյլ ու դանդաղ մի՛ լինիր.
Գործ սկսիր, քրտի՛նք թափիր, փող դատիր,
Թէ ո՛չ՝ չի՛ն տար մի հատ ջրլման առանց փողը:

Ոլքան մերաս առնես, ո՛չինչ են բոլոր՝,
Եթէ քեզ չունենաս ընտրհք մանաւոր.
Հաւատացի՛ր, վերջն կը ճնաս մոլոր,
Ձի՛ս տեսնիր չոր հացի սեղան առանց փողը:

Նօթութենէդ թէկուզ սովամահ մեռնիս՝
Քեզ կ'անարգեն, որին առջև որ խօսիս.
Թ'աղքատութիւնն դու քեզ ու քեզ ընդունիս՝
Ձի՛ն տար քեզի մի կտոր հաց առանց փողը:

Եթէ լինի գլուխդ բաց ամեն օր,
Ձեն տար քեզի մի ծակ գդակ հին թէ նոր.
Եթէ մանդաս բոլորովին մերկ, տկլոր՝
Ձի՛ն հագցնիր քեզ ցնցոտի առանց փողը:

Թէ մշտապէս պօշ ու պարապ պըտըտիս,
Ձի՛ն հաւատար քեզի, ինչ էլ որ լինիս.
Իսկ թէ գործով հաւատարիմ չ'երևիս՝
Քեզ կախվելու չի՛ն տար ջուան առանց փողը:

Թէ քեզ սիրես, աշխատանքի հետևիր,
Մի՛ ամաչիր, շո՛ւն քաշիր, փո՛ղ աշխատիր,
Գործած եղիր, յանկարծ լինիս ցաւակիր՝
Քեզ չի՛ն անիր դեղ ու դարման առանց փողը:

փանէի խմբագրութեամբ հրատարակուող «Մանկավարժական» մանկավարժական ամսագրից «Ինչպէս պէտք է ապրել բաղդաւոր լինելու համար» գեղեցիկ և իմաստալից հատուածը, որի մէջ իւրաքանչիւր ծոյլ մարդը, իր պատկերը տեսնելով, կարծում եմ, յետ կ'կանգնի իր ծուլութիւնից:

Գ. Վ. Գրիգորեանց

Ո՛ր ժողովին, ո՛ր հանդիսին գանվիս,
Թէ փող չունիս, միշտ անպատիւ կ՛լինիս.
Վաղաքային վարչութեան մէջ ձայն չունիս՝
Թէ դու լինիս Լուսաւորչան աթոռոյ փող:

Թէ փող չունիս, պատիւ չունիս ամեն տեղ,
Այն աշխարհը քեզի համար է խիստ նեղ.
Ուր որ լինիս,—թէ քաղաք տեղ և թէ գեղ՝
Ձե՛ն մոցըներ մութ օթևան աթոռոյ փող:

Եթէ մարդ ես, ե՛կ ընորհիր լինձ ներուս,
Ո՛ր մարդու մէջ միշտ ունենաս համարուս.
Իմ խօսքից դուրս ո՛րքան բռնես պաս ու ծուս՝
Մարդ չե՛ս գտներ քեզ օգնական աթոռոյ փող:

Իմ խօսքերը մտքիդ մէջը ունենաս,
Ամեն րոպէ կարդա՛, սերտի՛ր իբրև դաս,
Մինչև անգամ հոգիդ փչես, վերջանաս՝
Ձե՛ն տար քեզի ձերմակ պատան աթոռոյ փող:

Վերջին անգամ մեր պատուելի տէր պապան
Ձի՛ բանար խաչ, աւետարան քո վիրան
Եւ չե՛ տանիր սիրով քեզի հոգ տապան
Ու չե՛ դնիլ սառ գերեզման աթոռոյ փող[1]):

Թամբաշ այս խրատը համ հին է, համ նոր,
Ծոյլ մարդերին կ՛տայ մորակ զօրաւոր,
Նաև աշուղներին ասա՛ ամեն օր
Թող չի երգեն այսպէս «տասթան» աթոռոյ փող:

Մանուկ Թամքաշեան

[1]) Թէև սկզբունքով այդպէս է, բայց չ՛կայ կանոն առանց բացառութեան:
Գ. Վ. Գրիգորեանց

178.

Ինչպէս պէտք է ապրիլ բաղդաւոր լինելու համար

Աշխատի՛ր իբրև թէ յաւիտեան պիտի ապրես,
Աղօթի՛ր իբրև թէ այսօր պիտի մեռնես:

Առանց աշխատութեան ոչնչին չի՛ կարելի հասնել: Ինչ որ լաւ և վսեմ բան կայ մարդի մէջ, աշխատութեամբ է ձեռք բերվում: Ո՛չ թէ աշխատութիւնը, այլ պարապութիւնն է կոլծանում մարդին: Ծուլութիւնը ուտում է սիրտը նոյնպէս, ինչպէս որ ժանգը ուտում է երկաթը: Ծուլութիւնը միակերպ ստորացնում է թէ անհատ անձներին և թէ ամբողջ ազգեր: Ծոյլ մարդիկը երբէք ոչնինչ լաւ բան չեն արած և երբէք ոչնինչ անելու չեն: Ծոյլերը միշտ անյաջողութիւններին են հանդիպում և միշտ պիտի հանդիպին. նոքա երբէք յառաջադէմ գործ չեն կատարած: Ծոյլերը վնասակար, անօգուտ, միշտ գանգատող, ձանձրացող և անբաղդ մարդիկ են: Նոքա ո՛չ երբէք և ոչնչով գոհ չեն լինում, երբէք չեն լինում առողջ ո՛չ մարմնով, ո՛չ հոգով: Ծուլութիւնը ամեն չարիքի աղբիւր է, ամեն արատներվի մայր է, հօթն մահացու մեղքերից մին է: Ո՛րքան մարդիկ գող և աւազակ են դարձել միայն նորանից, որ նոքա ծուլանում էին իրանց հացը ազնիւ աշխատութեամբ հայթայթելու: Քրիստոնէութեան առաջին առաքեալները ցոյց տուին մեզ աշխատութեան օրինակ: Պօղոս առաքեալը պարծենում էր նորանով, որ աշխատում էր իւր ձեռներով և երբէք ոչ ոքին ծանրութիւն չէ եղել: Ոսնիփատիոս գնաց Անգլիա քրիստոնէական կրօնը քարոզելու, մի ձեռին աւետարան և միւս ձեռին

հիւանի զոլծիքները ունենալով։ Անդլիայից նա վերջը Գերմանիա գնաց, որտեղ ժողովրդին կառուցանելու արհեստ սովորեցրեց։

Ընդհատ և միևնոյն ժամանակ օգտաւէտ պարապմունքի սովորութիւնը բազդաւորութեան և բարեկեցութեան անհրաժեշտ պայման է թէ տղամարդիկների և թէ կանանց համար և լաւագոյն միջոց է ձանձրոյթ չզգալու։ Այն մարդի համար, որը սովորած է անցուցանել բոլոր կեանքը օգտաւէտ պարապմունքով, իւրաքանչիւր րոպէն նշանակութիւն ունի, և երբ աղատ ժամանակ կ'հանդիպի, նա նորանից օգուտ է քաղում վայելչութեամբ։

Յաջողութեան յոյսով աշխատել, օգտաւէտ զբաղմունք գտնել.—ահա այս է բազդաւոր լինելու լաւագոյն միջոցներից մին։

«Մանկավարժական»

179.

Ի դիմաց Անի քաղաքին Հայոց

«Դիւզական աղջիկ եմ ես»
երգի եղանակով [1]).

Ես մէկ թագուհի եմ այրիացեալ
Թշնամեաց ձեռին գերի ճնացեալ,
Գիշեր և ցերեկ լացն է վիճակս,
Անկողինս է արտասուք թացեալ.
Եղբուկ ես, եղբուկ ես, եղբուկ ես,
Որ ճնացի այսպէս։

[1]) Տե՛ս «Սոխակի» Ը. հատոր երկրորդ տպագրութիւն։

Որուսի զանգին մարգարտեայ թագն իմ,
Հաճիւ վոխեցի քառամանեակն իմ,
Ախոռս չեմացայ ինչ էր պատճառը,
Որ շուտ խաւարեց լոյս արեգակ իմ։
Եղբուկ ես, Հայլն։

Երդիւք ինձ նման կայ, թէ մէկ ես եմ,
Ահա հինգ հարիւր ամ է այսպէս եմ,
Ինձ նման դժբաղդ հազիւ կը ճարվի,
Երևի Փրկչի մօտ սև երես եմ։
Եղբուկ ես, Հայլն։

Բարեխօսութեամբ անարատ կուսին
Հնորհեա, Տէր, դու ինձ հզօր ամուսին,
Ի սարսափ և յահ յամառ թշնամեաց,
Սիզակը ձեռին, վահանը յուսին։
Եղբուկ ես, Հայլն։

Ալէյեաղն, ասա դու հզօր ամուսնոյն [1]),
Որ գայ աղատէ զիս խեղճ թագուհուդ։
Եթէ կամենայ, ես կը մեռանիմ,
Ոչի նա է միայն սատար իմ և յոյս.
Եղբուկ ես, եղբուկ ես, եղբուկ ես,
Որ ճնացի այսպէս։

[1]) Վերաբերի առ Ամենաղորմ Կայսրն Ռուսաց։

Գրան. Հեղ.

180.

Երգ հինական խնճոյից [1])

Միշտ ման ակի հաքի, հիլուան, համախի,
Գիշեր, ցերեկ՝ քաղքից քաղաք չորս տալի.
«Ամէն ցաւոց ի՞նչ է դեղ» ես հարցրի,
Ոգջ բժիշկներ ինձ ասացին՝ լաւ գիտի.

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց մեր բաժակներ ֊այ ազգի։

Ե՞խ, տէր-տէր Ջան, ես այն օրից ուխտ արի,
֊ացի վերայ միշտ գործ ածել լաւ գինի.
Փորձով տեսի հոգով մարմնով հիւանդի
Մի հատ բժիշկ, դեղ ու ճարն է լաւ գինի.

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց մեր բաժակներ ֊այ ազգի։

Ընկե՛ր գինի, ով կարող է քեզ գովել
Քո յատկութիւնք մին մին կարգաւ լոկ շարել
Եշխարհ՝ ոգջ թուղթ, ծմակ՝ գալամ էլ լինին,
Ո՛չ ոք կարէ քո գովասանք լի գրել։

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց մեր բաժակներ ֊այ ազգի՝

[1]) Բժիշկ պ. Ըրամեանցի «Նոր-Դար»-ի 1886 թ. № 128-ի մէջ ակնարկած «Երգ հինական խնճոյից» գրուածքը ահա տպում ենք այստեղ մեծ բաւականութեամբ, յայտնելով նորան մեր շնորհակալութիւնը։ Գ. Ռ. Գրիգորեանց

Ընկե՛ր գինի, երբ քո շերան կաթսում
Ածպծում է, եռում, եփում, պըձպըձում,
Երբ կուլայից ձայն ես տալիս, քըլքըլում,
Կեանք ես կանչում, անմահութիւն խոստանում։

Գէ, մատռուակ լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց մեր բաժակներ ֊այ ազգի։

Ընկե՛ր գինի, դու աննըման հրկնային,
Յատուկ շնորհուած մի մեծ պարգև ես անգին.
Ո՛ւժ, զօրութիւն, խե՛լք ու շնորհք ամէնին,
Միշտ դու կաս քեզ չափաւոր խմողին։

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց ոգջ չափաւոր խմողի։

Ընկե՛ր գինի, երբ քեզ խմէ խելճ մշակ,
Ա՛մառանայ աւուր քաշած աշխատանք.
Գու կը բանաս նորա փակուած ախորժակ,
Յամառ հացըն հէնց կը գդէ մեղը, կաթաք։

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք կենաց ժիր մշակաց ֊այ ազգի։

Ընկե՛ր գինի, երբ քեզ խմեն ծերերը
Խակոյն կուզղեն նոցա ծռուած մէջ քերը,
Կը սըղալեն իւրեանց մօրուք, պեխերը,
Եւ կսկսեն լաւ պատմութեանց հիները։

Գէ, մատռուակ, լի անապակ ածճ գինի,
Խմե՛նք բաժակ ոգջ ծերերուն ֊այ ազգի։

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն պառաւներ,
Շուտով փայլեն նոցա աչաց մուխ բիբեր.
Տեսնես ի՞նչպէս կը վզվզան լեսեռներ,
Եւ կը դիզուին բուրդ, բամբակի կծիկներ։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք բաժակ ողջ պառաւանց ֊այ ազգի։

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն գըղեղներ,
Շուտ կը անկուին նոցա կախուած գլուխներ.
Մի վայրկեանուամ պարոյս կանեն ողջ առներ,
Պատուէր կ՛տան ինչպէս շահի վէզիրներ։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց բոլոր գըղեաց ֊այ ազգի։

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն զօրականք,
Մատաղ կանեն ՚ի սէր ազգի մահ ու կեանք.
Ելիւնք եռան, սրտեր թնդան կարգ ՚ի կարգ,
Վազեն յառաջ ՚ի թշնամեաց մեծ բանակ,
Սուսեր շողան, թօփեր տեղան շատ գնդակ
Զորք ոտոտան սարեր կրկնեն արձագանք։

Ե՜հ, մատռուակ, ...
. . . . . .

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն հիւանդներ,
Դէն կը գըցեն բարձ ու տէօշակ, հօղաններ,
Կը փըլփլան վարդի գունով երեսներ,
Եւ կըստանան նոր կեանք, ոգի, նոր սրտե՛ր։

Դէ, մատռուակ, անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց ողջ հիւանդաց ֊այ ազգի։

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն հայր սուբներ,
Վարուց սրբոց կ՛լինին քաջ պատմիչներ.
Առակներով կ՛տան սիրուն խրատներ,
Լիանալով կը զարմանան լըսողներ։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց կրօնաւորաց ֊այ ազգի։

Ըղնի՛ւ գինի, երբ քեզ խմեն քահանայք,
Պաշտոնն առած շուտ կը վազեն տունօխնանք.
Ընդիր կասեն աղօթք, մաղթանք, շարականք,
Սրտով կ՛օրհնեն տաշտ ու կարաս, եղամանք։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց քահանայից ֊այ ազգի։

Ասմի՛ր գինի, երբ քեզ խմեն սիրացուք,
Ի՛ւլբիւլի պէս կ՛անեն պէս պէս ծըւվըլուկ,
Երգեր, տաղեր, խաղեր կ՛երգեն կըկըլուկ,
Ա՛զարգարեն կնուներ, հարսնիք ու խընճոյք։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց բոլոր դպրաց ֊այ ազգի։

Ասմի՛ր գինի, երբ քեզ խմեն աշուղներ,
Կ՛եռան, կ՛եփեն և ջոշ կը դան սուբը էշխեր,
Լեզու կ՛ելնեն սազ, քեամանչայ, սանթուրներ,
Կ՛ածեն, կանչեն լաւ ու ընտիր շատ երգեր։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց ողջ աշուղաց ֊այ ազգի։

Ասմի՛ր գինի, երբ քեզ խմեն սազանդէք,
Ձայն կը հանեն փո՛ղ, սրընկըլբաշ և զուռնէք.
Նայլե կըտան քաջ տղամարդք և փեսէք,
Պար կը բռնեն հարսըն ու աղջիկ և տղէք։

Դէ, մատռուակ, լե անապակ ած գինի,
Խմե՛նք կենաց սազանդայից ֊այ ազգի։

Ընկե՛ր գինի, դու դատաւոր արդար ես,
Ով քեզ համ իւր չափից դուրս՝ կը պատժես.
Յեղի, ձիւնի, փոշւոյ միջում կը թաթխես,
Եւ կատարեալ ծխախո՜ւտ մի կանես։

Դէ, մատռուակ, լե անապակ ածˊ գինի,
Խմե՛նք կենաց ողջ չափաւոր խմոզի

Ո՛վ սուրբ գինի, դու ամենից կը սիրուես,
Դու օրհնուա՜ծ ես, դարձեալ Տէրից օրհնուես,
Ես, կը կանչեմ բոլոր սրտով Աբրահամի,
Որ անպակաս ՙայ սեղանից դու լինես։

Դէ, մատռուակ, լե անապակ ածˊ գինի,
Խմե՛նք, փառք տանք երկրիս, երկնից մեծ Տէրին։

Ինչ սեղանում քո բաժակներ կը դանուին,
Գարիպ եղբայց անուններն կը յիշուին.
Բաժակ բաժկի ծընկճընկալով կը թրխուին,
«Խերով, բարով դան» ասելով կը կոնծուին.

Ես, ակը-ակը ջան, լե բաժակներ էս գինին
Խմե՛նք կենաց ողջ գարիպաց ՙայ ազգին։

Ընկե՛ր գինի, երբ դու չը կաս 'ի սեղան,
Տխուր կանցնեն կընունք, հարսնիք, բարեկենդան,
Իսկ հոգեհաց կամ ժամահաց երբոր քեզ հետ միանան՝
Յընճան երեսք, փայլին աչեր, բերանք լինին օրհնաբան։

Ես, ակը-ակը ջան, լե բաժակներ էս գինին
Խմենք հոգւոց նընջեցնելոց ՙայ ազգին։

Ո՛վ սուրբ գինի, ով կարէ քո արժանին
Գովել խօսքով, կանչել ձայնով բերդից մին.

Ընկե՛ր քո խեղճ ծառայ Ո—ապայ Ղ—ամալեն[1]),
Որ շատըն թողուց երգս լողաց սուր խնկեին։

Դէ, մատռուակ, լե անապակ թաս վերջին
Ածˊ, խմենք, պատուով վերջ տանք մեծ ճաշիսին։

«Արձագ» 1874 թ. 11 էր

181.

Գինւոյ ոյսը

Թէ պայծառ արեւն գէպ հարաւ իջաւ,
Ու իւր հրաժեշտը բոյսերին տուաւ՝
Յուսով եմ դարձեալ՝ նորից, պէտք է դայ
